



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ  
ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**

---

## **ԵՎՐՈՊԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ**

V

**ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**

**ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ  
ՀԱՅԱԳԵՏ**

---

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

---

**ԵՐԵՎԱՆ – 2008**

ՀՏԴ 941 (479.25) : 801

ԳՄԴ 63.3 (2Հ) + 80

Դ 718

**Գիրքը տպագրության է երաշխավորել  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհուրդը**

## Խմբագիր՝ Վարդան Դերիկյան

### Աելիտա Դոլուխանյան

Ա Եվրոպացի Հայագետներ V. Ֆրեղերիկ Ֆեյդին Հայագետ: -Եր.: ԵՊՀ հրատ., 2008, 268 էջ:

Գիրքը նվիրված է ֆրանսիացի նշանավոր Հայագետի գիտական ժառանգությանը: Նրա Հայոց լեզվի դասագիրքը, «Սասունցի Դավիթ» էպոսին, Հայոց հին վեպին, Հայկական քրիստոնեական հմայիններին, Մաշտոցին ու Հայ գրերին, Հայոց լեզվին, Հայ ժողովրդի պատմությանը, մատևնագիրներին, Հայ նոր գրականությանը նվիրված Հետազոտությունները նպատակ ունեն ֆրանսերենով ընթերցողների համար բացահայտել Հայկական գրական ու մշակութային արժեքների համամարդկային բնույթը: Ֆեյդին Հայ դատի անձնվեր պաշտպան - ներից եր: Գիրքը հասցեագրված է Հայագետներին, ուսուցիչներին, ուսանողությանը, Հայկական հոգևոր արժեքները զնահատող ընթերցողներին:

ԳՄԴ 63.3 (2Հ) + 80

ISBN 978-5-8084-0951-4

© Աելիտա Դոլուխանյան, 2008 թ.  
© ԵՊՀ հրատարակչություն, 2008 թ.

## **Նվիրվում է Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրեդերիկ Ֆեյդիի ծննդյան 100-ամյա հոբելյանին**

Երախտագիտությունս եմ Հայտնում  
Կյուլպենկյան Հիմնարկության Հայկական  
բաժանմունքի տնօրեն, ՖՌԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ  
ուսանող, անվանի մտավորական, Հայրենա-  
նվեր գործիչ, դոկտոր ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ  
գրքի Հրատարակությունը Հովանավորելու  
Համար:

**Աելիտա Դոլուխանյան**



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

## ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ ԿՑԱՆՔԸ

Ֆրեդերիկ Ֆեյդին ծնվել է 1908 թվականի ապրիլի 15-ին Փարիզում: Միջնակարգ կրթությունը ստացել է Վերսալում, ուր նրա ուսուցիչն է եղել Հոչակավոր բառարանագիր *Grandsaaignes d'Hauterive*-ը (Գրանդսեյն դը Հոթերևի), որը հեղինակն է հին ֆրանսերենի բառարանի: Վերջինս ստեղծել էր հին լեզուներ ուսուցանելու սեփական մեթոդը, որով սովորեցնում էր աշակերտներին: Նրանց առաջարկում էր ինքնուրույնաբար բոլոր հնարավոր ձևերով թվարկել մի գոյական կամ մի բայ, սահմանել նրանց հորովան և խոնարհման ձևերը ու ձևակերպել իրենց սեփական վարկածը այն կերպի մասին, որ կարող են ունենալ դրանք տարրեր ժամանակներում կամ տարրեր դեպքերում: Ներշնչված իր պրոֆեսորի մեթոդներից՝ երիտասարդ Ֆեյդին տասնվեց տարեկանում որոշում է դառնալ լեզվաբան: Հենց այդ ժամանակներից սկսած կարգում է անվանի եղիպտագետ Շամպոլիոնի կենսագրությունն ու իր հերթին երազում գտնել նոր հիերոգլիֆներ և մտածում է առաջին հերթին սովորել հին լեզուներ:

Ճակատագիրը Ֆեյդին կապում է Հայաստանի ու Հայ ժողովրդի հետ: Հայերի մասին առաջին պատկերացումները կազմում է իրենց կողքին որպես Հարևան ապրող Հայերից և ծանոթանում է Դեմիրճի-բաշյանի Հայ-ֆրանսերեն բառարանին («*Dictionnaire arménien-français*»): Նա սկսում է յուրացնել Հայերենը, հետևելով Վերսալի դպրոցի իր ուսուցչի մեթոդին, որով վերջինս իրենց սովորեցրել էր լատիներենը: Նա շատ շուտով արդեն վարժ ձևով հասկանում էր քերականական օրենքները՝ առանց իրական լեզուն բավական իմանալու:

<sup>1</sup> Ֆրեդերիկ Ֆեյդիի կենսագրության փաստերը քաղել ենք անվանի Հայագետ Ժան-Պիեռ Մահեի Հիշատակի խոսքից, բանասեր Լևոն Խաչերյանի Համապատասխան Հողվածից և Հայկական Սովետական Հանրապետարանից (տե՛ս Jean-Pierre Mahé, *Hommage à Frédéric Feydit (1908-1911)*, - «Բազմավէպ», Հայագիտական-բանասիրական-գրական Հանդէս, թիւ 3-4, Վենետիկ, 1991, էջ 514-521, Լ.Խաչերյան, Պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիի Հայագիտական աշխատությունները - «Պատմա-բանասիրական Հանդես», թիւ 4, Երևան, 1963, էջ 255-261, ՀԱՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 626: Որոշ կենսագրական փաստեր Փարիզից մեզ ուղարկել է լիբանանահայ անվանի գեղանկարիչ Հարություն Թորոսյանը, որին Հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Ստիպված լինելով հայթայթել ապրուստի միջոցներ՝ նա հինգ տարով դադարեցնում է իր ուսումը և անցնում աշխատանքի: Օժտված էր ձեռքի չնորհքով. Նրան հաջողվում է գրամեքենայի վրա կցել երկու ստեղներ՝ մեկը՝ ֆրանսերեն, մյուսը՝ հայերեն, որոնցով հեշտությամբ մեքենագրում էր իր լեզվաբանական աշխատությունները: Նա հասուկ ներշնչում է ունեցել առաջ մղելու և զարգացնելու գիտությունն ու տեխնիկան, ստեղծագործել է նաև որպես գրող՝ հորինելով երգիծական նովելներ, գիտաֆանտաստիկ երկեր, որոնք հրատարակել է իր կյանքի վերջում՝ Frédéric Armand d'Eytemet (Ֆրեդերիկ Արման դը Էյմե) կեղծանունով (գրական անունով):

1931-ին նա ֆրանսերեն է դասավանդում Սերի Սամվել-Մուրադյան հայկական վարժարանում: Նույն կրթօջախում կատարում է նաև ուրիշ աշխատանքներ՝ որոշ ժամեր հակում է դպրոցի սաների ննջասնյակը, ճաշարանը, մատուցողը: Կեսօրից հետո նա ազատ էր իր պարտականություններից և հնարավորություն է ստանում իրականացնել երազանքը: Գրվում է Արևելյան լեզուների դպրոցում Ֆրեդերիկ Մակլիրի դասերին, դառնում է նաև Միշել Ժոնվալի աշակերտը, որը Անտուան Մեյեի փայլուն սաներից էր: Վերջինս 1929-ին Ռիգայում հրատարակում է լիտվական առասպեկների ժողովածու, հետո՝ 1934-ին, գործուղվում է Հայաստան, որտեղից վերադառնում է գիտական նյութերի մեծ պաշարով: Սակայն Միշել Ժոնվալը չի հասցնում հրապարակել Հայաստանից բերած նյութերը, մի տարի անց՝ 1935-ի նոյեմբերի 11-ին, վախճանվում է՝ Հազիվ բոլորած երեսուներեք տարին: Ֆրեդերիկ Ֆեյդին Փարիզի ինստիտուտում աշակերտել է նաև Լուի Մարիեսին (1932-1933), ինչպես նաև Բարձրագույն կրթության գործ - նական դպրոցի 4-րդ բաժնում՝ Անտուան Մեյեին:

1933-ին ստանալով Արևելյան լեզուների դպրոցի վկայագիրը՝ ֆեյ - դին մեկնում է Վենեստիկ, ուր որպես ֆրանսերենի ուսուցիչ աշխատում է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Բայց այս անգամ նա չուներ նույն զբաղվածությունը, աշխատում էր տասնութ ժամ շաբաթական, մնացած ժամերը՝ ամեն օր կեսօրից հետո և երեկոները, ջանադիր աշխատում էր իտալերենի վրա ու շարունակում իր հետազոտությունները՝ նվիրված Հայերենին:

Ահա հենց այս տարիներին է նա սկսում հավաքել իր կյանքի վերջում հրատարակած հայ քրիստոնեական հմայիների ժողովածուն: Սուրբ Ղազար կղզու գրադարանում ընդօրինակում է 24 հմայիների բնագրերը, հետո ընդհատում է այդ աշխատանքը, որովհետև հայր Աթանաս Տիրոյանը, ենելով Ֆ.Ֆեյդիի նախասիրություններից ու գի-

տական հնարավորություններից, հրահանգում է գրել արևմտահայերենի քերականությունն: Այդ քերականությունը լույս է տեսնում 1935-ին Վենեստիկում՝ բերելով Հեղինակին Սուրբ Ղազարի ակադեմիայի անդամի պատվավոր տիտղոսը:

Իսկ հայ քրիստոնեական հմայինների քննական բնագրերը, նրանց մեկնարանումն ու ծանոթագրումը հայագետը հրատարակում է 1986-ին, երբ անցել էր վաստակած հանգստի:

Իտալիայում քաղաքական իրազրությունը դառնում է սպառնալի. սկսվում է Մուսոլինի ղեկավարման դժվարին ժամանակահատվածը, հատկապես այն ավելի ամրապնդվում է Եվրոպայի գրավումից Հետո՝ 1935-ին, սակայն Ֆեյդիի համար Միխիթարյան միաբանության ստեղծագործ մթնոլորտում անցկացրած երեք տարիները մնում են անմոռաց: Նրան այդ տարիներին խրախուսում են միաբանության ամենահեղինակավոր անդամները՝ հ. Եղիա Փեճիկյանը, Վարդան Արծրունին և հ. Հովհան Ավգերը:

Հայր Ներսես Տեր-Ներսիսյանը «Յառաջ» պարբերականի 1983 թվականի մարտի 3-ի համարում մի ցնցող հուշ է տպագրել այն մասին, թե ինչ բացառիկ տպավորություն է թողել ֆրանսերենի դասախոս Ֆեյդին իր աշակերտների վրա, որոնցից մեկն է եղել նաև ինքը: Այդ աշակերտների թվում են եղել նաև հետագայում Միխիթարյան միաբանության անդամներ դարձած Եփրեմ Տեր-Ղազարյանը, Կոմիտաս Մանուկյանը և Պողոս Անանյանը: Վերջինս հետագայում դարձավ միաբանության արքահայրը<sup>2</sup>: Միաբանության անդամների հիացմունքը դարձավ անսափի, երբ լույս տեսավ Ֆեյդիի հայերենի քերականությունը, որը ձեռքից ձեռք էր անցնում:

Ֆեյդին պատմել է իր հետ պատահած մի գավեշտալի պատմություն:

Ընդհանրապես հայերը նրան անվանում էին «պարոն Ֆեյդի»: Սակայն տարիներ անց, իր «Manuel de langue arménienne» գրքի հրատարակելուց հետո հայագետն ստանում է հայերենով մի նամակ՝ ուղղված Ֆրեդ Զիտեմյանին, քանզի Ֆեյդին դասագրքում հայերենով դրել

<sup>2</sup> Պողոս Անանյանը Վենետիկի Միխիթարյան միաբանության արքահայր է եղել 1970-ից: Սովորել է Վենետիկի սուրբ Ղազարի գանքում, ապա Հոռոմի Գրիգորյան համալսարանում ուսումնասիրել է փիլիսոփայություն և աստվածաբանություն: 1964-ից եղել է Վենետիկի Միխիթարյան միաբանության ներկայացուցիչ Վատիկանում: Զքաղվել է Կորյունի և Դավիթ Անհաղթի երկերով, աշխատակցել է «Bibliotheca Sanctorum» վարքագրական ու վկայարանական տասներկու հատորանոց (1961-69) և այլ հանրագիտարանների (տե՛ս ՀԱՀ, հ. I, Երևան, 1974, էջ 365):

Էր նամակի մի օրինակ, որի տակ ստորագրված էր Տիգրան Զիտեմյան<sup>3</sup>: Ֆեղին սիրել է այս զեպքը ծիծաղով պատմել:

Իտալիայում Ֆեղին մեկ այլ ձեռվ էլ ուժեղացնում է իր կապերը Հայաստանի հետ, ու հենց այդ երկրում էլ նա հանդիպում է իր ապագա կնոջը՝ Հայուհի օրիորդ Հերմինե Ֆեսլիկնյանին, որը բնակվում էր Միլանում: Նրանց ամուսնության ազդը տպագրել է «Յառաջ» պարբերականը 1937 թվականի հունվարի 23-ին: Այդ ամուսնությունից ծնվում է նրանց որդին՝ Ժակ Ֆեղին:

Նույն տարին Ֆեղին վերադառնում է Փարիզ ու միանգամից Հանրաճանաչ դառնում Հայկական գաղթօջախում: Շավարշ Միասկյանը նրա քերականության մասին գրում է դրվատական ու մանրամասն գրախոսություն: Ֆեղին ջերմ բարեկամական կապեր է Հաստատում Հայ ժողովրդի երախտավոր ու բազմավաստակ զավակներից մեկի՝ Արշակ Չոպանյանի հետ, որի ջանքերով կազմակերպված գիտաժողովին (1938թ.) Հանդես է գալիս Հեթում պատմիչի երկին նվիրված զեկուցմամբ («La Fleur des Histoires de la terre d'Orient» - «Մաղիկ պատմութեանց Արեւելեան աշխարհի»): Այդ զեկուցումը Հրատարակվում է «Անահիտ» պարբերականի թիվ 2 մատենաշարում 1939-ին:

Ֆրեդերիկ Ֆեղիին բարձր էր գնահատում նրա ուսուցիչը՝ նշանավոր Հայագետ Ֆրեդերիկ Մակերը՝ նրան կոչելով «Ֆրեդերիկ երկրորդ» և Հաճախ չարաձճի Հումորով ավելացնում էր. «Երբեք մի մոռացեք, որ նա Ֆրեդերիկ Առաջինը չէ՝ կոչված Մեծ, այլ միայն Ֆրեդերիկ երկրորդ» («N'oubliez jamais que ce n'est pas Frédéric I<sup>e</sup> qui fut sur -

<sup>3</sup> Ահա այդ նամակը. «Տիգրանէն նամակ մը Արշամին  
Կ. Պոլիս, 2 օգոստոս 1939

Սիրելի բարեկամ,

Շատոնց կը փափաքէի քեզի գրել բայց, շատ գործ ունենալով, միշտ կը յետաձգէի իմ թղթակցութիւնն: Շատ յոզնած եմ, սական անպայման ուղերով քո լուրէրդ ունենայ, այս երկտողը կը գրեմ քեզի փոխանակ հանգչելու: Առանց քեզի մեղադրերու (որովհետեւ ես ալ՝ նոյնպէս յանցաւու եմ), կը ցաւիմ որ դիս այսպէս առանց լուրի կը ձգեա:

Կը յուսամ որ բարի առողջութիւն կը վայելիս եւ քու գործերդ աղէկ են: Քու բոլոր բարեկամներդ աղէկ են, բացի Հայկէն, որ սոսկալի հարրուխ է:

Ես ալ բաւական անհանգիստ եմ: Անհոգ եղիր սակայն, մեր այս անհանգատութիւնները թեթեւ եւ անցողական են:

Միջազգային քաղաքականութեան լուրերը անչուշտ քեզի ալ ծանոթ են. բաւական ծանր են. ըստ Հանրապյին կարծիքին պատերազմը անխուսափելի է: Մինչև ո՞ւր պիտի տիրեն պատերազմն ու թշուառութիւնը: Տէր ողորմեա:

Իմ ծնողներս՝ զեղ իրեւ Հարազատ որդի մը կը համբուրեն, իսկ ես, քու բարի լուրերուդ սպասելով՝

Կը մնամ քեզ յիշող  
Տիգրան Զիտեմյան (տե՛ս F.Eeydit, Manuel  
de langue arménienne, Paris, 1969, p. 129-130):

nommé le Grand, mais bien Frédéric II !»<sup>4</sup>):

1937 թվականին Ֆրեդերիկ Մակլերը հանգստի է անցնում, իսկ մի տարի անց, ինչպես գրում է Ժան-Պիեռ Մաշեն, նա վախճանվում է 1938-ի Հուլիսի 13-ին: Այդ պահին, դեռ չէր եկել Ֆեյդիի ժամանակը, ու Հայերենի ամբիոնը զիսավորում է Անտուան Մեյեի ոչ պակաս արժանավոր աշակերտը՝ Ժորժ Դյումեզիլը<sup>5</sup>, որը նույնպես Հայագետ էր, ուսումնասիրել էր Հայերենը և Հայերենի բարբառները, երբ 1926-ից մինչև 1931 թվականը հրավիրված էր Ստամբուլի Համալսարան՝ կրոն-ների պատմություն դասավանդելու Համար:

Ժորժ Դյումեզիլը Հայոց լեզվի ամբիոնը ղեկավարում է մինչև 1949 թվականը՝ մինչև «Collège France»-ում Հնդեվրոպական քաղաքակրթությունների ամբիոնի՝ իր կողմից ստեղծումը: Նա միշտ բարձր է գնահատել Ֆրեդերիկ Ֆեյդիին և օգտվել է նրա Հայագիտական հետազոտություններից: Ֆեյդին Սորբոնում ստանում է խոալերենի իր վկայագիրը: 1948-ին նա հրատարակում է Արևմտահայերենի առաջին դասագիրքը («Manuel de langue arménienne. Armenian occidental moderne»): 1944-ին դառնում է Լեզվաբանների Միության և Ասիական Միության անդամ: Նա եռանդուն ձեռվ մասնակցում է արևելագետների գիտաժողովներին և Հոգվածներով Հանդես է գալիս «Français Moderne»-ում:

1949-ից Արևելյան լեզուների դպրոցում դառնում է նախ Հայագիտական ամբիոնի փոխարինող-դասախոս, այնուհետև ամբիոնի վարիչ, այդ պաշտոնում աշխատում է մինչև 1977 թվականը: 1970-ից մինչև 1982-ը նա նախընտրում է գուգահեռաբար աշխատել որպես Սևրի Սամուել-Մուրաղյան վարժարանի քաղաքացիական տնօրին: Այս որոշումը պայմանավորված էր նրա մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով դեպի Հայագիտությունը:

Ֆրեդերիկ Ֆեյդին առաջին անգամ Խորհրդային Հայաստան է այցել 1963-ին: Հետագայում բազմիցս այցելում է Հայաստան՝ զինված կինոսցիկով, Փոտոպապարատով և ձայնագրիչով: Նա նկատում ու ձայնագրում է իր Համար Հեռվից Հարազատ դարձած երկրի պատմական Հուչարձաններն ու մարդկանց: Նրան հիացմունք է պատճառում Գառնիի տաճարը, որի մասին կարդացել էր<sup>6</sup> Մովսես Խորենացու «Հայոց

<sup>4</sup> Jean-Pierre Mahé, Hommage à Frédéric Feydit, p. 516:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Մեզ բախտ է վիճակիվ լսել նրա ընտիր Հայերենով կարդացած ղեկուցումը Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողության և զասականության կազմի Համար: Ինստիտուտի մեծ դաշնամունքը չէր տեղափորել բոլոր ունկնդիրներին, շատերը կանգնած լսում էին դաշնամունքներում և բաց դռների մեջ: Ֆեյդիի ղեկուցումը նվիրված էր «Սատունցի Գավիթ» էպոսին - Ա.Գ.:

պատմության» մեջ՝ Ժան-Պիեռ Մահեն Հիշեցնում է, թե որքան դժվար էր օտարերկրացիների համար այցելել Խորհրդային Հայաստան, սակայն Ֆրեղերիկ Ֆեղին Հաղթահարում է բոլոր արգելքները, տեսնելու համար այն երկիրը, որն այնքան սիրել էր:

Ֆեղիի վրա խոր տպավորություն է թողել 1915 թվականի սարսափելի եղեռնից հետո վերածնված Հայաստանը: Նրան Հիացմունք է պատճառել Գիտությունների ազգային ակադեմիան՝ իր բոլոր ինստիտուտներով, երևանի պետական համալսարանը, մյուս բուհերը և առաջին հերթին Մաշտոցի անվան Հոյակապ Մատենադարանը. «Ասկե հիսուն տարի առաջ, - ասել է նա Գիտությունների ակադեմիայի նիստերի զահինձում ունեցած իր ելույթում, - ո՞վ կարող էր երևակայել, թե այսպիսի կարճ ժամանակամիջոցի մը մեջ կվերածնվի Զեր երկիրը այնպես, որ Հայաստանի հողի վրա ստեղծված կըլլա Հայկական գիտություններու ակադեմիա մը՝ գիտնականներու իր պատկառելի բանակով: Այս երկու բառերու՝ «Հայկական» և «ակադեմիա» բառերու զուգակցումը բազմանշանակալի է ինձի համար, որպես Զեր անցյալի պատմությունը իմացողի»<sup>8</sup>:

Իր առաջին այցելության ընթացքում Ֆեղին ձեռագրեր է համեմատել Մատենադարանում, դասախոսություն կարդացել «Հայագիտություննը Եվրոպայում» թեմայով, ծանոթացել և կապեր հաստատել Հայաստանի այն գիտնականների հետ, ովքեր հայագիտության բնագավառում ձեռք են բերել լուրջ նվաճումներ:

Իր տպավորությունները մի զրոյցի ժամանակ ամփոփել է հետեւյալ ձեռնով. «Արևմուտքի մեջ Հայերու կողմե Հայագիտության մշակումը առնվազն նվազելու վրա է. առաջիկ խանդով չեն զբաղեր: Բայց ատիկա իրենց հանցանքը չէ, որովհետև կյանքի պայմանները թույլ չեն տար զբաղվելու. մեծ մասամբ ուսուցչությամբ կը զբաղին և հետազոտական աշխատանքներ չեն կրնար ընել: Բարեբախտաբար Հայաստանը ճիշտ ժամանակին բռնեց Հայագիտության ջանը, այստեղ ալ Հայագիտությունը ծաղկեցավ: Պետք է ըսեմ, որ Հայագիտության այս բացառիկ արտադրությունը թե՛ քանակի և թե՛ որակի տեսակետով ինձի չզարմացուց, թեև չէի ստանար գիրքեր, բայց գիտեի, որ Հայագիտությունը այստեղ իր արժանի տեղը գտած է: Այնպես որ, եթե

<sup>7</sup> Այն ժամանակները Տրդատոն ավարտում է Գառնիի ամրոցի շինությունը տաշած որձաքար քարերով, որոնք ազուցված էին երկաթե զամերով և բարձրաքանդակներով, իր Խորրիշությունը քրոջ համար և նրա վրա գրում է իր հիշատակը Հունարեն զրերով (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք Բ, Ղ):

<sup>8</sup> «Պատմա-բանամիրական համական», 1963, թիվ 4, էջ 261:

դարմացած չմնայի, ապա զմայլած՝ անպայման: Խսկապես՝ Հայագիտությունը այստեղ կմշակվի ճիշտ այնպես, ինչպես Փրանսագիտությունը Ֆրանսիայի մեջ, գերմանագիտությունը՝ Գերմանիայի մեջ – Հավասար կերպով»<sup>9</sup>:

Ժան-Պիեռ Մահեն նշում է. «Ֆրեդերիկ Ֆեյդիի գիտական գործը բաղկացած է վեց գրքերից և մի քառասնյակ հոդվածներից («L'œuvre suivante de Frédéric Feydit se compose de six livres et d'une quarantaine d'articles»)<sup>10</sup>: Նա հատուկ շեշտում է, որ չնայած այդ գրքերն ու հոդվածներն ունեն տեսական բնույթ, սակայն նրանց գործնական ու կիրառական արժեքը չափագանց մեծ է:

Բանասեր Լևոն Խաչերյանն իր հոդվածում Ֆրեդերիկ Ֆեյդիի գիտական ժառանգությունը դեռևս նրա կենդանության օրոք բաժանում է չորս խմբի՝

1. Պատմագիտական հետազոտումներ,
2. Լեզվաբանական աշխատություններ,
3. Գրականագիտական երկեր,
4. Հայ բանահյուսության վերաբերյալ ուսումնասիրություններ և թարգմանություններ»<sup>11</sup>:

Ֆեյդին զրադիկել է Հեթում պատմիչով և Փավստոս Բուղանդի «Հայոց պատմության» հետ կապված որոշ վիճելի խնդիրների ճշգրտումներով: Հատկապես երկու մեծարժեք հոդված է նվիրել Փավստոսի երկին՝

1. «Un passage enigmatique de Fauste de Byzance» («Փավստոս Բուղանդի մի միջին հատվածը»)<sup>12</sup>,
2. «L'Histoire de Fauste de Byzance comprenait-elle deux livres aujourd'hui perdus?» («Փավստոս Բուղանդի Պատմությունը պարունակե՞լ է այօր կորած երկու գրքերը ևս»)<sup>13</sup>:

Հարուստ են Ֆեյդիի հայերենին վերաբերող լեզվաբանական աշխատությունները: Առաջինը՝ «Grammaire de la langue arménien moderne, dialecte occidental» գիրքն է: Կարևորագույնը դրանց մեջ նրա արևմտահայերենի դասագիրքն է՝ «Manuel de langue arménienne. Arménien occidental moderne» (1948, 1969): 1952, 1953 թվականներին հետաքրքիր հոդվածներ է գրել նախդիրների և ժամանակի համաձայնության մասին («Remarques sur l'emploi des articles partitif et indéfini» – «Դիտու-

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> «Բաղմավէպ», 1991, թիվ 3-4, էջ 517:

<sup>11</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1963, թիվ 4, էջ 256, 257, 259, 260:

<sup>12</sup> «Բաղմավէպ», 1957, թիվ 11-12, էջ 282-284:

<sup>13</sup> «Բաղմավէպ», 1958, թիվ 6-7, էջ 140-143:

դություններ մասնական և անորոշ հողերի գործածության վերաբերյալ»), «Articles en Arménien moderne occidental» - «Հողերը արդի արևմտահայերենում»<sup>14</sup>, «La concordance des temps subjonctif» - «Ստորագասական ժամանակների համաձայնությունը»:

Բազմաթիվ հոդվածներ է նվիրել հայոց այբուբենին և նրա հեղինակին՝ Մեսրոպ Մաշտոցին<sup>15</sup>:

«Բազմավիճակ»-ում լույս են տեսել նրա տետրակները՝ նվիրված հայերենի քերականության տարրեր խնդիրներին (տե՛ս «Բազմավիճակ», 1952, 1956, 1967, 1969, 1976): Նա գրել է նաև հայ բարբառների մասին:

Ֆեյդին Ֆրանսիայում լույս տեսած «Clarté» («Պայծառություն») հանրագիտարանում (1957թ.) գրել է «Litterature arménienne» («Հայ մատենագրություն») հոդվածը, «Բազմավիճակի» տարրեր համարներում զրաքննադատական ծավալուն հոդվածներ է նվիրել Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի երգիծանքին՝ նրանց ստեղծագործությունները դասելով եվրոպական լավագույն երգիծարանների Երկերի շարքում: Հայագետը գրել է «La littérature arménienne du XII<sup>e</sup> au XVIII<sup>e</sup>» («Հայ մատենագրությունը XII-XVIII դարերում») աշխատությունը, որն անտիպ է<sup>16</sup>:

Ֆեյդին եղել է առաջնակարգ բանագետ: Նա հանգամանալի գրել է հայոց երկու վեպերի՝ պատմահայր Խորենացու վիպասիք և «Սասունցի Դավիթ» էպոսի մասին, որը ֆրանսերեն թարգմանել է ու հրատարակել 1964-ին Փարիզում: Երբ ավարտել է էպոսի թարգմանությունը և տեսել նրա հրապարակված բնագիրը, հայ ժողովրդական ոգուն հոգեհարազատ ձևով հրապարակայինորեն հայտարարել է՝ «Մուրագիս հասա»<sup>17</sup>:

Նա եղել է նաև հայ դատի եռանդուն պաշտպանը: Դրա վկայությունը այն փայլուն զեկուցումն է, որ կարդացել է Բըյուսելի թագավորական ակադեմիայում հայոց ցեղասպանության 50-ամյա հիշատակի ոգեկոչման ժամանակ:

Մեծ հայագետը շարունակաբար թղթակցել է «Բազմավիճակ», «Հանդէս ամսօրեայ», «Զվարթնոց», ինչպես նաև եվրոպական լեզու -

<sup>14</sup> «Բազմավիճակ», 1952, թիվ 7-9:

<sup>15</sup> Այս մասին հատուկ անդրադարձ կլինի իր տեղում - Ա.Դ.:

<sup>16</sup> «Պատմա-բանավիրական հանդես», 1991, թիվ 4, էջ 260:

<sup>17</sup> «Բազմավիճակ», 1991, թիվ 3-4, էջ 520:

ներով հրատարակվող գիտական պարբերականներին:

Մեր օրերի անվանի Հայագետ Ժան-Պիեռ Մահեն իր ուսուցչին՝  
մեծ Հայագետին, նվիրված երախտագիտական ծավալուն խոսքում  
զբում է, որ 1972-1975 թվականներին Արևելյան լեզուների իր դասըն-  
թացի երեք տարիների ամենատպավորիչ պատգամը, որ մնացել է  
Ֆրեդերիկ Ֆեյդից, այն անմնացորդ սերն է, որ Հայագետն ուներ Հա-  
յաստանի, նրա լեզվի, նրա ժողովրդի, նրա բոլոր դարաշրջանների  
մշակույթի նկատմամբ<sup>18</sup>:

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 521:



## ԳԼՈՒԽ Ա

### Ա. ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵԹԴԻՆ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆ

1964-ին Գայիմար Փրանսիական նշանավոր հրատարակչությունը լույս աշխարհ բերեց Հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ» Փրանսերեն տարբերակը՝ նշանավոր Հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի թարգմանությամբ<sup>1</sup>: Այս աշխատության մեջ Փրանսիացի Հայագետը պահպանել է ակադեմիկոս Հովհաննես Օրբելու 1939-ին՝ էպոսի Հազարմյա հորելյանի առիթով պատրաստած Համահավաք ընազրի առաջարանը, որին կցել է իր սեփականը՝ չափազանց ուշագրավ և մեծարժեք:

Ֆ. Ֆեյդիի նախաբանից իմանում ենք այն իրողությունը, որ «Սասունցի Դավիթ» Փրանսերեն թարգմանությունը իրականացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Խորհրդային Միության ազգերի Հանձնախմբի առաջարկով, որի նպատակն էր Արևմուտքի կրթված ընթերցողներին ծանոթացնել Հայ գրականության գլուխգործոցներից մեկին՝ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսին: Նման որոշումը Հայագետին պարզեցել է միայն Հոգեկան բերկրանք, և նա իր գործին լծվել է մեծագույն պատասխանատվությամբ ու խանդավառությամբ: Ֆրեդերիկ Ֆեյդին արդեն երեսունական թվականներից խորածուխ էր եղել Հայագիտության մեջ և Հանրագիտակ ու նվիրյալ Հայկաբաններից էր: «Սասունցի Դավիթ» էպոսի առաջարանից և բնագրի գրեթե բոլոր էջերում զետեղված մանրակրկիտ ծանոթագրություններից պարզորոշ երևում է նրա խոր ծանոթությունը Հայ էպոսագիտության նվաճումներին, Հայ ժողովրդի պատմությանը, Հայ պատմիչներին, ժողովրդական բանահյուսությանը, Հայ միջնադարյան մատենագրությանն ընդհանրապես:

Նա զգուշացնում է Արևմուտքի ընթերցողին, թե Հայ ժողովրդական էպոսի լույսընծայումը նրան չշփոթեցնի, կարծել տալով, թե Հայ

<sup>1</sup> Caucase, Collection unesco d'œuvres representatives, David de Sassoun, Épopée en vers, traduit de l'Arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, professeur à l'école nationale des langues orientales vivantes, préface de Joseph Orbéli de l'Académie des sciences de l'Union des Républiques Socialistes Soviétiques, Gallimard, 1964.

գրականությունն ուրիշ երեսի ստեղծագործություն չուներ Արևմուտքի ընթերցողին առաջարկելու, բոլորովին՝ ոչ. Հայ գրականությունը ունի տասնհինգ դարերի գիտական հարստություն պարունակող մատենագրություն:

Ֆրեդերիկ Ֆեյդին փոքրիկ պատմական ակնարկով օտարազգի ընթերցողին տեղեկացնում է, թե ինչ ժողովուրդ է ստեղծել այդ հոյակապ գրական հուշարձանը:

Երրորդ դարի վերջին Հայերը դառնում են քրիստոնյա, և քրիստոնեությունը ազգային գիտակցության մեջ առավել ամրապնդելու համար հինգերորդ դարի սկզբին Մաշտոցը ստեղծում է Հայոց այբուբենը: Առաջին գործը, որ գրվում է նոր այբուբենով, Աստվածաշնչի Հայերն թարգմանությունն էր, որին հետևում են ազգային լեզվով Հորինված բազմաթիվ գրական դրսեորումներ՝ աստվածաբանությունից, սրբազն քնարերգություննից, Վկայաբանություննից, պատմագրություննից և գրական այն բոլոր տեսակներից, ինչպիսիք կային Միջերկրական ծովի շուրջ բնակվող քաղաքակիրթ ժողովուրդների մոտ: Հինգերորդ դարում Հայերը ստեղծեցին այնպիսի գրական արժեքներ, որոնցով Հավասարի իրավունքով կանգնեցին Հույների, լատինացիների և ասորիների կողքին: Այդ դարն իր հարուստ մատենագրության շնորհիվ կոչվեց «ոսկեպար»:

Ֆ.Ֆեյդին կարևորում է Ներսես Շնորհալու գերը Հայ ժողովրդի մեջ քրիստոնեական ոգին առավել ամրապնդելու գործում: Ներսես Շնորհալին, ծնված լինելով սուրբ Ֆրանսուա դը Ասիֆից (*François d'Assise*)<sup>2</sup> առաջ, ջանացել է առավել մոտեցնել քրիստոնեությունը Հավատացյալ ժողովրդին: Նա նոյնիսկ գրել է ժամանակի խոսակցական լեզվով՝ Հասարակությանն իր ասելիքը լսելի դարձնելու համար: Նրա այդ նորաբանություննից Հայ գրականության մեջ ծնվեց մի տաղերգություն, որ զգայական էր արևելյան խմաստով, սակայն իր «խորքում միշտ պահպանում էր քրիստոնեական միստիցիզմը»<sup>3</sup>:

Լատինացիների անհաջողություններն Արևելքում և Կիլիկյան թա-

<sup>2</sup> Ֆրանսուա դը Ասիֆ – անվանված փոքրիկ աղքատ, խորացի հոգևորական: Ծնվել է Խոտափիայի Ասիֆ – քաղաքում 1181 կամ 1182 թթ., վախճանվել 1226-ին: Ֆրանցիսկան միաբանության հիմապիրը: Եղել է Հարուստ վաճառականի որդի, կտրել է կապերն իր ընտանիքի հետ: 1219-ին մեկնել է Եգիպտոս՝ սովորական Հավատքի քերելու: Նրա պոմաները ատաջն խոշոր ստեղծագործություններն են՝ գրված խորենն: 13-14-րդ դարերի նշանագոր խոտափի նկարիչ Զիոտոսն պատկերել է նրա կանքի տարրեր գրվագներ: Դրանցից մեկը գտնվում է Լուվրում և պատկերում է Ֆրանսուա Ասիֆի ու Խոնկենտիոս Երրորդ պատի հանդիպումը – Ա. Դ.:

<sup>3</sup> *David de Sassoua*, p. 38.

գավորության վերացումը 14-րդ դարում, մեծ հարված էր Հայ պաշտոնական գրականությանը, այնուհետև տեղի է ունենում թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսի գրավումը, որը լիովին մեկուսացնում է Հայերին Արևմուտքից:

Ֆ.Ֆեյդին խիստ կարևորում է 1715-ին Միխիթար արքայահոր կողմից Վենետիկում Հայկական միարանության հաստատումը: Հայագետը խորապես ցավում է Հայ գրականության, հատկապես ոռմանտիկ բանաստեղծների շատ քիչ ծանոթ լինելը արևմտյան գրականությանը («...malheureusement trop peu connue, de la littérature occidentale»)<sup>4</sup>:

Հայ գրականության երկրորդ վերածնունդը սկսվում է 1850-ից, Ռուսահայաստանից: Հայ գրականությունը բաժանվում է երկու ճյուղի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր գրական լեզուն: Արևմտահայ գրականությունը կրում է եվրոպական ազգեցությունը, իսկ արեելահայը ունի փոքր-ինչ առավել չելտված ազգայնական բնույթ, թեև որոշ չափով զգացվում է ուսւ գրականության ազգեցությունը:

Ֆ.Ֆեյդին բացառիկ արժենորում է Հինգերորդ դարի պատմիչներին և նրանց մեջ մեծագույնին՝ Մովսես Խորենացուն: Նա դիպուկ նկատում է, որ Հայերի պատմահայրը բնավ չի բավարարվել իր ազգի համար ժամանակագրություն գրելով, նա կամեցել է զրել մի պատմություն, որի սկիզբը վաղնջական ժամանակներում է: Այդ նպատակով դիմել է Հին աշխարհի պատմիչներին՝ հույն, պարսիկ, ասորի, քաղղեացի, որոնց մատյանները կարողացել է գտնել, դրանք բաղդատել է Աստվածաշնչի Հաղորդած փաստերի հետ, նա պեղել է ազգային արխիվ - ները, նույնիսկ դիմել է բանավոր ավանդություններին, որոնցում պահպանվել են պատմական իրադարձությունների արձագանքները: Նա օգտագործել է վիպական հատվածների բանաստեղծական փոքրածավալ կտորներ, պատմել է նախահայր Հայկից սերած թագավոր - ների նշանավոր գործերի մասին:

Ահա այդ վիպական հատվածների հիման վրա Մովսես Խորենացին կերտել է Տիգրան Առաջինի կենդանի դիմանկարը, այն արքայի, որը հաղթեց վիշապազուն Աժդահակին՝ Մարաստանի թագավորին: Ֆ. Ֆեյդին մեջբերում է. «Տիգրան և Աժդահակ» վիպաքային հատվածի հետևյալ մասը. «...խարստեաշս այս և աղերեկ ծայրիւ հերաց երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առողաբարձն և զեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս և ի խրախճանութիւնս օրինաւոր, զորմէ ասէին ի հինսն մեր,

<sup>4</sup> Նոյն տեղում:

որք փանդուամբն երգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստ և պերճարան և յամենայն որ ինչ մարդկութեան՝ պիտանի»<sup>5</sup>:

Ֆ. Ֆեյդին մեջբերում է նաև Տիգրանի որդիի Վահագնի ծննդյան պահը ներկայացնող հատվածը, որում Երկնքի և Երկրի երկունքից ծնվում է արեգակ աչքերով Վահագնը: Նրա կարծիքով Վահագնի այս գերընական ծնունդը եղակի չէ հայ վիպասարի մեջ: «Սասունցի Դավիթ» էպոսում ծովի միջամտությամբ նույնապես ծնվում են Հսկաներ: Այդ հսկաների մայրը Ծովինարն է, որի անունը բառացի նշանակում է «Լձի լուս» («Lumièrē du Lac»): Ծովինարը հայոց թագավորի աղջիկն է, որը սովորական մահկանացու չէ: Ոչ միայն նրա համար, որ նրա անունը նշանակում է լուս և ջուր, այլ նա իրականում լուսապայծառ է, նրա լուսը գիշերը լուսավորում է քաղաքը:

Ֆ. Ֆեյդին առանձնացնում է հին վիպասարի այն հատվածը, որը պատմում է Տիգրանի հաջորդներից Արտաշեսի մասին: Նա համապատասխան բացատրություններով ներկայացնում է «Արտաշես և Արտավազդ» վիպասարային հատվածի գողթան երգիների չափածո չորս հատվածները: Արտաշեսի կողմից Ալանաց գեղաշյա արքայալստեր՝ Սաթենիկին փալցնելը, Արտաշեսի և Սաթենիկի շքեղաշուք հարսանիքը, Արտավազդի բողոքը հոր դեմ՝ զանգվածային ինքնակամ մահերի պատճառով և Արտաշեսի ճակատագրական անեծքը՝ ուղղված իր որդուն: Ֆ. Ֆեյդին նաև վերապատմում է Խորենացու այն բանահյուսական հիշատակումը, ըստ որի պառավները պատմում են, թե քարայրում փակված Արտավազդի շղթաները երկու չներ շարունակ կրծում են, և թվում է, թե դրանք բացվում են, սակայն վերստին ամրանում են դարբինների կունահարությունից: Հայագետն այս անիծված որդու ժայռու ու պատմության 62-րդ (ԿԲ) գլխի վրա, ուր պատմվում է Տիգրանի՝ Արտաշեսի մյուս որդու և Արտավազդի եղբոր մասին, որն ունեցել է երկու Պետաս ձիեր, որոնք արագաշարժ և թեթևագնաց էին, և թվում էր, թե ոչ թե գետնի վրայով են գնում, այլ օդագնաց են<sup>6</sup>: Ֆ. Ֆեյդին այս ձիերի հատկանիշների և էպոսի Քուոկիկ Զալալու միջև տեսնում է ընդհանրություններ: Քուոկիկ Զալալին կրակե ձի էր, որը թռչում էր ոչ միայն օդում, այլ կարող էր իր չնչով, պոչով, ոտքերով ոչնչացնել ամ-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 39: Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 86:

<sup>6</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 232:

բողջ մի բանակ և վերջապես օժտված էր մարդկային լեզվով: **Ֆ.Ֆեյդիի** կարծիքով Վահագնի գերբնական ծնունդը, անիծված որդու անմահությունը, որը ապրելու է մինչև աշխարհի կործանվելը, այս գեպերը հափառում են երկու վիպասքերի հարազատությունը:

Հայ հին վիպասքում կան նաև սիրո պատմություններ: Յանկասեր Շամիրամը, ըստ հնագույն հայկական ավանդության, սիրահարվում է երիտասարդ ու հարապուրիչ Հայոց արքա Արա Գեղեցիկին, որը հավատարիմ էր իր կնոջը և Շամիրամի հետ պատերազմում զոհվում է: Խորենացին պատմում է Ասորեստանի թագուհու վանա ծովակի ափին պալատ կառուցելը և նրա կախարդելու հատկանիշներ ունենալը: Այս դրվագը **Ֆ.Ֆեյդին** համեմատում է «Սասունցի Դավիթ» էպոսում պատմվող Սանասարի և քառասուն ճյուղ Դեղձուն-Շամի հարաբերությունների հետ՝ հիշեցնելով, որ Դեղձուն-Շամը նույնպես ուներ կախարդելու հատկություն, նա նույնպես օտարազգի էր, սակայն Սանասարի հետ ամուսնանալուց հետո դարձավ իսկական քրիստոնյա: «Ինչպես երեսում է Սասունի վիպասքի հերոսները առավել գրկաբաց էին օտար արքայադուստրերի առաջ քան Արա Գեղեցիկը»<sup>7</sup>:

**Ֆ.Ֆեյդին** նկատել է տալիս, որ Մովսես Խորենացու պատմած հին վիպասքի երկու հերոսները միայն չեն առաջացնում հատուկ հիացմունք՝ մեկը Տորքը, չափազանց մեծ ուժի տեր, բայց ժանտատեսիլ, մյուսը Շարան, որն աչքի է ընկնում իր ախորժակի չափազանցությամբ և հայկական Գարգանտյուան է: «Սասունցի Դավիթն» էլ ունի երկու անկատար հերոսներ՝ Հորեղբայր Հովհաննը, որն ունի հումկու ձայն և Փորքշուկ Վերգոն, որը շարունակ սրտգողության մեջ է:

**Փ.Ֆեյդին** տեսնում է հեթանոսական ժամանակների արժամատները «Սասունցի Դավիթ» էպոսում, որոնք զանազան փոփոխությունների են ենթարկել բանավոր ավանդույթի ձևով և հասել են մինչև 19-րդ դար՝ իրենց մեջ պահպանելով հին վիպասքի որոշ ընդհանուր գծերը:

«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր ուղու մասին շատ դիպուկ է նկատել ակաղեմիկոս Հովսեփ Օրբելին. «Նույնն է տեղի ունենում ժողովրդական յուրաքանչյուր ավանդության հետ. նրա հիմքում թե՝ ըստ աննշան մի կորիղ է ընկած, սակայն այդ կորիղն իր վրա նորանոր չերտեր է ընդունում և հաճախ վերածվում մարգարտի, որը տասնյակ և հարյուրավոր սերունդների ստեղծագործության արդասիքն է: Այս պես է ստեղծվել նաև «Սասունցի Դավիթ» էպոսը<sup>8</sup>:

**Փ.Ֆեյդիի** կարծիքով Մովսես Խորենացին հաղորդում է «Սասունցի

<sup>7</sup> *David de Sassoun*, p. 41.

<sup>8</sup> Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 73:

Դավիթ» էպոսն առավել ճիշտ մեկնաբանելու մի բանալի: Նա իր պատմության մեջ զետեղում է Աստվածաշնչի «Գիրք թագավորացի» մի հատվածը, որում պատմվում է Սենեքերիմ թագավորի Աղրամելեք և Սարասար որդիների կողմից հոր սպանությունը և դեպի Արարատի երկիրը փախուստը. «Ասորեստանի Սենեքերիմ թագավորը չվեց, զնաց ու զարձավ Նինվեի մեջ նստեց: Երբ նա իր աստծու՝ Նեսրաքի տանը երկրպագություն էր անում, նրա որդիները՝ Աղրամելեքն ու Սարասարը նրան սրով զարկեցին ու Արարատի երկիրը փախան»<sup>9</sup>: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ այս հատվածը հետևյալն է. «Եւ ի մոռացումն եկն արդեօք յաղագս Սենեքերիմայ. քանզի ութսուն, աւելի կամ պակաս, ամօք յառաջ քան զթագաւորութիւնն Նարուզողնուսորայ էր Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի, որ զերուաղէմ պաշարեաց առ Եղեկիայի. Հրէից առաջնորդաւ, զոր սպանեալ որդոց նորա Աղրամելեքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ»<sup>10</sup>:

Որոշ տարրերակներում էպոսի առաջին ճյուղը կապվում է ասորական պատմական ժամանակների հետ, իսկ այլ պատումներում Սանասարը և Բաղդասարը սպանում են Բաղդատի խալիֆին: Այս վերջիններում առկա է արձագանքը Հայաստանում արարական արշավանքների և նրանց լին ժամանակահատվածի: Էպոսի առաջին ճյուղի նախաքրիստոնեական ծագման հայտնաբերողը եղել է Հայ էպոսագիտության մեծ երախտավորը՝ Գարեգին Սրբանձոյանցը. «Պատմածին նյութը Արծրունյաց նախարարություն և Սասնո գավառի շինությունն ու սկզբնավորությունն է: Աստվածաշունչեն և մեր ազգի պատմութեննեն Հայտնի է, որ Ասորվոց Սինեքերիմ արքան յուր Աղրամելեք և Սանասար որդիքը կուռքին զոհ ալիսի մասուցաներ, ասոնք ալ իրենց Հայոց զոհեցին և փախստյա եկան ի Հայս՝ մեր Սկայորդվո ժամանակը: Սանասարը բնակեցավ ի Սասուն, և Աղրամելեք՝ Վանա ծովու կողմերը, Կապուտկողու մոտերը: Ասոնց պատմությունը, թե Խորենացին, թե Թովմա Արծրունին և թե այլ պատմիչներ ընդարձակ կը գրեն»<sup>11</sup>:

Ֆ.Ֆեյդին առանձնացնում է պատմական այն շերտերը, որոնք և կազմել են «Սասունցի Դավիթ» էպոսի ժամանակային հիմքը: Նրա - նում կան Հայերի պայքարը արարական խալիֆաթի և Եփիպտոսի մելիքների դեմ, արտացոլված են Հարաբերությունները խաչակիրների և բյուզանդական կայսրերի հետ: Դա երևում է Զմշկիկ Սուլթանի և նրա

<sup>9</sup> Գ. Թագաւորաց, ԺԹ, 36-37:

<sup>10</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 82:

<sup>11</sup> Գարեգին Սրբանձոյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 85:

աղջկա միջոցով Դավթին սպանելու դրվագում: Ֆ.Ֆեյդին նկատում է, որ Զօշկիկ անունը էպոսում մտել է բյուզանդական հայագիտ կայսր Զօշկիկի պատճառով:

Հայագետը համոզված է, թե մեծ կապ կա «Սասունցի Դավթ» էպոսի և Մովսես Խորենացու օգտագործած հին վիպասքի միջև, որովհետեւ բազմաթիվ թեմաներ նրանցում բաղդատելի են:

Նա բացատրում է, որ էպոսը բաժանված է չորս մեծ երգերի միջև, և յուրաքանչյուր երգ ունի իր գլխավոր հերոսը, որոնցից յուրաքանչյուրին հաջորդում է նրա որդին: Չնայած աղզային հերոսների բազմազանությանը, նրանք կոնկրետ պատմական անձեր չեն: Ֆ.Ֆեյդին հիշեցնում է Մովսես Խորենացու բերած նախարարների ծագումնաբանությունը. «Արծունիներն ու Գնունիները սերում են Ասորեստանի Սենեքերիմ թագավորից, Բագրատունիները՝ Հրեաներից, Գնթունիները՝ քանանացիներից, Մուրացանները՝ Մարաց Աժդահակից, Ամատունիները՝ Հրեա Մանուկից, Մամիկոնյանները՝ Մամգուն Ճենացուց և այլն»:

Ֆ.Ֆեյդին համառոտ խոսում է հայ էպոսագիտության հիմնադրի՝ հայր Սրբանձոյանցի մասին, որը երջանկություն է ունեցել առաջինը գրառելու հայ աղզային էպոսը գյուղական մի ասացողից: Համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ Երևանում հրատարակվել է էպոսի համահավաք բնագիրը Մանուկ Արեղյանի, Գևորգ Արովի և Արամ Ղանալանյանի ջանքերով կազմված և ղեկավարված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կողմից: Բոլոր չորս երգերի մեջ առավել նշանակալին երրորդն է, որի անունով էլ կոչվել է էպոսի համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավթ»:

Հայագետը նշում է հայկական երկրորդ էպոսի այլ անվանումներ ևս՝ «Սասնա ծոեր», «Սասնա ծոեր»: Նա բացատրում է, որ «ծուռ» հայերենում նշանակում է «մի քիչ խենթ», նաև «Հանդուգն խիզախ»: Էպոսի չորս ճյուղերը տարրերվում են միմյանցից, սակայն երկրորդ և երրորդ ճյուղերում կան որոշ ընդհանրություններ: Առաջին ճյուղում Ծովինարն ամուսնանում է Բաղդադի խալիֆի հետ՝ չնայած կրոնական հակադրությանը: Ծովինարը հղանում է լճից բխած աղբյուրի մի բուռ լիքը և մի բուռ կիսատ ջրից: Այդ խևկ պատճառով Սանասարը ուժ է ստանում ջրից, ինչպես հունական դիցաբանության մեջ Անթեյը՝ Հողից: Երկրորդ և երրորդ ճյուղերում ներկայացվում են գլխավոր հերոսների մանկությունը, միրանքները, սիրահարությունը, ամուսնությունը: Մի հերօսը հետեւում է մյուսին՝ Դավթը՝ Մեծ Մհերին:

Ֆեյդին համառոտ պատմում է երկրորդ և երրորդ ճյուղերի բովանդակությունը, հատկապես ծանրանում է երրորդ ճյուղի ղեպքերի վրա՝

Դավիթ և Զմշկիկ Սուլթան Հարաբերությունները ներկայացնելով իրենց ամբողջության մեջ է պահի չորրորդ ճյուղը մի դրամատիկ պատում է և մի Գողգոթա<sup>12</sup>: Փոքր Մհերը ծնված օրից արդեն իր վրա կրելով արտասովոր ճակատագրի կնիքը՝ անիժվում է Հորից: Հուսահատ Մհերը այցելում է ծնողների գերեզմաններին, նա պարտվում է Աստծու ուղարկված հրեշտակներից և վերջապես փակվում է քարայրում՝ մինչև աշխարհի վրա չարի վերացումը և արդար կյանքի հաղթանակը:

Ֆեղին տիպարանական չափանիշներով բնութագրում է Սասնա ծռերին: Նրանք հաճախ բնութագրվում են որպես «ծռեր»: Իրենց ծննդյան օրից սկսած՝ այս դյուցագունները մեծանում են գերբնական ձևով. նրանք մի օրում մեծանում են այնքան, որքան մյուս երեխաները մեկ տարում: Իր առաջին տարիներին Դավիթը խաղում է իրեն հասակակից երեխաների հետ. նա պարզամիտ է, բայց չափազանց ուժեղ, և նրա խաղը ընկերների համար դառնում է ողբերգություն: Դավիթը իր թեկին կրում է «Խաչ Պատերազմին», որը մի կախարդական-հոգեոր թալիսման է:

Բոլոր դյուցագունները խիզախ են. նրանք մարտնչում և հաղթում են ապուծների, վիշապների, գեերի կամ անհամար բանակների: Նրանք առ ոչինչ ունեն մահը: Դավիթը միայն մեկ անգամ է վախի զգացում ունենում ճակատամարտից առաջ: Նրանք ունեն առասպելական նկարագրի: Հարձակումից առաջ Դավիթը զգուշացնում է թշնամու զորքին ճակատամարտի մասին: Նա չի կարող որսալ արգելված զաղաններին, Մսրա Մելիքի նենգությունների դիմաց մեծահոգաբար զարկեր է զիջում Մելիքի մորն ու քրոջը: Երբ Դավիթն անխնա ջարդում էր Մելիքի զորքը, արար մի ծերունի նրան բացատրում է զինվորների անմեղ լինելը, և նա զենքն ուղղում է Մելիքի զեմ, իսկ զորքին ազատ է արձակում՝ Հայրենիք վերադառնալու:

Սասնա դյուցագունների իդեալը ազատությունն է, որը պետք է իրենց, իրենց ժողովրդին, ողջ մարդկությանը: Դավիթը այլ ժողովուրդների մոտ էլ կատարում է ճնշվածներին պաշտպանելու սրբազն գործը: Սակայն Դավիթը երբեք չի զայթակղվում նստելու որևէ երկրի գահին, թեև այդ առաջարկը նրան արվում է: Դավիթն ունի ժողովրդական վարքագիծ: Նա և մյուս Սասնա ծռերը կատարում են չատ համեստ աշխատանքներ, մտերմանում են հասարակ մարդկանց հետ, օգնում են հոգնած գյուղացիներին, նոյնիսկ եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունը այն աստի - ճանի է, որ ինչպես նկատել է Հովսեփ Օրբելին, Սասնա դյուցագուննե-

<sup>12</sup> David de Sassoun, p. 46.

ըը չունեն ոչ մի տիտղոս, ոչ մի պատվանուն, եթե նրանք հրապուրվում են որևէ կնոջով, ապա ամուսնանում են նրա հետ: Մեծ ՄՀերի դեպքը կապվում է նրա՝ Մելիքին տված խոստման հետ: «Այս հերոսները գերմարդիկ են ոչ միայն ֆիզիկական ուժի տեսակետից, այլև իրենց բարոյական հատկանիշներով»<sup>13</sup>: Վասն այն է, որ նրանք ամեն ինչ վերցնում են իրենց վրա՝ մյուսներին ոչինչ չթողնելով:

Ֆեյդին նկատում է, որ եթե այս դյուցազուններն ունեն շատ ընդհանուր գծեր, ապա կանայք շատ տարբեր են: Սակայն նրանց կերպարներում հայ ժողովուրդը դրել է իդեալ կնոջ կատարելատիվը: Դեղձունք ամուսնու մահից հետո խոր սուգ է մտնում՝ մինչև իր թոռ Դավթի՝ ժողովրդին պաշտպան կանգնելը, Արմաղանը երկրի պետական շահի համար ինքնակամ հրաժարվում է երկրային կյանքից, Խանդութք չի ուզում ապրել Դավթի մահից հետո, Փոքր ՄՀերի կինը մեռնում է իր երկրում, նամակով խնդրում է ամուսնուն իրեն թաղել հայոց հողում:

Առաջարանի վերջում Ֆ.Ֆեյդին խոսում է «Սասունցի Դավիթ» էպոսի պոետիկայի մասին: Էպոսի պատումը ներկայանում է որպես հանգափորված պատում, որում կան երգվող հատվածներ: Էպոսը բարձրարկեսատ է, նրանում բնորոշումները նրբանկատ են, կան հուզիչ հատվածներ, օրինակ, Դավթի հրաժեշտը: Կան երգիծական անձեր, ինչպես Փորքչուկ Վերգոն, Քետի Թորոսը, իր փոփոխական բնավորությամբ, կան սպանիչ ծաղրի հատվածներ, ինչպես արար կանանց դիմումը Կողբաղնին: Էպոսը հիացմունք է պատճառում իր պարզությամբ ու բարությամբ:

Ֆեյդին հավատացնում է, որ ինքը բառ առ բառ ճզգրտությամբ փոխել է էպոսը ֆրանսերենի՝ պարտավորված լինելով չսխալվել և չկորցնել այն գեղեցկությունը, որը զեպի իրեն կծի ամեն մի ընթերցողի: Նա խորին հարգանքով է խոսում համահավաք բնագրի հեղինակների մասին, որոնք առաջնակարգ գործ են կատարել, էպոսը քննել են մանրակրկիտ ձևով:

Համահավաք բնագրում մեկտեղված են էպոսի բոլոր տարբերակների լավագույն հատվածներն ու կարևորագույն փաստերը: Որոշ հատվածներ գիտակցարար փոփոխված են՝ պատումն առավել գրավիչ դարձնելու միտումով: Համահավաք բնագրի հեղինակները մեծապես օգտվել են Երգանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» (1897-1914) պատումներից:

Ֆեյդին խոստովանում է, որ ինքը բարեխղճորեն նշել է այն բոլոր

<sup>13</sup> David de Sassoun, p. 48.

բառերի և արտահայտությունների իմաստները, որոնք կարող էին անհասկանալի լինել ֆրանսիացի ընթերցողի համար: Հայերեն համահավաք բնագիրը զրված է բարբառով, սակայն հայագետը թարգմանությունը կատարել է գրական ֆրանսերենով՝ առավել հասկանալի դարձնելով այն ֆրանսախոս ընթերցողի համար: Վերջում նա համոզմունք է հայտնում, թե իր թարգմանությունն արևմտյան ընթերցողին հնարավորություն կտա վայելելու ողջ համն ու հոտը այս հիասքանչ ժողովրդական վիպասարի:

Ֆրեղերիկ Ֆեյդիի կատարած անթերի է թե՛ թարգմանական, թե՛ բանասիրական-մեկնարանական առումով: Ցուրաքանչյուր էջի տակ զետեղված մանրակրկիտ ծանոթագրություններն անսահման հեշտացնում են էպոսի ընկալումը: Այդ ծանոթագրությունները կարող են դառնալ առանձին ուսումնասիրության նյութ:

Ֆեյդին շատ հաճախ ծանոթագրություններում կատարում է համահավաք բնագրի և «Սամնա ծոեր» էպոսի տարրեր պատումների բնագրերի բաղդատումը: Նա հմտորեն է բացատրում բազմաթիվ հայերեն դարձվածքների իմաստը և դնում դրանց ֆրանսերեն կամ այլ լեզուներով հայտնի համարեխները: Բերենք երկու օրինակ (էջ 170): «*Une jeune fille, une vraie houari de feu*»: Ֆեյդին բացատրում է, որ գեղեցկության համար հայերենում հուրի-հրեղեն ասվածը նշանակում է գերբնական գեղեցկության տեր կին-էակ (էջ 177): «*Il se firent des coupures aux doigts et mêlirent leurs sangu*s» («Նրանք կտրում են մատները և խառնում են իրենց արյունը»): Ֆեյդին բացատրում է: Տես այս ծեսի նկարագիրը Տակիտոսի Տարեգրություններում, XII, 47, Հոաղամիսի և Հայոց արքա Միհրիդատի միջն և այլն, և այլն:

Ռոմեն Ռոլանը նիդերլանդական էպոսի՝ Շառլ դը Կոստերի «*Lequel le Roi Lancelot et la Dame d'Ys*» երկի համար զրված առաջարանում նկատում է, թե Փլամանդացիների ազգային երգում շեշտվում է լույսի մեջ ապրելու գաղափարը, որ այդ էպոսը մարդու և ժողովուրդների ազատության էպիկական ձայնն է: Նույնը կարող ենք ասել «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն բնագիրն ընթերցելուց հետո<sup>14</sup>:

<sup>14</sup> Charles de Coster, *La légende et les aventures heroiques, joyeuses et glorieuses d'Ulenspiegel et de Lamme Goedzak au pays Flandres et ailleurs*, Moscou, 1979, p. 22.

## Բ. ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻՆ ԿՑՎԱԾ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆեյդին իր ծանոթագրությունները զետեղում է յուրաքանչյուր էջի տակ՝ այս տեսողական ձևով նա առավել հեշտացնում է ընկալումը, ծանոթագրում է հաճախ ամեն մի մանրուք, որը կարող է փոքրինչ դժվարություն հարուցել ֆրանսերենով ընթերցողի համար: Այս ծանոթագրությունները պերճախոս վկայում են, որ հայագետը ծանոթ է «Սասնա ծոեր» էպոսի բազմաթիվ տարրերակների, նաև կարդացել է հայ էպոսագետների գրական այդ հիմաքանչ հուշարձանին նվիրված ուսումնասիրությունները՝ սկսած Գարեգին Սրվանձտյանից<sup>1</sup>: Ֆեյդին հաճախ է վկայակոչում «Սասնա Ծոեր» ժողովածուի հատկապես առաջին տարրերակը<sup>2</sup>:

Առանց Ֆեյդիի ծանոթագրությունների մեծագույն մասի ներկայացման անհնար է պատկերացնել հայագետի կատարած աշխատանքի վիթխարիությունը:

Ծանոթագրություններն սկսվում են հետևյալ հատվածով՝

1) Գառնամ, զօղորմին տի տամ

Խանում Ծովինարին.

Գառնամ, զօղորմին տի տամ

Սանասարին, Բաղրասարին.

Գառնամ, զօղորմին տի տամ

Քեռի Թորոսին

Գառնամ, զօղորմին տի տամ

Ականջ արողների ծնողներին:

Ֆեյդին այս հատվածի համար ասում է, որ այն երգվում է, ինչպես որ երգվում են էպոսի շեղագիր տպված հատվածները, փաստը վերցրել է հայկական բնագրի հրատարակիչներից: Այս ծխական կրկնակը համարում է ոեքվիեմ (պատարագ կամ պաշտոն ննջելոց): Ասացողները,

<sup>1</sup> «Գրոց ու բրոց» և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ (տե՛ս Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, 1, Երևան, 1978, էջ 27-116):

<sup>2</sup>Տե՛ս Սասնա Ծոեր, Հ. Ա. խմբագրեց պրոֆեսոր, դոկտոր Մ.Աբեղյան, Երևան, 1936; 2004-ին Յունեսկո-ի և ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ջանքերով լույս է տեսել «Սասնա Ծոեր» էպոսի ընտիր պատումների ժողովածուն, որը թարգմանել, ծանոթագրել և գիտական բառարանով ներկայացրել է ակադեմիկոս Կարապետ Մկրտ-Օհանջանյանը (տե՛ս Արմենский народный эпос Сасунские удальцы, Изданные варианты, Перевод текстов, составление и словарь-комментарии академика НАН РА Карапета Мелик-Оганджаняна, Ереван, 2004).

որոնց հարցրել են բանահավաքները, այս կրկնակ ոեքվիեմի մասին չեն կարողացել տալ բացատրություն, բացի այն բանից, որ մեծ մեղք կիխներ պատմելիս այդ հատվածը զանց առնել: Տարբեր պատումներում հերոսների անունները տարբեր են: Ծովինար բառը կազմված է մի հայերեն ու մի իրանական բառից և նշանակում է «Հճի լույս» («Lumièr du Lac»):

2) Ըսկիզբն էր կըոապաշտ Խալիֆան  
Մեկ էլ Հայոց Գագիկ թագավոր...

Ըստ Ֆեյդիի՝ բազմաթիվ նախընտրելի տարբերակներում միայն կուապաշտ խալիֆ չէ, այլ կուապաշտ թագավոր: Սա Ասորեստանի թագավոր Սենեքերիմի անունն է, որն ըստ աստվածաշնչան պատումի (Դ, Թագ., ԺԹ, 37) սպանվել է իր երկու որդիների՝ Աղրամելեքի և Սարասարի ձեռքով, որոնց ուզում էր զոհել կուռքերին՝ դեպի երուաղեմ կատարած անհաջող արշավանքից հետո<sup>3</sup>:

Ֆեյդին նկատում է, որ բոլոր տարբերակներում էլ պահպանվում են բիբլիական անունները, և չպետք է մոռանալ, որ էպոսն ստեղծվելու ժամանակ Արծրունիները թագավորություն ունեին նույն տարածքում, ուր փախել էին Աղրամելեքն ու Սարասարը և մելիք տերմինը, որ կցվում է այդ հերոսներից մեկի անվանը, արաբական է («est un titre arabe»), այսինքն՝ մահմեղական, և այն չէր կարող հայկական համարվել:

Գագիկ անունը, որ նախընտրել են համահավաք բնագրի հեղինակները ուրիշ այլ անուններից, ունի իր հիմքը. X-XI դդ. այդ անունը կրել են Հայաստանի երեք հակամոռ թագավորությունների արքաները և հատկապես Վասպուրականի մի թագավոր Արծրունյաց տոհմից՝ Խաչիկ-Գագիկ (914-943 թթ.), որը ժամանակակիցն էր Բաղդատի խալիֆի: Այս Գագիկը Արծրունի էր և ըստ առասպելի՝ աստվածաշնչային Սարասարի շառավիղը, ուրեմն X դարը կապվում է այս էպոսի հետ:

3) Աղջիկ Էնպես խորոտ, Էնպես խորոտ,  
Որ տասնուշըս ապօր զլուսնին կը նմաներ,  
Որ յոթ սարի էտևն կ'էնի:

<sup>3</sup> Ու այն գիշերը Տիրոջ հրեշտակը ելավ ու Ասորեստանի բանակի մեջ հարյուր ութ - սունհինգ հազար մարդ սպանեց: Երբ առավոտան վաղ երան, նրանք բոլորը մեռած մարմիններ էին: Ասորեստանի Սենեքերիմ թագավորը չվեց-գնաց ու վերաբարձավ նինվե: Երբ նա իր աստծու՝ Նեսրաքի տաճարի մեջ երկրպագություն էր անում, նրա որդիները՝ Աղրամելեքն ու Սարասարը, նրան սրով սպանեցին ու Արարատի երկիրը փախան (տե՛ս Դ, Թագավորաց, ԺԹ, 35-37):

Այս հատվածում Ծովինարը համեմատվում է տասնչորս օրական լուսնի հետ: Ֆեյդին գրում է. «Լիալուսինն իր ողջ ճշխությամբ Արևելքի շատ ժողովուրդների մոտ խորհրդանշում է կնոջ գեղեցկությունը, և այն դուրս է գալիս յոթ սարերի գագաթներից: Նա բերում է մեկ այլ պատումի հետևյալ հատվածը. «Quand une touche se promenait sur son front, elle tombait et se cassait sept côtes» (*Recueil, I, p. 308*): («Երբ ճանձը ման է գալիս նրա դեմքին, ընկնում է և յոթ կտոր լինում»):

4) Ահա, Խա՛լֆա, զէդ հրեղէն աղջիկ տեսանք...

Ծանոթագրված է Հրեղեն բառի համար, թե աղջիկը եղել է գերբնական գեղեցկության տեր:

5) Քո քաղաք տակ ու վերև կ'անեմ...

Ծանոթագրված է՝ կործանել քաղաքը, քարը քարի վրա չժողնել, ավագ մաղել:

6) Էնտեղ կը գտնվի Կաթնով Աղբյուր...

Ծանոթագրված է՝ Վանա լիճը շատ աղի է, նրանից բխում են փոքրիկ, քաղցրահամ աղբյուրներ, որոնք ցայտում են խորքից՝ դառնալով փոքրիկ ջրվեժ: Ֆ.Ֆեյդին մեջբերում է անգլերեն հետևյալ վկայությունը. «The water is too salt to drink... A large spring of fresh water rises in the lake near the middle of the shore» (տե՛ս «Le Murray's Handbook for travellers in Asia Minor, London, 1895»):

7) Մի բուռ լիք ջուր խմեց,

Մեկ էլ՝ մի բուռ կիսատ:

Աղբուրըն ցամաքավ:

Ծանոթագրությունը՝ Բավական պատումներում Ծովինարն ինքն իրեն հարց է տալիս, թե ի՞նչ մեծ մեղք կարող է գործած լինել, որ հրաշք-աղբյուրն այդքան արագ ցամաքեց:

8) Էնոր համար մեկ ջոկ սարայ շինեց,

Հաց, ջուր որկեց էնտեղ...

Ծանոթագրությունը<sup>4</sup> «Հացն ու ջուրը» միայն բանտարկյալների ուժիմը չէ, լայն առումով այն նշանակում է սնունդ:

9) Ասաց.— Սարայից դուրս չգաք:

<sup>4</sup> Ծանոթագրություն բառն այսուհետեւ մեր կողմից կնշվի ծան. ձևով:

**Ծան.**՝ Մելքիսեղեկ քահանան և դաստիարակչուհին ամենուր ուղեկցում են Ծովինարին:

**10) Ցոթ դուռ շինեց, սուգ արեց:**

**Ծան.**՝ Կախարդական յոթ ու քառասուն թվերը կան ողջ էպոսի մեջ:

**11) Խալիֆան էլ ակնավ, ասաց.- «Իմ զարմից չէ»:**

**Ծան.**՝ Տարբեր պատումներում Ծովինարը միշտ գտնում է հաջող քողարկման միջոց, հատկապես ժամանակավորապես հետաձելու իր ամուսնության կայացումը, բայց թույլատրում է, որ խալիֆն իր հետ խոսի վարագույրի հետևից: Ավելի ուշ, երբ բացահայտում է իր վիճակը, պնդում է, թե խալիֆն այնքան հզոր է, որ զրույցի ժամանակ նրա շունչը բերանից ստանալով, ինքը հղիացել է (Recueil, I, 128, 309): Ուրիշ տեղերում խալիֆի կասկածն ընկնում է Մելքիսեղեկ քահանայի վրա:

**12) Մեկը թամամ, մեկն կիսատ:**

**Ծան.**՝ Բազում պատումներ բացատրում են, որ առաջինն առաջացել է լիքը բուռ ջրից, երկրորդը՝ կես բուռ:

**13) Մելքիսեթ քահանան էկավ**

Թոնդրան վերա կնքեց,

Զոջ տղի անուն էդիր Սանասար,

Պստիկին՝ էդիր Բաղդասար:

**Ծան.**՝ Թոնիր են կոչում տևական այրվող փուռը, երբեմն սովորական փուռը: Այս հատվածը պարունակում է կրակի սրբազն բնույթի պաշտամունքը<sup>5</sup>, թոնիրի վրա են նշանավորվում դարավերջի ավարտը և հոգենոր կյանքի բազմաթիվ ծեսեր՝ ինչպես մկրտվելը (տե՛ս Լապան, Varanda, 1897, II, p. 148):

**14) Մերն ասաց քահանային. – Տե՛րտեր,**

Իմ տղաներին զաս տուր՝ կարդան:

Դաս էտու տղաներին.

Էնոնք գրել-կարդալ սովորեցին:

**Ծան.**՝ Այստեղ անհրաժեշտ է վերհշել մի հատված, որը կա երկու պատումների մեջ (Recueil, var. I, pp. 478 et 531) և որի մասին ակնարկ կա հետագա շարադրանքի մեջ: Ֆեյդին իր չափածո թարգմանության մեջ

<sup>5</sup> Զրադաշտական կրոնի սրբազն մատյանում՝ «Ավեստայում», կինն անպայման պետք է ծննդաբերի թոնիրի մոտ՝ մոխրի վրա - Ա. Դ.:

պատմում է Հետեւյալը. «Երեխաները մեծանում են, նրանք արդեն իրենց ատամներն են Հանում: Մայրը նրանց առաջ դնում է դանակներ, մատանիներ, սանրեր և ուրիշ այլ մանր իրեր: Նրանց գլխին Հատիկ է լցնում և ասում. «Ճոկեցե՛ք այս իրերից մեկը և վերցրե՛ք, այն ձերը կլինի»: Եղբայրներից ամեն մեկն ընտրում է մի մատանի և դնում մատին: Երբ մեկ-երկու ժամ անցնում է, մայրն ասում է. «Բերե՛ք մատանիները և ձեր մեջ փոխանակեցե՛ք»: Սանսարն ասում է. «Այդ ինչի՞ համար է, մա՛յր»: Մայրը պատասխանում է. «Երբ նա կլինի դժվարին վիճակում, նրա մատանին կսևանա քո ձեռքին, իսկ եթե զու լինես վատ վիճակում, քո մատանին կսևանա նրա ձեռքին, այս ձեռով եթե ձեզնից մեկն ընկնի վտանգի մեջ, մյուսն այդ կիմանա, և զուք փոխադարձաբար օգնության կհասնեք մեկդ մյուսին»: Եղբայրները փոխանակում են մատանիները:

- 15) Խալիֆան ինքն Էլավ, տեսավ,  
Տեսավ, որ զորք զիրար կը ջարդի,  
Էկավ, իր մոտ կը հասնի.  
Մնաց ինք Խալիֆան մենակ:

Ծան.՝ Մի շարք պատումներում երուսաղեմն աղատագրելու համար Հրեշտակների բանակն է կործանում Սենեքերիմի գնդերը՝ ինչպես աստվածաշնչային պատումում (Բ, Մնացորդաց, ԼԲ, 20-21):<sup>6</sup>

- 16) Որ Խալիֆան հեծավ, փախավ,  
Էդ նեղութնի մեջ կանչեց իր կոքերուն...

Ծան.՝ Կուռքերի հիշատակումը ցույց է տալիս, որ խոսքն խակական կուպաչտության մասին է, քանի որ հայերը, որոնք ապրում էին մահ-մեղականների մեջ, լավ գտնեին, որ նրանք կուպաչտ չեն: Փոխարինումը մի շարք պատումներում խալիֆին Սենեքերիմով, նրանից է, որ արաբական խալիֆաթի կործանումն այնքան վաղուց էր, որ կարող էին մոռանալ խալիֆի մահ-մեղական լինելը:

- 17) Էս գլխեր սուրբ Կարապետ Էրազ Էկավ ինձի...

Ծան.՝ Սուրբ Հովհան Մկրտիչը՝ Հիսուսի Կարապետը, հայերի ամենից ավելի պաշտված սուրբն է (բացի աղքային սուրբ Գրիգոր Լու-

---

<sup>6</sup> Եղեկիս թագավորը և Ամովսի որդին՝ Եսայի մարգարեն, այս բանի համար դեպի երկինք աղաղակելով աղոթք արեցին: Տերը Հրեշտակ ուղարկեց ու Ասորեստանի թագավորի բանակի մեջ ամեն քաջ կտրիմ ու իշխան ու զորագլուխ զարկեց: Սենեքերիմը ամոթով իր երկիրը դարձավ ու իր աստծու տունը մտավ և իր երանքից ելած որդիները նրան սրով սպանեցին (Բ, Մնացորդաց, 32, 20-21):

սավորչից), հատկապես Տարոն նահանգի և նրան Հարևան գավառերի բնակիչների մոտ: Մուշի մոտ կա մի վանք, որը կոչվում է Իննակնյա (ինն ակունք), որը նրան է նվիրված, և ուր Հանգչում են նրա մասունքները: Այս վանքը կառուցվել է Հին Հեթանոսական տաճարի տեղում և դարձել Արևմտյան Հայաստանի զլիսավոր ուխտատեղին:

**18) Պազին իրենց մոր ծիծ, ասին...**

Ծան.՝ Կրծքին ուղղված երախտագիտության նշան, որը նրանց կերակրել է:

**19) Հեռի լսողաց, չար թշնամին...**

Ծան.՝ Հեռու նրանից, ով ինձ լսում է: Սա բանաձև է, որ պաշտպանում է լսողներին չար վտանգից: Մարդասիրության օրենքը պահանջում է, որ երբ խոսում ես չարի մասին, օգտագործվեն նման կանխարգելիչ միջոցներ:

**20) Քո տուն չավրի, քեզի չկա՞ էրինջ...**

Ծան.՝ Թող քո տունը չքանդվի:

**21) Հացն ու գինին, տեր կենդանին...**

Ծան.՝ Հացն ու գինին, Տեր կենդանին խորհրդանիշեր են<sup>7</sup>: Սրանք ներկայացնում են Հաղորդությունը, որն ունեն այս գերդաստանի իրար հաջորդող բոլոր հերոսները՝ պատերազմի դաշտում որպես ճիչ արձակելու համար: Սրբազն բանաձև՝ որպես քավություն:

**22) Էս ջուրը խմող ազրայի՛լ մարդ կը դառնա:**

Ծան.՝ Բնագիրը տալիս է Azrael՝ Հրեշտակ, որն առնում է մեռած - ների հոգին: Համատեքստը չի թույլատրում ընդունել այդ մեկնությունը: Ճշմարտապես պետք է տեսնել ժողովրդական ասացողների շփոթը Azrael և Atazael անունների միջն. այս վերջին անունը՝ կտրիճ իմաստով, քիչ գործածական բառ է Մալխայանի բառարանում:

**23) Երկու ազբեր հեծան ու գնացին, հասան Մուշ:**

Ծան.՝ Քաղաք Արևմտյան Հայաստանում՝ Տարոն գավառում, Սասունի հյուսիսում: Այստեղ՝ Մուշից մոտ 40 կիլոմետր հեռու, գտնվում

<sup>7</sup> Սա եկեղեցու խորհուրդն է՝ Հաստատված Քրիստոսից, որով ստուգապես գոյություն են ստանում մարմինն ու արյունը, Քրիստոսի հոգին և Աստվածությունը՝ հացի ու գինու տեսքով: Որ ներքեն Հավատացյալների մեղքերը՝ ստանալու շնորհներ և պարզեներ Հավիտենական կյանքին արժանի լինելու համար: Սուրբ Հաղորդության նյութն է ցորենի հացը և խաղողի գինին:

Է Իննակնյան վանքը, ուր պահպանվում են Հովհաննես Մկրտչի մասունքները<sup>8</sup>:

24) Գնացին Մուշեղ թագավորի առաջ:

Ծան.՝ Կա Մուշեղ անունով մի թագավոր, որն իշխել է Կարսի փոքրիկ թագավորությանը X դարում: Սակայն ասացողների համար այն այլ նշանակություն չունի, բացի բաղաձայնույթից՝ Մուշ-Մուշեղ:

25) Ջահեններ Էլամ, գնացին, ձի խաղցուցին:

Ծան.՝ Գյուղական միջավայրի հիմնական սովորույթներից, որ ուղեկցում է բոլոր հարսանիքներին:

26) Ջիավորներ կայսան մեկ կողմ.  
Էկան, իրարուց կրակ տարան,  
Երբ մեծ աղքեր կ'երթար ետև,  
Ջրինո կը թալեր, վնաս չէր տա...

Ծան.՝ Սա մի խաղ է, որ անց է կացվում ձիերի վրա: Կանգնում են միմյանցից տարածության վրա և շպրտում են նետի ձեւ ունեցող մահակ: Նրանք հերթով մեկը մյուսից վերցնում են կրակը, իբրև թե ձողով պետք է հարվածեն թշնամու ձեռքին, որն իբր իր հետապնդողից փախչում է:

Սասունի հերոսները մեծ մասամբ չեն գիտակցում իրենց ուժի չափը, աշա թե ինչու նրանք խաղի ժամանակ հաշմում են իրենց ընկերներին, չարչարում ձիերին՝ գործելով մեծ անշնորհքություններ: Առաջին սերնդի հերոսներից, որն աչքի է ընկնում իր հսկա ուժով, բնականարար Սանասարն՝ «մեծ եղբայր»: Բաղդասարն, իհարկե, անհամեմատ ավելի ուժեղ լինելով մարդկային արարածներից, համեմատ եղբորը թույլ է, ուրեմն ավելի կոպիտ է, ինչպես նկատվում է ժողովրդական պարզամտությամբ:

27) Համա քենե պահենք, Աստըծուց ի՞նչ պահենք...

<sup>8</sup> Սուրբ Կարապետ, Ս.Գլակա կամ Իննակնյան վանք – հոչակավոր և պատմական, հնադարյան վանք, գտնվում է Տուրուբերանի Տարոն գավառում, Մուշից 7 ժամ հեռու: Հեթանոս ժամանակ վանքի տեղը նվիրված էր Դեմետրե և Գիսանե չաստվածներին, որոնց մեջանները կործանելով՝ Ս.Լուսավորիչը կառուցեց եկեղեցի և վանք՝ մեջն ամփոփելով Ս.Կարապետի և Աթանագինես եպիսկոպոսի նշանարները՝ առաջին վանահայր գներով Գլակ Աստրոն և այդ պատճառով էլ կոչված է Գլակա վանք: Վանքն Իննակնյան է կոչվել նաև իրար մոտիկ թիսող ինը քաղցրահամ աղբյուրների պատճառով:

Գրիգոր Լուսավորիչը կանանց արգելել է Ս.Կարապետի եկեղեցին մտնել, իբրև Հեռովդիատու, որ Հովհան Կարապետի գլխատման պատճառ եղավ, չինի թե կնոջ ներկայությունից սրբի հոգին գրգոր նրանց դեմ և մահ պատճառի (տե՛ս Հ. Ս. Էֆրեմյան, Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, Հ. Բ. Թ-Յ, Վենետիկ, 1907, էջ 284):

**Ծան.**՝ Այս բանաձեռ նշանակում է. «Որքանո՞վ է լավ, որ դու այն շարունակես թաքցնել»:

28) Վեր տուն որ հաց կ'ուտեին  
Էնոր տաշտ ու մաղ կը կախեին:

**Ծան.**՝ Դարձվածք, որ նշանակում է սպառել տան ողջ սննդապաշտություն:

29) - Ձեր հոգուն մեռնիմ, տղաներ...

**Ծան.**՝ Մեկն այն բազմաթիվ բանաձեռից, որ օգտագործվում է ուրիշի կյանքը պահպանելու համար:

30) Աստված ձեր տուն շինի...

**Ծան.**՝ Սա մաղթանքի բանաձեռ է: Թող Աստված պահպանի ձեր տունը: Ասվում է չար ուժերից պաշտպանելու համար: Այս միտքը մոտ է այն երեսույթին, երբ ֆրանսիացիները խփում են փայտին, կամ խոալացիները՝ երկաթին: Սա հայերի մոտ նաև աստվածային պաշտպանության խնդրանք է, կամ ինչպես մահմեդականներն են ասում «Մաշ ալլահ» («*Mach Allah!*»), դրանով դնելով իրենց Աստծու պաշտպանության տակ:

31) Վա՛, Էս ի՞նչ սասուն քարեր են...

**Ծան.**՝ Սասունը կապում են ցասումի հետ, հատուկ աստվածային ցասում: Այդտեղից էլ սասունցի, Սասնա ծոեր: ...Մի ժամանակ տարածքը կոչվել է Սանսասուն: Հայերենում երկու տարբեր բառեր կապ - վում են ա հողակապով՝ *San-a-soum*. Միջնադարի հայ պատմիչները Սասուն բարը ծագեցնում են Սանսասարից: Այն, ինչ հաստատում է Մովսես Խորենացու պատմած ավանդությունը<sup>9</sup>:

---

<sup>9</sup> «Արանցից մեկին, այն է Սանսասարին, մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նոյն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան հարավում: Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Միմ կոչված լեռը» (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնարանությունները Մո.Մայլսապանի, Երևան, 1981, էջ 72):

«Իսկ ծարաշանին, որ Սանսասարի տնից էր (ծագում), մեծ բղեշն և կուսակալ է նշանակում արևմտյան-հարավում, Ասորեստանի սահմաններին մոտ, Տիգրիս գետի մոտ, նրան զավաներ պարզեելով Արձնը և նրա շրջակաքը, Տավրոս լեռը, որ է Միմը և ամրող Կղեսուրը» (Նոյն տեղում, էջ 133):

«Մի անգամ մականով խաղալիս ծավասապ Արծրունուն հաջողվեց գնդակը երկու անգամ խել ծավուհից: Սա մականով նրան խփելով ասաց. «Ինքդ քեզ ճանաչի՞ր»: Իսկ նա պատասխանեց. «Այո՛, ճանաչում եմ, որ ես էլ արքայորդի եմ, Սանսասարի սերունդ և իրավունք ունեմ քո եղայրների հետ թագավորի բարձը համբուրելու, ինչպես և անուն եմ կրում»: Այսպիս ասելով՝ մեծ քամահրանքով ձիարշավի ասպարեզից դուրս պացավ» (Նոյն տեղում, էջ 411):

**32) Հըեղեն էին, գլուխեին, որ ծովու ձի կա;**

**Ծան.**՝ Այսինքն՝ զերբնական ծնունդ, որովհետև իրականում նրանք ծնվել էին ոչ թե կրակից, այլ ջրից: Ըստ այլ տարբերակների, երբ Սանասարն ու Բաղդասարը խալիֆի մոտ էին, և վերջինս ուզում էր նրանց զոհել կուռքերին, խնդրում են խալիֆին թույլ տալ գնալ աշխարհը տեսնել, որը նրանք բոլորովին չգիտեին: Աշա այդ շրջապայումյան ժամանակ հասնում են մի լճափի: Սանասարն, իմանալով ջրի մեջ գտնվող ձիերի մասին, մտնում է ջրի մեջ:

**33) Մայր Աստվածածին Էկավ Էրազ, ասաց.**

«Հե՛յ, Սանասա՞ր, Էլի վե՛ր:

Խաչ Պատերազմին կը էստեղ է.

Էլի՛, յոթ ծունը, աղոթք առջև արա,

Արժան ընիս, քեզ կը հասնի,

Դնես վեր քո աջ թեկին, որ դարձ չառնի»...

**Ծան.**՝ Մեկ այլ տեղում՝ էպոսի շարունակության մեջ, երբ Դավիթը հորեղբորը խնդրում է տալ իրեն հոր Խաչ պատերազմին, հորեղ - բայրը նրան պատասխանում է. «Ես չեմ կարող քեզ տալ այն: Եթե դու արժանի ես, նա ինքը կգա քո թեկի վրա, եթե արժանի չես, այն երբեք չի գա»:

**34) Ասաց.- Ծովային եմ, ինձ կտամ քո փորի տակ:**

**Ծան.**՝ Ես ոչ թե սովորական հողեղեն մարդ եմ:

**35) - Քո աչք ի լուս, տղեք Էկան:**

**Ծան.**՝ Այս բանաձեռ հայերեն ասում է՝ աչքդ լույս: Այսինքն՝ հայտնում է լավ լուր (այստեղ որդու վերադարձը): Այս արտահայտությունն ասվում է որևէ մեկին երջանիկ դեպքի համար չնորհավորելու առիթով: Աչքալուսանքի համար այցելում են բարեկամներին, ովքեր նշանել կամ ամուսնացրել են երեխաներին կամ որևէ թանկագին մարդու վերադարձի առիթով:

**36) Թևեր կանթե, կէրթա ու կը գա:**

**Ծան.**՝ Ֆեղին այս արտահայտության դիմաց դնում է ֆրանսերեն ժողովրդական համարժեքը. «Allant et venant; faisant le pot à deux anses» («Գնում-զալիս էր երկու ունկանի կաթսայի նման»):

**37) Ասին.- Հերիկ, քե մեռնինք, հերիկ քե մեռնինք...**

**Ծան.**՝ Սա նույնպես սրբազան բանաձերից է, որ փոխարինում է

ուրիշից պաշտպանվելուն: Հարցն այն է, ակներև, իմանալ, թե ինչ մտքով է այն օգտագործվում:

38) Գլուխ էդմոնդ Թըջես, Էստեղ կնտես:

Ծան.՝ Ընտանի արտահայտություն՝ արագություն արտահայտելու, երբ կամենում են, որ մեկը շտապ գա:

39) Քո տուն չավրի:

Ծան.՝ Բանաձեռ՝ ոչ անեծք, որն ուզում է ասել, որ անեծքի արժանի ես, բայց այդ չեմ ասի:

40) Ասեք, թե Ծովասար, Մարութիւն ջուր...

Ծան.՝ Ծովասարը Սասունի լեռներից մեկի անունն է՝ («*Cime du Lac»-«Լճի գագաթ»): Ժողովրդական ձեռ սուրբ Մարութա, որին նվիրված է շատ նշանավոր մի վանք:*

41) Ճապաղջրի Բաժն ու Քողեն տուր մեզ...

Ծան.՝ Մի գավառի անուն, որն ընկած է Տարոնի և Դիարբեքիրի միջև:

42) Էլած էր չուրի Սեղանսարու գոտին ի վեր՝  
Ճապաղջրու Դուրան, Մուրադ գետի բերան,  
Ու զէդ ամենն էլ տիրապետեց:

Ծան.՝ Սեղանսարը Մուշի շրջանում գտնվող լեռ է:  
Ճապաղջրի Հովիտը՝ Մուրադ գետի ափին: Մուրադ-չայ՝ Հայերեն  
Արածանի, Հունարեն՝ *Arsanias* (*L'Arsanias des Grecs*, արևելյան Եփրատ):

43) Զուրի Բաթմանա կամուրջ, չուրի Անգեղա ձոր:

Ծան.՝ Բաթմանը Սասունի գետն է՝ Տիգրիսի փոքրիկ վտակը:

44) Խաբար Պոնձե քաղաքից տանք

Քաջանց թագավորի աղջկանից տանք:

Ծան.՝ Քաջերը ոգիներ են (*Kadj-Braves*-Քաջեր): Սրանք այն քաջերն են, որոնք բռնել էին Արտավազդ արքային՝ իր Հոր անեծքի հետևանքով: Հեթանոս Հայերի մոտ քաջերը հավանաբար չար ողիներ էին և երբեմն խաղում էին նույն դերը, ինչ դեերը: Առօրյա Հայերենում քաջ նշանակում է խիզախ:

45) Մեջ էրազին զինք տեսավ Սանասար...

Ծան.՝ Հստ այլ տարրերակների Դեղձուն Ծամն է, որ Սանասարին տեսնում է երազում:

46) Իմ սիրու՝ քանց էսա դատարկ կուժ սար-սուրբ է...

Ծան.՝ Հստ Ֆեյդիի մաքուր (սար-սուրբ) արևելյան շատ լեզուներում նշանակում է ազատ (կամ դատարկ), այն նշանակում է նաև դատարկ կուժ:

47) Բաղդասարի հետ ծուռ էրակ մի կար...

Ծան.՝ Ծուռ երակ՝ «մի գիժ երակ»: Այստեղ նորից հանդիպում ենք ծուռ բառին:

48) Ծնկներ տփեց, ատամ կոտրավ:

Ծան.՝ Ծնկներին խփելը մեծ վշտի նշան է:

49) Իրեք ավուր վերա որ ես էկա, է'կա...

Ծան.՝ Եթե գամ, ես կգամ: Այսինքն՝ խնդիր մի դարձրեք:

50) Աստծու բարին քեզ, Սանասար, ատաց հալվոր...

Ծան.՝ Ընդունված բանաձև՝ ի պատասխան բարեկի:

51) Որ մորուսներ էկեր, տեղին է դարձած:

Ծան.՝ Հստ տարբեր պատումների 40 փահլեանները ոտքերից մինչև գոտկատեղը փոխվել էին քարե արձանների<sup>10</sup>:

52) Ջահել տղա, վաղ չուր կեսօրին...

Ծան.՝ Ջահել բառը փոխառնված է արաբերենից և նշանակում է՝ 1) շատ երիտասարդ, 2) անփորձ, 3) ուժերի ծաղկման մեջ, քաջ: Այս երեք իմաստները միասին բնութագրում են Սանասարին՝ շատ երիտասարդ, քաջ և անփորձ այն ամենի առաջ, ինչ նրա հետ պատահեց Քաջ-քերի երկրում:

53) Ասաց.- Աղբեր, ասե՛ք՝ ինչ բան էղեր...

Ծան.՝ Ֆեյդին բացատրում է աղբեր բառի տարբեր ընկալումները գրական և ժողովրդական խոսքում: Այն երբեմն նշանակում է սիրելիս, երբեմն երիտասարդ: Ինքը հակված է միշտ թարգմանել «*too cher*», որը իրականում պիտի լիներ «*too ame*», որը հավասար է հայերենի

<sup>10</sup> Կ'երթա, կը խամար Զինմաշինսա

քաղաքի կուշտ, կը տիսնը  
Խաղար-խաղար Փերըդ-փահլըվան  
էնտեղ տատրած

Չուր մեջք ինը մարթ ին, մեջքով ցածր  
ելած քար («Սամնա Ծուեր», Երևան, 1936, էջ 486):

Հոգի (hogi) բառին ու արտահայտում է մեծ սեր և այն ներկայացնում է նույնը, ինչ պարսկերեն ««ջան»-ը (djan), որը սերտ բարեկամության արտահայտություն է:

54) Զանգու զարկեց ձիուն...

Ման.՝ Գերբնական ձիուն չէին խթանում մտրակով:

55) Էլավ, զարձավ աղոթարան,  
Իրեք անգամ ծունը էղի առաջի Աստծու:

Ման.՝ Ֆեյդին «աղոթարան» բառը թարգմանում է լատիներեն «oratorium» ձևով: Հեթանոսական ժամանակներում «աղոթարան» նշանակել է արևելք՝ տեղը, որտեղից ենում էր արեգակը, դեպի որը շրջվում էին աղոթքի համար: Հեթանոսական այս սովորույթը անցել է քրիստոնյաներին՝ «oratoire»-աղոթարան, «chappelle»-մատուռ:

56) Մով կատղավ, վիշապ քամի քաղաք եղավ:

Ման.՝ Ժողովրդական մտածողության մեջ դրակոնը («dragon») վիշապի անձնավորումն է, որը պտտվելով բարձրանում է՝ փորձելով առևսանգել երիտասարդ աղջիկ-Արևին, սակայն բարեբախտաբար նրան այդ անել արգելում են բարի ոգիները:

57) Չուր իրիկուն կովան,  
Քսան փահլամի վիզ կտրեց:

Ման.՝ Իրականում Սանասարը սպանել է 35-ին՝ 40-ից: Բաղդասարն, ուրեմն, չի կարողացել սպանել 5-ից ավելի, այսինքն՝ 7 անգամ պակաս իր եղրորից:

58) Ասին.- Կարիք տղեք ենք, մամիկ, հյուր չե՞ս ուզի:

Ման.՝ Ղարիբ բառը հաճախ օգտագործվում է գաղթականին ներկայացնելու համար, որը եկել է որևէ աշխատանք փնտրելու:

59) Էս մարդեր զորեղ են, աժդահա են:

Ման.՝ Այս բառը պարսկերենում աժդահակ է («վիշապ»), որ նշանակում է՝ 1) հակա չափերով հրեց, 2) վիթխարի ուժի տեր մարդ: Աժդահակ անունով հայերը կոչել են Մարաստանի թագավորին, որ վիշապների հայրն էր: Այս բառը տարբեր է վիշապ բառից, սանսկրիտում այն visarpa է, պահլավերենում vasarp, որը նույնպես նշանակում է դրակոն, բայց միաժամանակ cyclop (պտտվող քամի, որը և ջրի մեջ է լինում ու մեծ ավերածություններ է գործում - Ա.Դ.): և հատկապես

«*trombe d'eau*» («ջրի վիշապ»): *Մովսես Խորենացին* խոսելով Աժդահակի սերունդների մասին՝ նրանց կոչում է վիշապաղուններ: Ֆեյդին նշում է, որ *Մառն* ու *Սմիռնովը* վիշապների մասին գրքեր ունեն<sup>11</sup>:

- 60) Ճիծ էի, իմ մեր ինձ վեր կը թալեր  
Ու կ'ասեր՝ Համտոլի գրո՞ղ:

Ծան.՝ Համտոլը հատուկ հրեշտակ է՝ սահմանված ամեն մարդկակի համար, որը պահպանում է նրան, այն նստած է մարդու զիլիի վրա և հաշվում է նրա բարի ու չար գործերը: Սա հենց նա է, որ երբ իրեն պատկանած մարդու կյանքի համար որոշված ժամն ավարտվում է, վերցնում է նրա հոգին ու տանում ըստ իր հաշվարկների գրքի՝ դատելու համար; Նրա ամենակարևոր դերը հոգին առնելն է, և այդ պահի համար է, որ նա կոչում է մահվան հրեշտակ: Որտեղից էլ հայկական անեծքն է՝ «Թող գրողը տանի», որի ֆրանսերեն համարժեքն է՝ «*Le diable l'emporte*».

- 61) Զատանց աչքով արավ աղջկան,  
Որ զա իր աղբոր ձեռք:

Ծան.՝ Կինը պետք է ակնածություն արտահայտի ոչ միայն իր ամուսնու հոր և մոր նկատմամբ, այլև՝ եղայրների:

- 62) Կանչեց.՝ Հայ գիտի, սրիկանե՛ր,  
Հուրի-փարին ինձ է վայել, դր՞ո՞ր կը տանիք:

Ծան.՝ Հուրին չքնաղ գեղեցկության տեր կինն է, որն ըստ մահմեղական կրոնի դրախտում է: Փերին իրանական հին առասպելաբանության մեջ կանացի մարմնական սիրո ոգին է: Երկուսն էլ կնոջ գերբնական գեղեցկության խորհրդանիշեր են:

- 63) Դառնամ, զօղորմին տի տամ  
Իսմիլ խաթունին,- տի տա՞մ օղորմի:

<sup>11</sup> Վիշապ բառին անդրադաել են հայ բանասերներից շատերը, ինչպես, օրինակ, Մկրտիչ Էմինը, Ղ.Ավիշանը, Մանուկ Աբեղյանը և ուրիշներ՝ Վահագնի առասպեկտի թուղթում է. «По этим соображениям мы пришли к заключению, что Армянский Вахагн и Риг-Ведский Agni — одно и тот же божество — Солнце. А так как Индра нередко в Риг-Веде является под именем Agni, то из этого мы пришли к мысли, что Вахагн есть Индра, т.е. опять-таки Солнце» (տե՛ս Հ. Էմիլ, Ответ на замечания г. Патканова, Москва, 1874, стр. 12): «Վիշապ» բառը, որ ժողովրդի մեջ նաև «ուշապ» է արտասանվում, հավանորեն իրանացիներից է անցել հայերին և պարսից ամարպային օձի՝ Աժդի մակդիրն է» (տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1985, էջ 117):

**Ծան.**՝ Միայն մի օղորմի է տալիս, որովհետև նա թշնամի է:

Ֆեղին թուրքական խաթուն անվանումը օգտագործել է համիլի Համար, իսկ Ծովինարին կոչել է խանուում: Այդ երկու տիտղոսները տրվում են բարձրաշխարհիկ կանանց՝ թագուհիներին, իշխանուհիներին:

- 64) Մըսրա Մելիք անոնով մարդ մի կար:  
Մըսըր Էնոր Ճեռն Էր-Մելիք Մըսըր կը նստեր:

**Ծան.**՝ Մըսր Եգիպտոսի սենական անունն է, Եգիպտոսի Էյուբյան գերդաստանի սուլթանները կրում էին մելիք տիտղոսը:

- 65) Մհեր ասաց.- Քեռի Թորոս,  
Անտե՛ր մնա Էդ տեսակ որս...

**Ծան.**՝ Անեծքի բանաձևն է, այսինքն՝ մնա առանց հովանավորի, առանց նեցուկի:

- 66) Հրեղեն ձիեր շատ կա Էնոր, ինքն էլ մեզ բարեկամ,  
Էլիր, զընա իր մոտ:

**Ծան.**՝ Հրեղեն ձիեր; Միայն Քուովիկ Զալալին է, որ իր գերրնական ծագումով արժանի է նման անվանման:

- 67) Մեր Էրկիր վար ու ցանք քիչ է...

**Ծան.**՝ Սասունի շրջանում ցորենազգիները (մասնավորապես գարին, ինչպես նաև կորեկը) կարող են մշակվել շատ մեծ բարձրությունների վրա:

- 68) Մատները Կտրին, արուն արնի խառնեցին,  
Պայման դըին, Էղան աղբեր:

**Ծան.**՝ Տե՛ս այս ծեսի նկարագիրը Տակիտոսի «Տարեգրություններում», XII, 47, Հուադամիսի և Հայոց արքա Միհրիդատի միջն<sup>12</sup>:

- 69) Իմ հե՛րն ես դու, իմ աղբե՛րն ես,  
Քառաուն տարի դու իմ գողենք չըպաս:

<sup>12</sup> «Թագավորներն ունեն մի սովորություն, որ ամեն անգամ, երբ իրար են հանդիպում դաշն կնքելու համար, միախառնում են իրենց աջ ձեռքերը, բութ մատերը միասին կապում և հանգույցով ամրացնում: Հետո, հենց որ արյունը դնապի ծայրանդամներն է հոսում, թեթև ծակոցով արյունը հանում և փոխադարձարար լիզում են: Այդ տեսակ դաշինքը համարվում է զաղտնի ուժ ունեցող, իրեն փոխադարձ արյունով սրբագրօծված» (տե՛ս Կ.Տակիտոս, Քաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. պաշտ. Պ.Սոտնիկյան, Երևան, 1947, էջ 59):

**Ծան.**՝ Այս բանաձեր ցույց է տալիս մեծ բարեկամական վերաբեր-  
մունք հակառակ սեղի նկատմամբ, միաժամանակ բացառում է որևէ  
սեռական կապ:

- 70)    **ՄՀեր հեծավ, քըշեց Քուռկիկ Զալալին**  
       **Ու Զարբահար Քամին իր հետ տարավ;**

**Ծան.**՝ Զարբահար Քամին Սասունի մարդկանցից է, որը ժամանակ  
առ ժամանակ կատարում է թիկնապահի, վստահելի մարդու, ծառայի,  
սուրհանդակի, բանբերի և այլ գերեր:

- 71)    **Ծուռ տերտեր մ'էլ կար ասաց.**  
       **Քառառուն սհաթ բերենք անենք մըկա:**

**Ծան.**՝ Ծուռը նույն տերմինն է, որ օգտագործվում է Սասնա  
հերոսներին որակելու համար:

- 72)    - **Տղամարդ որ կա՛ գլուխ է.**  
       **Կնիկ որ կա՛ ոտ է:**

**Ծան.**՝ - Տղամարդը գլուխն է, որ հրամայում է, կինը մի անդամ է,  
որը պետք է կատարի հրամանը:

- 73)    **Դառնանք, զօղորմին չը տանք**  
       **Զմշկիկ Սուլթանին,**  
       **Չը տանք օղորմի:**

**Ծան.**՝ Զմշկիկը հայազգի բյուզանդական կայսր Զմշկիկի անունն է:  
Զմշկիկի մականունը հայերեն ունի նույն նշանակությունը, ինչ Կայի -  
գուլան լատիներեն: Այս անունը կրում է Դավթի հետ մի գիշերով սիրո  
կապ ունեցող կինը, և նրա աղջկա ձեռքով է, որ Դավթին սպանվում  
է: Ֆեյդին տողատակում զնում է Մատթեոս Ուոհայեցու այն հատվա -  
ծը, ըստ որի Զմշկիկն արշավում է Հայաստան, հետո անցնում է Ամիր  
քաղաքը, սակայն չի ավերում քաղաքը, որովհետև ժամանակին սիրո  
կապ է ունեցել Համտուն ամիրայի քրոջ հետ, որը քաղաքի տերն էր<sup>13</sup>:

<sup>13</sup> «Երբ այս նամակը հասավ Կոստանդնուպոլիս, Զմշկիկ կայսեր, և նա տեղեկացավ  
եղածի մասին, շատ զայրացավ և համակվեց մեծ ցամամամք: Նույն տարին նա համայն  
արևմտյան աշխարհում գորահավաք կատարեց և հզորացած, բորբոքյալ կրակի պես  
զիմեց պատերազմի՝ ընդգեմ տաճիկների: Նա որոշեց անցնել Հայոց աշխարհի վրայով:

Այն ժամանակ Հայոց Աշոտ Բագրատունի թափավորի մոտ Հավաքվեցին Հայոց  
քողոր թափավորացուները, ազատները, իշխաններն ու արևելյան շրջանի ղեկավարնե -  
րը՝ Կապանի թագավոր Փիլիպեն, Աղվանից թագավոր Գորգենը, Կարսի տեր Արասը,  
Վասպուրականի տեր Սևներերինը և ողջ Սասնա տունը: Նրանք, շուրջ ութսուն Հազար  
հոգի, բանակնեցին Հարք գավառում: Հոռոմոց կայսեր սուրհանդակները գալով նրանց

74) Եղ թղթի մեջ Ձենով Հովհան կ'ասե.

- Ազրո՞ւ կնիկ, Հարսե՞...

Ծան.' Հայերենում Հարս բառը, որը մենք թարգմանել ենք «*belle chose*», նշանակում է կին, որ մտել է որևէ ընտանիք՝ տան տղաներից մեկի հետ ամուսնանալով։ Տղայի մոր և Հոր Համար այդ կինը զավակի կին է, իսկ տղայի քրոջ ու եղբոր Համար Հարս է։

Բազմաթիվ Հայերեն արտահայտություններում Հարս նշանակում է նաև երիտասարդ ամուսնացած։ Բայոն իր մեջ ուրեմն պարունակում է երիտասարդության, նաղելիության, քնչքության, հնագանդության և այլ իմաստներ։ Գլխավորապես այն ունի սիրո երանգ։

75) Բաթմանա Բուղեն ուղարկի,

Թող էնի, էրթա Մհերի տուն,

Գնա բեռ մի մեղը բերի,

Գնա բեռ մի կարագ բերի,

Կը շննես եղ-մեղը, կը տաս, տղան կ'ուտի։

Ծան.' Բաթմանա Բուղան Մելիքի մարդկանցից է։ Եղ-մեղը կերակուր է, որը պատրաստում են կարագից (եղ) և մեղից, և որը ձվածեղի պարունակության մասերից է։

76) Դավիթ Էլա՛վ, ընկավ Հետ էղ չողին, ընկավ գետին։

Էլ ետ Էլավ, ընկավ Հետ էղ չողին, ընկավ գետին։

մոտ և տեսնելով, որ Հայոց աշխարհի ամբողջ զորքը պատրաստ կենտրոնացած է մի տեղ, վերադարձան և այդ մասին պատմեցին Զօջկիկ կայսեր։ Հոռոմոց սուրբՀանդակների ետևից գնացին նաև Հայոց իշխաններից Լևոն Խաչատրունը, իշխան Ստատ Թոռնեցին, մի քանի եպիփառպաններ ու վարդապետներ և հոռոմների կայսեր ու Հայոց արքա Աշոտի միջն Հաշտություն ու բարեկամություն Հաստատեցին։ Զօջկիկ կայսրը Հսկայական զորքով եկավ Հասավ Հայոց Տարոն գավառը և բանակեց Սշոն Այծյաց բերդի առջև։ Առաջին գիշերը հոռոմոց զորքը շատ նեղություն կրեց Սաստինի հևտևակից։ Հայոց իշխաններն ու վարդապետները եկան հոռոմոց կայսեր մոտ և նրան Հանձնեցին Հայոց Վահան կաթողիկոսի նամակը։ Կայսրը ընդունեց նամակը, գովեց այն և պատվեց նամակարերին։ Նա Հաշտություն կնքեց Հայոց Հետ և խնդրեց, որ Աշոտը իրեն օգնական զորք ուղարկի։ ...Այն ժամանակ Զօջկիկը, որին կյուր Յան էին անվանում, գայրացած գնաց տաճիկների դեմ պատերազմի և մեծ Հաղթանակ տարավ։ ...Անհուն զայրույթով լցված՝ նա եկավ Ամիթ քաղաքի վրա։ Ամիթ քաղաքի տերը կին Էր՝ տաճկաց Համտուն ամիրայի քոյրը։ Կայսրն անցյալներում Հանցավոր կենակցություն էր ունեցել նրա հետ, որի պատճառով Էլ չփորձեց գրավել Ամիթ քաղաքը։ Կինը, բարձրանալով քաղաքի պարսպի վրա, ասաց կայսեր. «Կնոջ վրա՞ ևս գալիս պատերազմի և այդ բանը քեզ Համար ամոթարեր չե՞ս Համարում» (տե՛ս Մատթեոս Ուռհացեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 11-12)։

**Ծան.**՝ Համեմատել գողի և լուսնի շողի մասին պատմող առակի հետ<sup>14</sup>:

- 77) Իրեկուն էղավ, Մելիք կտրիմներուն ասաց,  
- Հոլեր զարկե՛ք, գնան զԴավիթ ըսպանեն:

**Ծան.**՝ Բառարանը հոլ բառի համար տալիս է «τουρίε»-«հոլ»-«փայտե գնդակ»: Տարբեր պատումներ տատանվում են գուրգ և հոլ բառերի միջև: Զիերի ներկայությունը ստիպում է մտածել, թե այդ գնդակախաղն է, խաղ՝ տարածված Պարսկաստանում և Հնդկաստանում՝ փայտե գնդակով: Հայերեն հոլ բառի սկզբնատառ հ-ն թույլ է տալիս այդ բառը թարգմանել՝ «pol»:

- 78) Երբ էղեր է, ին իմ գլուխ տի ցավցուցի:

**Ծան.**՝ Սա իմ գլխակերն է:

- 79) Էկավ տուն, տեսավ, որ Դավիթ ընկե,  
Քուրսու տակ քներ է:

Քուրսին մի տեսակ սեղան է՝ ծածկված գորգով, որի տակ՝ թոնրի մեջ կա այրվող աթար, և որի շուրջ նստում են ձմռանը՝ մարմնի ստորին մասը մտցնելով գորգի տակ, որ տաքանան:

- 80) Ասաց.- Թե դու Դավիթ ըսպանես՝  
Էս ծծերի կաթ քո վերան հարա՞մ ընի:

**Ծան.**՝ Արաբերենում անիրավությունն արտահայտվում է հարամ բառով, նրա հականիչն է հալալ՝ իրավացի, ճիշտ: Ցանկությունների մեջ հարամը նշանակում է աղետ:

- 81) Մարե՛, քո աչքե՛ր քոռանար,  
Ինչի՞ չուտ չ'ասիր...

**Ծան.**՝ Անեծքի այս ձևը մի պարզ արտահայտություն է՝ ցուցաբե - րելու հակառակ կարծիք ունենալը: Նման բանաձևերի հաճախակի օգտագործելը խոսքում բնորոշ է ժողովրդական լեզվին:

- 82) Ջենով Հովան ասաց.- Փա՛ռք իմ Աստծուն.

<sup>14</sup> Վարդան Այգեկցու «Աղվեսագրքում» առկա է «Միամիտ գողք» «զվարճալիքը», որում միամիտ գողերը՝ հավատալով մեծահարուսափ այն խոսքին, թե վերջինս իր հարստությունը կուտակել է լուսնի շողերից բռնվելով և հարուստների ունեցվածքը այդ շողերին կապելով ու վեր բարձրացնելով, փորձում են բռնել չողերը և վայր են ընկնում, ուշամթափիւմ: Ն.Մատի պնդմամբ «Աղվեսագիրքը» հայերենից թարգմանվել է արաբերեն և այդ լեզվի միջոցով էլ այն հասել է Եվրոպա - Ա.Դ.:

Էս մեկ զավա՛կ էլ մեղ էլավ կայնավ,  
Էկավ մեր աղոնիկ:

Ծան.՝ «Էկավ մեր աղոնիկ»- ակնարկ է Նոյի աղավնու մասին,  
որի վերադարձը տապանի բնակիչներին հայտնի դարձրեց փորձանքի  
ավարտը:

- 83) Էս տնավեր իսկի մարդու շնորք չո՛ւնի,  
Մուռ, օղորթմանց ծուռ...  
Դավիթ Հասկացավ, ասաց.  
Ձեր գլուխ ուտի՛ էլ չեմ ըլնի ձեղ նախըռը;  
Էղտեղ Հովհան բարկացավ, ասաց.  
- Դու որ էսպես կ'անես,  
Էլ ես քեզ չե՛մ կարնա շահի,  
Դոր էլ կ'էրթաս՝ գնա:

Ծան.՝ Հորեղբայր Հովհանը Հանգիստ ապրել է սիրում և ոչ մի  
գնով չի ուղում ընկնել «պատմության» մեջ:

- 84) Կ'էրթան ուխտ, պատարագ կ'անեն,  
Պատարագ որ կ'անեն, Հարիսա կը դնեն:

Ծան.՝ Հարիսան կերակուր է՝ պատրաստված ցորենով և մսով,  
որը եփում են շատ երկար, այն խառնում են ողջ գիշերը, մինչև զառնա  
համասեռ զանգված: Ուտելուց առաջ վրան հայած յուղ են լցնում<sup>15</sup>:

<sup>15</sup> Մինաս Թոխաթցին (16-րդ դար) Հատուկ զվարձալի տաղ է նվիրել Հարիսային,  
որում առկա է և այդ ուտելիքի ծխական նշանակությունը: Այն կոչվում է «Տաղ և  
զովասանք Հէրիխ».

Այ հէրիսայ, դու թագաւոր,  
Քէշէկն քեզ է սպասաւոր,  
Խորվուն է քեզ մեծ զինաւոր,  
Փիլան քեզ նմանաւոր:  
Այ հէրիսայ, ընտիր զոված,  
Ապուրներու մէջն ես օրհնած,  
Մեռեալքն գրեզ ապսպրած,  
Քենով փրկին յամէն մեղաց:  
Ող զիր մեռելն կու սիրէ,  
Պատարագաւ գնա յիշէ,  
Գիշերն ի բուն զքեզ եփէ  
Եւ վաղվնէն առատ բաշխէ:  
...Զինչ ազգ որ կան ի յաշխարհի,  
Քեզ գովանք տան ի հետ ինձի  
Եւ փափագին ի դէմ քեղի,  
Որպէս մեղուն ի դէմ ծաղկի

(Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ., Երկու Հատորով, Հասոր  
առաջին, աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի, Երևան, 1986, էջ 446-447, 450):  
42

- 85) Տղեկներ ասին.  
- Թե սուտ էղավ՝ զմեր ականջ կտրեք:

Ծան.' Այս այն հատվածն է, ուր Դավիթը ըստ տարբեր պատումների գանձը հանձնում է յոթ գյուղերի բնակիչներին, իսկ որոշ պատումներում այդ գանձը նորից վերադառնում է Սասնա տան սուն - դուկները:

- 86) Էնոնք ինչ որ տեսան էղա ոսկին, ապրանք,  
Ուրախութնեն էնոնց ոտներ գետնեն կտրավ:

Ծան.' Ուրախությունից ոտքերը գետնից կտրելը Ֆեյդին թարգմանել է ոչ թե բառացի «*De joie leurs pieds quitterent la terre*», այլ ֆրանսերեն համարժեքով՝ «*Ils ont furont transportés de joie*».

- 87) Դավիթ ասաց.- Հրողբո՛ր կնիկ,  
Դուն իմ մե՛րն ես, ես քո որդի՞ն...

Ծան.' Սա հիշեցնում է, որ նրանք հորեղբոր կողմից են ազգական, և այդ կինը պատկանում է հորեղբորը: Արտահայտությունները «Ես քո որդին եմ, դու իմ մայրը» կամ «Մենք քույր ու եղբայր ենք», այսօրինակ փոխադարձ կապը խիստ ձևով բացառում է որևէ սեռական կապ նրանց միջև, այլապես դա կդիտվի ազգապիղծ ոճիր՝ ընդդեմ հայերի սովորության:

- 88) Դավիթ գնաց մոտ, ձե՛ռ էտու բոցին-ձեռ չ'էրեց  
Հո՛ղ թալեց վերան - չը հանգավ:

Ծան.' Սա Փոսֆորային լուսն է, որի բոցը սառն է:

- 89) Ինձ քենե պետք են քառառն վարդապետ...

Ծան.' Վարդապետ-վանական, աստվածաբանության ուարունի:

- 90) Ամա թալած քարեր ջուր կը տաներ՝  
Հիմ չը բռնի:

Ծան.' Որպես փոթորկահույզ գետ հայտնի է Հայաստանի Արաքսը:

- 91) Բուռ մի մոխիր գցեց իր գլուխ...

Ծան.' Հիշեցնում է աստվածաշնչային սուգը:

- 92) Սպանեցին քառառն էպիսկոպոս,  
Սպանեցին քառառն վարդապետ  
Սպանեցին քառառն ավագ սարկավագ...

**Ծան.**՝ Կրկնությունները համապատասխանում են այս ստեղծագործության բնույթին: Ասացող-բանաստեղծները պետք է զրադեցնեին ողջ ժամանակ հասարակությանը և պետք է երկարացնեին ուրախությունը: Մյուս կողմից երգվող հատվածների կրկնությունը խախտում է պատումի միապաղաղությունը և հնարավորություն է տալիս ասացող-բանաստեղծին ցուցադրելու իր տաղանքը:

**93) Քառառն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղան...**

**Ծան.**՝ Արմաղան նշանակում է՝ 1) նվեր բերված հեռու երկրի ճամփորդությունից, 2) «Հաղվայուտ» գտնվող՝ մեծ գեղեցկություն:

**94) – Մտեք տուն, արեք շիվան,**

Էլեք դուրս, արեք դիվան,  
Կերթանք Սասուն առ ու թալան,  
Կարմիր եղներ բերենք լծան,  
Սիրուն կովեր բերենք կըթան,  
Որ դուք անեք եղ ու չորթան:

**Ծան.**՝ Էպոսի այս հատվածը երգում են չափածո բանաստեղծությամբ. սա շատ ընդունված ձև էր, սակայն դժվար թարգմանելի, և հնարավոր չէ հայերեն բնագրի տպագրությունը ներկայացնել:

Չորթան-«*than sec*», մի տեսակ մածուն, որը ջրազրկում են և հետո դնում արևի տակ, որ չորանա: Չորթանը ձմռանը փոխարինում է թարմ թանին՝ ապուր եփերու համար: Չորթանի պատրաստումը Հայաստանում այնքան գործնական բնույթ է կրում, որ երրեմն ազուավին տալիս են «չորթանագող» անունը («voleur de tchorthan»): Եղնելով նրա սովորությունից, որ թուցնում է արևի տակ չորացող չորթանի գնդերը:

**95) Վերգոն ու Կողբաղին կ'երթան,**

Քառառն աղջիկ կը ժողովեն,  
Կը լցնեն մեկ մարագ...

**Ծան.**՝ Հովհանը՝, չնայած իր հումկու ձայնին<sup>16</sup>, հեռու է խիզախինելուց, իսկ Վերգոյի մոտ վախկոտությունը հասնում է գերազույն աստիճանին:

**96) Ինչ որ քաղքի վերան հո՛ղ մաղես,**

Քաղաքն ինչ լա՛ւ, գոռա՛ւ, ծեծկո՛ւք,  
Մեր ու մանուկ ուրացեր են...

<sup>16</sup> Ֆելդին «Ճենով Հովհանը» թարգմանում է «Jean stentor». Stentor-ը եղել է հույն գորական, որը Տրոյայի պաշարման ժամանակ աչքի է բնկել իր հոյժ գորավոր ձայնով: Փոխարերական առումով «Stentor» նշանակում է հղոր ձայն:

**Ծան.**՝ Մեր ու մանուկ ուրանալը մի արտահայտություն է, որը ներկայացնում է խուճապը մի աղետի ժամանակ:

Քաղաքի վրա հող մաղելը նշանակում է, երբ թշնամին բնաջինջ անի մի քաղաք:

97) Հըռղբեր, Էղա ինչ է կ'անեք:

Ասաց.- Ծուռ Դավիթ, քո թնի կեղտե՛ր կը սրբենք:

**Ծան.**՝ Հորեղբայրն անշուշտ ուզում է ասել, որ այդ հարկով նա ծածկում է Դավիթի մեղքերը. Դավիթը նախ Մելիքին խուճապի էր մատնել՝ վանքը վերակառուցելով և նրա զինվորներին պատուհասելով: Սակայն Դավիթը չի ընկալում հորեղբոր ասածը, և հորեղբայրը շեղում է խոսակցությունը՝ ցոյց տալով այծը, որը որսացել էր Մելիքի կողմից վերագրավված Ծովասարում, և այն ևս մի ապացուց է Դավիթի նոր մեղքի:

98) Մեկ էլ չը գա՝ Սասնա կընիկ, աղջիկ տանի.

Սասնա տուն դեռ չի ավերվե...

**Ծան.**՝ «Սասնա տուն» նշանակում է Սասունի իշխանների տուն, Էպոսի պատումներից մեկը հենց կոչվում է «Սասնա տուն»:

99) Էլան քոռ ու փոշման Բաղին, Կողբաղին,  
Սուղին, Զարխաղին, իրենց զորք թողին,  
Փախան Մըսրա էրկիր:

**Ծան.**՝ Ըստ մի շարք պատումների Կողբաղինը հետ է փախչում մենակ և Մըսր է հասնում՝ տարութերվելով իր ձիու վրա:

100) Կողբաղնի զորքեր էլ իրենց ավար քշե,  
Հաներ էին Սասնա սինորեն դուս, կը տանեին:

**Ծան.**՝ Դավիթը աղատում է կանանց և կենդանիներին:

101) Կնկտիք զէտ տեղաց տեսան Կողբաղին  
Որ բերան բացած՝ ուրախ կը ծիծղա:

**Ծան.**՝ Կողբաղնի կտրված մեծ բերանն ակնարկում է նրա սնա - փառությունը:

102) Խա՛չ պարոններ...

**Ծան.**՝ Հիշատակություն է խաչակրաց արշավանքների ժամանա - կահատվածում եղած եղբայրասպան պատերազմների, պայքար, որի ընթացքում քրիստոնյաները հաճախ դաշնակցում էին մահմեղական -

ների հետ՝ ընդդեմ ուրիշ քրիստոնյաների:

103) Թիա'կ լեզվներ...

Ծան.՝ Այս անունները, որ կան շատ քիչ տարրերակներում, ցարդ չեն բացատրված:

104) Էլե՛ք, էլե՛ք  
Քոթո՛թ, մոթո՛թ...

Ծան.՝ Այս անունները Քեռի Թորոսի եղբայրները կամ զարմիկներն են: Գերդաստանի ամեն մի սերունդ ունի մի հերոս, սակայն եթե այդ հերոսն այդքան երևելի է, ապա դա նրանից է, որ ծնված օրից նա մենակ իրեն է վերցնում լավագույն գծերը՝ ոչինչ չկիսելով ընտանիքի մյուս անդամների հետ: Նկատելի է, որ ամեն սերնդի հետ հերոսի հզորությունն աճում է, որը ենթադրել է տալիս, թե ամեն նոր հերոս վերցնում է ավելի բարձր հատկանիշներ, քան իր նախորդը: Հովհաննը, որը մեկն է առաջին սերնդից, գեռ կարողացել է ժառանգել մի երկրորդական հատկանիշ՝ իր հումկու ձայնը: Թորոսն ունի մի քանի դրական գծեր, սակայն սահմանափակ խիզախություն: Վերգոն զրկված է և՝ ֆիղիկական, և՝ բարոյական ուժից: Ինչ վերաբերում է մասցածներին, ապա նրանց ծնունդը մի խարկանք է, որը ներկայացված է կնքահոր ընտրած անունով: Բացի Վերգոյից, որը կարեռագույն երգիծական կերպար է, մյուսների անունները տարրեր պատումներում փոխվում են, ահա թե ինչու մենք դրանք չենք թարգմանել: Քեռի Թորոսն ասում է. «Հեռու տարեք հարսին, որ ես գամ երեխային տեսնելու»: Նա գնում է տեսնելու երեխային, որը նրան դուր չի գալիս, և վերադառնում է: Նրանք բերում ու կնքում են երեխային և հարցնում են Քեռի Թորոսին. «Ի՞նչ անուն զնենք նրան»: Նա պատասխանում է. «Վեժիկ Մեքո»: Հարցնում են, թե ինչո՞ւ է նրան անվայելու անուն զնում: Նա պատասխանում է. «Ես եկա: Ես տեսա երեխային: Նա ինձ դուր չեկավ»: Հարցնում են. «Ի՞նչո՞ւ դուր չեկավ: Նա տղա է»: Թորոսը պատասխանում է. «Մեր գերդաստանում երեխան հինգում խիզախ է: Սա թույլ երեխա է»: Պետք է կարծել, թե Վեժիկը նույն ծագումն ունի, ինչ վիմելը: Երկրորդին տալիս է Վերգոն անունը՝ Վերգո Փորքշուկ: Երրորդին՝ Զենով Հովան:

105) - Դավիթ, որ Մելքը կը սպանեա,  
Էնոր ականջ ինձ նվեր բեր:

Ծան.՝ Ֆեյդին այս հատվածի համար դնում է «Սասնա Ծոեր»

ժողովածուից մի հատված, որում Ձենով Հովհանի կինը ծաղրելով Դավիթին՝ պատվիրում է իրեն բերել սպանված Մըսրա Մելիքի ձախ ամորձիքը, որ ինքը գործածի չար աչքի դեմ: Ֆեյդին գրում է. «Ես դրեցի այս տարբերակի հատվածը, որը շատ համարձակություն ունի իր մեջ և հենց դրանով էլ ինձ թվաց անհնդուրժելիորեն ծանր, քանի որ այդ բառերը ասվում էին պազչոտ Սարիեի բերանով, որը ինչպես ինքն է ասում, օտարազգի է և երբեք ձեռք չբերեց հայ կոնջը հատուկ առաքինությունը: Իմ այս տարբերակը ընտրելու պատճառներն են՝<sup>1)</sup> Որպեսզի Փորբչուկ Վերգոյին հաճույք չպատճառի նման ողբերգական իրավիճակը, ասացողներն առավել ճիշտ են համարել տալ մի նոր հնարավորություն, որը հեռու կպահեր նրա զարմիկին մի վտանգավոր ձեռնարկից: 2) Այդօրինակ ծաղրը սագում է պազչոտ Սարիեին, որ ոս ունի Դավիթի նկատմամբ, որը խիստ ձեռվ մերժել էր նրա առաջարկը, և վերջինս իր ատելությամբ որոնում էր ջախջախիչ հարված այն երիտասարդին, որին համարում էր չափազանց ամաչկոտ: 3) Այս դրվագում կա բանահյուսական բնութագիր: Ամեն ինչ աչքի շուրջը պտտվելով՝ ուղղված է չար աչքի դեմ, մանավանդ այն ինչ ձեռք են բերելու, տրվելու է թշնամուն հաղթելու արդյունքով:

- 106) Դավիթ էր՝ գնաց, իջավ ներքնատուն,  
իր հոր զենք-զրահ տեսավ պատեն կախ:  
Էդ ամեն զրկեց, քաշեց իր թևին,  
Դուրս հանեց, բերեց Ձենով Հովհանին:

Ծան.՝ Սա այն դրվագն է, երբ Դավիթը չգիտի իր ուժի մասին, ինչ-պես իր պապ Սանասարը..., որն իր ուժը ձեռք բերեց Կաթնաղբյուրի ջուրը խմելուց և քնելուց հետո, երբ նա գտավ իրեն հարմար հանդեր - ձանքը:

- 107) Էպուել Աստծու հրամանով  
Խաչ պատերազմին իջավ վեր աջ թևին:

Ծան.՝ Ֆեյդին մեջբերում է «Սամնա Ծոեր» ժողովածուից մի հետաքրիր հատված, որում Դավիթը գնում է Սուլը Նշան եկեղեցին, ներս է մտնում լաց լինելով և յոթ անգամ աղոթելով ասում է իր խնդրանքը:

Աստծու հրամանով մսե խաչ է առաջանում Դավիթի աջ թևին: Նա դուրս է գալիս և ասում հորեղբորը, որ իր աջ թևին մսե խաչ է առաջցել:

Ձենով Հովհանը նրան ասում է, թե Մարութա Բարձր Աստվածա-

ծինն է, որ նրա թեմի վրա է, և այսուհետեւ ոչնչից չպետք է վախենալ<sup>17</sup>:

- 108) Դավիթն ասաց.- Հրողբե՛ր,  
Դու մատա՛ղ ըլնես էղա մե՛կ խոսքին.  
Էղա մեկ խոսք որ չ'ասեիր՝  
Քո վիզ տի զարկեի:

Ծան.' Հետեւելով «Մատաղ լինես էդ մի խոսքին» բանաձեին՝  
պետք է ասել, որ այդ բանաձեւ է երախտագիտությունը հայտնելու:

- 109) Աչքեց, տեսավ՝ նորամանուկ Դավիթ  
Մւերի ձին հեծե, կայնե; Կանչեց.  
Քուռկի՛կ Զալալին, մեռնե՛մ քե, մուրա՛զ:

Ծան.' Մուրազը մուրադ արաբերեն բառի ժողովրդական ձեն է,  
որ նշանակում է՝ «ուխտ», «ցանկություն»: Ֆեյդին վկայակոչում է  
«Սասնա Ծոեր» էպոսի այն տարբերակը, ըստ որի Քառասուն Ծամը  
միայն գիտեր Քուռկիկ Զալալու Մուրադ անունը.

Մինակ հինք գըտեր, վոր անուն Մուրատ էր:  
Փանջարեց կանչեց. -Մուրա՛տ, Մուրա՛տ:  
Մին փանջարի առեչ կայնավ  
Լսաց.  
«Տո Մուրա՛տ, մեռնիմ քի, Մուրա՛տ,  
Տավիթ խեր չունի, անես խերութեն»

(«Սասնա Ծոեր», հ.Ա, էջ 807):

- 110) Էնպես մշու՛շ մի դուման մի դրեց,  
Որ Դավիթի աչք ըսկի ճամփեն չէր ջոկի:

<sup>17</sup> Ահա այդ հատվածը բնագրով.

«Դավիթ գընաց սրփ նիշանը դռան վերա,  
Լալեն մտավ ներս,  
Ցոթ ծունը աղոթք արավ, ուր դողեն արավ:  
Աստրծու հրամանով՝ Մսե խաչ ըմ  
Շինվավ վար Դավիթը աջ թիվին:  
Դավիթ ելավ իրը, եսաց.  
Խրոխպե՛ր, Մսե խաչ ըմ վար իմ աջ  
թիվին ելավ:

Զենով Հովան եսաց.

-Մարութա-Բանցը Աստվածածնու

Հրաշք քի խասավ,

Ալ մը վախանա, Դավիթ (տե՛ս «Սասնա Ծոեր», հ. Ա,  
Խմբագրեց պրոֆ., դր. Մանուկ Արեդյան, Երևան, 1936, էջ 574):

**Ծան.**՝ Աստված Հրաշքով փակում է ճանապարհը անգամ Դավիթի համար:

- 111) Դավիթ թուր քաշեց, մեկ դարբից էզարկ,  
Թուր կեծակին էն սուն կտրեց, մեջէն անցավ:  
Էրկաթե սուն է – էղ սուր որ մեջեն անցավ՝  
Կտոր վեր կտորին մնաց.  
Դավիթ չ'իմացավ թե սուր կտրեր անցեր է...

**Ծան.**՝ Տարրեր պատումներում Դավիթը իր անեծքի պատճառով կոտրում է թեր. անշուշտ հերոսը հասկանում է, որ ինքը չպետք է դատարկ տեղը երդի՛: Վհատված Դավիթը որոշում է տուն վերադառնալ: Մյան կողքից անցնելիս նա փշում է այան վրա՝ հավանաբար մանկական արհամարհու զայրույթով, նրա փշոցից այան գլուխը շրջկում է: Աստծու հրամանով նրա թեր վերակացում է, հետո զալիս են օրհնանքները: Ահա այդ հատվածը.

Ձեռ կուտրավ, տժարացավ Դավիթ, ելաց:  
Միտք երավ, տը տառներ դախ տուն,  
Վոր տը տառներ դախ տուն,  
Դարձավ, փշից դախ սուն,  
Կտոր թրավ, կինաց:  
Դավիթ ուրախացավ, դարձավ, եսաց.  
«Ձեռնիկ, տու կանաչ կլիներ,  
Ձեռնիկ, տու կանաչ կլիներ,  
Տու զՊողվլտե սուն կտրեցիր, թալիցիր,  
Տու զՊողվլտե սուն կտրեցիր, թալիցիր,  
Միզի սիվտակ իրիս դարձեցիր,  
Միզի սիվ իրիս զերիր» (տե՛ս «Սասնա Ծոեր», Հ.Ա, էջ 196):

- 112) Դավիթ, մի՛ էրկմտի, քըշի:  
Դու իմ քամկից վե ըը գաս, չը խարվես:

**Ծան.**՝ Շարունակության մեջ կերևա այս խորհրդատվության կարևորությունը:

- 113) Բարձրացուց էղ թուր, համբուրեց,  
Դրեց ճակտին, ասաց.- Մարե՛,  
Ես մեկ զարկ քո՛ խաթեր:

**Ծան.**՝ Նույն է, երբ ակնածանքով համբուրում են որևէ քահանայի կամ որևէ պաշտելի մարդու, հետո այդ ձեռքը տանում են ճակատին:

114) - Ծո՛ւտ, ձեր քաֆկիրներ բռնեցեք ձեր ձեռ...

Ծան.՝ քաֆկիր - միջնադարյան երաժշտական գործիք:

115) Թե հրեշտակ իր թև չ'առներ առջև,  
Սև ջուր տեսէներ, աշխարք առներ:

Ծան.՝ Հայ ժողովրդական մտածողության մեջ Աև ջուրը ներկայանում է որպես դժոխքի ստորերկրյա գետ: (Այս պատկերացումն արդյոք չի՞ ծագում գետնի ընդերքում եղած նավթի միատարած զանգված լինելու փաստից):

116) Տեսավ քառառն ջաղցի քարեր,  
Ամենն էլ թրի առջև կտրտված...

Ծան.՝ Մրանով հասկացվում է սրի փորձելը «փորձաքարի» միջոցով:

117) Մըսրա թագավորություն մնա՛ քեզի...

Ծան.՝ Իսմիլն ուզում է, որ Դավիթը կրկնի իր հարախ հետ այն մեծ սխալը, որ Մհերը գործել է իր հետ, միաժամանակ Մըսրա կունենա սասունցուց նոր ժառանգորդ:

118) Գորգիկ վերցուց ասաց.  
- Որ Խանութ խանում առնես,  
Ինձի կանե՞ս քեզի քավոր:  
Ասաց. - Կ'անեմ  
Կ'ընենք սանհեր Դավիթ, քավոր Գորգիկ:

Ծան.՝ Ազգակցական հարաբերությունները հայկական ընտանիք-ներում կնքահոր և երեխայի միջև նշում են խիստ ճշգրտորեն: Հայր նշանակում է երեխային ծնող հայրը, իսկ հոգևոր հայրը կոչվում է կնքահայր կամ սանհահայր:

119) Աջմու Ծապուհ արքան էլավ,  
Թուղթ գրեց Բաալը Ֆրենկին...

Ծան.՝ Բաալը ֆրենկը ժողովրդական մտածողության մեջ անշուշտ մի թշնամի «թագավոր» է, և սա հիշատակ է ազգային եկեղեցու ընդվզման ընդդեմ միջնադարում եղած հոռմեական և հայ եկեղեցիների միարարական փորձի, որը սկսվեց Կիլիկիայում և այնուհետև հայ-ֆրանսիացի թագավորների ժամանակ, այնուհետև բռն Հայաստանում Բարթողիմեոս Բոլոնացու և ապա նրա աշակերտների կողմից: Ֆրանկ բառը դեռևս գործածական է զյուղերում հայ կաթոլիկ նշանակությամբ:

**Սա ոչ կարենոր ժամանակագրական վրիպակ է:**

- 120) Խանդութի Հոր Հողի դուշման՝  
Էն վեց Երկրի նատողներին:

**Ծան.՝** Բապ Ֆրենկի հետ միասին Խանդութի թշնամիները կլինեն բախտագուշակ յոթ թվով:

- 121) Օղան-Տողան  
Ժողվեր են լրենց զորք, Էկե...

**Ծան.՝** Գոգ ու Մազոգ, Զին ու Մաշին, Իրան ու Թուրան արևելյան Հեքիաթասացների սիրելի ձեւերի արձագանքն են:

- 122) Էլավ, Խանդութի կամքն առավ, ասաց.  
Ես գնացի կոփվ...

**Ծան.՝** Դավթի այս որշման իմաստն այն չէ, որ նա գնա կովելու Խանդութի աչքի առաջ, դա հասկացվում է պատումի շարունակության մեջ. Նա չի կամենում խոցել իր զարմիկին և գոհ է կովի ընթացքում հետաձգել հարվածելը, մինչև որ պարոն Աստղիկը հոգնի և թողնի մարտադաշտը: Այս վարքագիծը մենք տեսել ենք արդեն Սանասարի մոտ՝ իր եղբօրը՝ Բաղդասարին խնայելիս, անկարող լինելով հաղթել իր թշնամուն, և ի վերջո նա չի հարվածում ձիավորին, այլ ձիուն՝ դրանով վերջ տալով կովին:

- 123) Հավլունի թուր կը Փըռացու...

**Ծան.՝** Հավլունի թուրը լեգենդար արքա Տրդատ Մեծի թուրն է, որից Գրիգոր Լուսավորիչը մի խաչ պատրաստեց, ուրեմն այս թուրը նույնքան հոչակավոր է հայերի մոտ, որքան *Durandal*-ը<sup>18</sup> մեզ մոտ: Ժողովրդական ստուգաբանությամբ անվանումը կազմված է հավ («*roule*») և հայլ մասերից: Հավլունի թուր (այլ ձևեր՝ Հաւհալի, Հաւելէն, Հաւալանի - Առասպելական մեծ թուր գերբնական հատկություններով, բանաստեղծներից և նույնիսկ շարականում ներբողված, որ ըստ ավանդության պատկանելիս է եղել Տրդատ թագավորին և որից Գրիգոր Լուսավորիչը խաչ է շինել: (Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ Հավլունի. որպես թե երկաթը մանրում են կորեկի պես, տալիս են Հավերին ուտելու, նրանց ծիրտն այրելիս՝ երկաթի հատիկները

<sup>18</sup> *Durandal* կամ *Durendal* – ֆրանսիական ժողովրդական էպոսի գլխավոր հերոս Ռուանդի թուրը: Այն պողպատից է, ոչ կոտրվում է, ոչ փշրվում, «գեղեցիկ և սուրբ» թուր (տե՛ս *Petit Robert-2, Dictionnaire universel des noms propres, Paris, 1988, p. 559*):

պողպատի հատկություն են ստանում և նրանցից շինված սուրը կտրուկ է լինում: Այս սովորությունը գոյություն ունի զյուղացվոց մեջ: Այս ստուգաբանությանը ավելի համար են զալիս Հավկալենի, Հավհալունի ձևերը՝ իրեւ հավի փորում հալված: Ստ.Մալխասյանց, Հայերներն ըացատրական բառարան, Հ. Ա., Հ.-Ռ., Երևան, 1944, էջ 85):

124) Խանդութ խանում իմաստուն, կարդացվոր էր.

Գիրք էղիր էնտեղ, գիրք կարդաց...

Ծան.՝ Գուշակություն և կախարդանքի գիրք, որ հայտնի է «Ախտաբք» անունով<sup>19</sup>:

125) Դավիթ ասաց. - Ես իմ աչքեր կորցուցի...

Ծան.՝ Ես՝ ինքս, փորեցի իմ աչքերը:

126) Տեսա՞ր, Դավիթ, քառասն վահլասան,

Ցոթ տարի կա էնտեղ նստած.

Զիմ նշան ես տվի քեզի,

Ինչ դու էկար, իջար իմ տուն...

Ծան.՝ Նշանը մի առարկա է, զլիսափորապես ամուսնական մատանի, որ հարսն ու փեսան նշանադրության օրը տալիս են մեկը մյուսին: Խանդութի նշանը Դավիթին նետած խնձորն էր:

127) Մենք մատնիքներ իղարու հետ փոխեցինք,

Դու ինձի թողիր, գնացիր Խանդութին բերիր...

Ծան.՝ Հայերի մոտ մատանիների փոխանակությունը տեղի է ունենում նշանադրության ժամանակ, այս վերջիններս ունեն գրավի արժեք: Այստեղ խոսքն այն մասին է, որ Դավիթը նշանվել էր մինչև Խանդութին ծանոթ լինելը: Սակայն Խանդութի մոտ գնալու ճանապարհին Դավիթը թողեց Զմշկիկի մոտ մի ուրիշ «աիրո գրավ»:

128) Անուն կը զնես Մհեր.

Իմ հոր անուն գետին չը մնա...

Ծան.՝ Գետնին չմնալը հայերի մոտ նույն իմաստն ունի, ինչ Փրանսիացիների «tombre à l'eau»:

<sup>19</sup> Աստղաբաշխական զրքի անուն, որի մեջ ժողովված են աստղաբաշխական և կախարդանքի վերաբերյալ զրություններ՝ գուշակություններ և կախարդություններ անելու նպատակով (տե՛ս Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, Ա.-Ե, Երևան, 1969, էջ 19):

- 129) Ասաց. – Հայ, Հայ, թե քար էսօր մուտ տա, մուտ տա,  
 Հող չի կարնա պահի.  
 Զաշխարհք արեր է կաթ մի արուն,  
 Դրեր է մեջ ձեռքին:

**Ծան.**՝ «Փակված լինել» – Այս գուշակությունը ցույց է տալիս, որ  
 ՄՇերը ծնված օրից նախանշված էր ճակատագրից, և հայրական  
 անեծքը ոչինչ այլ բան չէր, քան դրա հաստատումը:

- 130) – ՄՇե՛ր, որ դու հետ ինձի կոփվ արիր,  
 Ինձի ամանչեցրիր,  
 Կանչեր եմ քաղցրիկ աստված,  
 Անմահ ընմիս, անժառանգ:

**Ծան.**՝ Ֆեյդին ներկայացնում է «Սասնա Ծոեր» ժողովածուի եր-  
 կու տարբերակների այն հատվածները, որոնցում Աստված ՄՇերից  
 դուրս է քաշում որդեմության երակը: Այս հատվածները չկան համա-  
 հավաք բնագրում.

- Դավիթ կանչեց, ասաց.  
 – ՄՇե՛ր, վոր տու խետ ձի կոփվ արիր.  
 Ձի ամանչեցրիր մընչ խալսին,  
 Կանչիր եմ քաղցրիկ Ասված,  
 Քո մոտեն ժառանգ չընկնի տուրս,  
 Քե մախ չընի, չուր Քրիստոս կա դատաստան:  
 Ասծու հրամանքիվ  
 Հրեշտակ ՄՇերի միջաց երակ քաշեց,  
 Վոր ենու մոտեն ժառանգ չընկնի տուրս  
 մըչ աշխարքին (տե՛ս Սասնա Ծոեր, հ. I, էջ 43–44):  
 Ասու հրամանով Գաբրիել Հրիշտակ վար իջավ,  
 Խեր, տղեն մեմեկից հիտ կտորից,  
 Ինչզ տու ձեռ տաս երկու ուշ մեմեկից հիտ կտորիս:  
 Դավիթ եսաց. «Ողորմած, բարերար Աստված,  
 Հրաման երիր՝ Գաբրել Հրիշտակ վար իջավ,  
 Գաբրել Հրիշտակ, տու ՄՇերի քամկի երակ քեշին՝  
 Անու ժառանգ չընկնի տուս,  
 Անու մախ չտաս՝ մընչիվ Քրիստոս գա  
 դատաստան (Նույն տեղում, էջ 101):  
 131) Ասաց. – Խաչ պատերազմին վեր քո աջ թւկին՝  
 Անցեր է, էլեր է սև կուտ:

**Ծան.**՝ Ժողովրդական կախարդահոգեսոր մտածողության մեջ թալիսմանը չի կարող շահեկան լինել, երբ նրա տերը մեղք է գործում: Այն կարող է դառնալ պատժող, եթե նրա տերը ծանր հանցանք է դորձել:

- 132) – Իմ ցեց իմ անձից է,  
Էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց:

**Ծան.**՝ Դավիթը՝ Զմշկիկ Սուլթանի նախկին փեսացուն, Հյուրընկալության մի գիշեր էր ունեցել վերջինիս մոտ, երբ գնում էր Խանդութին հանդիպելու:

- 133) Ու ինքն էլ էնտեղ մեռավ,-  
Արև էտու ձեր որդոց:

**Ծան.**՝ «Արևը տվեց ձեր որդիներին» դարձվածը պահանջում է երեքպատիկ բացատրություն. 1) Արևը, ինչպես արդեն ասել ենք, կյանքի խորհրդանշչն է: Ե՞կ օր Հնության, և՛ անեծքի ժամանակ արևը բառը խորհրդանշում է կյանքը: 2) Կախարդական իմաստով մահը տարափոխումն է կյանքի մի ձևից մինչև մեռելահարցություն: Երբ որևէ մեկին հաղորդում են մահվան մասին, հարկավոր է այդ ասել շատ զգուշավոր, նրան հեռու պահելով մահվան տարափոխության վտանգից, ասելով. «Դուք երկար ապրեք», «Թող Աստված ձեղ պահապան լինի», «Թող Աստված պահապանի ձեր երեխաներին» և այլն: 3) Ընդհանրապես մահվան լուրը հայտնում են արցունքներով՝ այն ուղեկցելով որոշ ցանկություններով. «Մեռածը թող իր չապրած օրերը ձեզ տա», «Մեռածը թող իր չապրած օրերը տա ձեր երեխաներին»:

- 133) Էլնենք ջրինդ խաղալով էրթանք,  
Բալքի Խանդութ չը գիտենա, որ Դավիթ մեռեր է:

**Ծան.**՝ Այս առումով չկա անհրաժեշտ հատուկ պայման խաղի համար:

- 134) Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս:  
...Յոթ ճյուղ ծամի տեղ էլ հիմի կ'էրևա,  
Քանց յոթ սուն կը սևկըտի:

**Ծան.**՝ Ֆեյդին «Քանց յոթ սուն կը սևկըտի» դարձվածը համարում է անհասկանալի: Նա թարգմանել է. «Elle se sont enfoncées dans la roche comme sept colonnes»:

135) Տի տամ օղորմին յոթ ճուղ Դավթին,  
Ճղեճուղ էլանք վեր Մհերի ճուղին:

Ծան.՝ Միտքը մութ է: Ինչպես կարծում ենք, այն պետք է բացատրել Հետևյալ ձեռք: Էպոսը մեզ է հասել բազմաթիվ անուններով՝ «Սասնա տուն», «Սասնա Ծոեր» և քանի որ Դավթի գերդաստանի գլխավոր Հերոսն էր՝ նաև «Սասունցի Դավթի»: Բազմաթիվ ասացողներ լսարանի վրա տպագրություն թողնելու համար իրենց պատումը սկսելոց առաջ ասել են, թե Էպոսը բաղկացած է յոթ ճյուղից, բայց իրենք չգիտեն բոլորը, ինչպես իրենց «վարպետը» այդ գիտեր: Նկատենք, որ Դավթի ճյուղը բաղկացած է յոթ մասից, և գուցե այս յոթ մասերն են ասացողները համարել յոթ ճյուղեր:

136) Էդ վանքի անունն էլ Մատղավանք էր:

Ծան.՝ Մատաղը կենդանիների զոհելն է կատարված ուխտի ժամանակ:

137) Տեսան՝ անտառի ծառներին թիվ կա  
էն յոթ թագավորի զորքին թիվ չկա:

Ծան.՝ Ֆեյդին այս հատվածը թարգմանել է. «Բանակը մեծ է, և մենք չենք կարող ոչնչացնել» (*«L'armée est nombreuse et nous ne pouvons pas l'anéantir»*): Նա այս նախադասությունը քաղել է «Սասնա Ծոերի» հետևյալ հատվածից.

Խրողերնիր մտածիցին, ըսին  
- Երթանք դախ քաղաք՝ քաղաք ծանտր ի  
Զընք կենա ավերի:  
138) Մհեր ասաց. «Հայ-Հոյ, զուր է,  
Գետինն էլ հալւորցեր է,  
Իմ ձիու ոտաց տակ չի դիմանա»:  
Օր կեսօր էր, քանի քշեց,  
Զին թաղվավ չուր իրիկուն:

Ծան.՝ Այս հատվածում, ըստ որոշ պատումների, տեղ է գտել Մհերի առ Աստված ուղղված աղերսը, որ նա վերացնի, ջնջի այս աշխարհը: Ահա թե ինչ է տալիս մեզ «Սասնա Ծոեր» ժողովածուի I պատումի համապատասխան հատվածը.

ՄՀԵՐ քսան տարի  
 Խլաթա հերի տակ աղոթք երավ, ասաց.  
 «Ով Տեր Ասված,  
 Իմ խոր անենք ձի խասիր ի,  
 Իմ միջաց երակ քաշիր ի,  
 Իմ մոտեն ժառանգ չընկավ մըչ աշխարքին,  
 Ձի ել մախ չկա,  
 Չուր Քրիստոս կա դատաստան:  
 Ռվ Տեր Ասված,  
 Զքիզ եմ կանչիր,  
 Տու ընցկուն ենես,  
 Ձի ձգես Վանա քար,  
 Իմ խոգու ճարը ենի»:

Ֆեյդին այնքան շահագրգիռ է, որ Փրանսերենով կարդացող ընթերցողը ընկալի հայ ժողովրդական էպոսի ողջ հմայքը, որ չի զլանում, որոշ բացատրություններ կրկնել մի քանի անգամ, որպեսզի ընթերցողը դրանք չորոնի այլ հատվածների տողատակ-ծանոթագրություններում։ Այսպես, օրինակ, մի քանի տեղերում փոքր-ինչ փոփոխություններով կրկնվում են «Հալալ», «Հարամ», «Հուրի-փերի» և «Հարս» բառերի բացատրությունները:

\* \* \*

Ֆրեդերիկ Ֆեյդին երկար տարիներ է դբաղվել «Սասունցի Դավիթ» էպոսով, և դրա ապացուցն է 1957 թվականին «Բազմավիճակում» Փրանսերենով լույս տեսած «L'épopée populaire arménienne» ուսումնասիրությունը<sup>20</sup>։ Այս ուսումնասիրության մեջ Ֆեյդին դարձյալ «Սասունցի Դավիթ» էպոսը կապում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած հին վեպի կարևոր հատվածների և Գրիգոր Մագիստրոսի կողմից բերված եղակի բանաստեղծական մեջբերման հետ՝ Արտաշես արքայի մահվան տեսարանը ակնարկող:

Նա հիշեցնում է, որ ընդամենը 19-րդ դարի վերջին քառորդից քիչ առաջ, Գարեգին Սրբանձոյանցին հաջողվեց հայտնաբերել «Սասունցի Դավիթ» էպոսի մի տարբերակը, որի բանասիրական մեկնաբանու-

<sup>20</sup>Տե՛ս «Բազմավիճակ», Հուլիս-օգոստոս, էջ 173-184, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 224-231:

մը հիմքը դրեց Հայ էպոսագիտությանը և զարկ տվեց որոնելու նոր տարբերակներ: Նա հիշատակում է էպոսի հետագա գրառողներ Մանուկ Արեգայանին, Հայր Գարեգին Հովսեփյանին, որը հետո դարձավ Մեծի տան Կիլիկիո կաթողիկոս և ուրիշների, որոնց թվում առանձնացնում է Մ.Զիթունուն, որը ներկա էր զեկուցմանը դահիճում և նույնպես գրառել էր էպոսի մի նոր տարբերակ՝ դեռևս չհրատարակված:

Էպոսի տարբերակները հասել են երկու ձեռվ՝ որոշ մասը ներկայացնում են պատմողական չափածո, իսկ որոշը՝ արձակ:

Ֆեյդին համոզված է, որ Հայ գրականությանը ևս հարկավոր է մի ֆիրդուսի, որը էպոսը վերաշարադրեր ժողովրդականի իր ձեռվ և այն դարձներ գրավոր հեղինակային ստեղծագործություն: Այդ գործը ժամանակին ստանձնել է Հովհաննես Թումանյանը ու իրականացրել պատվավոր ձեռվ: Դժբախտաբար, նա մշակել է էպոսի միայն մեկ ճյուղը և հայտնի չէ, թե ինչու նա այդ արել է մանուկների համար՝ յուրովի ձեռվ նորոգելով ազգային էպոսը: Հայագետը համոզված է, թե Հայկական նոր էպոսը դեռևս ունի ֆիրդուսու մակարդակի վերաշարադրողի կարիքը, որն այդ բացառիկ գրական հուշարձանը կներկայացներ ամբողջական ձեռվ:

Ֆեյդին ներկայացնում է, թե «Սասունցի Դավիթի» որ հրատարակություններին և որ տարբերակներին է ծանոթ, խոսում է էպոսի եղած և ենթադրվող ճյուղերի թվի մասին:

Այդ էպոսը եղել և մնում է Հայ բանասերների հետաքրքրության առարկան<sup>21</sup>: Պարզվում է, որ նրա զեկուցմանը դահիճում բացի էպոս-սագետ Մ.Զիթունուց ներկա էին Մ.Դաբայյանը, որ Վանի բարբառով թարգմանել է էպոսի մեկ ճյուղը և տիկին Սակիղ-Տեր Մելքոնյանը, որը համալսարանում դոկտորական թեզ է ներկայացրել Հայ ազգային էպոսի վերաբերյալ:

Այնուհետև Հայագետը փորձում է ճշտել մի շատ կարևոր հարց. ո՞ր ժամանակահատվածում է կազմավորվել և վերջնական տեսք ստացել «Սասունցի Դավիթ» էպոսը: Այս հարցին ճշգրիտ պատասխանելը նրա կարծիքով անհնար է, որովհետև որևէ պատմական անուն նրանում չկա, միակ պատմական անունը Ասորեստանի Սենեքերիմ թագավորն է, սակայն այդ անունը չկա էպոսի սկզբում, այլ կապ - վում է Սասունի հերոսների լեգենդար ծագման հետ: Ֆեյդին

<sup>21</sup> «Բաղմավէպ», 1957, Հուլիս-օգոստոս, էջ 174:

Համոզված է, որ հայ ժողովրդական էպոսում ընդգրկված է մոտ երկու հազար տարվա պատմություն:

Այս ժամանակահատվածը ընդգրկելով՝ Ֆեյդին նոր էպոսի շատ դրվագներ զուգահեռում է Մովսես Խորենացու պատմած առասպելական դեպքերի, այսինքն՝ հայոց հին վեպի հետ:

«Սասունցի Դավիթ» էպոսին տրված հայագետի գնահատականները իրենց հետազոտական մանրամասներով, գիտական մեկնաբանություններով ու եղբակացություններով արդիական են ու ելակետային:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՄԱՑԻԼՆԵՐԸ

Ֆրեդերիկ Ֆեյդիի Հայագիտական կոթողային աշխատություններից է «Քրիստոնեական Հայաստանի Հմայիլները» խորագիրը կրողը, որի վրա հեղինակն աշխատել է չուրջ հիսուն տարի, այսինքն՝ գիտական ողջ կյանքի ընթացքում: Իր հետազոտության առաջարանի փոխարեն դրված է զեկույցի վերջում նա իր պարտքն է համարում ընթերցողին որոշակի տեղեկություններ հաղորդել, թե ինչու այս գիրքն այդքան տարիներ հետո է լոյս աշխարհ եկել: Հմայիլների ձեռագրերի արտագրումը սկսել է 1933–34 թթ. ձմռանը, երբ գտնվում էր Սուրբ Ղազար կղզում: Հետո Միխիթարյան միաբանության անդամ Եղիա Փեճիկանը ներշնչում է նրան գրել Հայերենի քերականություն, որն ինքն անմիջապես իրականացնում է: Այդ փոքրածավալ քերականությունը լոյս է տեսնում 1935–ին<sup>1</sup>: Այնուհետև հանգամանքներն այնպես են դասավորվում, որ Ֆեյդին Հայկական Հմայիլներին վերստին անդրադառնում է միայն երկրորդ աշխարհամարտից հետո: Նա սկսում է Հմայիլների նյութերը քաղել Փարիզի ազգային գրադարանից: Դեպքերի բերումով աշխատանքը վերստին կանգ է առնում, որովհետև նախընտրում է աշխատել ու հրատարակել Հայոց լեզվի դասագիրքը, որից հետո էլ նոր ընդհատումը բացատրվում է «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանության ու ծանոթագրման հետ կապված վիթխարի աշխատանքի հետ: Ահա այդ բոլորից հետո միայն «Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամի» հովանավորությամբ լոյս աշխարհ է եկել այս հատորը, որի վրա ընդհատումներով աշխատել է մոտ կես դար:

«Քրիստոնեական Հայաստանի Հմայիլները» գիրքն ունի «Հազորդում», «Զեռագրացուցակ», «Հմայիլների քննական բնագրեր» կարևոր բաժինները: Առաջարանի փոխարեն գրված զեկույցում Հայագետը ներկայացնում է Հմայիլների ժանրը, Հարցի պատմությունը, որին հավելում է իր կատարածը: Ըստ նրա՝ գրքում զետեղված Հմայիլները, բացի մեկից, գրված են եղել փաթաթված թղթի ձևով,

<sup>1</sup> Frédéric Feydit, *Amulettes de l'Arménie chrétienne*, Venise, st. Lazare, 1986, p. 16.

նրանցում կան կայուն բանաձևեր, որոնցով միջնադարում փորձում էին պայքարել չար աչքի, դժբախտ գեպքերի ու հիվանդությունների դեմ: Այդ «Հաստոկ գրությունները» կախում էին զից, թեից, այն կարող էին այրել ու մոխիրը ներշնչել, կամ մոխիրը լցնել ջրի մեջ, այնուհետև այն խմել: Այն հմայիլները, որոնք հանդիպել են հայագետին, ունեցել են քսանհինգ մետր երկարություն և տասներկու սանտիմետր լայնություն: Դրանք կարող էին պահվել գրպանում:

Ֆեյդին ծանոթ է Հր. Աճառյանի գրպան բառին տրված բացատրությանը<sup>2</sup>: Նա առավել կոնկրետացնում է միջնադարյան քրիստոնեական հմայիլների նշանակությունն ու իմաստը. «Դրանք ծառայում են երկու առումով. մի կողմից հաստատուն ձեռվ ապահովում են հմայական խոսքում թվարկված տարրեր տեսակի հարվածներից՝ առանձինառանձին կամ միասին, ինչպես նաև չար աչքից, մյուս կողմից՝ խանգարում են և աղղարարում որևէ պատահարի գեպքը՝ հեռացնելով որշված կախարդանքը՝ նրա համար դեղ ու դարման բերելով: Հետո ընտրվում են հարմար բնագրեր ամեն դեպքի համար. զատված արտագրվում է այդ օրինակը՝ որպես առանձին գիր»<sup>3</sup>:

Ֆեյդին առաջին հերթին օգտվել է Վենետիկի Միսիթարյան միարանության ձեռագրերից: Այստեղ կային քանչչորս ձեռագիր հմայիլներ: Դրանցից քաններկուսը փաթաթված, ոլորուն ձեռվ էին, մեկը տպագրված՝ դարձյալ ոլորուն, իսկ մեկը քառակուսի ձեռագիր էր, բաժանված չորս քառակուսիների, դրանք իրենց հեթին բաժանված էին ութ եռանկյունների, իսկ բոլորի կենտրոնում կլոր շրջան էր:

Սուրբ Ղազար կղզու ձեռագրերը, որոնք պարունակում են հիշատակարաններ, ունեն հետեւյալ թվահամարները՝ 1677, 1680, 1690, 1693, 1703, 1710, 1713, 1715, 1742, 1760, 1779, 1808: Այն ձեռագրերը, որոնք լրիվ չեն և չունեն հիշատակարաններ, պետք է որ ինեն միևնույն ժամանակահատվածի: Տպագրված հմայիլները 1709 և 1731 թվականների են:

Ֆեյդին օգտվել է նաև Փարիզի ազգային գրադարանում պահպող նույնատիպ վեց ձեռագրերից: Երեքը նրանցից ունեն տարեթվեր՝

<sup>2</sup> Գրապան – հագուստի վիզը, հագուստի եղբերը՝ զգի, լանջքի և քղանցքների վրայ, 2. ուսանոց, վակաս, որ և գրապանակ՝ «քահանապապետի վակասը», ...յետնարար ունինք գրապան «գրպան, ջեր»: ...Արդի գրականում ընդունված է միայն գրպան «ջեր», որից շինված են՝ գրպանակ, ծոցագրպան, գրպանել, գրպանահատ: - Ըստ իս նույն բառն է նաև գրպանակ՝ «հմայակ, կախարդական գիր»: Իրանական փոխառություն է: Գրապանակը այն բանն է, որ կախում էին զիցի ի պահպանություն (տե՛ս Հր. Աճառյան, Հայերնի արմատական բառարան, Ա. Հատոր, Ա.-Դ, Երևան, 1971, էջ 602-603):

<sup>3</sup> Frédéric Feydit, Amulettes de l'Arménie chrétienne, p. 5.

առաջինը 1743, երկրորդը՝ 1766, իսկ երրորդի տարեթիվը ջնջված է:

Նա հասուկ ակնածանքով է հիշում իր պաշտելի ուսուցչի՝ ֆրեղերի Մակլերի ազնվագարմ կնոջը, որը նրան հանձնել է Հմայիների երկու ձեռագիր: Մի ձեռագիր էլ նա ձեռք է բերել Կոստանդնուպոլիսում եղած ժամանակ: Այդ ձեռագրերից ոչ մեկը չունի ավարտի հատվածը: Այդ ձեռագրերը ևս ստեղծված են XVII, XVIII և XIX դարերում:

Ֆեյդին հայտնի են նաև ավելի վաղ ժամանակների Հմայիների ձեռագրեր: Դրանցից մեկի նկարագրությունը կա Վիեննայի Մխիթարյանների գրադարանում 433 համարի ներքո և գրված է 1476-ին: Այդ մասին վկայում է հայր Հակոբոս Տաշյանը<sup>4</sup>: Նա հիշում է նաև մեկ այլ՝ ավելի հին ձեռագիր, որի մասին տեղեկացրել է հայր Վարդան Հացունին պրոֆեսոր Թեղայից: Այդ ձեռագիրը գրվել է 1447-ին և փաստուեն պահպանված ձեռագրերի մեջ հնագույնն է Արևմուտքում<sup>5</sup>:

Ֆեյդին իր հետազոտությունը գրելիս օգտվել է բազմազան տպա-

<sup>4</sup> Frédéric Feydit, *Amulettes de l'Arménie chrétienne*, p. 6.

<sup>5</sup> Մաշտոցի անվան Մատենադարանում կան բազմաթիվ ձեռագրեր, որոնք 15-րդ դարից են գալիք և իրենցում ունեն Հմայիներ: Դրանցից են թիվ 716, 2001, 2072, 3248, 2145, 4600, 2562, 5951, 6319 և այլն: Կան նաև 13 և 14-րդ դարերի ձեռագրեր, որոնք ունեն Հմայիները: Դրանցից մեկն է թիվ 5473 ձեռագիրը, որը պարունակում է նաև Հմայագիր ու գրված է 14-րդ դարում: Իսկ 1290 թ. Սկլուսյի վանքում գրված Ավետարանը վերջում ունի նաև Հմայական հատված՝ «Աղօթք երաշտի» (ձեռագիր 2630): Հնտաքրքիր է, որ բավական թվով Հմայիներ գետեղված են Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» հետ (օր. ձեռ. 2145): Իսկ 1373, 1480 թթվ. գրված թիվ 2001 ձեռագիրը մի ժողովածու է, որի ճանաչողական արժեքը շատ մեծ է: Նրանում կան ոչ միայն Հմայիներ, այլև ամենաբազմազան նյութեր, որոնք ներկայացնում են 14-15-րդ դարերի հայ հոգևորականության, ինչպես նաև գրել կարգական հմացող մարդկանց հետաքրքրությունների շրջանակը: Ձեռագիրը գրված է Աղթամարի վանքում: Եռվանդակությունն է՝ Գուշակութիւն: ՄՄ.Երզնկացւոյ Հանելուկը թուարանականք: Ատոմայ գրչի Առակը իմաստափականք: Ան.Շիրակացւոյ Պատոչն սոսմարի, ի յայտնութիւն Տեսան: Շեշտք Աւետարանաց: Մանրուսումն: Ցակ. Ղրիմնեցւոյ Մեկնութիւն սոսմարի: Գէորգայ վարդապէտի Վասն զատկի: Վարդանայ Զի՞նչ է ճրագալուցին լուցանելն: Հարցումն Եւսերի առ Անատոյ: Ցովէ. Սարկաւագի Սակս երկուցն ապրիլի, Յաղագս Յ-կին, Յաղագս ամսոց հայոց և տոնից, Յաղագս հոռմայեցոց ամսոց: Զաքարիայի կաթողիկոսի Սակս արարչութեան: Հովէ.Կողենոնի Մեկնութիւն սոսմարի: Սամուէլի քահանայի Մեկնութիւն սոսմարի: Մեկնութիւն սոսմարին Անդրէասի: Ներսէս Շնորհաւոյ Յաղագս երկնից և զարդուց նորա (չափ.): Տաղ: Տածկագիր (այրութեն): Յաղագս երկուսասն կենդանակերպից: Խմաստափարաց Յաղագս լուսնի և արեական: Յաղագս մոյրակաց: Ամիսք հոռոմոց: Սարգի որդուոյ Ամենաւագի Տաղ տոմարական: Անուանք Ի՞Դ ժամանց: Անուանք Հրեշտակաց: Յաղագս որոտմանց: Հմայագիր (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ. Ա. Կազմեցին՝ Օ.Եղանյան, Ա.Զեյթունյան, Փ.Անթարյան, Ներածություն՝ Օ.Եղանյանի, Խմաստքությամբ՝ Լ.Խաչիկյանի, Ա.Մնացականյանի, Երևան, 1965, էջ 695):

զիր աղբյուրներից: Հատկապես օգտագործել է Հովհան Մանդակունու «Թուղթ վասն հմայից դիւժականաց եւ անօրէն յուռթողաց» ճառը, ինչպես նաև Հայր Վարդան Հացունու «Երդմունք հին Հայոց մէջ» գիրքը:

Հայագետի կարծիքով Մաշտոցի անվան Մատևնադարանում էլ պահպող ձեռագիր հմայիլների հնագույն օրինակները գալիս են 15-րդ դարից: Նա անհնար է համարում գտնել որևէ թվական և ասել, թե հենց այդ ժամանակից հմայիլները մտան գործածության մեջ: Սակայն կա վավերական փաստ, որ դրանք գալիս են հինգերորդ դարի երկրորդ կեսից, և այդ փաստերը կապվում են ժամանակի հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունու հետ: Նրա ճառերից իմանում ենք, որ հենց հինգերորդ դարում հայերն օգտագործել են «գիր պահարան»: Մանդակունին իր հԶ (26) ճառն ամբողջությամբ նվիրել է կախարդական նման երևույթներին: Քրիստոնեական ըմբռնմամբ ամեն ինչ կախված է Աստծոց. այդ մասին շատ հստակ պատմում են չորս ավետարանիշները: Հովհան Մանդակունին ևս բազմից կրկնում է այդ իրողությունը նույն ճառում և իր մերժումը՝ նույնպես բազմից: «Եւ որ անարգէ զիաշն փրկական և արհամարհէ զշնորհսն Քրիստոսի և գնայ առ դիմութել և պահարան և ուռութն և զգիր պահարան ընդ անձն արկանեն, զնոցանէ ասէ Քրիստոս՝ եթէ «Երթայք, անիծեալք, ի հուրն յալիտենից, ոչ գիտեմ զձեզ», վասն զի զայն արարին, զոր նոյն ոչ հրամայեաց»<sup>6</sup>: Չնայած այս և նման ցուցումների՝ հմայիլները թափանցել են նաև քրիստոնյա հավատացյալների կենցաղ՝ ստանալով քրիստոնեական բովանդակություն:

Հովհան Մանդակունու ճառը լի է նույնանպատակ զգուշացումներով: Քրիստոնեական գրականության մեջ ընդունված ձև էր միենալուն միտքը տարբեր նրբերանգներով կրկնելը. սա ենթադրում էր այն ամբագրել հավատացյալի մտքի և սրտի մեջ:

Հովհ. Մանդակունին թվարկում է հմայության հետ կապված հավատացյալ բաղադրամասերը. «...ի դեղահմայս..., յուռութս, ի բախտս, ի ճակատագիրս<sup>7</sup> և ի գիր պահարանի և յամենայն ի շարժմակս բժժա -

<sup>6</sup> Հովհան Մանդակունի, Ճառք, երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1860, էջ 192:

<sup>7</sup> Եղնիկ Կողբացին քրիստոնեական աստվածաբանության դիրքերից հետևյալ ձևով է հերքում մարդկանց հավատը առ ճակատագիր. «Ծ, տկար ճակատագիր և անզոր վճիռ, որ գողերն ու ավագաներն էլ կարողանում են խախտել, երբ հարձակվելով՝ մարդուն կողոպտում ու սպանում են: Եվ եթէ գեղքերը պիտի կատարվեն ճակատագիրի ինչ-որ սահմանումով, (ապա) ոչ թագավորները պիտի մահվան հրաման տան, ոչ էլ դատավորները պիտի տանջեն ու սպանեն մարդասպանին: (Այնինչ) նրանք պատիժ տալով հայտնի են դարձնում, որ հանցավորների հանցանքները ոչ թե ճակատագրի ինչ-որ

նաց, Հմայից, դիւթաց, յորս կոչեն զղևսն յաղ, յերկաթ, ի ջուր, ի նարուտ, յիւղս, ի գարի, ի յուլունս, ի մոմ, և ի հեր զիլսոյ և յամենայն պղծութիւնս, որով պղծենն և կորուսանեն զոփի Հնազանդելոց»<sup>8</sup>:

Կաթողիկոսը շարունակ վկայակոչելով Ավետարանը՝ զգուշացնում է, թե Հավատացյալը պետք է Հավատա Հիսուսի վարդապետությանը և ոչ կախարդների բժժանքներին, այլապես. «Անիծեալ ամենայն մարդ, որ ոչ կացցէ ի գրեալուն ի գիրս»<sup>9</sup>:

Մանդակունին ցավով նշում է, թե իրական կյանքում շատերը Աստծու փոխարեն սատանային են ծառայում, ու հիշեցնում է. «Դկքն և դիւքն արարածք են և ոչ արարիչ», իսկ կյանք, առողջություն, Հավերժություն կարող է տալ մարդուն միայն Արարիչը<sup>10</sup>:

Իսկ ովքե՞ր են այս գիր-պահպանակների հեղինակները, Հարցնում է Հայագետը, և դրա պատասխանը ևս գտնում է Հովհան Մանդակունու ճառի մեջ, ուր ասկում է, թե դրանց մեջ կան Հոգեորականներ, որոնք դիմում են կախարդներին, իրենց վղից կախում նրանց գրած Հմայիները: Նա բացատրում է նաև, թե ինչու կախարդական Հատկություններ ունեցող գրի այդ տեսակը պետք է տարածվեր: Մարդիկ կարիք ունեին ապահովության և հեշտորեն Հավատում էին, որ յուրաքանչյուրը պետք է ունենա իրեն օգնող իր սեփական թալիսամանը: Ֆեյդին նկատում է նաև թալիսամանի բնագիրն արտագրող գրիչների անգրագետ լինելու հանգամանքը, որի պատճառով շատ տեքստեր աղավաղվել են ու աղճատվել: Օրինակ, ձեռագրերից մեկում կարդում ենք. «Աքար որդի Քարմեայ», մինչդեռ այս սխալի հետևանք է, և պետք է լինի. «Արքայ որդի Քրմի»<sup>11</sup>: Հայագետը չի հանդգնում բոլոր բնագրերը ուղղել կամ ծանոթագրել, որովհետև նրանցում այնքան շատ են անհասկանալի տեղերն ու Հավելումները ու նպատակա-

---

սահմանումով, այլ չարագործ բռնությամբ են լինում:

Եվ կամ՝ երբ ավագակիսումը արշավում է երկիր՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող զորդ Հավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն՝ երկիր ավագակներին գուրս քշելու համար, այլ թող պատճառարաննեն, թե՝ «երկրի ճակատագրին է ավագակց կոտորվիլ, մենք ինչո՞ւ պիտի զեմ գնանք ճակատագրին»: Բայց զորքեր զումարելով և երկիր թշնամուն զուրս վոնդելով՝ ցուց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավագակի բռնությամբ, որը զարով անհապարար կոտորում է մողովրդին, զրկում ունեցվածքից» (տե՛ս՝ Եղնիկ Կողբացի, Եղծ ածանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Արքահամբանի, Երևան, 1970, էջ 109):

<sup>8</sup> Հովհ. Մանդակունի, ձառք, էջ 194:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 195:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>11</sup> Frédéric Feydit, Amulettes de l'Arménie chrétienne, p. 8.

Հարմար է դրանք ներկայացնել նախնական ձեռագրական տեսքով: Բնագրերը դասակարգելիս նա ի նկատի է ունեցել բովանդակային որոշ խնդիրներ, ինչպես, օրինակ, Աստված, Հիսուսը, Հավատի խնդիր - ներ, Սուրբ Կույսը, Առաքյալները, Սրբերը և այլն: Կան նաև որոշ խմբագորումներ ըստ հմայիլի բովանդակության՝ պահպանում ատամ-նացավից, աչքացավից, որդենության ժամանակ եղող վտանգներից, չար աչքից, բնական աղետներից և այլն: Նա նկատում է, որ հմայիլներում կան միսեմատիկ բովանդակային կրկնություններ՝

ա) Օգնական եւ պահպան եղիցի ծառայիս Աստուծոյ ... ամէն,

բ) Նոյն բժշկութիւն եղիցի ի Յիսուսէ Քրիստոսէ ծառայիս Աստուծոյ» ... ամէն:

Ֆեղին շեշտում է, որ հայ քրիստոնեական հմայիլներում մեծ տեղ են զրադեցնում ավետարանական հատվածները, որոնց նպատակն է պաշտպանել հմայիլի տիրոջը: Նա բերում է իր հրատարակած հմայիլների և Ավետարանի միջև եղած նույնությունների պատկերը: Ահա դրանցից մեկը՝ ամլությունը, որը դիտվում է որպես ծանր երևույթ, որպես ավետում, հայտարարվում է հրեշտակից Մարիամին նրա հղի լինելը, նշերով նաև, որ հղի է նաև նրա ազգական եղիսաբեթը՝ իր ծեր հասակում, որովհետև Աստծու համար անկարելի բան չկա. «Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Հրեշտակը պատասխանեց եւ նրան ասաց. «Սուրբ Հոգին կը գայ քո վրայ, եւ Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետեւ նա, որ քեզնից է ծնուելու, սուրբ է եւ Աստծու որդի կը կոչուի: Եւ ահա քո ազգական եղիսաբեթը. նա եւս հղի է իր ծերութեան մէջ, եւ այս յիշութեան վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչուած. որովհետեւ Աստուծոյ համար անկարելի բան չկայ»<sup>12</sup>: Ֆեղին նկատում է, որ հմայիլներում առկա են աղոթքներ, որոնք նա բաժանում է երկու խմբի՝

ա) Քրիստոնեական կանոնական աղոթքներ,

բ) Զուտ հայկական աղոթքներ:

Կանոնիկ աղոթքներն են՝ «Հայր մերը», «Հավատո հանգանակը» և «Ողջույն քեզ Մարիամը»: Բոլոր քրիստոնեական հայկական հավատներում՝ ազգային, բողոքական, կաթոլիկ, Տերունական աղոթքը ոչ միայն հայոց եկեղեցում, այլև հայկական մյուս երկու հարանվանությունների՝ կաթոլիկ և բողոքական, ունի նոյն ավարտը. «...որովհետև Քոնն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից: Ամեն»: Ահա այս պարտադիր վերջով նշանավորում են հայկական

<sup>12</sup> Պուկաս, Ա, 34-38:

Ճեռագրերի հիշատակարանները: Հայոց եկեղեցու Հավատո հանգանակը շատ տարրեր է կաթոլիկ եկեղեցու Հավատո հանգանակից մի շարք կետերով: Սակայն Ֆեյդին իր խնդիրը չի համարում անդրադառնալ այդ տարրերություններին: Դրանք նրան շատ հեռու կտանեին: Հավատո հանգանակը նրան հանդիպել է մեկ հմայիլում: Այն զետեղված է Միսիթարյան միաբանության մատենադարանի 3042 ճեռագրում: Այն հմայիլի 18-րդ միավորն է՝ «Հանգանակ Նիկիական», որում կա հետևյալ բանաձեռ՝ «Սուրբ Հայրապետաց աղօթքը օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ»<sup>13</sup>: Հայկական հմայիլներում առկա է նաև «Ave Maria» («Ողջուն քեզ Մարիամ») բանաձեռը: Միսիթարյան միաբանության ճեռագրի 3024-ի հմայիլ 2-րդը. «Ողջուն քեզ Մարիամ», լի շնորհոք, ուրախ լեր բերկրեալդ» («Salut à Toi, Marie, pleine de grâce, sois joyeuse, bienheureuse»): Այս հմայիլն ունի հետևյալ պահապանիչ ձևակերպումը. «Հայր Աստուած, արարիչ ամենայնի, երկնի եւ երկրի ստեղծող, օգնական լեր եւ պահապան ծառայի քո»<sup>14</sup>:

Ֆեյդին բացատրում է, որ Հայ եկեղեցու կողմից երկու սրբացված բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու ու Ներսես Շնորհալու աղոթքները մտել են ծիսական հմայական գրականության մեջ: Տասներորդ դարի բանաստեղծ Գրիգոր Նարեկացու աղոթքներից մի քանիսը մտել են հմայիլների մեջ: Դրանք են՝ «Որդի Աստուծոյ կենդանւոյ...», «Ընկալ քաղցրութեամբ...», «Աստուած յաւիտենական...», «Արդ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձիչ...»: Տեղին է հիշել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի հմայական արժեք ստացած այս աղոթքներից մեկը.

Որդի Աստուծոյ կենդանւոյ, աւրհնեալ յամենայնի,  
Հաւրդ ահաւարի անքնին ծնունդ,  
Որ տկարանայ առ ի քէն եւ ոչ ինչ,  
Որ ի ծագել անստուեր նշողից ողորմութեան քո փառաց  
Հալին մեղք, Հալածին դեւք, Ծնշին յանցանք  
Խղին կապանք, խորտակին շղթավք,  
Կենդանածին մահացեալք, բժշկին հարուածք,  
Ողջանան վէրք, բառնին ապականութիւնք,  
Տեղի տան տիսրութիւնք, նահանջին հեծութիւնք,  
Փախնու խաւարն, մեկնի մէզն,  
Մերժի մառախուղն, փարատի մոայն,

<sup>13</sup> Frédéric Feydit, *Amulettes de l'Arménie chrétienne*, p. 39.

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 32:

Սպառի աղջամուղջն, վերանա մութն, գնայ գիշերն,

Տարագրի տագնապն, չքանան չարիքն,

Հալածին յուսահատութիւնքն,

Եւ թագաւորէ ձեռքն քո ամենակար, քափչու ամենայնի:

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել,

Թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ,

Զի դու միայն ես յերկնի անճառ եւ յերկի անզնին,

Ի տարր գոյի և յեզերս ծագաց աշխարհի,

Սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ,

աւրհնեալ ի բարձունա:

Եւ քեզ ընդ Հաւը եւ Հոգույդ Սրբոյ փառք յաւիտեանս:

Ամէն (ԲԱՆ ԽԱՆ)<sup>15</sup>:

Ֆեյդին հիշեցնում է նաև Ներսես Շնորհալու աղոթքները, որոնցից «Հաւատով խոստովանիմ...»-ը նույն հաջողությամբ սիրված է հայերից գեռ այսօր էլ, և շատերն այն արտասանում են անգիր: Այս հիասքանչ աղոթքը Միսիթարյան հայրերը թարգմանել են աշխարհի 30-ից ավելի լեզուներով՝ անգամ սանսկրիտով: Ներսես Շնորհալու աղոթքը հայ կյանքի մեջ մնացել է երկարակյաց, որովհետև նրանում հնչող աղերսները նույնքան կարենոր են ամեն մի հավատացյալ առաքինի մարդու համար, որքան դրանք եղել են XII դարում: Ահա մի քանի հատված աղոթքից.

Հաւատով՝ խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ

Հայր և Որդի և Սուրբ Հոգի.

Աւել և անմահ ընութիւն.

Արարիչ հրեշտակյաց և մարդկան և ամենայն եղելոց.

Եւ ողորմեա՝ Քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս:

...Ամենախնամ տէր,

Դի՞ր պահապան աչաց իմոց՝ զերկիւղ Քո սուրբ՝

Ոչ ևս հայիլ յարատ,

Եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել գրանս չարութեան,

Եւ բերանոյ իմոյ՝ ոչ խոսիլ ըզատութիւն,

Եւ սրտի իմոյ՝ ոչ խորհիլ ըզչարութիւն,

Եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն

Եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ճանապարհս անօրէնութեան

<sup>15</sup> Գրիգոր Նարեկացի, Մատեան ողերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղաղինյանի, Երևան, 1985, էջ 410-411:

Այլ ուղղեա' զշարժումն սոցա'՝  
 Լինիլ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի  
 Եւ ողորմեա Քո արարածոց և ինձ՝ բազմամեղիս':  
 ...Ամենատղո՛րմ տէր,  
 Ուրդմեա' ամենայն հաւատացելոց ի քեզ,  
 Իմո՛ց և օտարաց, ծանօթի՛ց և անծանօթից,  
 Կենդանեա'ց և մեռելոց,  
 Ծնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն,  
 Որ առ իս յանցանաց,  
 Եւ դարձո զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ.  
 Զի ողորմութեան Քում արժանի եղիցին,  
 Եւ ողորմեա' Քո արարածոց և ինձ՝ բազմամեղի՛ս<sup>16</sup>:

Հայագետը նշում է, որ Գրիգոր Նարեկացու և Ներսես Ծնորհալու վերոհիշյալ աղոթքները կան համարյա հմայիլների բոլոր ձեռագրերում: Դրանք կան նաև հայկական բոլոր աղոթագրքերում: Նա հիշատակում է նաև անանուն հեղինակի «Մվ ամենասուրբ Աստուածածին...» և Հովհաննես Գառնեցու «Աղաչեմ զՔեզ Տէր Աստուած...» աղոթքները, որոնք կան իր հրատարակած հմայիլներում<sup>17</sup>:

Ֆեղին խոսում է նաև հմայիլների նկարագարդումների մասին, որոնք արտասովոր են: Որոշ բնագրերում կարելի է տեսնել ծառ, որը չունի ոչ ճյուղեր, ոչ տերևներ, ոչ արմատներ. նրա վրա նստած է արծիվ՝ առանց զլիսի, ճանկերի ու թևերի: Նա չատ հետաքրքիր է համարում այն փաստը, որ հմայիլների ձեռագրերից և ոչ մեկը չունի ինչ-ինչ դեղերի բաղադրատոմսեր: Նրանցում միայն աղոթքներ են՝ հոգեսոր բնույթի և ինչ-ինչ կամարդանքներ: Որոշ հմայիլներ ունեն Սողոմոնի կնիքը կամ գրված են գնդականման տառերով:

Ֆեղին նկատում է, որ հմայիլների լեզուն բնականաբար դասական է: Սակայն այդ լեզուն ունի թերություններ, որովհետև հմայիլների բնագրերը կազմվել են մեծ մասամբ ցածրաստիճան հոգեսորականների կողմից: Բնագրերում կան բազմաթիվ սխալներ, որոնք արդյունք են զրել-կարդալ զրելթե չիմացողների արտագրության: Կան նաև դեպքեր, երբ գրիչը չի իմացել ուղղագրական կանոնները, և դա էլ հասցերի է կուպիտ սխալների՝ ցաւոց բառն աղավաղվել է և դարձել ցուց, վիմագրորշ-վիմայզլոր, օրհնեալը՝ ոռթնեալ և այլն: Վերջապես հիշատակարանները գրվել են հմայիլը ստեղծողի կամ օգտագործողի լեզվով և

<sup>16</sup> *Nersetis Glejensis, Preces sancti, Venetiis, 1862, p. 1-13:*

<sup>17</sup> *F.Feydit, Amulettes de l'Arménie chrétienne, p. 13.*

շատ հեռու են դասական լեզվից: Հայագետը նշում է նաև, որ կախարդանքը չի ճանաչում սահմաններ՝ ոչ աղքային և ոչ էլ կրոնական, այդիսկ պատճառով նրանցում կարելի է հանդիպել թուրքերն, արաբերներն, քրդերն բառեր: Հայկական հմայինների ներսում կարելի է հանդիպել կրոնակախարդական բանաձեռներ, որոնք ոչ միայն հայկական են, այլ կան նաև այլ ժողովուրդների՝ հրեաներ, մահմեդականներ և քրիստոնյաներ, որովհետև դրանք ունեն մի ընդհանուր ծագում՝ եկող հավանաբար մարդկության հնագույն մտածողությունից:

Երկրորդ համառոտ գեկույցի մեջ Ֆեյդին բացատրում է այն սկզբունքները, որոնցով կազմվել է իր օգտագործած ձեռագրերի ցուցակը: Օրինակ, հոռմեական I-XXIV թվերը նշանակում են Սուլր Ղազար կղզու մատենադարանի ձեռագրերը: Այն ձեռագրերը, որոնց թվահամարի առաջ առկա է F տառը, նշանակում է Ֆեյդիի անձնական հավաքածու: Փարիզի աղքային գրադարանի ձեռագրերը սկզբում ունեն B. N. սկզբնատառերը, ապա արաբական համարները: Օրինակ՝ B.N. 97, B.N. 102 և այն; P.P. համառոտագրությունը նշանակում է, որ աղոթքի բնագիրն արդեն տպագրված է:

Ցուրաքանչյուր ձեռագիր ներկայացնելիս հայագետը նշում է ձեռագրի ստեղծման ժամանակը, թղթի տեսակը, ձեռագրի երկարությունն ու լայնությունը, ինչ վիճակում հասած, ինչ գույնի թանաքով գրված լինելը, քանի նկար և ում նկարները պարունակելը, նկարների գույների վիճակը, ոսկե հատվածներ ունենալը, ձեռագրի ընթեռնելիությունն ու տառերի պահպանված լինելը:

Քերենք Վենետիկի Մխիթարյան միաբանության մի ձեռագրի նկարագրության հայերեն հատվածները:

## ԶԵՌԱԳԻՐ II (3021)

Պարունակությունը: Առաջինի մեջտեղում ծերունի Սիմոնը գրկած է մանուկ Հիսուսին՝ տաճարում ներկայացնելու համար:

Սկսվում է.

1. «Հաւատով խոստովանիմ» աղոթքով:
2. Աղօթք սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնին: Ով ամենասրբունի Աստուածածին, պարծանք կուսութեան.
3. Աղօթք Սրբոյն Ստեփաննոսի. Ի քէն հայցեամբ արտասուագին...
4. Աղօթք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Խնդրեամբ ի քէն, Հայր պատուական...

5. Աղօթք պահպանութեան. Տէր Յիսուս, Դու ես օգնական իմ...
6. Աղօթք սրբոյն Յովհաննու Կարապետին. Այլ եւ բարեխօսութեամբ Սրբոյն Յովհաննու Կարապետին...
7. Աղօթք պահպանութեան. Հայր սուրբ սրբեա զիս...
8. Բարեխօսութեամբ սուրբ եւ աստուածային նշանացն...
9. Աղօթք Հրեշտակաց պահպանութեան. Գաբրիէլ, Միքայէլ...
10. Այս են անուանք Հրեշտակաց. Սարսիէլ, Սարագմիէլ...
11. Աղօթք ճանապարհորդաց. Կենդանամայէլ, Կենամայէլ...
12. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի. Հրանիսթ, Հրափայլ, Հրատն...
13. Զար աչքն ի չար փուշն...
14. Աղօթք վասն զաւակ ծնանելոյ. Նայեաց յաղաչանս ծառայիս քոյ...
15. Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին. Բարեխօսութեամբ սրբոց զօրավարացն...
16. Այլ և բարեխօսութեամբ սրբոց թագաւորացն...
17. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի. Տէր Աստուած մարդասէր...
18. Աղօթք գլխացաւի եւ աչից ցաւի. Գայր գետն Յորդանան...
19. Աղօթք սրբոյն Սարգիսի զօրավարին. Երջանիկ մեծ զօրական...
20. Որդի Աստուծոյ կենդանւոյ...
21. Աղօթք Թպղայի եւ Ալի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Գաբրիէլ...
22. Աղօթք Թպղայի եւ Ալի. Սուրբն Պետրոս եւ Սուրբն Պողոս...
23. Աղօթք Թպղայի եւ Ալի. Սուրբն Սիոն, Սուրբն Սիսի...
24. Ընկալ քաղցրութեամբ...
25. Աղօթք սրբոյն Կիպրիանոսի. Ես Կիպրիանոս, ծառայ Յիսուսի...
26. Աղօթք Սրբոյն [Յ]ուստիանէ կուսին. Յայնժամ կայր ի քաղաքին Անտիոքայ...
27. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի. Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ...
28. Արդ երես անկեալ աղաչեմք զՔեզ...
29. Աստուած յաւիտենական...
30. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի. Աստուած որ ընդ Մովսիսի խօսեցար...
31. Գիր չար աչից եւ չար լեզուի. Կայր Մովսէս յեզր Կարմիր Ծոփուտ...
32. Աղօթք պահպանութեան. Եւ եւս յամենացն ժամ զայս ասեմ...
33. Գիր վասն վաճառի եւ տալէչի եւ սթարի եւ յորժամ ի զատու

կամ ի պարոնի դիմաց կանգնի, խօսքն կտրուկ լինի ի դիմաց ծառայիս Աստուծոյ.

34. Գիր քաղցրութեան պարոնաց, դատաւորաց եւ թագաւորաց չարեաց եւ չարախօսեաց բարի խօսելոյ ծառայիս Աստուծոյ. Յանուն Մեսիային որ անուանեցաւ Քրիստոս...
35. Աղօթք պահպանութեան. Տէր Աստուած յորժամ զարքայութիւն Քո արարեր...
36. Աղօթք չար աչից եւ չար լեզուի. Սուրբ խաչն Աղթամարայ եւ Սուրբ խաչն Վարագայ...
37. Աղօթք ամենայն ցեղ պահպանութեան. Արդ բարեխօսութեամբ ամենայն սրբոց Քոց...
38. Աղօթք պահպանութեան. Տէր Հայր եւ Աստուած կենցաղոյս...
39. Աղօթք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. Տէր Աստուած զօրութեանց եւ Փրկիչ...

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Աստուծով 1742ին յունվարի 1ին ես դափանցի<sup>1</sup> մ[ա]հղեսի<sup>2</sup> ծեռունի որդի Ապկիքար ... ծառայս զայս մերոց զավակաց զիշաղակ առի Քրիստոս պահպանսացէ փրկեսցէ լյերեվելիի եւ աներեւելութիւնամուն եւ ամեն փորձանաց փրկեսցէ. բարի յիշաղակ արասցէ յուր (?) Աստուծոյ ճանապարհով կնան. քանի մարմին են խաղաղ կենօք պահսացէ. լյետ / երկնից աստեացս / սուրբ արքայութիւն տացէ. Որ ասէ եկալիք օրէննեալ Հօր իմ վերին, ժառանկեսցէք զանջան բարին<sup>3</sup>. ամէն: Մեզ եւ մեր ննջեցելօք առնէ ... արժանի. ամէն: Ընդերձող, Աստուծոյ սիրուն Ա Հայր մեր որ յերկինս եւ այլն եւ Ողջոյն ընդ Քեզ Մարիամ յիշեցէք զմեզ ի թողութիւն եւ դուք յիշեալ լինիք ի Քրիստոս ամէն արդար դատաստանին զոր առնէ արժանի վերին խորանին ամէն. Եղեւ թվին Հայոց ՌՃՂԱ վարագին [Յունակար Ա.ին:

Հիշատակարանների տակ Ֆեյդին ևս դնում է բառերի բացատրությունները: Օրինակ՝

1. Դափան - քաղաք Հայաստանի Հարավում:
2. Մահղեսի - Երուսաղեմ ուխտի գնացած անձ:
3. Մատթէոս, XXV, 34:

Հմայիլներում կան նաև չափածո հիշատակարաններ: Ահա մի նմուշ՝

### Mémoires

Ով Հայրք եւ մայրք իմ պտղին (պատուական),  
Եղբայրք եւ քոյրք իմ սիրական,  
Որ կու կարդամք աղօթարան,  
Զայս ասասցուք իմ Հոգեկան.  
Եւ դուք յիշեալ լիջիք [ի] յաւիտեան:  
Ամէն:

Հայր մեր որ յերկինս ես... Վերջ:

*O, mes pères et mères vénérables,  
Mes frères et mes sœurs chéris,  
Lorsque vous lirez ce recueil de prières,  
Dites celle-ci pour mon âme.  
Et vous serez commémorés pour l'éternité. Amen.  
Notre Père qui es aux cieux... FIN.*

Հայագետն իր հմայիլների ձեռագրացուցակի տողատակերում ներկայացնում է որոշ գրաբարյան, բարբառային, թուրքերեն, արարերեն բառերի բացատրություններ: Օրինակ՝

Զոհալ – Zohal, arabe: «Saturne» – Սատուրն

Նարաւ - Charaf, arabe: «gloire» – վասրագույք

Օտարիտ – Otarit, arabe: «Mercure» – Մերկուրի

Մառեխ – Marekh, arabe: «Mars» – Մարս

Մուշտարի – Mouchtari, arabe: «Jupiter» - Յուպիտեր

Շէմս – Chems, arabe: «Soleil» – Արև

Սովրն – Sovren, arabe: «Taureau» – Ցուլ

Ղամէրն – Qamar, arabe: «Lune» – Լուսին

Դէվալ (?) – Deval (?) arabe: «Verseau» – Ջրհոս:

Մահաբարաժամ բառը բացատրում է - «mort hors – temps», «epidémia», «peste» - անժամանակ մահ, համաճարակ, ժանտախտ:

Այսպես բացատրված են բոլոր այն բառերը, որոնք ընթերցողը կարող է չհասկանալ: Հայագետը բարեխսդորեն հղում է Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանների բոլոր այն հատվածները, որոնց մասին ակնարկներ կան Հմայիլներում: Այսպես, օրինակ, Միխիթարյան միաբանության 3042 ձեռագրի թիվ 30 Հմայիլը կոչվում է «Աղօթք եւ օգնականութիւն»: Ակսվում է «Յանուն սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդույն նորա Մարտիրոսին...» Հատվածով: Նրանում կա նաև հետևյալ ակնարկը չորս ավետարանիչների մասին, որը վերցված է Եղեկիելի տեսիլից. «...որք կան ի սպասաւորութեան առաջի աթոռոյն Աստուծոյ, առիւծանման, արծուանման, եղնանման եւ մարդակերպ...»: Ֆեյդին այս ակնարկը բացատրում է - «Ezéchiel, I, 4-12. Ce seront les emblèmes des évangélistes» («Եղեկիել, Ա, 4-12. Սրանք ավետարանիչների խորհրդա - նիշերն են»):

Մինչև Ֆեյդին, ինչպես ինքն է գրում, դեռևս Հինգերորդ դարից Հմայիլները որպես կախարդական պահպանիչ միջոցներ բնութագրվել են այս կամ այն չափով: Հմայիլների առավել հանգամանալի նկարագրերից մեկն առկա է Հայր Վարդան Հացունու «Երդմունք Հին Հայոց մէջ» աշխատության մեջ: Այդ գիրքը օգտագործել է Հայագետը՝ կատարելով բազմաթիվ հղումներ:

Վարդան Հացունին բոլոր Հայկական գրապանակների բովանդա - կությունն ամփոփում է հետևյալ շրջագծով:

Կիպրիանոսի ախտարքների ծավալուն և նվազ Հավաքածուներ, այսինքն՝ բժշկական աղոթքներ առ Աստված, առ սրբեր և հրեշտակ - ներ, մերթ առ տերունական խաչի զանազան նշխարներ, Հայ մատե -

նագիրների աղոթքներից՝ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը, Գրիգոր Նարեկացու «Որդի Աստուծոյ» և «Ընկալքաղցրութեամբ» աղոթքները, երբեմն սուրբ գրոց ընթերցվածներ են<sup>18</sup>:

Վ.Հացունին նկարագրել է իր ձեռքի տակ եղած երկու հնագոյն գրապանակների (1447թ., 1476թ.) ոչ միայն բովանդակությունը, այլև նկարները: «Այդ երկու հնագոյն գրապանակաց արուեստական կողմն ալ կայ. առաջինն երկուստեք իբր շրջանակ ունի մի մի զոյգ կարմիր գծեր, և աղօթքներն իրարմէ կ'անջատուին կարմրագիր հրահանգօք ու սկզբնաւորութեամբ, և երբեմն կիտուածանկար զարդերով: Երկրորդն ունի զեղնագոյն շրջանակ, նոյնպէս կարմրագիր բաժանումներ, և երկու բազմագոյն նկար, որ է կին մը և թռչուն: - Ասոնք սկիզբն են արուեստին, որ աւելի վերջ՝ վանացս օրինակաց մէջ բաւական զարգացման հասած է, ստանալով ընդհանուր նկարագիր մը: Եւ է այս: Շուրջանակի սովորաբար գունաւոր պարունակ մը: Աղօթքներէն շատեր իրենց վերեւ ունին բազմագոյն պատկեր մը, ներկայացնող տէրունական և երբեմն հին կտակարանի յիշատակաց. կենդանագիրք Տիրամօր, հրեշտակաց կամ սրբոց՝ որոց նուիրուած են, և կամ անոնց անուանի հեղինակաց, այսինքն աւետարանչաց, Ս.Կիպրիանոսի, Շնորհալոյն. մերթ եւս անոնց բովանդակութեան պատկերացումը: Իսկ գրապանակին զլուխ՝ յաջորդաբար զետեղուած են երեքն մինչեւ վեց պատկերներ: Բոլոր ասոնք շինուած են նպատակաւ պահպանութեան, և ոչ սոսկ պաճուճանաց: Համառօտ աղօթքներէն ոմանք ամփոփուած են գունաւոր բոլորակի մը մէջ իբր զարդ: Մէկ կամ աւելի աղօթից տողեր դասաւորուած են վերուատ ի վար առ ի շեղ կարգով, խաչաձեւ-ւելով զիրար և աղիսակ մը կազմելով»<sup>19</sup>:

Գրապանակի նկարներում պատկերված են Տիրամայրը՝ Հիսուս մանկան հետ նստած աթոռին, Հիսուսի խաչելությունը, Հովհաննես Մկրտիչը՝ գրկած իր զլուխը, Ստեփանոսն ու Գրիգոր Լուսավորիչն՝ իրենց տարագներով, Գաբրիել հրեշտակապետը՝ պահպան կանգնած ննջող մի մարդու վրա, դրանք շրջապատված են աղոթքի երեք շրջանակներով, Արքահամի զոհ մատուցելը՝ հարակից աղօթքի աղյուսակով, վիշապասպան սուրբ Գեորգ ձիավորը, սուրբ Սարգիսը՝ որդուն առած ձիու գավակին, Ալիի կշտամբվելը Հիսուսից: Այս բոլորը խճող-ված են պես-պես գոյներով, մի քիչ էլ ուսկով են պատած: Նկարագրելով այս՝ Վ.Հացունին եղրահանգում է. «Մաքուր աշխատութիւն մը,

<sup>18</sup> Վարդան Հացունի, Երդմունք հին հայոց մէջ, Վենետիկ, 1932, էջ 242:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 244-245:

որոյ մէջ սակայն պետք չէ փնդուել նկարչական նրբութիւն և դիմագծերու պահանջուած զանազանութիւնը»<sup>20</sup>:

Միջնադարյան քրիստոնեական մատենագրության մեջ մեծ չափերի են հասնում այն զրույցները, որոնք կապված են Սողոմոն արքայի հետ և ներկայացնում են նրա իմաստուն լինելու իրողությունները: Հացունին նկարագրում է Սողոմոն իմաստունի հաղթելը դեխն մի հետաքրքիր դրվագով, որը պատկերված է «Գիր և կապք դիւաց, որ կարասցեն մերձենալ ի ծառայս աստուծոյ Խասպիքան» հատվածում: Սողոմոն իմաստունը տեսնում է խավարի հզոր մարմնացում դեխն, որը գոռում էր որպես ամպ, ճշում որպես վիշապ: Դեն ասում է Սողոմոնին, թե ինքն ամենակարող է. կարող է բարձրանալ հասակով ինչպես լեռը, հետո փոքրանալ ինչպես մանանեխի հատիկը, կարող է զորանալ ինչպես վիշապը և տկարանալ ինչպես սարդոստայնը: Սողոմոնը հրամայում է դեխն, որ նա այդ բոլորը ցուցալիր գործնականում: Դեք լեռան նման բարձրանում է՝ սպառնալով ընկնել արքայի վրա, հետո վերջինիս հրամանով փոքրանում է, ինչպես մանանեխի հատիկը: Սողոմոնն այդ հատիկը դնում է մատանու ալի փոխարեն և բանտարկում դեխն:<sup>21</sup>

Ահա այդ ձևով «նոյնպէս կապեալ եղիցի ամենայն դեւք և ամենայն սատանայական որոպայթք»<sup>22</sup>: Ֆեյդիի գործը այսօր էլ ունի իր արժանի շարունակողները:

Բոլորովին վերջերս լույս է տեսել հայ հմայական ժողովրդական աղոթքներին նվիրված մի կոթողային գիրք, որի հեղինակը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարգիս Հարությունյանն է: Այս գիրքը նրա երկարամյա աշխատանքի արդյունքն է և ներկայացնում է ժողովրդական բանահյուսության մեջ եղած հմայական աղոթքների հարստությունը՝ համապատասխան գիտական մեկնություններով<sup>23</sup>:

Ֆրեղերիկ Ֆեյդին կատարել է կարևորագույն գիտական աշխատանք: Նախ, նա ի մի է բերել հայկական հմայիլների ձեռագրական հարստության մի մասը, կազմել նրանց մանրամասներով հարուստ ցուցակը և ապա գիտականորեն դասակարգել ու գնահատել դրանք:

Նրա այս աշխատությունը հուշում է նույնը կատարել նաև Մաշտոցի անվան Մատենադարանում պահպող բազմաքանակ հմայիլների հետ՝ կազմելով նրանց նմանօրինակ մանրամասնված ցուցակը և դրանք դնել գիտական շրջանառության մեջ:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 247:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Աշխատությամբ՝ Սարգիս Հարությունյանի, Երևան, 2006, 500 էջ:

## Ա. Ֆ. ՖԵԹԻԻ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ»

Ֆրեդերիկ Ֆեյդիի պատրաստած հայոց լեզվի դասագիրքը, որը երկու անգամ է հրատարակվել, գրված է արևմտահայերենի ուսուց - ման համար. «*Manuel de langue arménienne (Arménien occidental moderne)*», Paris, 1969:

Դասագիրքը ծավալուն է. ունի 394 էջ: Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին գլխատառերով, շրջանակի մեջ ընդգծված ձևով տպագրված է հետևյալ ընծայականը. «Այս համեստ գործին երկրորդ տպագրութիւն կը ձօնեմ Երեւանի 2750 ամեակին»:

Դասագրքի սկզբում կա համառոտ զեկույց, որը ներկայացնում է դասագրքի ստեղծման երկարատև պատմությունը: Այդ գրքում եղած բոլոր դասերը մեթոդապես անցել են գործնական կիրառման ստուգման ընթացքով, այդ իսկ պատճառով նրանք երաշխավորում են հայոց լեզվի կատարյալ ուսուցումը: Յուրաքանչյուր դասին կցված վերլուծական հանձնարարականները, սկսած առաջին դասից մինչև վերջինը, հնարավորություն են ընձեռում արագորեն հասնել ուսուցման ցանկալի արդյունքին: Գրքի առաջարան-զեկույցում և ողջ դասագրքում ֆրանսերենի ու հայերենի համադրությամբ մշակված է ուսուցման մի մեթոդ, որն, անշոշտ, զիտական առումով եղակի է իր տեսակի մեջ և պետք է հետաքրքրի հայոց լեզվի մեթոդիկայով զբաղվող մասնագետներին, պայմանով, որ նրանք ֆրանսերենի հետ կապված դժվարություններ չունենան:

Դասագրքի «Նախարարներ» բնորոշում է հայոց լեզվի հնդեվրոպական լեզվարնտանիքում ունեցած առանձնահատկությունները: Պայմանավորված Հայաստանի աշխարհագրական դիրքով հայոց լեզուն սերտ շփումների մեջ է եղել իրանյան և Հելլենական երկրների հետ: Արդի հայերենը ձևափոխվել է երկու հարուստ լեզուների՝ արևելահայերենի և արևմտահայերենի, որոնք մեծ մասամբ ունեն նույն քերակա-

<sup>1</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանում պահվող գրքի այս օրինակն ունի Ֆ. Ֆեյդիի հետևյալ ընծայագիրը. «Հայաստանի փառաւոր «Մատենադարանին», յարգանօք Ֆրեստ. Ֆեյտի, Փարիզ, 22 սեպտ. 1969»:

նական կառուցվածքը: Իրենց զարգացման մակարդակով հայերենի երկու ճյուղերը ներկայացնում են լեզվական մեծ հարստություն:

«Նախաբանում» սեղմ անդրադարձ կա հինգերորդ դարի հայոց լեզվին: Ֆեյդին շեշտում է, որ հայերենը հին մշակված լեզուներից է: Հինգերորդ դարում՝ աղքային այրուբնի հայտնագործումից հետո, աստվածաբանությունը և զավանաբանական վեճերը թարգմանիչների գրչի տակ զարգացրել են այդ լեզուն: Հետո հայերենի վրա իրենց կնիքն են դրել խաչակրաց արշավանքները և փոխհարաբերությունները Ասանտի երկրների հետ: Հայոց լեզվի վրա ազդել են նաև գաղթօջախների առկայությունը Եվրոպայում և այլ երկրներում, ուր հայերը շփվել են զարգացած քաղաքակրթության հետ, որի շնորհիվ արդեն 15-12 թվականին նրանք տպարան են հիմնել Վենետիկում: Հայերենը նոր զարգացում է ստացել 18-րդ դարում, երբ Վենետիկում Միսիֆար-յանները Հիմնեցին իրենց միաբանությունը: Իսկ 19-րդ դարում հայոց լեզուն լայն գործածության մեջ դրվեց ամենատարբեր բնագավառներում՝ գրականություն, արվեստ, գիտություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն և այլն, բոլոր ճյուղերի գծով ստեղծելով մտային հարուստ բառարան. «Այս տասնհինգ դարերի ընթացքի հայոց լեզվի կազմակորման արդյունքն այն է, որ արդի հայերենը քաղաքակիրթ մի լեզու է, կատարելապես բացառիկ որակի»<sup>2</sup>:

Ֆ.Ֆեյդիի «Հայոց լեզվի» դասագրքի ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը լեզվական ուսուցման գործընթացն իրականացնում է հայ ժողովրդի պատմության փաստերին ծանոթացնելուն զուգընթաց, և այդ միահյուսվածության արդյունքը կարևորվում է նրանով, որ օտարազգին յուրացնելով հայերենը, լիովին պատկերացում է կազմում հայ ժողովրդի պատմական անցյալի մասին. իմանում է հայ ժողովրդի ծագումը, զարգացումը, 20-րդ դարում նրա ունեցած դերը: Ֆ.Ֆեյդին նմանօրինակ նյութերը քաղում է հայ պատմիչներից, հայ բանասերներից ու պատմաբաններից:

Հենց զասագրքի սկզբում՝ առաջին էջի վրա, ձեռագիր խոչոր տառերով ներկայացված են անվանի հայագետ-բանասեր հայր Տեր-Մովսեսյանի ասույթերը հայ ժողովրդի ծագման վերաբերյալ.

1. Հայ ազգին ծագումը բազմակին հարց մըն է, որուն վրայ շատ պատմագետներու եւ հնագետներու փաստերն իրամէ մեծապես կը տարրեցին:
2. Հայոց ցեղին ծագման հարցին հետ սերտ կապված է նաև իր

<sup>2</sup> F. Feydit, *Manuel de langue arménienne*, Paris, 1969, p. XIV.

անվան ծագումը:

3. Օտար աղքերը մեր բնագաւառն Արմենիա և մեր աղքն Արմեն կ'անուանեն, իսկ մենք միայն զմեզ Հայ և մեր բնագաւառը Հայաստան կը կոչենք<sup>3</sup>:

Ֆեյլին դասագրքում Հայաստանը ներկայացնում է իր պատմական օրինական տարածքներով՝ որպես Մեծ Հայք: «Հայաստան (եր - կիրը)» դասը մեր Հայրենիքի մասին պատմում է Հետեւյալը: Հայաստանը Փոքր Ասիայի հուսիսարեելյան մասն է կազմում: Լեռնոտ երկիր է՝ սարերով և բարձրավանդակներով: Նա Հայաստանն անվանում է լեռնակղղի կամ լեռնահանգույց: Հայաստանի հոչակավոր սարերն են՝ ձյունապատ Մասիսը կամ Արարատը՝ զույգ գագաթներով (Մեծ Մասիսը՝ 5158 մետր և Փոքր Մասիսը) և քառագագաթ Արագածը կամ Ալագյաղը:

Հասատանը Հարուստ է մեծ ու փոքր լճերով և վազող ջրերով: Կան երեք նշանավոր լճեր: Հայերն այդ լճերը ծով են կոչում, որովհետև շատ ընդարձակ են: Այդ լճերն են՝ Սևանա լիճ կամ Գեղամա ծով, Վանսա լիճ կամ Բգնունյաց ծով, Ուրմիո լիճ կամ Կապուտան ծով:

Հասատանում կան երեք մեծ գետեր՝ Տիգրիս, Եփրատ և Երասխ կամ Արաքս: Այս վերջինը զուտ Հայկական գետ է<sup>4</sup>:

«Հայաստան» դասի Համար Հայագետը կազմել է Հետեւյալ բառացանկը.

## VOCABULAIRE<sup>5</sup> ՀԱՅԱՍՏԱՆ Լ'ARMENIE

երկիր	terre, pays, contrée	սար	cime, sommet
լեռնակղղի	îlot montagneux	գագաթ	sommet
լեռնահանգույց	nœud montagneux	լիճ	lac
բարձրաւանդակ	plateau	գետակ	rivière, cours d'eau
ցանց	filet, réseau	Հիւսիս	nord, septentrion
կողմ	côté	Հարաւ	sud, midi
մերդ	mètre	արեւելք	est, orient
Հիւսիսային	septentrional	արեւմուտք	ouest, occident
արեւելեան	oriental	Հարաւային	méridional

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 6:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 82-83:

<sup>5</sup> Նոյն տեղում, էջ 82:

լեռնոտ	montagneux	արեւմտեան	occidental
հոչակաւոր	fameux	ձիւնապատ	couvert de neige
բովանդակ	tout entier	քառագագաթ	à quatre sommets
կարելի	possible	նշանաւոր	remarquable
զոյք (adj.)	qui forme la paire	սեղմ	serré
Հայկական	arménien (pr les choses)	գուտ	pur, véritable, properment dit
կոչել	appeler	Համարել,	considérer
		սեպել	(comme)
նկարագրել	décrire	ոռոգել	arroser
այցելել	visiter	ինչպէս...	de même que...
տաճկերէն	(adv.) en langue turque	նոյնպէս...	de même...

Տասներեքերորդ դասը կարեոր պատմական ակնարկ է Ասիա մայրամաքի հիմնական ազգերի մասին: Այս դասում աշակերտը արևմտահայերենով սովորում է որոշ երկրների անուններ, ազգությունների անուններ և այդ ազգերը ներկայացնող լեզվանունները: Ահա դրանք՝

## ԱԶԳԵՐԸ LES NATIONS<sup>6</sup>

Pay	habitants	langue	adjectif	général
Հայաստան	Arménie	Հայ	Հայերէն	Հայկական
Գաղղիա	France	գաղղիացի	գաղղիերէն	գաղղիական
Անգլիա	Angleterre	անգլիացի	անգլիերէն	անգլիական
Սպանիա	Espagne	սպանացի	սպաներէն	սպանիական
Իտալիա	Italie	իտալացի	իտալերէն	իտալական
Գերմանիա	Allemagne	գերմանացի	գերմաներէն	գերմանական
Ռուսաստան	Russie	ռուս	ռուսերէն	ռուսական
Տաճկաստան,	Turquie	տաճիկ,	տաճկերէն,	տաճկական,
Թուրքիա		թուրք	թրքերէն	թրքական
Պարսկաստան	Perse	պարսիկ	պարսկերէն	պարսկական
Հնդկաստան	Inde	հնդիկ	հնդկերէն	հնդկական
Չինաստան	Chine	չինացի	չինարէն	չինական
Ճարոն	Japon	ճարոնցի	ճարոներէն	ճարոնական
Արաբիա	Arabie	արաբ	արաբերէն	արաբական

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 89:

Վրաստան	Géorgie	Վրացի	Վրացերէն	Վրացական
Հրէաստան	Palestine	Հրեայ յութ	Հրէական	
<b>եբրայեցի հեծես եբրայեցերէն եբրայական</b>				

«Ասիոյ ազգերը և Հայերը» խորագրի տակ թվարկվում են Ասիա մայրցամաքի Հիմնական ազգերը՝ ճապոնացիները, չինացիները, Հնդիկները, պարսիկները, թուրքական զանազան ցեղերը, արաբները և ուրիշ փոքրաքանակ ազգեր՝ Հայերը, Հրեաները, վրացիները:

Ասվում է, որ ուսւները գրավել են Ասիայի մեծ մասը: Ֆեյդին նշում է, որ Հայերը շատ հին, քաղաքակիրթ ազգ են և ունեն Հնդեվրոպական ծագում ունեցող լեզու: Թեև բազմաքանակ չեն, սակայն ժամանակին բավական մեծ դեր են կատարել, մանավանդ այն ժամանակ, երբ Հռովմեացիները կամեցան Ասիան նվաճել: Կիկերոնը գրել է. «Տիգրանը Հռովմեացիներին սարսափ պատճառեց»:

Երբ խաչակիրները ցանկացան Սուրբ Գերեզմանն ազատագրել, Կիկիայի Հայ իշխաններն օգնեցին Փրանկ առաջնորդներին: Հայ ավագանին և խաչակիր պարոնները դաշնակից դարձան, քանզի երկու ազգերին էլ խանդապառում էր նույն Աստծու մերը:

Շատ կարենոր է այս դասի եզրափակիչ Հատվածը. «Թեև, շատ հաճախ, օտար ազգեր Հայաստանը գրավեցին, սակայն Հայերը պահեցին թե քրիստոնեական կրոնը, թե Հայրենասիրական գաղափարները, թե մայրենի լեզուն՝ Հայերենը. «Եթե բազմաթիվ ըլլային, առաջնակարգ ազգ մը պիտի կազմեին»<sup>7</sup>:

Դասերի որոշ Հատվածներում ներկայացվում են նաև Հայ ժողովրդի տարբեր խավերի կենցաղը, սովորությունները, ազգային բնավորության լավագույն գծերը: Օրինակ, «Ճանապարհորդը» («Le voyageur») թեմայի բնագրում ներկայացվում է, որ Հայկական գյուղերում Հյուրընկալությունը սրբազն պարտականություն է, քաղաքաբնակ Հայերը ևս շատ Հյուրընկալ են<sup>8</sup>:

Ֆեյդին նպատակահարմար է գտել քանակերպ դասում պատմել գյուղական Հայ ընտանիքի և նրա ներսում եղած փոխհարաբերությունների մասին: Նկատենք, որ այս Հատվածի նյութը հին, ավանդական ընտանիքի մասին է, որովհետև այսօրվա Հայկական գյուղերում կան քաղաքային կենցաղով ապրող ընտանիքներ: Դասի բնագիրը կոչվում է «Գիւղացի Հայ ընտանիքը»: Լսու Ֆեյդիի գրածի՝ գյուղում բնակվող Հայ ընտանիքը պահպանել է հին ու անաղարտ նահապե-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 100:

տական սովորությունները: Ընտանիքի բնական տերը հայրն է: Ընտանիքի բոլոր անդամները հարգում են հոր իշխանությունը, և հայրը ոչ միայն իր կնոջ և զավակների վրա իշխանություն ունի, այլև հարսների:

Տան կինը իր ընտանիքի բոլոր անդամների համար «Հարս» է, թե՛ իր ամուսնու ծնողներիի և թե՛ նրա եղբայրների ու քույրերի: Բոլորը նրան «Հարս» են անվանում, որովհետև նա այդ ընտանիքին է պատկանում ոչ թե իր արյունակցությամբ, այլ ամուսնության հետևանքով: Հարսը հնագանդվում է ոչ միայն ամուսնուն, այլև նրա ծնողներին: Նույն ձևով տան աղջկա ամուսինը բոլորի համար «փեսա» է, իսկ եթե աներոջ տանը բնակվի՝ «տնփեսա» է կոչվում: Ֆեյդին բերում է տան մեծի նկատմամբ հարգանքի մի օրինակ, որն այսօր էլ կա հայկական շատ կրթված ընտանիքներում: Հարգանքը տան մեծ հոր նկատմամբ այնքան մեծ է, որ տղան երբեք հոր մոտ չի ծխում, եթե նույնիսկ չափահաս է և զավակների տերը: Նա նշում է նաև հայկական նահապետական ընտանիքներում եղած համերաշխությունը. «Թեև ամուսնութեանց պատճառավ ընտանիքը հաճախ շատ բազմանդամ է, սակայն միտութիւն է տիրում սկեսրոջ և հարսների միջև»<sup>9</sup>:

Ֆ.Ֆեյդին «Հայոց ծագումը» բնագրում նշում է հայերենի հնդեվրոպական լեզու լինելը և հայոց երկրի մասին առաջին հիշատակումը համարում է Ք.ծ.ա. 715-ին Ասորեստանի Սարգոն թագավորի արձանագրությունը, որում պատմվում է Արարատյան ազգերի գեմ նրա վարած պատերազմների մասին, սակայն վերջինում չի հիշվում Արմենիա անունը: Արմենիա անունը, սակայն, հիշատակում է Պարսից Դարեհ արքան, որի հրամանով Ք.ծ.ա. 515-ին, Բեհիսթունի ժայոփի վրա փորագրվել է համապատասխան արձանագրությունը: Ֆ.Ֆեյդին եղբակացնում է, որ Ք.ծ.ա. 715-ից 515 թվականների միջև ընկած ժամանակահատվածում հայերն ապրում էին Արարատյան երկրում:

Մի առանձին դաս նվիրված է Վուամշապուհ թագավորին, Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Դասի համապատասխան հատվածը խորագրված է. «Վուամշապուհ թագաւոր, Ս.Սահակ եւ Ս.Մեսրոպ»<sup>10</sup>: Այսօրինակ խորագրով հայագետը շեշտել է մի կարևոր իրողություն՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի, հայ եկեղեցու սրբերից են: Նա նաև հայերենը նոր յուրացնողի համար մատչելի ձևով հիմնավորում է, որ Վուամշապուհ արքան, Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտին մոտեցել են որպես քաղաքական ու պետական բացառիկ իրադարձություն, որի հետևանքը դարձավ Հայաստա-

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 137:

նում ծավալված լուսավորական հզոր շարժումը. ողջ երկրով մեկ դպրոցներ բացելը, Աստվածաշնչի թարգմանությունը. «Աստվածաշնչը այնքան սքանչելապես թարգմանեցին, որ Հայերեն թարգմանությունը կը սեպիի «Թագուհի ամեն թարգմանութեանց»: Հորինեցին նաև ինքնատիպ գործեր, մանավանդ վարդապետական և կրոնական ձառեր, մեկնություններ և պատմական գրքեր, բոլորն ալ մաքուր ու գեղեցիկ լեզվով: Վուաշապուհի թագավորությունը սկիզբն է Հայ մատենագրության այն շրջանին, որ կը կոչվի «Ուկեղար»<sup>11</sup>:

1939-ին, Փարիզում, «Անահիտի» թիվ 2-ում լույս է տեսել դեռևս երիտասարդ Հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի «Հեթում պատմիչ, Հեղինակ «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհի» գրքին վերաբերող ուսումնասիրությունը՝ Արշակ Չոպանյանի առաջարանով: Ֆեյդին Հմտորեն բացատրում է, թե որն է Հեթում պատմիչի երկի արժեքը և ինչու այն Եվրոպայում թարգմանվել է տարրեր լեզուներով ու արժանացել միջազգային ճանաչման: Հայտնի է, որ Հեթումը իր երկը ֆրանսերեն թելագրել է Նիկոլա Ֆալկոնի անունով մի վանականի՝ 1307-ին, որը հետագայում Հեթումի թելագրածը ֆրանսերենից վերածեց լատիներենի՝ այն ժամանակների Եվրոպական երկրների գրոց լեզվին: Հետագայում Հեթումի երկը թարգմանվել է նաև իտալերեն ու անգլերեն:

**Ֆ.Ֆեյդին մեջբերում է Հեթում պատմիչի երկի հին ֆրանսերենով գրված բնագրից մի հատված, այնուհետև դնում նույն հատվածի Հայերեն թարգմանությունը: Խոսելով Հայկական այբուբենի մասին՝ Հեթում պատմիչն ասում է. «Զանազան տեսակ գիր ունին, մէկ քանի արմենեան կ'ըսուին, միւսները արիական (կամ ալոյէն)<sup>12</sup>: («Les ont diverses letters et les une sont dites armenoises, les autres arien (aloyen)»):**

1964 թվականին Ֆրեդերիկ Ֆեյդին Փարիզում հրատարակում է «Սասունցի Դավիթ» էպոսի Համահավաք բնագրի ֆրանսերեն թարգմանությունը՝ Համապատասխան նախարարանով: Նա նշում է, որ Հայերը երրորդ դարի վերջին արդեն ընդունել էին քրիստոնեությունը, սակայն կրոնի քարոզմանը խոչընդոտում էր Սուրբ Գրերի Հայերեն շինելը, որի պատճառը ազգային այբուբենի բացակայությունն էր: «Այդ անսպասար վիճակից դուրս գալու հոգսը իր վրա է վերցնում սուրբ Մեսրոպը՝ Հայտնագործելով Հինգերորդ դարի առաջին տարիներին անհրաժեշտ այբուբենը»<sup>13</sup>:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>12</sup> **Ֆ.Ֆեյդի,** Հեթում պատմիչ, Փարիզ, 1939, էջ 14:

<sup>13</sup> **David de Sassoun, Épopée en vers, traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Gallimard, 1964, p. 37.**

**Հստ Ֆեյդիի մեսրոպյան այրութենի հայտնագործումը հզոր խթան էր հայ ժողովրդի մտավոր կյանքի համար. դրա շնորհիվ հայերը ստեղծեցին արժեքավոր մատենագրություն, որով հավասարի իրավունքով կանգնեցին Հույների, լատինացիների և ասորիների կողքին («Les Arméniens sont côté à côté avec les Grecs, les Latins et les Syriens»)<sup>14</sup>:**

**Ֆ.Ֆեյդին ցավով նշում է նաև, որ Կոստանդնուպոլիսի գրավումը թուրքերի կողմից դարձավ Հայաստանը Արևմուտքից մեկուսացնելու վերջին հարվածը («La prise de Constantinople par les Turcs achève d'isoler les Arméniens de l'Occident»)<sup>15</sup>:**

«Հայոց լեզվի» դասագրքում ֆրանսիացի հայագետը դրվագված ներկայացնում է հայ ժողովրդի անցած ողջ պատմությունը՝ Հայկ նահապետից մինչև մեր օրերը: «Հայկ և Բել» առասպելը նա ներկայացնում է որպես ավանդական գրույց, ըստ Ստեփանոս Պալասանյանի և ոչ ըստ Մովսես Խորենացու վերապատմելով այն: Ստեփանոս Պալասանյանի «Պատմություն Հայոց» աշխատավիրությունից Ֆեյդին ավանդագրույցի որոշ հատվածներ կրկնում է նույնությամբ, իսկ որոշ մասեր կրճատում է և բովանդակությունը խիստ համառոտած կրկնում: Եթենք երկու օրինակ.

### **Ստ.Պալասանյան**

Այստեղ՝ Սենաար կոչված դաշտավայրում մարդիկ մտածեցին մի բարձր աշտարակ շինել, որի մեջ կարողանային պատսպարվել, եթե մյուս անգամ ջրհեղեղ լիներ: Այս ամբարտավան խորհուրդը լեզուների խառնակության պատճառով գլուխ չեկավ. աշտարակը կիսակատար մնաց...<sup>16</sup>:

### **Փ.Ֆեյդի**

Նոյի սերունդը Սենաար կոչված դաշտավայրի մեջ փորձեց բարձր աշտարակ մը շինել նոր ջրհեղեղեղ մը պաշտպանվելու համար, բայց լեզուների խառնակության պատճառով, աշտարակը կիսակատար մնաց...<sup>17</sup>:

### **Ստ.Պալասանյան**

Երկու կողմը միմյանց պատահեցան մի դաշտում, որ շրջապատված էր բարձր լեռներով և կատաղաբար հարձակեցան միմյանց վրա, բայց երկու կողմն էլ անպարտելի մնացին: Այս անակնկալ դիպվածից զարհուրած՝ Բել մտածեց հետ քաշվիլ, մինչև որ յուր բոլոր բազմու-

<sup>14</sup> Նույն տեսլում:

<sup>15</sup> Նույն տեսլում, էջ 38:

<sup>16</sup> Ստ.Պալասանյան, Պատմութիւն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 17:

<sup>17</sup> *F.Feydit, Manuel de langue Arménienne*, p. 153.

թյունը հասնի և նորից պատերազմ սկսի: Այս միջոցին Հայկ, որ միայն յուր ցեղի ազատությունն ուներ աչքի առաջ, մոտեցավ բարելոյնան Հսկային և յուր նետը հասցրեց նրա գրահապատ կուրծքին. բռնավորն ընկավ անկենդան, և նորա գրրքը ցիր ու ցան եղավ:

...Ահա այս կերպով սկիզբ առավ այն ազգությունը, որ յուր տոհմապետի անունով կոչվեցավ Հայ, իսկ երկիրը՝ Հայաստան կամ Հայոց աշխարհ<sup>18</sup>:

### Յ.Ֆեղիկ

Կատաղաբար կովեցան Հսկաները. ահազին դղրդյունով և դյուցազներու կոտորածով կոփվը անորոշ մինչև որ Հայկ, իր նիղակը բարելոյնան Հսկային գրահապատ կուրծքին մեջ խրած, տապալեց թշնամին:

Այս կերպով սկիզբ ունեցավ այն ազգությունը, որ իր տոհմապետի անունով կոչվեցավ «Հայ»<sup>19</sup>:

Բնականաբար Հայկ Նահապետին փոխարինում է նրա Հաջորդը՝ Արամ Նահապետը: Ֆեղին ըստ Ստ.Պալասանյանի մեջբերում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այն Հատվածը, որը վկայում է Արամի անսահման Հայրենասիրությունը. «որուն յաջորդեց Արամ Նահապետը, որ «Հայրենասեր մարդ ըլլալով, աւելի լաւ կհամարեր իր Հայրենիքին համար մեռնիլ քան թէ Հայաստանը տեսնել օտարներէն ուտնակոխ եղած և իր Հայրենակիցները օտար լուծին տակ ինկած» (Պալասանյան)<sup>20</sup>: Նույն Հատվածը պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ ունի հետևյալ բովանդակությունը. «Սա այր աշխատասէր և Հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռնելն ի վերայ Հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս Հայրենիս, և Հարազատից արեան նորա տիրել արանց օտարածնաց»<sup>21</sup>: Ֆեղին պատկերում է, թե ինչպես է Արամը պատժում Հայաստանը ստրկացնել կամեցող նյուքար Մաղեսին, Հալածում իր երկիրը նվաճել ցանկացող ասորի Բարշամին, ինչպես է ընդարձակում Հայաստանի սահմանները, անցնելով գամրաց երկիրը, հասնում մինչև Ալիս գետը. «Կավանդվի, որ նինոս՝ Ասորեստանի թագավորը, ճանչցավ Արամը իբրև Հայոց թագավոր»<sup>22</sup>:

<sup>18</sup> Ստ.Պալասանյան, Պատմութիւն Հայոց, Էջ 20:

<sup>19</sup> F. Feydit, Manuel de langue Arménienne, p. 154.

<sup>20</sup> Նույն տեղում, Էջ 210:

<sup>21</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, Էջ 46-47:

<sup>22</sup> F. Feydit, Manuel de langue Arménienne, p. 210.

**Հստ Ստ.** Պալասանյանի է շարադրված «Արա Գեղեցիկ» առասպելը, որը Արա թագավորի սիրված լինելը հայերից բացատրում է հետևյալ ձևով. «Հայերը, իրենց սիրելի իշխանին մահվան գուժեն զրգոված, ուղեցին նորեն պատերազմիլ: Այն ատեն խորամանկ թագուհին հետեւյալ հնարքը գտավ. պատվիրեց, որ մեկը Արայի զգեստները հագնի և հեռուեն ներկայանա հայոց: Նույն ժամանակ Շամիրամ հայերուն բացատրեց, թե աստվածները Արայի մարմինը լզելով վերքերը բուժեցին և մեղալը կենդանացավ: Հայերը դրուավ հավատացին, որ Արայի նման դյուցազն մը անմահ է և կարող է կենդանանալ»<sup>23</sup>:

**Ֆ.Ֆեյդի** «Հայոց լեզվի» դասագրքում կան Հայաստանում իշխած բոլոր թագավորական գերդաստանների համառոտ բնութագրերը: Առաջինը Հայկացյան թագավորներն էին. «Ամենքն ալ Հայկի սերուղեն էին, որով Հայկացյան կկոչվեին»<sup>24</sup>: Նա նշում է, որ առաջին պակաղիր թագավորը եղել է Պարույրը: Հայկացյան թագավորների մեջ նշում է Տիգրան Երվանդյանին, որն իր քրոջը կնության ուղարկեց նենդ Աժդահակին՝ Մարաց թագավորին: Այնուհետև նշում է, թե ինչ քաղաքական վիճակ էր տիրում Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետության ժամանակ: Արտաշեսյան թագավորության ժամանակ Արտաշեսը Երասմի ափերին կառուցում է Արտաշատ քաղաքը:

Հետաքրքիր ձևով է ներկայացված «Տիգրան Մեծն արքայից արքայ» բաժինը<sup>25</sup>: Ֆեյդին շեշտում է, թե Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանն ունեցել է իր ամենամեծ տարածքային սահմանները՝ Կասպից ծովից մինչև Սիրիա: Տիգրան Մեծը Հայաստանից դուրս է մղել Հույներին, գրավել Կապաղովվիհան և հանձնել աներոջը՝ Պոնտոսի Միջուղատ արքային: Այնուհետև պատերազմում է պարթևների դեմ և Առաջավոր Ասիայի գերիշխանությունը իր ձեռքն է վերցնում, Ասորեստանից Խորում է Սելևկյանների թագը, գրավում է նաև Պաղեստինը: Իր դաշնակից Միջուղատ Պոնտացու պատճառով կովում է հոռմեացիների դեմ, երկարատև հաղթանակներից հետո կամավոր հանձնվում է Պոմպեոսին, կնքում հաշտության պայմանագիր, հանձնում գրաված տարածքները՝ մնալով միայն Հայաստանի թագավոր: Ֆեյդին առանձին հաստվածում ներկայացնում է «Խառնակության շրջանը» (ՅՅ Ք.Ժ.ա. - ՅՅ Ք.Ժ.Հ.): Տիգրան Մեծին հաջորդում է Արտավագդ Առաջինը, որը նենգորեն բռնվում է հոռմեացի Անտոնիոսի և Եղիպատոսի թագուհի Կելպատրայի կողմից և սպանվում: Խառնակ ժամանակներում Հա-

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 220:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 227:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 236-237:

յաստանի թագավորական գահը ձեռք զցելու համար միմյանց հետ մրցակցում են մի հոռմեացի, պարթևներ, վրացիներ, մարեր, նույնիսկ հրեա: Բոլորի մեջ իր նենգությամբ աչքի է ընկնում վրացի Հոաղամիզդը, որը կեղծավորությամբ ապավինում է Հայոց թագավոր Միհրդատին, հետո նրան սպանում և նստում գահին: Նա պատմում է Հոաղամիզդի և նրա կնոջ՝ Զենորիայի պատմությունը: Հոաղամիզդը, որը բոնագրավել էր Հայոց գահը, քշում է պարթևների կողմից և փախչում է կնոջ՝ Զենորիայի հետ, որը, զդի լինելով, չի կարողանում հետևել ամուսնուն և խնդրում է սպանել իրեն, որ չընկնի թշնամու ձեռքը: Հոաղամիզդը դաշույնով զարկում է նրան ու նետում Երասխ գետը: Սակայն Հայ Հովհիները գտնում են գետի եղեգների մեջ մնացած դշտուհու մարմինը, պարզում, որ նա կենդանի է, բուժում և կյանքի վերադարձնում նրան: Հայոց Տրդատ արքան պատվով է ընդունում փրկված Զենորիային և նրան տեղ է տալիս իր արքունիքում. «Տրդատով սկիզբ է առնում Արշակունյաց Հարստությունը Հայոց մեջ (66 Ք.ձ. հետո)»<sup>26</sup>: Ֆեյդին առանձին ներկայացնում է «Եղեսիոյ Հայ թագաւորները, Արքար», որում պատկերված են Հիսուս Քրիստոսի և Արքար արքայի նամակագրությունը, Թաղեսոս առաքյալի Հայաստան գալը, Արքարի բուժվելը, այնուհետև Թաղեսոս առաքյալի և Սանատորուկի դատեր՝ Սանդուխտ կույսի նահատակությունը քրիստոնեական Հավատի պատճառով: Առանձին Հատվածով է գրված Արշակունյաց թագավորության պատմությունը՝ Տրդատից մինչև Խոսրով:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» Հաղորդած փաստերի հիման վրա է գրված «Մեծն Տրդատ և Ս. Գրիգոր Լուսավորիչ» բաժինը: Պատմվում է Գրիգորի հրաժարումը Անահիտ դիցուհուն պատվելուց. «Իր Հաղթանակի առթիվ Տրդատ զոհ նվիրեց Անահիտ դիցուհուն և Գրիգորին պատվիրեց, որ ինքը ծաղկե պսակներ տանի «Ուսկեմոր», բայց Գրիգոր, որ քրիստոնյա էր, Հանձն չառավ չաստվածուհի մը երկրպագել»: Ֆ. Ֆեյդին, որ սովորություն ունի ֆրանսախոս ընթերցողի բացատրել Հայոց լեզվի բոլոր այն բառերը, որոնք նա կարող է կարդալով չըմբռնել դրանց իմաստը, չաստված բառը բացատրում է հետևյալ կերպ. «Չաստված ուստի լուսաւություն կամ աստված» (Չաստված չունի նույն հոլովումը, ինչ Աստված)<sup>27</sup>:

Սեղմ ձևով ներկայացված են Գրիգոր Լուսավորչի վարքն ու Հոփիսիմյան կույսերի վկայաբանությունը. «Թագավորը հրամայեց, որ բոլոր մեհյանները խորտակվին և անոնց տեղ եկեղեցիներ շինվին:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 273:

Գրիգոր Հայոց ընդհանուր հովիվ կարգվեցավ և Հայաստանի Լուսավորիչ կոչվեցավ: Այսպես է, որեմն, որ քրիստոնեական կրոնքն ընդունող առաջին ազգը եղավ Հայ ազգը»<sup>28</sup>: Նույն բաժնում ներկայացված են «Վարդանանք և Ղետողեանք», Ավարայրի ճակատամարտը, նաև նրանց գործը շարունակած Վահան Մամիկոնյանը: «Պարսիկները Վահանի արիության վրա զմայլած՝ հաշտություն առաջարկեցին և խոստացան, որ Հայերը ազատ պիտի ձգեն քրիստոնեությունը պաշտելու (484)»<sup>29</sup>:

Բավական մանրամասն է ներկայացված «Բագրատունեաց թագաւորութիւն» բաժինը (885-1045): Թվարկվում են Բագրատունի Հայ թագավորներն՝ իրենց երեսի գործերով: Գովեստով են պատկերված Աշոտ Երկաթը, Աշոտ Ողորմածը, նրա կինը՝ Խոսրովանուշը թագուհին, որն իր անձնական ծախքով կառուցեց Սանահին և Հաղպատնշանվոր վանքը:

Նկարագրված է Անի մայրաքաղաքի փառահեղությունը. «Անի մայրաքաղաքը զարդարեցին և այնքան եկեղեցիներ շինեցին, որ ուամիկ դասին մեջ սովորություն եղավ Անիի «Հագարումեկ» եկեղեցիներուն վրա երդում ընել»<sup>30</sup>: Անիի կործանումից, Գագիկ Երկրորդ թագավորի գերզելուց հետո Կարսի և Վասպուրականի Հայկական թագավորությունները երկար կյանք չեն ունենում:

Հայաստանի Կիլիկան շրջանը Հայագետն իրավամբ բաժանում է երկու ժամանակահատվածի՝ «Իուրիինյան իշխաններ (1080-1198)» և «Իուրիինյան թագավորներ (1198-1342)»: Ֆ.Ֆեյդին Հայաստանի պատմությունը Հասցնում է մինչև մեր օրերը՝ չմոռանալով պատմել սելջուկ թուրքերի, Լենկ Թիմորի, սուլթան Մուհամեդի, Շահ Աբասի Հայատան կատարած ավերիչ արշավանքների մասին:

Տասնութերորդ դարում Ղարաբաղի կիսաանկախ իշխանները կոչվում էին «մելիքներ», որոնք Խրայել Օրուն ուղարկում են Եվրոպա՝ Հայաստանն ազատագրելու խնդրանքով: Օրիին սիրով ընդունում է նաև ոռուսական ցարը՝ Պետրոս Մեծը, սակայն Օրին վախճանվում է, և Հայաստանի ազատագրման ծրագիրը մնում է անկատար: Հայաստանը թուրք-պարսկակական լծից ազատագրելու ապատամբության դրու է բարձրացնում Դավիթ Բեկը, որի Հաղթանակները ստիպում են պարսից շահին նրան կոչելու «իշխանաց իշխան» տիտղոսով: 19-րդ դարում ոռուսները Հայաստանի հյուսիսային մասերն ազատագրում են

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 274:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 286:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 296:

մահմեղականների լծից: 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակվում է անկախ Հանրապետություն, ուր, սակայն, 1920թ. դեկտեմբերին խորհրդային կարգեր են հաստատվում, ապա այն մտնում է Խորհրդային Միության կազմի մեջ:

Ֆրեդերիկ Ֆեյդին չի մոռանում նաև 1915 թվականի հայաջինը եղեռնի մասին. «Մյուս կողմեն, 1915-ի ջարդերով, թուրքերը բնաջինջ ըրին իրենց տիրապետության տակ գտնված հայկական գավառներում հայ բնակչությունը»<sup>31</sup>:

Ամենաջերմ տողերով է բնութագրված դասագրքի մեջ «Հայկական դասական մատենագրութիւն» բաժինը: Այս հատվածում վերատին փառարանվում են հայ մատենագրությունը սկզբնավորող երկու մեծ հայրենասերները՝ Ս.Սահակը և Ս.Մեսրոպը. «Ս.Սահակ կաթողիկոսին փափարով Ս.Մեսրոպ հայկական տառերը հնարեց և այս երկու պատկառելի կրոնավորները, իրենց աշակերտներուն գործակցությամբ, հետամուտ եղան Աստվածաշունչը թարգմանելուն»<sup>32</sup>:

Ֆ.Ֆեյդին հանճարեղ փիլիսոփաներ է համարում Եղնիկ Կողբացուն և Դավիթ Անհաղթին. «Թեև հայուն հանճարը ընդունակ է լուրջ խմաստասիրության և խոր աստվածաբանության, սակայն հայերը բանաստեղծ են բնությամբ և չուտ մը սկսած են հորինել քերթողական շունչով լի շարականներ, որոնք Ոսկեղարեն ի վեր և մինչև հիմա եկեղեցիներուն մեջ կերպվին»<sup>33</sup>: Նա զմայլելի է համարում Գր.Նարեկացու, Ն.Ծնորհալու, Ն.Լամբրոնացու ստեղծագործությունները:

Ֆրանսիացի հայագետը սքանչացած է նաև Նահապետ Քուչակի հայրեններով, ինչպես Մխիթար Սեբաստացու գործունեությամբ, չ.Զամյանի «Հայոց պատմությամբ», նուրբ բանաստեղծ Մ.Պեղկթաշլյանի «Վերք Հայաստանի» վեպը, Բաֆֆու հայրենասիրական վեպերը, որոնցում առկա է Վիկտոր Հյուգոյին հիշեցնող գորեղ շունչ: Նա նշում է, որ իր ապրած օրերին, այսինքն՝ 20-րդ դարի երկրորդ կեսին. «Գրական բոլոր սեռերը արտակարգ փայլով կմշակվին Հայաստանի մեջ»:

Դասագրքի բանչորորդ դասում կա «Քաղաքակրթություն և առաջադիմություն» բնագիրը: Խիստ հպանցիկ հայագետը բնութագրում է մարդկության քաղաքակրթության բնմացքը: Նա բացատրում է, որ մարդը իր էությամբ հետաքրքրաներ է. նա կամենում է ամեն ինչ ըմբռնել, ամեն կատարվածի պատճառը փնտրել: Նա հասկացել է բնության շատ երեսութներ, իրեն օգտակար շատ մեքենաներ է հնա-

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 327:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 336:

<sup>33</sup> Նույն տեղում:

բել, բայց շատ հարցեր դեռևս լուծված չեն, եթե լուծվեն էլ, անպայման կծագեն նոր խնդիրներ, որովհետեւ մարդու հետաքրքրությունները կանգ չեն առնում և անհագ շահախնդրությունը փնտրում է նոր հարցերի պատասխաններ: Քրիստոսին ժամանակակից գիտուն մարդը կերևակայեր արդյոք, թե մարդը կարող է ավտոմեքենայով երթեւեկել, ողի կամ ջրի մեջ պանալ, նույնիսկ այնտեղ կովել, օդանավերով քա - ղաքներ ուժակոծել, ավերել ու քանդել: Կերևակայեր, որ հեռախոսով և ուղիղով կարող է իր ձայնը տարածել ողջ աշխարհով մեկ: Նույնիսկ նման արարքներ նա չէր կարող վերագրել աստվածներին: Ֆեյդին դարձուրելի է համարում ատոմային դարի հանդես գալը: Նա համոզված է, որ մարդու հանճարը հորինելու է նոր հրաշալիքներ ու ահարկու զյուտեր: Գիտնականին հուզում է քաղաքակրթության ձեռքբերում - ների երկակի բնույթը. մի կողմից մարդն իր օգուտի համար ստեղծում է դեղեր ու գործիքներ, մյուս կողմից թշնամուն հաղթելու և ինքն իրեն պաշտպանելու համար դիմում է սատանայական միջոցների: Այս դասին ևս կցկում է հետաքրքիր բառարան:

## VOCABULAIRE

### ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ CIVILISATION<sup>34</sup>

յառաջադիմութիւն	progrès	հաւանական	probable
միտք	esprit, intelligence,		
	pensée, idée	հետաքրքիր	curieux personnes
պատճառ	cause	անսահման	illimité
հետաքրքրութիւն	curiosité	ժամանակակից	contemporain
շահախնդրութիւն	recherche de l'intérêt	անդիր	de l'autre extrémité, de là bas, au delà
ծայր	extrémité, pointe, bout	այսպիսի,	tel
		այդպիսի, այնպիսի	
հրաշագործութիւն	miracle, action merveilleuse	որ եւ է	quelconque
շառաչիւն	fracas	փնտռել	chercher
դար	siècle, âge, ère	երեւակայել	imaginer
հանճար	esprit, génie	երթեւեկել	aller et venir
մարդկութիւն	humanité, genre humain	ռմբակոծել	bombarder
դեղ	médicament, produit chimique	աւերել	mettre en ruines

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 173-174:

բնութիւն	nature	քանդել	démolir
հարց, խնդիր	question, problème	յաղթել (dat.)	vaincre
լուծում	solution, dissolution	գուշակել	deviner, prédire
օդանաւ	avion	յայտնել	révéler
Հեռախոս,	téléphone	ըմբռնել	percevoir,
Հեռաձայն			comprendre
ձայնասփիւռ,	radio	լուծել	dissoudre, résoudre
ռատիոյ			
աշխարհ	monde	հնարել	inventer
հրաշալիք	merveille	ճարել	procurer, aviser à
գիւտ	découverte, invention	ընծայել	offrir, attribuer
միջոց	moyen	գործել,	accomplir
		կատարել	
անյագ	insatiable	դիմել	s'adresser à,
			recourir à
ծարաւի	assoiffé	համարձակել	oser
դեռ, տակաւն	encore		
աւաղ	hélas	մէկ կողմէն	d'une part
այնտեղ	la', y	միւս կողմէն	d'autre part

Քսանյոթերորդ դասում, ուսուցանելով թվական անունը, Ֆեյդին դնում է հայերենի այբուբենի թվային արժեքը՝ նշելով, որ իր բերած աղյուսակում չկան օ և ֆ տառերը, որովհետև դրանք հայերենում գործածվել են միայն 12-րդ դարում, դրա համար էլ չունեն թվային արժեք: Ահա ֆեյդիի բերած աղյուսակը:

*L'emploi des lettres de l'alphabet pour indiquer un nombre est, en arménien moderne, semblable à celui que nous faisons des chiffres romains. Les valeurs de ces lettres sont les suivantes:*

Ա	1	Ժ	10	Ճ	100	Ռ	1000
Բ	2	Ի	20	Մ	200	Ս	2000
Գ	3	Լ	30	Յ	300	Վ	3000
Դ	4	Խ	40	Ն	400	Տ	4000
Ե	5	Ծ	50	Շ	500	Ր	5000
Զ	6	Կ	60	Ո	600	Ց	6000
Է	7	Հ	70	Չ	700	Ւ	7000
Ը	8	Զ	80	Պ	800	Փ	8000
Թ	9	Ղ	90	Ջ	900	Ք	9000

(Les lettres Օ et Ֆ, n'ayant été ajoutées à cet alphabet initial qu'au XII<sup>e</sup> siècle, n'ont pas de valeur numérique). ՌՅՂԸ = 1.397<sup>35</sup>:

Նա բացատրում է նաև «Հայոց թվական» նշանակությունը, որի համար նշված տառային թվականին գումարվում է 551 և ստացվում է քրիստոնեական թվականը:

Այս դասում բացառիկ արժեք ունի «Հայրենիք» բնագիրը: Ֆեյդին հասուկ շեշտում է հայերի հայրենասահրությունը: Նրա կարծիքով թեպետ հայերից շատերն ապրում են տարագրության մեջ, սակայն շարունակ հիշում են իրենց ազգությունը, կրոնը և պահպանում են լեզուն: Երբ հայրենիքից տարագրված հայերը հաստատվում են նոր երկրում, անմիջապես մշակութային կաղմակերպություններ են հիմնում, ազգային եկեղեցի կառուցում, դպրոցներ բացում ազգային լեզվով, մայրենիով թերթեր հրատարակում և բարեգործական հիմնարկներ հաստատում: Նա բերում է հետևյալ փաստը. «Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը Պողոս Նուրբար Փաշայի կողմից է հիմնվել»: Հայագետին չափազանց դուր է եկել հայր Սահակ վարդապետ Տեր-Մովսեսյանի «Հայրենիք» բնագիրը, որը նա գետեղում է դասագրքում.

## ՀԱՅՐԵՆԻՔ

Ուսումնասիրել հայ ազգին պատմութիւնը կը նշանակէ ուսումնասիրել Առաջաւոր Ասիոյ եւ Կովկասեան ցեղերուն քաղաքակրթութիւնը: Ինչպէս որ Յոյները Ասիոյ քաղաքակրթութիւնն ու իրենց սեփական հանճարին գիտերը ներմուծեցին եւրոպայի մէջ, նոյնպէս ալ ասոնց քոյր ցեղին՝ Հայոց (1) չնորհիւն է որ Հայաստանի դրացի ժողովուրդները, մասնաւորապէս Աղուանները, Վրացիները, Եգերացիները սորպեցան զգալ ու մտածել: Պատմական ամէն շրջաններուն մէջ Հայերն եղան միշտ յառաջընթացներ, որ Ասիական շեմի վրայ կանգնած՝ Հայրենիքի քաղաքական ու անհատական ազատութեան սէրը ներշնչեցին, ինչպէս եւ հաւատքն առ անկախ հայրենիքը:

Հ. (Հայր) Սահակ Վ. (Վարդապետ)  
Տէ՛ր ՄՈՎՍԵՍԱՆ<sup>36</sup>

Ֆրեղերիկ Ֆեյդին իր «Հայոց լեզվի դասագրքում» դրված բնագրերով հիմնավորում է, թե հինգերորդ դարում Մեսրոպ Մաշտոցի հանճարով երեան եկած հայոց այբուրենը եղել է իսկական հրաշք, որն

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 201:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 200:

ապահովել է հայ ժողովրդի հետագա մտավոր կյանքի չընդհատվող վերելքը<sup>37</sup>:

## Բ. Ֆ.ՖԵՅԴԻՆԻ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ

Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագիտական աշխատությունների մեջ մաշտոցյան այբուբենի մասին ամենից ավելի հանգամանալի խոսք կա 1982-ին, Վիեննայում, *Միսիթարյանների մոտ հրատարակված «Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien»* ծավալուն հետազոտության մեջ («Նկատումներ սուրբ Մեսրոպի այբուբենի և հետազոտություն Հայերենի հնյունաբանության», 216 էջ): Աշխատության նախաբան-ազդում ֆեյդին հայտնում է, թե այս ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասից, վերջին երկու մասերը ավելի սերտ շաղկապված լինելով իրար՝ հստակորեն զատվում են առաջինից և՝ իրենց բնույթով, և՝ չոչափած խնդիրներով:

Երկրորդ մասում հայագետը քննում է նախ ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքները, որոնք ուղեկցում էին այբուբենի ստեղծմանը, այն երկաթագիր այբուբենի, որը հորինվեց ըստ երևոյթին հունական նոտրգրի ազդեցությամբ:

Հետո գալիս է երկար խորհրդածություն մի հարցի վերաբերյալ, որը նրան չի դադարել մտատանքելուց սկսած այն օրվանից, երբ սկսել է սովորել դասական հայերենը (գրաբարը): «Որոշ լեզուներ վերցրել են պատրաստի այբուբեններ և դրանք գործածել, և չպետք է հեշտորեն մոռանալ, որ հայոց այբուբենը գտնվում է մյուս այբուբեններից տարբեր հանգամանքներում, ստեղծվելով սիստեմատիկորեն մի հին լեզվի համար, այն չունեցավ հնացման իրողություն»<sup>1</sup>:

Եթե 19-րդ դարի և 20-րդ դարակզբի եկրոպացի հայագետները իրենց գիտական վարկածները, եզրակացությունները, հետազոտության արդյունքներն առաջ քաշելիս վկայակոչում էին Վենետիկի, Վիեննայի, Ս.Պետերբուրգի, Փարիզի, Բեռլինի, Մոսկվայի, Էջմիածնի միաբանության հայագետներին, ապա Ֆ.Ֆեյդին հղում է Մայր Հայաստանի նշանավոր լեզվաբաններին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ

<sup>37</sup> 1963-ին նյու-Յորքում հրատարակված Ա.Ա.Պետիկյանի «The Golden age in the fifth century» («Ոսկեադր Հինգերորդ դարում») գրքում Մաշտոցի այբուբենի երևան գալը հենց բնորոշվում է որպես հրաշք, և այդ խորագրով կա առանձին գոլիս. «A miracle» տես («The golden age in the fifth century, by A.A.Bedikian, New York, 1963, p. 13-22).

<sup>1</sup> Տե՛ս Ֆ.Ֆեյդի, *Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien*, Wien, 1982 (Deuxième édition).

Հ.Աճառյանին, Գ.Ջահուկյանին, Էդ.Աղայանին, Ա.Ղարիբյանին և ուրիշներին:

Ֆ.Ֆեյդին տեղեկացնում է, որ սույն աշխատության առաջին տարրերակը լուս է տեսել քսան տարի առաջ, հետագայում նա վերընթերցել է Հայաստանի գիտնականների գրքերը՝ նվիրված մեսրոպյան այբուբենին՝ հատկապես Էդ.Աղայանի «Նախամաշտոցյան Հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին» (Երևան, 1977) գիրքը ու հասկացել է, որ ինքը և Էդ.Աղայանը ունեն ճիշտ և ճիշտ նույն կարծիքը Հայոց այբուբենի հետ կապված խնդիրներում; Իր հետ համակարծիք է նաև ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը («au cours de la même conversation a été d'accord avec moi»): Ահա այս նոր հանգամանքներն էլ մեծապես նպաստել են առավել ծավալուն և նորացված երկրորդ գիրքը գրելու մաշտոցյան այբուբենի մասին:

Ֆ.Ֆեյդին աշխատության առաջին մասը կոչել է «A-t-il existe antérieurement un alphabet quelconque ayant servi, à écrire la langue arménienne?» («Նախապես գոյություն է ունեցե՞լ որևէ այբուբեն, որ ծառայել է Հայոց լեզվով գրելու համար»): Այս հատվածում նա հանգամանորեն բանավիճում է պատմաբան Ա.Գ.Աբրահամյանի հետ՝ նկատի ունենալով վերջինիս «Հայ գրի և գրչության պատմություն» (Երևան, 1959) գիրքը:

Ֆ.Ֆեյդիի համար առաջնային է հետևյալ հարցը: Նախքան Մեսրոպ Մաշտոցի այբուբենը, կարևոր է իմանալ՝ եղե՞լ է ազգային այբուբեն, թե Հայերը փորձել են գրել օտար այբուբեններով: Եվ ահա այդ խնդիրներում ինքը բանավիճելու է Աշոտ Գ.Աբրահամյանի հետ<sup>2</sup>:

Ֆրանսիացի Հայագետի կարծիքով Ա.Գ.Աբրահամյանի հիպոթեզը, թե Հայերը մինչև Մաշտոցն ունեցել են ազգային գիր, անժխտելի չէ: Եթե Ա.Գ.Աբրահամյանը փաստում է, թե Աստվածաշնչի թարգմանությունը շատ ճգրիտ էր, ուրեմն Հայերենը անցել էր գրավոր մշակման գործընթացով, ապա չպետք է մոռանալ, որ այդ նույն Աստվածաշունը բանավոր Հայերեն էր թարգմանվում շատ զարգացած քարոզիչների կողմից: Իսկ դա արվել է երկար ժամանակ, որովհետեւ Հայ քարոզիչները ստիպված ե բազմից նույնը կրկնելով, սրբազն բնագիրը բանավոր ձևով թարգմանում էին Հայերեն, որովհետեւ Հավատացյալների մեծ մասը չգիտեր ոչ հունարեն և ոչ էլ ասորերեն: Քարոզիչները պարտավոր էին օգտագործել Հայերենի բառապաշտարը

<sup>2</sup>Տե՛ս Նույն տեղում, թ. 1-32:

<sup>3</sup>Ֆ.Ֆեյդին գրում է, «l'ouvrage d'Achod G.Abrahamian», որպեսզի չշփոթեն լեզվաբան և անվանի գրաբարագետ Ա.Ա.Աբրահամյանի հետ:

և նրա լեզվական կառուցները, և դա էլ նախապատրաստել է հետագա գրավոր թարգմանության ձկունությունը: Ֆ.Ֆեյդիի կարծիքով Հայերը բնածին հուսորներ են (այդ բառի լավագույն իմաստով): Մինչև Սահակ Պարթևը սուրբ Ներսեսը ստեղծել էր գիտական հիմքերով կառուցված և ընտիր մանկավարժական տեխնիկա ունեցող դպրոցներ:

Իր աշխատության այս հատվածի տողատակում Ֆ.Ֆեյդին հիշեցնում է, որ Մեսրոպ Մաշտոցը եղել է Ներսես Մեծի աշակերտը ըստ Մովսես Խորենացու. «Նա Տարոնի Հացեկաց (գլուղից) էր, սնվել ու սովորել էր մեծն Ներսեսի մոտ և նրա վախճանվելուց հետո արքունական դռանը քարտուղար էր նշանակվել»<sup>4</sup>: Նույն տեղում Ֆ.Ֆեյդին Հայտնում է իր կարծիքը Մ.Խորենացու հինգերորդ դարի պատմիչ լինելու վերաբերյալ: Նա գրում է. «Գուցե Մովսես Խորենացու վկայությանը Համաձայն չեն այն բանասերները, ովքեր նրան Համարում են ուշ շրջանի հեղինակ, ես միանում եմ նրանց, ովքեր նրան Համարում են ստույգ պատմիչ: Բացի այդ, կարևոր Հարցերում նրա վկայությունները գլխավորապես Համբնկնում են այլ պատմիչների Հաղորդածներին»<sup>5</sup>: («Le témoignage de Moïse de Khorène peut n'être pas accepté par les philologues qui voient en lui un auteur tardif, je le cite pourtant pour ceux qui lui font crédit. En outre, dans les questions importantes, son témoignage concorde généralement avec les dires des autres historiens»): Հայագետը հիշեցնում է, որ ըստ Փավստոս Բուղանդի Սուրբ Ներսեսը Հայաստանի բոլոր գավառներում բացում է դպրոցներ հունարեն և ասորերեն»: Դժվար է պատկերացնել, թե կարելի էր բերել օտար երկրներից այդքան մեծ թվով քարոզիչներ, որոնք կպարտավորվեին գալ Հայաստան և սովորեցնել Հայերին նրանց մայրենի լեզվով: Ֆ.Ֆեյդիի կարծիքով ասել, թե մինչև մեսրոպյան գրի ստեղծումը գրական Հայերեն չի եղել, կինհի սխալ: Գրական լեզուն ստեղծում են այն մարդիկ, որոնք խոսում են ճշգրիտ և կարող են վերացարկված մտքեր արտահայտել: Ու եթե սուրբ Ներսեսի դպրոցներում սովորեցնում էին հունարեն և ասորերեն, ուսման պրոցեսում բացատրելու Համար գործածում էին Հայերենը:

Ֆ.Ֆեյդին հիշեցնում է, որ Հայերի նախնիներ՝ ուրարտացիներն, արդեն ունեին սեպագրեր, Հայերը հետազայում նախընտրել են գրի առավել զարգացած ձեր և դիմել են հունական ու արամեական այբուբեններին: Աբրահամյանն էլ ասում է, թե Հայաստանում ն.Ք.ծ.՝ երկրորդ դարում, Արտաշես Առաջինի ժամանակ գտնվել են երեք

<sup>4</sup> Մ.Խորենացի, Հայոց պատմություն, էջ 389:

<sup>5</sup> F.Feydit, Considerations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien, p. 4.

արամեերեն արձանագրություններ, ինչպես նաև նույն Աբրահամյանի կողմից նշված են Հովհաննելին (Երրորդ դ. մ.թ.ա) Հունական արձանագրությունները: Հայկական հին շրջանի գրամմաների վրա էլ դրոշմված են Հունարեն շրջագրեր: Հայտնի է, որ Հայ հեթանոս թագավորները իրենց արքունիք էին հրավիրում Հելլեն գիտնականների ու գրողների և հենց Հունարենով էլ Արտավազդ արքան ստեղծեց իր երկերը: Սա հիմք է տալիս կարծելու, թե Հայաստանի արևմտյան մասում, ուր բյուզանդական ազդեցությունն ուժեղ էր, արքայական արխիվները պահպում էին Հունարենով<sup>6</sup>: Ճշմարիտ է, որ Մովսես Խորենացին խոսելով Բարդանի մասին, որը Եղեսիայից էր, ասում է, թե եկել է Անի, ծանոթացել է մեհենական արխիվներին, գրանք թարգմանել է ասորերեն և իր հետ տարել: Հնարավոր է, որ հետո Բարդանի այս թարգմանությունը նորից թարգմանվել է ասորերենից Հունարեն, փաստորեն վերապարձել է բնագրի լեզվին: Եվ հենց այդ թարգմանություններն է ոչնչացրել Գրիգոր Լուսավորիչը, գալով Անի, կործանելով մեհյանը աստվածների Հայր կոչված Զես-Արամազդի, որի մասին վկայում է Ազաթանգեղոսը. «զբագինն Զես դիցն Արամազդայ»<sup>7</sup>: Խոսքն այստեղ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» հետևյալ հատվածի մասին է. «Երբ նրանց ևս հաստատեց, գնաց Հասավ Անի անվանված ամուր վայրը՝ Հայոց արքաների գերեզմանների թագավորաբնակ կայանը: Այնտեղ կործանեցին բագինը Զես-Արամազդ աստծու, որը բոլոր աստվածների Հայրն էր անվանված: Այնտեղ ևս տերունական [խաչի] նշանը կանգնեցրին և ավանը իր ամրություններով հանդերձ եկեղեցուն ի ծառայություն նվիրեցին»<sup>8</sup>: Իր վարկածը հաստատելու համար Ֆրեդերիկ Ֆեյդին պատմում է Հեթում պատմիչի Երկի ճակատագրի մասին, որով ինքը զբաղվել է Հատուկ և հրատարակել է նրա վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն: Ֆեյդին ձեռքի տակ ունեցել է բազում ձեռագրեր՝ բնագրային արժեքով, որը Փրանսերեն Հեթում պատմիչը թելաղը է Նիկոլա Ֆալկոնին, տարրեր ձեռագրեր նույն Երկի լատիներեն թարգմանության՝ ուղղված Պապին, հետո որոշ ձեռագրեր, որոնք լատիներենից վերստին վերաթարգմանվել են Փրանսերեն Ժան Լելոնդի կողմից<sup>9</sup>: Հեթում պատմիչի հետ կապված իրողության փաստի միջոցով Ֆեյդին ուզում է ասել, թե Բարդանանը Անիի մեհյանում հունարենից է ասորերենի թարգմանել իրեն անհրա-

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 8.

<sup>7</sup> Նույն տեղում, թ. 9.

<sup>8</sup> Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 441:

<sup>9</sup> F. Feydit, *Considérations sur l'alphabet de saint Mesrop*, p. 9.

մեշտ նյութը, որը վերստին կարող էր հետագայում ասորերենից վերաթարգմանվել Հունարեն։ Այս հատվածի 4-րդ կետում Ֆեյդին առաջ է քաշում խիստ ուշագրավ մի վարկած, որը հասկանալի կլինի բոլոր նրանց, ովքեր գիտեն զրադաշտական կրոնի սրբազն գրքի՝ Ավետարյա անցած ճանապարհը։ Հեթանոսական շրջանում սովորույթ կար կրոնական վարդապետությունը բանավոր ձևերով փոխանցել քրմական մի սերնդից մյուսին՝ պարտավորեցնելով անգիր իմանալ ամբողջը։ Կար նաև ներքին վարդապետությունը պահելու սովորությունը և այն զրբերին չհանձնելը, որպեսզի իրենց սրբազն զաղտնիքը չիմացվի։ Այս եղրակացությունից հետո տողատակում հայագետը ծանուցում է. «Հենց որ ուզում են հետազոտել հայկական հեթանոսական կրոնը, ապա հավաստում են, որ քրիստոնյա պատմիչներն ու աստվածաբանները, որոնց մեջ կան վերջին հեթանոսական քրմերի ժամանակակիցներ, ոչինչ չգիտեն հեթանոսական պաշտամունքի մասին, բացի նրանից, թե որոշ աստվածներ ունեն մեհյաններ և որտեղ էին գտնվում դրանք»<sup>10</sup>։

Իր ընդդիմախոսության հինգերորդ կետում Ֆեյդին խոսում է Տիր աստծու մասին։ Նրա կարծիքով Տիր աստծու մասին հայտնող հատվածը Ագաթանգեղոսի մոտ բավկանին մութ է. «Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմիզդի գրչի Դիվան կոչված, երազացոյց, երազահան պաշտամունքի Տիր աստծու իմաստության մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել»<sup>11</sup>։ Ֆեյդի կարծիքով չկա ապացոյց, թե Տիրը հայկական աստված է. «qui est inventé ce dieu secrétaire d'Ormuzd»<sup>12</sup> (ո՞վ է Հորինել Որմիզդի քարտուղար այս աստծուն)։ «Ինչ հայ աստված, որի տերը չի թվում, թե հայ է», - շարունակում է հայագետը։ Նա Տիրին համեմատում է Գարրիել Հոգեառ հրեշտակի հետ, և հենքերով Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսում» տպագրած նյութի վրա, հիշեցնում է, թե Հայերը հավատում էին, թե ամեն մարդ ունի իր գրողը՝ մահվան հրեշտակը։ Հայերն ունեն արտահայտություն. «Թող գրողը քեզ տանի»։ Նա հիշեցնում է, թե Տիրի անունը միայն մեկ անգամ է հիշատակվում հայ գրականության մեջ՝ այն էլ միայն Ագաթանգեղոսի մոտ»<sup>13</sup>։ Վեցերորդ կետում անդրադառնում է Փիլոստրատոսի այն հիշատակմանը, ըստ որի՝ հովագի վզին եղել է հայատառ մանյակ. «Պատմում են նույնպես,

<sup>10</sup> Նույն տեղում, p. 10.

<sup>11</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 437:

<sup>12</sup> F. Feydit, *Considérations sur l'alphabet de saint Mesrop*, 11.

<sup>13</sup> Նույն տեղում, p. 12.

որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա զրված էր Հայերեն տառերով հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն, այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այս Արշակն այն ժամանակ Հայոց թագավորն էր և յուր բռնած հովազը, այդ կենդանու մեծության պատճառով, նվիրել էր Դիոնիսոսին»<sup>14</sup>: Ֆեյդին Հիշեցնում է, թե Հր.Աճառյանը կարծում է, թե այդ ժամանակ Հայաստանում Արշակ թագավոր չի եղել, գործել է պարթև Արշակ թագավոր, մի խոսքով Փիլոստրատոսը փաստը հաղորդել է բանավոր ավանդույթի հիման վրա:

Յոթերորդ կետում Ֆեյդին խոսում է Հիպոլիտի այն ցանկի մասին, որը վերաբերում է մ.թ. 234-ին և թվարկում է (ըստ Աբրահամյանի վկայության) գրեր ունեցող ժողովուրդներին՝ իրերացիներ, լատինացիներ, իսպանացիներ, Հույներ, մարեր, Հայեր: Ֆեյդին այս թվարկումը համարում է բավական հետաքրքիր, որովհետև եթե թվարկումը հասնում է մինչև մարերը, ապա նրանում ոչ մի խոսք չկա սեմական լեզուների մասին, գուցե Աբրահամյանը երայեցիների փոխարքեն մեխանիկորեն թարգմանել է իրերացիներ: Հայտնի է, որ սեմական այբուբենի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արամեականը, գուցե արտագրող գրիչը շփոթել է արամեերենը Հայերենի հետ<sup>15</sup>: 1981-ին լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության բրեստոմատիա» գրքում կա առանձին հատված՝ «Հիպաղլիտոս պատմիչը Հայերի դպրություն ունենալու մասին», նրանում բերվում է Ա.Գ.Աբրահամյանի թարգմանական հատվածն այդ ժամանակագրությունից. «Սրանից նրանք, որոնք դպրություն ունեն, հետևյալներն են. երրայեցիները, լատինացիները, որով և հոռմեացիներն են վարում, սպանացիները, Հույները, մարերը և Հայերը»<sup>16</sup>: Նույն էջում կա հղում. «Հիպաղլիտոսի այս հատվածը թարգմանաբար բերել է նաև Անանիա Շիրակացին իր «Ժամանակագրության» մեջ (էջ 360): Անանիա Շիրակացու վկայությունը հետևյալն է. «Եւ այս աղօք են՝ որ գիտեն ի սոցանէ դպրու-

<sup>14</sup> Հայ ժողովրդի պատմության բրեստոմատիա, Երևան, 1981, էջ 619; ԵՊՀ-ի հրատարակած քրեստոմատիայի կազմողներն ունեն հետևյալ ծանոթագրությունը. «Բանասերներից ոմանց Հայտնած այն կարծիքը, որ մ.թ. I դարում Արշակ անունով Հայաստանի թագավոր չի եղել և նրանց փորձերը՝ դրա հիման վրա արժեքագրկելու Փիլոստրատոսի այս տեղեկությունը, ճիշտ չէ. Հավանական է, որ Հեղինակը նկատի է ունեցել պարթևաց թագավոր Արտավանի որդի՝ Հայոց Արշակ I (34-35) թագավորին, որի մասին տեսկելություն է Հաղորդում Տափառուր (տե՛ս «Տափառուր թյուներ», VI, էջ 31):

<sup>15</sup> **F. Feydit**, *Considérations sur l'alphabet de saint Mesrop*, p. 13.

<sup>16</sup> Հայ ժողովրդի պատմության բրեստոմատիա, էջ 621:

**թիւն: Իրերացիք, Ղատինացիք, որով Հոռոմքն վարին, Սպանիացիք, Ցոյնք, Մարք, Հայք»<sup>17</sup>:**

Ֆեյդին կրկնում է, թե արտագրող գրչի մխալ կլինի նաև Փիլոստրատոսի վկայությունը, որովհետև Արշակունիների ժամանակ Իրանում գործածում էին արամեական ծագում ունեցող պահավական գրեր: Բացի դրանից, այդ ժամանակահատվածում ոչ միայն Հայերը, առավել ևս իրերացիները այբուբեն չունեին:

Ութերորդ կետը Ֆեյդին բացատրում է Հենվելով Մովսես Խորենացու այն վկայության վրա, թե Մերուժան Արծրունին Հայերին արգելում է գրել և կարգալ Հունարեն, դրա փոխարեն Հրամայում է անցնել պարսկերենի. «Հրաման տայր մի՛ ուսանել զդարութիւն յունարէն այլ պարսկի»,.... «Մի՛ ոք իշխեացէ յոյն խօսել կամ թարգմանել», «Զի յայնժամ գիր զդարութեան Հայոց չեւ եւս էր լեալ եւ յունականաւն վարէին եկեղեցոյ կարգք»: Այս Հատվածը Մովսես Խորենացու մոտ ամբողջական տեսքով հետևյալն է. «Ինչ գիրք, որ գտնում էր, այրում էր և Հրամայում էր Հունարեն զրագիտություն չսովորել, այլ պարսկերեն, և ոչ ոք Համարձակվի Հունարեն խօսել կամ թարգմանել: Նա պատճառ էր բերում, որ Հայերը ոչ մի ծանոթություն և բարեկամական Հաղորդակցություն չունենան Հուների հետ, բայց իրոք քրիստոնեության ուսումը խափանելու նպատակ ուներ, որովհետև այդ ժամանակ դեռ Հայերեն գիր ու զրագիտություն չկար, և եկեղեցու կարգը կատարվում էր Հունարեն»<sup>18</sup>: Ֆեյդին բացատրում է, թե Հենց այդ պատճառով էլ, ինչպես վկայում է Կորյունը, Սահակ Պարթևը սկզբում Աստվածաշունչը թարգմանում է ասորերենից, որովհետև ողջ Հայաստանի տարածքում Մերուժան Արծրունին այրել էր Հունարեն գրերը: Եվ աշակավագույն միջոցը Իրանի նկրտումները խանգարելու, Հայաստանի պարսկացները կանխելու, ազգային այբուբենի ստեղծումն էր, որ ամեն ինչ գրվի Հայերենով և Հայերենով ստեղծվի անհրաժեշտ զրականություն:

Իններորդ կետում Ֆեյդին բոլորովին էլ չի ժխտում Հեթանոսական շրջանում Հայաստանի սեփական Հոգենոր արժեքներ ունենալը և դրանց որոշ մասի պահպանված լինելը դեռևս չորրորդ դարի վերջում և Հինգերորդ դարի սկզբում, նրանց վտանգը պաշտոնական եկեղեցու Համար՝ ինչպես քրիստոնեական աղանդները և զրադաշտականությունը: Այդ հին մշակույթն ու գրականությունը կային և Հատկապես

<sup>17</sup> Ա. Գ. Աբրահամյան, Անսանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 360:

<sup>18</sup> Մ. Խորենացի, Հայոց պատմություն, էջ 367:

Հին գրական արժեքներն ու արվեստը շարունակում էին իրենց գեղագիտական դերը կատարել հատկապես Գողթան գավառում: Դրանց մասին համապատասխան և խոսուն փաստեր կան և՛ Մ.Խորենացու, և՛ Եղիշեի, և՛ Եղինիկ Կողբացու մոտ: Նա վկայակոչում է պատմահոր Հետեալ հատվածը. «Բայց գուցե մեկն ասե, այն ժամանակ զիր ու գրականություն ըլինելու պատճառով (եղավ այդ), կամ զանազան պատերազմների չնորհիվ, որ անընդհատ մեկը մյուսին հաջորդում էին: Բայց իրավացի չի լինի այսպես կարծելը, որովհետև պատերազմների միջն եղել են և (խաղաղ) ժամանակամիջոցներ, և կային պարսից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, վերաբերյալ զյուղերի և գավառների և յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի և դաշինքների, մանավանդ սեպուհական աղնվականության ծագման»<sup>19</sup>:

Հայագետն ասում է, որ զատական, սեփականատիրական փաստաթիթերը Հայաստանում կազմվում էին հունական կամ պարսկական այրութենների օգնությամբ<sup>20</sup>:

Տասներորդ կետում ֆեղին վերստին քննում է նախամեսրոպյան հայ գրի փաստերը, Դանիելյան նշագրերի խնդիրը: Հենվելով Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» վրա՝ նա հիշեցնում է, որ հեթանոսական մեհյանների կործանումից և հեթանոսական կրոնը արգելելուց հետո բավականին թվով հեթանոս քրմեր դարձան նոր կրոնի՝ քրիստոնեության քարոզիչներ, և մի՞թե նրանք չէին բերի իրենց հետ հին հայկական տառերը նոր կրոնի համար:

Կարենոր ենք համարում հիշեցնել, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արեգատյանը «Հայ մշակույթը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում» հատվածի «Ներածության» մեջ, որը կոչվում է «Վաղ միջնադարյան հայ մշակույթի ընույթին ու զարգացման հիմնական ուղիները», գրում է. «Հայ պետականության համար ճգնաժամային IV-V դարերի սահմանագլխին ծափակած հոգերոր մշակույթի անկախացման և ազգային համախմբման ընթացքին նոր թափ հաղորդելու նպատակով ձեռնարկվեց մինչ այդ անգիր հայոց լեզվին ազգային պետական բնույթ ու գեր հաղորդելու՝ ազգային գրերի ստեղծման գործը, որը 405թ. տվեց իր փայլուն արդյունքը: Հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցի (361-440) ստեղծած գրերը բացեցին մեծ հեռանկարներ հոգերոր մշակույթի,

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>20</sup> *F. Feydit, Considérations sur l'alphabet de saint Mesrop, p.18.*

առաջին հերթին գրականության և գիտության զարգացման համար, հնարավորություն ընձեռելով բացահայտելու կուտակված հոգեոր լիցքը և մտավոր կարողությունները: Գրերի զյուտը երկրորդ հեղաշրջին իրադարձությունն էր ժողովրդի կյանքում, որը լիովին փոխեց երկրի մշակութային պատկերը և հոգեսոր մթնոլորտը»<sup>21</sup>:

Ինչպես պարզ է դառնում այս մեջբերումից, Հայաստանի ակադեմիական, պաշտոնական միտքը համաշունչ է Ֆրեղերիկ Ֆեյդի այն դրույթների հետ, որոնք վերաբերում են նախամեսրոպյան Հայ գրի խնդիրներին:

Հայագետի գրքի երկրորդ բաժինն ամբողջովին նվիրված է Մես - րոպ Մաշտոցին և նրա ստեղծած այրութենին:

Ֆեյդին բնավ չի կասկածում, թե Մեսրոպը Հայերեն տառերն ստեղծելիս ներշնչվել է Հունական այրութենից, որովհետև «մանուկ հասակից նա մեծացել է Հունական մշակույթով»<sup>22</sup>: Նա վկայակոչում է հինգերորդ դարի երկու մատենագիրներին՝ Կորյունին և Ղազար Փարպեցուն:

## ԿՈՐՅՈՒՆ

«Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, (ապա) եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առվանի՝ մեր Հայոց աշխարհի հազարա - պետության ժամանակ»<sup>23</sup>:

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

«Մանուկ հասակում սովորելով Հունարեն դպրությունը, Մաշտոցը Հայոց արքա Խոսրովի արքունիքում զինվորական ծառայության էր և կարգված արքունի մատենագիր դպրաց խմբի մեջ, քանի որ արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց թագավորների վճիռների ու Հռովարտակների գործը կատարում էին ասորերեն և Հունարեն գրերով»<sup>24</sup>:

Ֆեյդին հիշեցնում է, թե ինչ պատմական իրադրություններում Մաշտոցը ստեղծեց իր այբուբենը. Հայաստանն այդ ժամանակ ծայրակերպեն կախում ուներ զրադաշտական կրոնին հետևող Պարսկաստանից:

<sup>21</sup> Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1984, 419:

<sup>22</sup> R. Feydit, *Considérations sur l'alphabet de saint Mesrop*, p. 33.

<sup>23</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 39:

<sup>24</sup> Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 29:

Հայաստանի պարսկական մասում բոլոր հունարեն գրերն այրել էին, ում մոտ զգացվում էր հունականը, կարող էր կորստի մատնվել. «Անհրաժեշտ էր, ուրեմն, որ Մաշտոցը «ձևափոխի» հունական տառերը՝ դրանք պարսկիների աչքերին անձանաչելի դարձնելու համար»<sup>25</sup>:

Ֆեյդին բերում է հունական տառերի փոփոխության հետևյալ աղյուսակը.

CURSIVE GRECQUE	FORME DE TRANSITION	ALPHABET ARMÉNIEN		CURSIVE GRECQUE	FORME DE TRANSITION	ALPHABET ARMÉNIEN		CURSIVE GRECQUE	FORME DE TRANSITION	ALPHABET ARMÉNIEN
α α	α	Ա Ա		θ	θ θ	Թ Թ		π	π π	Պ Պ
β	β	Բ Բ		ι		Ի		ρ	ρ ρ	Ր Ր
γ	γ γ	Գ Գ		χ κ	Կ Կ	Կ Կ		σ	σ σ	Ս Ս
δ	γ δ	Դ Դ		λ λ	Լ Լ	Լ Լ		τ	τ τ	Տ Տ
ε ε	ε ε	Ե Ե		μ	Մ Մ	Մ Մ		ս		Ւ Ւ
ζ	ζ	Զ Զ		ν	Ն Ն	Ն Ն		φ	Փ Փ	Փ Փ
η	η	Ե Ե		օ	Օ Օ	Ո Ո				Ք Ք Ք Ք

Նա մանրամասն բացատրում է իր բերած աղյուսակի իմաստը: Ֆ. Ֆեյդիի գրքի 42 էջից մինչև 212-ը՝ մինչև «Եղրակացություն» բաժինն, ամբողջովին լեզվաբանական հետազոտություն է՝ նվիրված հայերենի փոփոխություններին՝ կապված արմատների, հնդեվրոպական մայր լեզվի, գրաբարի, բարբառների և ժամանակակից հայերենի հետ:

Ֆեյդին ասում է, որ իր հետազոտությունը Մաշտոցյան այրութենի շուրջ երբեմն հանդեցնում է վարկածների: Նա համոզված է, որ այրութենը ստեղծելիս Մաշտոցը ի նկատի է ունեցել ոչ միայն գրական լեզուն, այլև բարբառները: Հայագետը փորձում է մի գծապատկեր կազմել հայերենի համար շատ սովորական վարդապետ բառի համար: Այդ գծապատկերի յուրաքանչյուր տողի հորիզոնական ընթերցումը ներկայացնում է բառի բարբառային արտասանությունը: Առաջին տողը գրական հայերենով է:

<sup>25</sup> F. Feydit, Considerations sur l'alphabet de saint Mesrop, p. 35.

Վ	ա	ռ	դ	ա	պ	ե	տ
v	a	r	d	a	p	e	t
	â	z	t	â	b	é	d
	ä	s	t'	ä	b'	yé	d'
	é	y	d'	é	p'	yé	t'
	ô	zéro	ty	ô	by	i	dy
		r	dy	e	py		ty

Բազում և բազմատեսակ լեզվաբանական և հնչյունաբանական քննություններից հետո Ֆրեղերիկ Ֆեյդին գրքի վերջում գրված եզրակացության մեջ ասում է, որ Մեսրոպ Մաշտոցն իր առջև խնդիր էր դրել ստեղծել մի այնպիսի այրութեն, որ յուրաքանչյուրին հնարավորություն տա նվազագույն ջանքերով կարդալ ու գրել հայերեն. «Եվ այս խնդիրը նա լուծել է հոյակապորեն. ըստ որում 1500 տարի հետո ուղղագրական դժվարությունները մնացել են և չնայած լեզվի էվոլյուցիային՝ ուղղագրական դժվարությունները մնացել են նվազագույն»<sup>26</sup>:

Մաշտոցի և նրա այրութենի մասին հիշատակում կա նաև Ժ.դը Մորգանի «Essai sur les nationalités» («Ուրվագիծ ազգությունների մասին») գրքում: Նա ասում է, թե հայերը մինչև մեր թվարկության հին - գերորդ դարը գիր չեն ունեցել. «Անդրկովկասում՝ Արարատի երկրում, որպես կրոնական լեզու օգտագործում էին ասորերենը (խոսքը քրիս - տոննեության ընդունումից հետո եղած ժամանակահատվածի մասին է - Ա.Դ.), պահավերենը և հունարենը ընթացիկ փաստաթղթերի համար էին: Նա խոսում է Հեթանոսական անցյալի մասին ըստ Մ.Խորենացու «Հայոց պատմության», «Պատմական հիշողությունները, որոնք փոխանցվել են բանավոր ձևով շատ արագ վերածվել են առասպելների և լեզենդների: Դրանք ավանդություններ են, որոնք վերարտադրել են հետագա պատմիչները, դրանց մեջ առաջինը Մովսես Խորենացին է, որ խոսում է ցեղի հերոսի՝ Հայկի մասին, որը գլուխ չխոնարհեց Բելի լծի առջև. Բարելոնյան բոնակալը մեծ զորքով զալիս է Հայկի վրա, իր մարդկանցով կովում Հայկի հետ, որը հզոր նետով սպանում է նրան, ցրում նրա բանակը և հաստատում է Հայոց հայրենիքի անկախու-

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 216:

թյունը»<sup>27</sup>: Ժ.Մորգանը հատուկ դայրույթով է խոսում մահմեղական-ների վայրագությունների մասին և ասում է, թե Հայաստանի փրկված հոգեսր գանձերը և պատմական փաստաթղթերը պահպամ են Սուրբ Էջմիածնի մայրական ծոցում: Նա նշում է Հայ ժողովրդի ուսումնա-տենչությունը. «Հայ զյուղերում հոգեսրականները երեխաններին սո-վորեցնում են Հայոց լեզուն: Այս գպրոցներում, որոնք լի են կայտառ տղաներով ու աղջիկներով... սովորեցնում են կարդալ Հեղելով, ինչպես սովորեցրել է սուրբ Մեսրոպը մեր թվարկության առաջին դարե-րում»<sup>28</sup>:

---

<sup>27</sup> **J. de Morgan**, *Essai sur les nationalités*, Paris – Nancy, 1917, 55.

<sup>28</sup> Նույն անդում, էջ 73:

## ԳԼՈՒԽ Դ

### Ֆ. ՖԵԹԻԻԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### ա) Ֆ. ՖԵԹԻԻՆ ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ ՄԱՍԻՆ

Երիտասարդ Ֆրեղերիկ Ֆեյդիի հայագիտական առաջին ուսումնասիրություններից է Հեթում պատմիչի պատմության վերաբերյալ բանախոսությունը, որը նա կարդացել է 1938 թվականի մարտին Փարիզի Հայ երիտասարդների միության հավաքին և այն ընթերցել է Հայերենով: Այս բանախոսությունը մեկ տարի անց հրատարակել է Հայ Հին և նոր գրականության, Հայ մշակույթի, Հայ ժողովրդի պատմության մեծ գիտակ և երախտավոր Արշակ Զոպանյանը «Անահիտ» մատենաշարի թիվ 2-ում<sup>1</sup>: Արշակ Զոպանյանն իր առաջարարանում կարևոր փաստեր է Հաղորդում այդ բանախոսության կազմակերպման առիթի, ինչպես նաև Հեթում պատմիչի վերաբերյալ:

Պարզվում է, որ բանախոսությունն ունկնդրելու եկածներից շատերն առաջին անգամ են լսել Հեթում պատմիչի անունը և նույնիսկ չեն էլ իմացել, թե Կիլիկյան Հայ թագավորության ժամանակահատվածում Հայերն ունեցել են մի այլպիսի պատմիչ, որի գործը միջազգային արժեք է ստացել և թարգմանվել է մի շարք եվրոպական լեզուներով, ու եվրոպայում այն հոչակավոր էր նույնքան, որքան Մարկո Պոլոյի գիրքը<sup>2</sup>:

Ա. Զոպանյանը բնութագրում է նախ Հեթում պատմիչի քաղաքական վարքագիծն ու հայանպաստ նպատակները: Պարզվում է, որ բանախոսությանը ներկա այն անձիք, որոնք գիտեին Հեթումի պատմիչ լինելու մասին, չգիտեին, թե նա ինչի մասին է գրել և երբ: Եվ Զոպանյանն ընթերցողին մատուցում է առաջնահերթ գիտելիքներ այդ պատ-

<sup>1</sup> Հեթում պատմիչ, հեղինակ՝ «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհ» գրքին, գրեց Ֆրենտերիկ Ֆեյդի, Յառաջարան Արշակ Զոպաննեանի, Պատկերազարդուած Փարիզի Ազգային Մատենադարանի երկու հին ձևուագիրներու մանրանկարներուն վերաբարութիւններով, Փարիզ, 1939, 26 էջ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 5:

միշի վերաբերյալ: Հեթումը Կիլիկիայի երկրորդ թագավորական գեր - ղաստանից էր, հմուտ ու գործունյա մի մտավորական, որի գիրքը թարգմանվել է լատիներեն, հոլանդերեն, խոալերեն, անգլերեն: Հեթումը ազգային - քաղաքական գործիչ էր, հետո հոգևորական դարձած, «ազգային - կրօնական դաստի մը առաքեալ», որը Կիպրոսում ֆրանսիական կաթոլիկ միաբանության անդամ է զառնում, հետո այցելում է Կղմես Ե պապին, նրան պատմում մահմեղականներով շրջապատված քրիստոնյաների վիճակի մասին և փորձում է համոզել, որ գեռսա հեթանոս թաթարներին ջանան դարձնել քրիստոնյա և նրանց թշնամանքը թուրքերի դեմ օգտագործելով, թաթարներին թեքեն քրիստոնյաների կողմը: Պարզվում է, որ Հեթում պատմիշի այս հեռատես ծրագիրը կարող էր ցանկալի արդյունք տալ, եթե խաչակիրները այդ ուղղությամբ ջանքեր թափեին: Այս երեսութի վերաբերյալ իր ծանրակշիռ եղրակացությունն ունի 20-րդ դարում ֆրանսիացի նշանավոր պատմաբանն, նաև հայագետ Ռենե Գրուսեն, որն իր «Պատմութիւն Խաչակրությանց» ստվարածավալ երկում խորին հարգանքով է խոսում Հեթում պատմիշի մասին և նրա երկից մեջբերումներ է կատարում: Չոպանյանը հիշում է, որ Հեթումի երկն առաջին անգամ ֆրանսերնով տպագրել է նշանավոր հայագետ Էդուարդ Դյուլորիեն, սակայն այդ հատորը վաղուց սպառված է: 1842-ին Վենետիկում Մկրտիչ Ավգերյանը հրատարակում է Հեթումի երկի լատիներեն բնագրից կատարված գրաբար թարգմանությունը, որը պակասավոր է: Այդ գրաբար հրատարակությունն էլ սպառված է: Նա ցավով նշում է, որ իրեն ժամանակակից մտավորականներից հատուկենու մարդիկ են ծանոթ Հեթումի երկին: Այդ հանգամանքն իրեն խիստ մտահոգել է, և ինքը դիմել է Մ.Ս.Դավիթ Բեկին, որպեսզի վերջինս Հեթումի գործի «աշխարհաբար հայերեն ամբողջական թարգմանությունը» պատրաստի և դրան կցի համապատասխան հետազոտությունը: Չոպանյանը նպատակ ուներ այդ ամենը տպագրել «Անահիտի» մեջ: Սակայն Դավիթ Բեկի մահը արգելք է դարձել այդ կարևոր մտահոգման իրականացմանը<sup>3</sup>: Չոպանյանը նույնը խնդրում է Ֆեյդիին. «...խնդրեցի համակրելի հայագէտէն, որ այդ բանախօսութեան նիւթ առնէ

<sup>3</sup> Դավիթ Բեկը (Մարտիրոս Սարգսյան) վախճանվել է Փարիզում 1938-ին: Եղել է բանասեր, լեզվաբան, թարգմանիչ: Սովորել է Սորբոնի համալսարանում: Աշխատակցել է «Հանրէս ամսօրեալ», «Բանասէր», «Revue des études arméniennes» ամսագրերին: Ուսումնասիրել է Լուսինյանների պատմությունը, Արարկիրի, Մարաշի բարբառները, հրատարակել բառարաններ, հայերենից ֆրանսերեն է թարգմանել Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը, հայոց ջարդերին վերաբերող աշխատություններ (տե՛ս Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, Հ. Ի, Երևան, 2005, էջ 341):

Հեթումը, որուն գործովը զիտէի, որ ինքն ալ արդէն հետաքրքրուած էր»<sup>4</sup>:

Առաջարանում վերստին տեսնում ենք Արշակ Զոպանյանի մտահոգությունը հայ ազգի արժանավոր զավակների հիշատակը հաջորդ սերունդների հիշողության մեջ պահպանելու խնդրում։ Նա Հեթում պատմիչին համարում է նախորդը Խսրայել Օրիների, Աշտարակեցիների, Վարժապետյանների և Խրիմյանների և չի մոռանում ավելացնել, թե նա եղել է միջազգային գնահատման արժանացած «առաջին հայ արմէքաւոր հեղինակը»։

Անշուշտ, Ֆեյդիի ուսումնասիրությունը հետագայում հմաք է դարձել ուրիշ հայագետների ու գիտնականների համար՝ Հեթում պատմիչի վերաբերյալ փաստեր քաղելու խնդրում։

Ֆեյդին զեկուցման սկզբում դնում է Հեթումի պատմության Փրանսերեն այն օրինակի խորագիրը, որն ինքն ուսումնասիրել է «La Fleur des Histoires de la Terre d'Orient» composée par le Frère Hayton, de l'ordre de Prémontré»։

Հատկապես նա կարևորում է Հեթումի երկում հաղորդված տեղեկությունները թաթարների վերաբերյալ, որոնք չափազանց շատ են հետաքրքրում եվրոպական գիտությանը։ Նրա կարծիքով Հեթումի ապրած ժամանակներում (XIII դարի վերջ, XIV դարի սկիզբ)<sup>5</sup> Փրանս-սերենը Եվրոպայի կարեսոր լեզուներից էր, ավելին «Փրանսա տիեզերքի մտաւորական մայրաքաղաքն էր եւ քրիստոնէական վերջին գրաւուելիք կեղրոնական հաստատութիւնը իրեն քաշելու վրայ էր. Պապութիւնը, որ Ավինեոն քաղաքը մէկ դար պիտի կենար, Կղեմէս Եղապէն սկսեալ»<sup>6</sup>։

Ֆեյդիի կարծիքով Հեթում պատմիչի գիրքը Փրանսիացիներին հայտնի դարձավ Մարլո Պոլոյի երկից հինգ տարի հետո։ Հեթումը

<sup>4</sup> Հեթում պատմիչ, հեղինակ «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհ», էջ 6:

<sup>5</sup> Հեթում պատմիչ – ծննդյան և մանկան թվականներն անհայտ, պատմագիր, պետական գործիչ։ Հեթումյանների իշխաններից և թագավորական տոհմից: 1294–1305 թթ. Հայոց սպարապետ։ Վարել է միշտարք հաղթական ճակատամարտեր հարևան մահեղական իշխանությունների գեմ: 1305–ին սպարապետությունը հանձնել է իր որդի Օշինին, ընդունել կաթողիկություն և մեկնել Կիպրոս՝ կրոնավորելու: 1307–ին Կղմես V պապի հանձնարարությամբ գրել է մոնղոլ-թաթարների պատմությունը: Երկը գրվել է միջնադարյան Փրանսերենով, ապա վերածվել լատիներենի, հետագայում թարգմանվել Փրանս-սերեն, խոալերեն և այլն: 1842–ին Մ.Ավգերյանը լատիներենից թարգմանել է գրաբար՝ կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արքեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական պետությունների (1096 – 1307-ի շրջանի) պատմությունից (տե՛ս Ով ով է, Հայեր, էջ 644):

<sup>6</sup> Հեթում պատմիչ, հեղինակ «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհ», էջ 7:

Ֆրանսիա է գնում որպես «Le Frère Hayton»: Նա Օշին իշխանի որդին էր, միշտ իր մեջ ունեցել էր ներքին մի պայքար՝ դառնալ հոգևորական ու ծառայել միայն Աստծուն, թե որպես զինվորական կատարել հայրենիքի նկատմամբ իր պարտքը: Նա Կոռիկոսի իշխանն էր, և նրա ժամանակ Կիլիկիան շրջապատված էր թշնամիներով, և պետք էր կովել նրանց գեմ: Հենց Հայաստանում խաղաղություն է հաստատվում, նա Կիլիկիան անոնազրություն է հոգևորական, և ետո իր հարգանքը Կղմես պապին հայտնելու համար մեկնում է Ֆրանսիա, այնուհետև հաստատվում Պուատիե քաղաքի վանքում: Հեթումն իր պատմությունը բանավոր պատմել է Nicolas Falcon անունով մի փանականի, որ Հեթումի պատումը գրառում է լատիներենի թարգմանելու նպատակով:

Nicolas Falcon-ը իր թարգմանությանը կցում է առաջարան, ուր ասվում է. «Այս գիրքը ես՝ Nicolas Falcon, նախ ֆրանսերէն օրինակեցի, ինչպես Հեթում եղայրը բերնուց կ'ըսէր, առանց նօթերու կամ օրինակի և ֆրանսերէնէ լատիներէնի թարգմանեցի: Եւ այս գիրքը իր ձեռքը ունեցաւ Նորին Սրբութիւն քահանայապետը մեր Տիրոջ 1307 թուականի օգոստոս ամսուն, փառք Աստուծոյ, Ամէն»<sup>7</sup>:

Պարզվում է, որ մեկ կամ երկու դար հետո մեկ ուրիշ վանական՝ Jehan le Long անունով, անտեղյակ ֆրանսերեն բնագրին, նորից լատիներենից ֆրանսերեն է թարգմանում Հեթումի գործը: Դրանից հետո Հեթումի երկը ստանում է նոր համբավ և արդեն տպագրվում է նոր վերնագրով՝ «L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nommé le grand Can»: Ֆեյդին տեղեկացնում է, որ Հեթումի գիրքը իտալերենից թարգմանվել է անգլերեն: 1842-ին Մկրտիչ Ավգերյանը այն թարգմանում է գրաբար՝ հարստացնելով հայ մատենագրությունը: Նա տեղեկացնում է նաև, որ Փարիզի ազգային մատենագրանն ունի Հեթումի երկի յոթ ֆրանսերեն և երկու լատիներեն ձեռագրեր: Սա նշանակում է՝ երկը մեծ հետաքրքրություն է առաջացրել և բազմացվել է ձեռագիր ձեռվ: Այդ ֆրանսերեն ձեռագրերից մի քանիքը շատ գեղեցիկ են: Նա ուշագրություն է հրավիրում մի կարևոր հանգամանքի վրա: Ֆրանսիացիները որեւէ ձեռագիր գրելիս կամ ընդօրինակելիս սովորություն չեն ունեցել հիշատակարան դնել իրենց գործի վերջում: Այդ սովորությունն ունեին Հույն և Հայ գրիչները: Դրա համար էլ դժվար է որոշել, թե ձեռագիրը ո՞ր թվականին է գրվել: Փարիզի ազգային մատենագրարանի թիվ 1255 ձեռագրում, որը կաշեկազմ է և հավանաբար գրված է 15-րդ դարում, Հեթումի պատմությունը զբաղեցնում է 150

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 9:

Էջ, նրան հետևում է «Աշխարհի երկիրներուն գիրքը» և Նիկողոս Եպապի շրջաբերականը՝ ուղղված թուրքերի դեմ: Այս վերջին գործը հավելել են 17-րդ դարում:

Այս ձեռագիրն ունի հիանալի մանրանկարներ: Մանրանկարները պատկերում են Հեթումին, որը պրեմնստրացի հոգևորականի զգեստ է հագած: Նա ծնրադրել է Կղմես V պապի առաջ և նրան է նվիրում իր պատմությունը: Սա Հեթումի երկը ներկայացնող ձեռագրի առաջին նկարն է: Երկրորդ նկարը պատկերում է Պարսից արքա Խոսրովի խնջույքը. երկու թագավորներ ուտելիք են մատուցում կայսրին, որը նստած է կայսրուհու և թագաժառանգի մեջտեղում: Կայսրը, սեղանի առջև նստած, ունկնդրում է երկու երաժիշտների նվազը:

Երրորդ նկարն, ըստ Ֆեյդիի բարդ է, այն պատկերում է Զինգիդ խանի տեսիլքը, նրա հարսանիքը և թագավորական իդիլիան:

Չորրորդ մանրանկարը ձեռագրում պակասում է: Ֆեյդին հրատարակում է այլ երկի պատկանող մի նկար, որն, անշուշտ, նույն մանրանկարչի գործն է:

Այնուհետև նա նկարագրում է թիվ 12201 ձեռագիրը: Նրանում զետեղված են երեք գործեր: Առաջինը Հեթումի պատմությունն է, նրան հետևում է «Աշխարհի բոլոր երկիրներուն գիրքը» (լատիներեն) և Լենկ Թիմուրի պատմությունը: Զեռագրի 130 էջերում զետեղված է Հեթումի պատմությունը: Այս ձեռագիրը նման է նախորդին, միայն թե ավելի թանկագին է: Այն 14-րդ դարի վերջին քառորդին է գրված և հայտնի է, որ 1401-ին Philip le Hardi-ն<sup>8</sup> այն գնել է Հակոբ Ragond-ից: Այս ձեռագրի մանրանկարները գեղարվեստի խևական գլուխգործոցներ են: Նրանցում իշխում են կապույտը և ուկեզույնը:

Այստեղ էլ, ինչպես թիվ 1255 ձեռագրում, նկարները զետեղված են գլուխների սկզբում: Առաջինը ներկայացնում է Հեթումին, որն իր գիրքը նվիրում է պապին (պատկեր 5): Երկրորդը պատկերում է Խոսրովի խնջույքը: Այստեղ երաժիշտները չորսն են և հագած են տարրեր զգեստներ (պատկեր 6): Երրորդը Զինգիդ խանի տեսիլքն է (պատկեր 7):

Չորրորդ մանրանկարը, որը պակասում էր նախորդ ձեռագրում, ներկայացնում է Հեթումին, որը պապին աղերսում է նոր խաչակրաց արշավանք սկսելու համար (պատկեր 8):

Ֆեյդին երկու ձեռագրերի նկարները կատարելապես բաղդատելու

<sup>8</sup> Ֆ. Ֆեյդին իր աշխատություններում հաճախ անունները դնում է ոչ հայերեն (առե՛ս նույն տեղում, էջ 10 և այլուր):

Համար հրատարակում է զարդարված մի էջ, որը համապատասխանում է չորրորդ Նկարին (պատկեր 9):

Նույն ձեռագրից նա գետեղում է նաև այն մանրանկարը, որով սկսվում է Լենկ թիմուրի պատմությունը, և որը ցուցադրում է միքաղաքի պաշարում (պատկեր 10): Հայագետը հիշատակում է նաև թիվ 2810 ձեռագիրը, որը լի է մանրանկարներով: Նրա կարծիքով այդ մանրանկարները պակաս կատարյալ են և պատկանում են «այլ դպրոցի»: Այս ձեռագրում կան ինը գործեր, նրանց թվում նաև Մարկո Պոլոյի գիրքը: Հեթումի պատմությանը քիչ տեղ է տրված, և այն շատ թերի է: Ձեռագիրը ընդօրինակվել է 1400-ականներին՝ Jean sans Peur Բուրգոնի դուքսի համար: Նկարներից մեկում պատկերված է մի կրոնավոր, որը դուքսին գիրք է նվիրում: Կարծում են, թե այդ նկարում պատկերված է Հեթումը: Սակայն Ֆեղին հեշտությամբ հերքում է այդ կարծիքը, որով հետև դուքսը ծնվել է Հեթումի վախճանվելուց շատ տարիներ անց: Հայագետը հպանցիկ խոսում է նաև թիվ 886 ձեռագրի մասին և անտեսում մյուս ձեռագրերը, որոնք բոլորովին գուրկ են գեղարվեստական արժեքից, հետեւաբար անիմաստ է համարում դրանց նկարագրելը:

Ֆեղին բացատրում է Հեթումի պատմություն կառուցվածքը: Պատմությունը բաժանված է չորս մասի: Առաջին մասը ներկայացնում է Արևելքի տասնչորս իշխանություններն ու ժողովուրդներին:

Երկրորդ մասը նվիրված է այն կայսրերին և թագավորներին, որոնք տիրել են Ասիայում, սկսած Հիսուս Քրիստոսի ծնունդից, և նկարագրում է նրանց գործերը:

Երրորդ մասն ամբողջովին նվիրված է թաթարների պատմությանը, ներկայացնում է, թե նրանք ինչպես եկան իշխանության և քանի երկրներից է բաղկացած նրանց խանությունը:

Շատ հետաքրքիր է Հեթումի երկի չորրորդ հատվածը: Այն նախագիծ է սուրբ երկիր կատարելիք խաչակրաց արշավանքի: Ծրագրի հեղինակ Հեթումը հրահանգում է, թե խաչակրներն ինչպես պետք է սկսեն և ավարտեն իրենց ազատագրական գործը:

Ֆեղին նկատում է, որ առաջին մասում, ուր Հեթումը խոսում է Ասիայի թագավորների ու պետությունների մասին, Հայաստանի բաժինը շատ համառոտ է: Հեթումը, լինելով Հայ, Հայաստանի մասին ավելի կարճ է խոսում քան Հարևան Վրաստանի: Նա դրա պատճառը տեսնում է Հեթումի՝ ժամանակի գրական ոճին խիստ հետեւելու մեջ: Պատմիչը խոսում է Արևելքի տասնչորս երկրների մասին և ջանում է բոլորին նվիրել գրեթե նույնաչափ հատվածներ:

Ֆեյդին մեջքերում է Հայաստանին վերաբերող հատվածը՝ զուգադիր տեսնելով հին Փրանսերենը: Սա արվում է հին Փրանսերենի ոճը ներկայացնելու համար, որովհետև շարունակության մեջ տրվում են միայն Հայերեն հատվածները: Բերենք մի կտոր համեմատական հատվածից՝

### Թրանսերենը

«Au Royaume de Arménie sont quatre royaumes; un seul seigneur en tient la seigneurie. Le long de la Terre d'Arménie commence du règne de Perse et s'étend par Occident jusques au Royaume de Turquie. Le large d'Arménie devers Occident commence de la cité merveilleuse qui est appelée Porte de Fer, laquelle fist fermer le Roi Alexandre pour les diverses nations de gens qui habitent en Asie la Profonde lesquels il ne voulait que passassent en Asie la Mineure sans commandement et cette cité est fermée en un détroit de mer Caspiez (sic) et touche la grande montagne de Cucas (ou Coquas =Caucase). Le large du Royaume d'Arménie de la dite cité s'étend jusques au règne de Médie. Au royaume d'Arménie sont plusieurs grandes cités riches et entre toutes Tauris est la plus renommée. En la terre d'Arménie sont grandes montagnes, larges planures et fleuves grands et lacs d'eaux douces et salées où il y a grande abundance de bons poissons. Les gens qui habitent la terre d'Arménie sont nommés à divers noms selon les contrées qu'ils habitent et sont à pied et à cheval bonnes gens d'armes. De cheval et de vesture suivent la manière des Tartares, car ils ont été longtemps sous leur sujetion (domination). Ils ont diverses lettres et les unes sont dites armenoises, les autres arien (aloen).

En Arménie est le plus haut mont qui soit au monde qui est nommé Ararat (Harath). Et en la summité de celui mont arriva l'arche de Noë après le déluge. Nul homme ne peut monter en celle montagne par la grande abundance de la noif (neige) qui est d'hiver et d'été, mais tout à-dis en la summité appert une grande chose noire que l'on dit être l'arche de Noë, et en ce croient tous.»

### Հայերենը

«Հայաստանի թագաւորութեան մէջ չորս թագաւորութիւն կայ, բայց միակ իշխան մը իշխանութիւն ունի: Հայաստան աշխարհին երկայնութիւնը կը սկսի Պարսկաստանի թագաւորութեանէն եւ կը տարածուի դէպի Արեւմուտք մինչեւ Թուրքիոյ թագաւորութիւնը: Հայաստանի լայնութիւնը դէպի Արեւմուտք կը սկսի այս չքեղ քաղաքէն որ կ'անուանուի Երկաթէ Դրունք, զոր գոյցել տուաւ Աղեքսանդր թագաւոր՝ Խորունկ Ասիա բնակող զանազան ազգերուն համար, որ չէր ուզեր Փօքր Ասիա մտնեն առանց իր Հրամանի, եւ այս քաղաքը Կասպից Ծովուն մէկ նեղուցին մէջ գոցուած է եւ կից է Կովկաս մեծ լեռնին: Հայաստանի թագաւորութեան լայնութիւնը վերոյիշեալ քաղաքէն կ'երկարի մինչեւ Մարաց թագաւորութիւնը: Հայաստանի թագաւորութեան մէջ կան բազմաթիւ մեծ եւ հարուստ քաղաքներ, ասոնցմէ ամենէն համբաւաւորը Դաւրէմնէ: Հայաստանի թագաւորութեանը մէջ կան բարձր լեռներ, լայն Հովիտներ եւ մեծ գետեր եւ անուշ կամ աղի ջուրով լիմեր, համով ձկներու մեծ առատութեամբ: Հայաստան աշխարհի մէջ բնակող մարդիկը զանազան անուններ կը կրեն՝ իրնեց բնակած գաւառներուն համեմատ, եւ՝ հետիոտն կամ

Հեծեալ՝ քաջ զինուոր են; Զիու եւ Հագուատի նկատմամբ, Թաթարներուն սովորութեան կը Հետեւին, որովհետեւ երկայն ժամանակ անոնց իշխանութեան տակ մնացած են; Զանազան տեսակ գիր ունին, մէկ քանի արմէնան կ'ըսուին, միաները արիական (կամ ալոյէն): Հայաստանի մէջ կը գտնուի աշխարհի ամենաբարձր լեռը որ կը կոչուի Այրարատ. եւ այս լերան գագաթին վրայ իջաւ Նոյի տապանը ջրհեղեղէն ետքը: Ոչ ոք կրնայ այս լեռն ի վեր ելել՝ ձիւնին պատճառով որ ամառ ձմեռ կը մնայ հոն, բայց մինչեւ այսօր գագաթին վրայ կ'ըսուի թէ Նոյի տապանն է, եւ ամենքն ալ ատոր կը Հաւատան:»

Հեթումը, ինչպես նկատում է Ֆեյդին, Հիացմունքով է խոսում Զինաստանի մասին: Նա այդ երկիրը Համարում է աշխարհի ամենահարուստ և ազնիվ թագավորությունը: Նրա կարծիքով չինացի թե կանայք և թե տղամարդիկ գեղեցիկ են, բայց ունեն փոքրիկ աչքեր, և տղամարդիկ՝ քիչ մորուք: Նրանք ունեն իրենց գիրը, և նրանց լեզուն շատ տարրեր է աշխարհի մյուս լեզուներից: Զինացիները տարրեր Հավատը ունեն. ոմանք պաշտում են արեգակը, ոմանք լուսինը, ոմանք աստղերը, ջուրը, ծառերը, ոմանք եղներին, որովհետեւ նրանց միջոցով վարում են Հողը: Հեթումն ասում է, թե որոշ չինացիներ այնքան Հետամնաց են, որ բոլորովին Հավատք չունեն, «այլ կենդանիներու պէս կ'ապրին»<sup>9</sup>:

Հեթումը նկատում է չինացիների առավելությունը գիտական Հայտնագործումների առումով: Նրանք ասում են, թե իրենք տեսնում են երկու աչքով, մինչդեռ լատինացիները մեկ, իսկ մյուս ազգերն ընդհանրապես կույր են: Հայ պատմիչը զարմացած է Զինաստանից բերվող արվեստի առարկաների վարպետության վրա: Զինացիները կորովի զինվորներ չեն, սակայն ունեն զենքեր ու մեքենաներ, որ ուրիշ ազգերը չունեն: Ֆեյդիի կարծիքով խոսքն այստեղ վառողի և թնդանոթի մասին է: Ըստ Հեթումի՝ չինացիները գործածում են թղթադրամ, որը նույնպես մյուս ժողովուրդները չունեն:

Հեթումի պատմության երկրորդ գիրքը սկսվում է Ղոկասի Ավե - տարանի Համեմատ. «Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու»<sup>10</sup>: Հեթումի մոտ կար - դում ենք. «Ա.Ղոկասու Աւետարանին մէջ ըսուածին Համեմատ՝ Յի - սուս Քրիստոսի Ս.Ծննդեան ժամանակը՝ Օգոստոս կայսը ամբողջ աշխարհիս իշխանութիւնն ունէր: Յետոյ պատահեցաւ, որ պարսիկ թագաւոր մը՝ Խոսրով անունով, ապստամբեցաւ Հոռմի կայսրին դէմ եւ ինքզինքը անուանել տուաւ Ասիոյ կայսր»<sup>11</sup>: Հեթումն ասում է, որ

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 14:

<sup>10</sup> Ղոկաս, Բ, 1-2:

<sup>11</sup> Հեթում պատմիչ, «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհին», էջ 16:

պարսից Խոսրով արքան Պարսկաստանի, մարերի, հայերի և քաղեացիների իշխանությունները գրավեց ու մոտ երեք դար այդ տարածքներում պարսից թագավորությունն ուներ գերիշխանություն: Այնուհետև մահմեղականները պարսիկների ձեռքից խլեցին այդ գերիշխանությունը: Հեթումը նկարագրում է, թե ինչպես Ք.ծ. 632-ին մահմեղականները գրավում են Սիրիան, հուներից խլում են Դամաս - կոս շքեղ քաղաքը, հետո պաշարում են Անտիոքը:

Ֆեղին նկատում է, որ Հեթումի Արևելյան պատմությունն ամբողջ Ասիային չի վերաբերում, այլ նրա՝ հին քաղաքակրթություն ունեցող երկրներին:

Հեթումի պատմության ամենածավալուն մասը երրորդ հատվածն է, որը ներկայացնում է թաթարների պատմությունը, հենց այդ պատճառով էլ երկը հաճախ կոչել են «Թաթարաց պատմութիւն»: Ըստ Ֆեղիի, Հեթումի պատմության համար ամենից հարմար խորագիրը «Մաղիկ Արևելեան Երկիրներու Պատմութեանց» ձևն է, սակայն եվրոպացիները, որոնք քիչ թե շատ ծանոթ էին Արևելքի հին քաղաքակրթություն ունեցող երկրներին, շատ ավելի հետաքրքրություն էին ցուցաբերում Ասիայի խորքերից ելած վայրենի ու անծանոթ թաթարների նկատմամբ: Այդ է պատճառը, որ զրիչները զրքի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար, այն կոչեցին թաթարների պատմություն և նույնիսկ անտեսեցին զրքի վերջին՝ խաչակրներին նվիրված գլուխը: Թե ինչու Հեթումը այդքան մեծ տեղ է տվել թաթարների պատմությանը, Ֆեղիի կարծիքով խնդիրը բացատրվում է Կիլի - կիայի պատմական դեպքերով: Կիլիկիայի Հեթում Առաջին թագավորը Իկոնիայի սուլթանի իշխանության տակ էր և բնավ օգնություն չէր ակնկալում եվրոպական քրիստոնյա երկրներից: Ահա այդ ժամանակ հեռավոր Ասիայի խորքերից ելնում են թաթարները և հրով ու սրով ավերում են Փոքր Ասիան, այդ թվում Իկոնիայի թուրքական տերությունը ևս: Հեթում Ա.-ն դիմում է դիվանագիտության, նա դաշնակցում է իր թշնամու թշնամու հետ և վրեժ է լուծում Իկոնիայի թուրք սուլ - թանից: Հեթումի քաղաքականությունը շարունակում են նրա հաջորդները՝ դաշնակցելով թաթարներին՝ նրանք պաշտպանվում են Եգիպտոսի մամլուկներից: Պատմությունից հայտնի է, որ 1299-ին Հեթում Բ թագավորը գերի է վերցնում Դամասկոսի սուլթանին և նրան որպես նվեր ուղարկում է Ղազան խանին: Երկրորդ պատճառն այն է, որ Հեթումը կամեցել է ներկայացնել հայ - թաթարական հարա - բերությունները: Բազում գլուխներ նվիրված են հենց այս նյութին: Նա մանրամասն նկարագրում է Հեթում Ա -ի Մանգու խանին այցելու-

թյունը; Հետաքրքիր է, որ թաթարական խանը այնքան է հուզվում Հեթում Ա-ի այցելությունից, որ նույնիսկ խոստանում է ընդունել քրիստոնեականը իր և իր ժողովրդի համար. «Քեզի՛ Հայոց թագաւոր՝, կը պատասխանենք, թէ բոլոր խնդրուածքդ բարով կատարել կուտանք; Եւ ես՝ նախ, որ Աստուծոյ չնորհիվ իշխան եմ, պիտի մկրտուիմ եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատքին պիտի հաւատամ եւ արքունիքս ամբողջ մկրտել պիտի տամ, որ մկրտուին եւ քրիստոնէական հաւատքն ընդունին; Բայց բոնաբար պիտի չընեմ, որովհետեւ հաւատքը բռնութիւն չուզեր: Երկրորդ խնդրանքին կը պատասխանեմ, որ յաւիտենական խաղաղութիւն եւ բարեկամութիւն կ'ուզենք քրիստոնեաներուն հետ: Քրիստոնեաներուն եկեղեցիներուն եւ քահանաներուն պիտի չանդուրժենք, որ վնաս մը ըլլայ...: Իսկ Ս.Երկրին մասին կ'ըսեմ, թէ ամենայն սիրով Ս.Երկրը ետ պիտի գրաւենք»<sup>12</sup>: Ֆեյդիի կարծիքով Հեթում Ա-ն այն աստիճան դիմանագիտական հաղթանակ է տարել, որ թաթարական խանը նույնիսկ քրիստոնեականը է ընդունել: Հայագետը մատնացուց է անում Հեթումի պատմության մեջ եղած Հայ-թաթարական հարաբերությունների մեկ այլ ուշագրավ կտոր: Ապաղա խանը գրավում է իր ղեմ ապստամբած բոլոր երկրները, այդ թվում նաև Թուրքիան: Նա իր մոտ է կանչում Հայոց արքային և նրան առաջարկում է դառնալ նաև Թուրքիայի թագավորը: Հայոց թագավորը հեռատեսորեն հրաժարվում է այդ առաջարկից, սակայն Ապաղա խանին խորհուրդ է տալիս այդ իշխանությունը չտալ որևէ մահմեղականի:

Ֆեյդին նկատում է, որ պատմական փաստեր հաղորդելուց զատ Հեթումի երկը ունի նաև գրական հատվածներ, որոնց նպատակն է եղել ցրել ընթերցողի ուշադրությունը ծանր քաղաքական դեպքերից և առավել հերիաթային պատումներով հետաքրքրել նրան: Դրանցից մեկը համարում է Զինգիդ խանի մասին պատմող կտորը, ուր թեել կան պատերազմական նկարագրեր, սակայն գերիշխում է վիպական պատումը: Այն, իրոք, խիստ հետաքրքիր է: Զինգիդ խանը գրավում է բաղմաթիվ երկրներ և երր ձեռնարկում է մտնել ու զավթել հերթական երկրը, նրան միշտ այդ հաջողվում է: Մի օր Զինգիդ խանը գնում էր փոքրաթիվ զինակիրներով շրջապատված և հանկարծ հանդիպում է թշնամու մեծաքանակ բանակի, որի զինվորներն անմիջապես հարձակվում են նրանց վրա: Զինգիդ խանը խիզախորեն պաշտպանվում է, բայց նրա ձին սատկում է, ու խանի զինվորներին թվում է, թէ իրենց զորագրը պիտի բռնվի, փոքրովի ձևով սկսում են փախչել: Թշնամին

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 18:

Հետապնդում է նրանց, առանց նկատելու հետիոտն մնացած խանին: Խանը թաքնվում է մացառների մեջ: Թշնամիները սկսում են փնտրել նրան, տեսնելով մացառների վրա կանգնած թուչունին, մտածում են. «Այս թուչունը այնտեղ պիտի չկենար, եթե մարդ ըլլար մացառին մէջ»,<sup>13</sup> և թողնում հեռանում են: Հեթում պատմիչը բացատրում է, թե այդ գեպից հետո թաթարները իրենց գլխի վրա՝ ի հիշատակ այդ թուչունի, որ փրկել է Զինգիդ խանի կյանքը, դնում են փետուր:

Հետաքրքիր է, որ Հեթումի երկը վիպական նոր զրուցների է վերածվում նաև այլազգի պատմիչների երկերում: Այդ մասին հետաքրքիր փաստ է ներկայացնում Հրազդա Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում»: Ֆլորենցիացի պատմիչ Giovannոi Villani-ին խոսում է Հեթում պատմիչի մասին ու նրան դարձնում Հայոց թագավորի որդի և պատմում է հետեւալ զրուցը: Թաթարների Ղազան խանը, երբ պետության գլուխ է անցնում, կամենում է ամուսնանալ ամենից գեղեցիկ աղջկա հետ՝ առանց նկատի ունենալու նրա հարստությունը կամ որեւէ այլ հանգամանք: Դեսպանները սկսում են ողջ Արևելքում որոնել այդ աղջկան և վերջապես գտնում են Հայոց թագավորի աղջկան, որն իր գեղեցկությամբ և առաքինությամբ ամենակատարյալն էր: Ղազան խանի զեսպանները խնդրում են աղջկա ձեռքը: Սակայն աղջիկն ասում է, թե կկատարի իր հոր կամքը, միայն թե ամուսնանալուց հետո իրեն թույլ տրվի մնալ քրիստոնյա: Ամուսինը կարող է մնալ Հեթանոս: Դեսպաններն ընդունում են այդ առաջարկը, և արքայադուստրը մեծ շքախմբով՝ իշխաններով ու եպիսկոպոսներով մեկնում է: Շքախմբի մեջ էր նաև Հեթում պատմիչը, որն ուղեկցում էր իր քրոջը: Ամուսնությունից հետո հայ թագուհին ծնում է մի երեխա, որն իսկական հրեշ էր և չուներ ոչինչ մարդկային: Խանի իմաստունները գտնում են, որ թագուհին պոռնիկ է և երեխայի հետ պետք է այրվի: Թագուհին իր համար խնդրում է խոստովանանք և հաղորդություն, իսկ երեխայի համար՝ մկրտություն: Հենց որ երեխային մկրտում են, նա դառնում է ամենագեղեցիկը, և մոր անմեղությունը հայտնի է դառնում: Ղազան խանը կազմակերպում է մեծամեծ հանդեսներ, իսկ ինքն ու իր ժողովուրդը դառնում են քրիստոնյա:<sup>14</sup>

Ֆեյդին վերստին կրկնում է, թե Հեթում պատմիչը թաթարների մասին բարեկամաբար է խոսում, որովհետեւ վերջիններս դաշնակցել էին հայերին, բացի այդ, Եվրոպայում թաթարների մասին ոչինչ չգի-

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Հը. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 74-75:

տեին, և Հեթումի գիրքը չափազանց հետաքրքիր էր Եվրոպայի իշխող դասի համար:

Ֆեղին Հեթումի պատմության մեջ տեսնում է Հայրենասեր մատենագրին, որը դիվանագիտական ու փաստաբանական հմտությամբ պապին ներկայացնում է Հայրենիքի ճշմարիտ կացությունը, մյուս կողմից, որպես իսկական հոգեսորական, երազում է Սուրբ Երկիրը և Հիսուսի Սուրբ Գերեզմանն ազատագրել այլաղավաններից: Փաստորեն Հեթումի պատմությունը դառնում է մի համոզիչ աղաչանք՝ ուղղված պապին, որպեսզի վերջինս սկսեր նոր խաչակրաց արշավանք. «Բայց Հեթում պատմիչ չէ միայն. Հիանալի փաստաբան մըն է, որ գիտէ կացութիւնը ներկայացնել, հաւատարիմ եւ անկեղծ կրօնաւոր մըն է, որ չի կրնար հանդուրժել, որ Ս.Երկիրը եւ Ս.Գերեզմանը այլակրօններուն ձեռքն ըլլան, համոզիչ քարոզիչ մըն է, որ Պապին անգամ կը համարձակի աղաչանք մատուցանել եւ քարոզել, թունդ Հայրենասէր մըն է, որ բոլոր քրիստոնեայ տէրութեանց հետ միասին կ'ուզէ իր Հայրենիքը ազատել, խոհեմ գօրավար մըն է, որ նոյն խնամքով կը պատրաստէ Խաչակիրներուն պատերազմական արշաւանքը, ինչպէս պատրաստեր է համոզումք»<sup>15</sup>:

Հայագետի կարծիքով Հեթումի երկի առաջին երեք մասերը կայուն մի հիմք են, որի վրա կանգնեցվում է երկի գագաթը՝ խաչակրաց արշավանքի ծրագիրը: Այնուհետև Ֆեղին Հեթումի ծրագրի սկիզբը բերում է ըստ Մկրտիչ Ավգերյանի գրաբար թարգմանության: Որպես քրիստոնյա մտածող Հեթումը պետք է արդարացներ նաև խաչակրաց արշավանքը սկսելու անհրաժեշտությունը, չէ՞ որ քրիստոնեական կրոնը դեմ է պատերազմի և բռնության: Մյուս կողմից Հեթումը առաջարկում է չորս նախապայմաններ, որոնք պիտի նպաստեին խաչակրաց արշավանքի հաջողությանը՝ 1) այդ պատերազմը արդարացնի է, 2) անհրաժեշտ է ձեռնարկել այն, 3) անհրաժեշտ է պատերազմը սկսելուց առաջ հետազոտել թշնամու վիճակն ու հնարավորությունները, 4) պատերազմն անհրաժեշտ է սկսել ճիշտ ու հարմար ժամանակ. «Բանն պահանջէ, զի՞ որ կամիցի սկսանել զպատերազմ, ունիցի զչորս պայմանս զայնոսիկ. նախ՝ զիրաւացի պատճառս, երկրորդ՝ զկարեւորս ի պէտս սկսանելոյ եւ յանգ հանելոյ զպատերազմ, երրորդ՝ պարտի հետազոտել զվիճակ եւ զկարողութիւն թշնամւոյն, չորրորդ՝ պարտի սկիզբն առնել մարտի ի դէպ ժամու:

<sup>15</sup> Հեթում պատմիչ, «Ծաղիկ պատմութեանց արեւելեան աշխարհին», էջ 20:

Քրիստոնեայք վասն գրաւելոյ զՍուրբ Երկիր՝ ունին զարդարացի պատճառ, վասն զի է ժառանգութիւն Քրիստոսի եւ առաջինք մեր բազում ինչ ստիպեցան կրել ի Սարակինոսաց եւ ունին բաւական զօրութիւն, միայն թէ միաբան մխեսցին ի կոփւ»<sup>16</sup>:

Հեթումը Սուրբ Երկիրն ազատելը դիտում է որպես Աստծու պատվեր, որովհետև բոլոր այն երկրներում, ուր իշխում են քրիստոնյա թագավորները, խաղաղություն է, որովհետև այլակրոնների սանձագերծած պատերազմներ չկան:

Որպես ուազմավարական գործի հմուտ կազմակերպիչ՝ Հեթումը նույնիսկ գործնական զինվորական ցուցումներ է տալիս ապագա խաչակիրներին: Նախ անհրաժեշտ է հազար հեծելազորից բաղկացած գունդ ուղարկել, նաև երեք հազար հետևակային, որոնք տասը նավով պիտի հասնեն Կիպրոս կղզին կամ Կիլիկիա: Միաժամանակ դեսպաններ պիտի ուղարկել Ղարպաղանտին, որ նրան երկու խնդրանք մատուցեն: Նախ որ թշնամիներին որեէ ապրանք ուղարկելը արգելեն և հետո Մելիտենեի կողմերը մարդ ուղարկեն, որպեսզի արշավանք պատրաստի Հալեպի ղեմ:

Ահա այնժամ խաչակիրները, կիպրոսցիներն ու հայերը կսկսեն պատերազմը՝ նույն ժամանակ Սիրիան և Եգիպտոսը ծովի կողմից պաշարելով: Այսպիսով, սարակինոսները ստիպված են լինելու պաշտպանելու թե իրենց երկիրը, թե Հալեպն ու Բարելստանը և շվարելու են՝ կորցնելով իրենց ժամանակն ու մարտիկներին: Խաչակիրների և հայերի նավերը կսպանան Եգիպտոսի ծովեղերքին, ու սուլթանը ստիպված կինի իր բոլոր զինվորներին հետ կանչել: Մյուս կողմից Լիբանանում կան քառասուն հազար քրիստոնյաներ, որոնք նավահանգիստներ կպատրաստեին խաչակիրներին ընդունելու համար:

Թաթարները ևս երկրներ կգրավեն ու քրիստոնյաներին կհանձնեն: Հեթումը կամենում է, որ պապը վրացիներին նույնպես դիմի, որ օգնեն այդ գործին: Թող եթովպացիներն էլ ապստամբեն սովորական դեմ, որովհետև նրանք էլ քրիստոնյա են: Հեթումը հիշեցնում է, որ Եգիպտոսում զպտի անունով բնակվող քրիստոնյաներ կան: Ահա այս բոլոր նախապատրաստություններից հետո կսկսի բուն խաչակրաց արշավանքը: Խաչակիրների զլխավոր բանակը իր տրամադրության տակ ունի երեք ճանապարհ: Կարելի է անցնել Աֆրիկայով, բայց այդ ճանապարհի մասին ստույգ տեղեկությունները պակասում են: Ուրեմն մնում են երկու ճանապարհները: Կամ անցնել Պոլսով, սակայն

<sup>16</sup> Նույն տեղում:

խաչակիրները կարող են ընկնել մահմեղականների շրջափակման մեջ կամ ուղղակի նավով հավաքվել կիպրոս կղզում՝ առաջուց ուղարկված գնդից իմանալով թշնամու վիճակի մասին։ Սակայն ինչ ճանապարհ էլ ընտրվի, մի բան պարզ է. ուժերը պետք է լինեն խիստ միասնական, ամենուր անհրաժեշտ է պահպանել կարգապահություն ու համակարգում։

Հեթումը շարունակ հիշեցնում է, որ խաչակիրները պետք է հենվեն հայերի, նույնիսկ վրացիների զինվորական ուժերի վրա, նաև ապավինեն թաթարների ուղղմական ուժին. չէ որ թաթարների մեջ կան մկրտված քրիստոնյաներ, և հենց նրանք էլ օգնություն են առաջարկում։

Հեթումը գիտի նաև, որ Եգիպտոսի թուրք սուլթանը վախի ու կասկածի մեջ է: Նրա բանակը կազմված է քսան հազար զինվորներից, որոնց մեջ շատ վարձականներ կան: Հեթումի կարծիքով ինքը գտել է հարմար ժամանակը և փրկության օրը, որովհետև այդ պահին խաչակիրները կարող են հաղթանակի հասնել և թշնամիների ձեռքից Սուրբ Գերեզմանն ազատագրել: Բազմաթիվ էջերում Հեթում պատմիչը կրնում է, որ եկել է ազատագրման հարմար ժամը: Նա բարոյական առումով ժամանակը հարմար է համարում և նշում է մի քանի նշան տալու առիթներ: Դրանցից մեկը համարում է սուլթանի արքունիքում մատնությունը կամ արքայասպանությունը, ինչ որ հաճախ է պատահում թագավորությունների կործանման ժամանակ: Կամ անհրաժեշտ է կազմակերպել նորիացիների, բեղվինների, թուրքենների ապստամբություն կամ Նեղոս գետի անբավական բարձրացում, որի հետևանքով սովոր կառաջանա, և Եգիպտացի զինվորները չեն ունենա բավարար պաշար ու չեն կարող հասնել Սիրիա և այն պաշտպանել: Հեթումը հատուկ զգուշացնում է. «Անպատճառ սկսինք պատրաստուի, «յարմար ժամանակը հասած է»... Եվ չըլլայ թէ ժամավաճառութիւն ընենք մինչեւ որ թաթարները մահմետական դառնան»<sup>17</sup>:

Ֆեղին Հեթում պատմիչի այս խիստ զգուշացման մեջ տեսնում է քաղաքական մեծ հեռատեսություն, որը, ցավոք, ընկալվեց Եվրոպայի կառավարող ուժերի կողմից, որի հետևանքով թաթարները քրիստոնյա դառնալու փոխարեն, ընդունեցին մահմեղականություն. «Իրաւ, Հեթում իրաւունք ունէր, որովհետեւ եթէ քրիստոնեաները խաչակրութիւն ընդունէին այն ժամանակ, թաթարները մեր ուժը տեսնելով,

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 26:

քրիստոնեայ կը դառնալին. մենք առիթը կորսնցուցինք եւ թաթարները մահմետական կրօնքին յարեցան»<sup>18</sup>:

Ֆեղին Հեթումին համարում է վարպետ պատմիչ, ու թեպետ խիստ մոտենալու գեպքում նրա երկում կարելի է ինչ-ինչ պատմական սխալներ գտնել, սակայն Հեղինակն իր գործին մոտեցել է ամենայն լրջությամբ՝ աղբյուրների ստուգությունն անզամ նշանակելով։ Ֆեղին համոզված է, թե թաթարների պատմության առաջին մասը մատենագիրը լսել է հենց թաթարներից, երկրորդ մասը նրան պատմել է թագավորը, իսկ երրորդը իր աշքով տեսած դեպքերի նկարագիրն է։ Հայագետը նշում է նաև, որ Հեթումը այս գործը օտար լեզվով առանց որևէ գրքի նայելու է թելաղբեկ *Nicolas Falconet*-ին. վերջինս ֆրանսերենով այդ մասին վկայում է. «*Comme le Frère Hayton me le dictoit de sa bouche sans note ni exemplaire*»<sup>19</sup>:

Հեթում պատմիչին ըստ Ֆեղիի վերագրվում է նաև մի ժամանակագրություն։ Հեթում պատմիչի այս ժամանակագրությունը հրատարակել է Մկրտիչ Ավգերյանը նրա թաթարաց պատմության լատիներենից հայերեն (գրաբար) կատարած թարգմանությանը կցելով։ Ժամանակագրության ժամանակահատվածը շուրջ երեք հարյուր տարի է. «Երեք հարյուր եւ մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց՝ հայ, Փուանկ եւ ասորի, շարադրեալ պարոն Հեթմոյ, տեառն Կոռիկոսոյ եւ արար զայս բանք ի թուին հայոց ՇԽԵ եւ յամի մարդեղեռութեան տեառն ՌՄՂԶ»<sup>20</sup>։ Հեթումի այս ժամանակագրությունը ունի թվականներ՝ Քրիստոսի և Հայոց Այն սկսվում է 1076 թվականից՝ Հայոց Գագիկ երկրորդ թագավորի սպանու-

<sup>18</sup> Նույն տեղում;

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Մաշտոցի անվան Մատենադարանում կան մի քանի ձեռագրեր, որնք պարունակում են Հեթում պատմիչի գործերից։ Այսպես, օրինակ 1724-ին Երուսաղեմում, այնուհետև Հայեապում գրված թիվ 663 ձեռագրում առկա է «Հեթմոյ Կոռիկոսոց Տարեգրութիւն» երկը (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ. Ա, Երևան, 1965, էջ 375), իսկ նույն Մատենադարանի թիվ 1898 գրչագրում առկա է «Հեթմոյ Կառիկոսոց պատմութիւն քրոնիկոնին» գրվածքը. ձեռագիրը 13-րդ դարի է, գրչության վայրը անհայտ է (տե՛ս նույն տեղում, էջ 669), իսկ թիվ 9622 ձեռագրում, որը գրված է 1858-ին Երուսաղեմում, գտնում ենք եսապի Նշեցու թուղթը ուղղված Հեթում պատմիչին՝ «Եսապի Նշեցու թուղթը ընդդիմ Հեթմոյ Կիրիկեցուոյն» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ. Բ, Երևան, 1970, էջ 963):

<sup>21</sup> Հեթում պատմիչ, թաթարաց յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն ՇՄկրտիչ աթոռակալ վարդապետի Աւոկերեան, Վենետիկ, 1842, էջ 77:

թյունից<sup>22</sup> և ավարտվում է 1307 թվականով: Բերենք մի օրինակ՝ «1190, ՈՂԹ - Կայսրն Ալմանաց Ֆրանկ խեղղեցաւ ի գետն Սելսկիոյ և թաղեցաւ յԱնտիռը Եւ Ֆիլիպ ուշ տէ Ֆրանցն և ուշ Զառլ թագաւոր Անկիղաց անցին յայսկոյս ծովու և պաշարեցին զԱքա, որ և ի գալն Անկիղաց էառ զկողին Կիպրոսի և Յունացն ի Կիրսակոտուկէն: Եւ յայսմ սկիղըն եղե կարգաւորութեան ալաման ֆրերացն»<sup>23</sup>:

Հստ Ֆեյջիի Զարբանայանի «Հայերէն զպրութեան պատմութեան» մեջ Հեթում պատմիչին է վերագրված էջմիածնի մատենադարանի ձեռագրացուցակի «Խրատք ողեշահք» գործը:

Հայագետի կարծիքով Հեթումի երկը «բաւական կարեւոր դիրք մը կ'ապահովցնէ ժԳ դարու Փրանսացի պատմիչներուն շարքին մեջ»<sup>24</sup>: Իր ողջ հետազոտության մեջ Ֆեյջին Հեթում պատմիչին պատկերում է որպես Հայրենասեր գործիչ, որը մատենագիր լինելով Հանդերձ առաջին Հերթին եղել է խաչակրաց արշավանքի քարոզիչ ու կազմակերպիչ, և դա երևում է նրա հենց հետեւյալ խոսքերից. «Փա՛ռք Աստուծոյ, զի թագաւորութիւն Հայոց իցէ ի բարի վիճակի, ըստ զօրացուցանելոյ Աստուծոյ ի ձեռն Լեւոնի՝ որդւոյ տեառն Թորոսի՝ ի նախկին վերածցի

<sup>22</sup> Բագրատունի Գագիկ Երկրորդ թագավորը եղել է Երիտասարդ, խելացի ու քաջ, զահ է բարձրացել 18 տարեկանում: Սակայն ըյուղանդական կայսր Կոստանդին IX Մոնոմաքոսը բանակցելու նպատակով նրան հրավիրել է Կոստանդնուպոլիս և կալանավորել, հետո էլ աքսորել: Բյուզանդական զորքերը գրավել են Անին և կործանել այն: Գագիկ Երկրորդի մասին Հետաքրքիր փաստեր է պատմում Փրանսացի Հայագետ Մարի Բրոսսեն իր «Անիի ավերակները» գրքում. «Վեստ Սարգիս և Պետրոս կաթողիկոսը կարողանում են Համոզել իշխաններին՝ Անին հանձնել Մոնամախին, որպազի վերջին իրենց պաշտպանի թշնամիներից: Նրանք Անիի բանապիները տանում են կայսրին: Կայսրը որոշում է Հանդիսավոր արարողությանը բերել տալ Գագիկ Երկրորդին: Նա Հայոց արքային ցնծագին դիմում է և ասում:

-Հիմա ի՞նչ կասես, քո ավագանին ինձ հանձնեց Անին և ողջ Հայաստանը;

Գագիկն արժանապատիվ պատսախանում է.

-Ընդունենք, որ նրանք տվին դրանք, դու, ուրեմն, կարող ես մտածել, թե դո՞ւ ես դրանց բնիկ տերը: Ինչպե՞ս կարող ես դու վերցնել ուրիշի թագը և քաղաքները, որտե՞ղ է քո արդարությունը:

Գրքի այս հատվածը Մ.Բրոսսեն ավարտում է վարդապետ Իգնատիոսի խոսքերով. «Նախանձը աղետն է, ովքեր այն ունեն, չունեն ոչ մի առողջ միտք»: Հայագետը Անիի վերջնական անկումը Հատվածը խորագրել է «Անիի վերջին աղետը» (առև. M.Brosset, *Les ruines d'Ani, capitale de l'Arménie, sous les rois Bagratides, aux X<sup>e</sup> et XI<sup>e</sup> s., histoire et description, II<sup>e</sup> partie, SPb, 1861, p.135, տե՛ս նաև Ա.Դոլուխանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն Հայագետ, Երևան, 2002, էջ 87):*

Գագիկ Երկրորդը դափարաբար սպանվել է ըյուղանդացիների ձեռքով 1079-ին (տե՛ս Ով ով է, Հայեր, Հ. I, էջ 250):

<sup>23</sup> Հեթում պատմիչ, Թաթարաց..., էջ 80:

<sup>24</sup> Հեթում պատմիչ, «Ծաղիկ պատմութեանց արեւելեան աշխարհին», էջ 26:

վիճակ. վասնզի փայլէ ամենայն առաքինութեամբք եւ է Հայելի ամենայն իշխանաց»<sup>25</sup>:

Հեթում պատմիչի թարգմանիչ Մկրտիչ Ավգերյանը իր գործին կցել է մի համառոտ առաջարան, որն անվանել է «Բան առ վերծանողս, Վասն Հայկական թարգմանութեանս»: Այս առաջարանում նա համառոտ խոսում է Հեթումի անձի, կրոնավոր դառնալու, Արևմուտք գնալու և իր երկը Փրանսերեն թելադրելու մասին: Նկատում է նաև, որ լատիներեն օրինակը լի էր սխալներով և գրված էր անհարթ ոճով: Ահա ինքը այն թարգմանեց «զի մի անյիշատակ մնասցէ յազգիս»<sup>26</sup>: Նա ավելացնում է նաև, թե բնագրով գտել է ևս Հեթումի ժամանակագրությունը, որը կցում է պատմությանը: Ավգերյանն իր թարգմանության սկզբում զետեղել է նաև լատինացի գրչի ասածը Հեթումի երկի վերերերյալ՝ «Ուրումն լատին գրչի վասն պատմական գրոցն Հեթմոյ» խորագրով: Լատին գրչի հիշատակման մեջ կարևոր է հետևյալ հատվածը. «Իսկ թարգմանիչ նորա եղեւ Նիկողայոս Սալկոնի, որ ի հրամանէ ծայրագոյն քահանայապէտին Կղմեայ Հինգերորդի քաղաքն Պիկգաւիոյ նախ զայս գիրս զաղիերէն գրեաց, որպէս և զիարդ թելադրեցաւ նման ի Հեթմոյ և ապա ի լատինն վերածեաց ըստ կարի յամի տեսառն 1307»<sup>27</sup>:

Հայ բանասիրության մեջ, սակայն, կարծիք կա, թե մինչև Ավինյոն գնալը, Հեթումն իր պատմությունը նախ գրել է Հայերեն ապա վերածել է Փրանսերենի: Այդ կարծիքը պաշտպանում են Ղեռնդ Ալիշանը, Հակոբ Անասյանը<sup>28</sup>, Գևորգ Արգարյանը: Ղ.Ալիշանը «Հայապատում» աշխատության մեջ առանց դույզն-ինչ կասկածի պնդում է, թե Հեթումի «Թաթարաց պատմութիւնը» եղել է նախ Հայերեն, որի մասին ակնարկում է Ղազար Զաղար Զահկեցին, նույնիսկ այդ պատմության մի օրինակը գտնվել է Էջմիածնի մատենադարանում<sup>29</sup>: Ահա այս վկայությունների հետքերը գտնելու համար բանասիրական արդյունավետ պրատում է կատարել բանասեր Գևորգ Արգարյանը: Նա իր ծավալուն հողվածը, որը տպագրել է ոռուսերենով, կոչել է «Архетип “Татарской хроники” Гетума, использованной в “Любекской хронике” Детмаре» «Դետմար» «Դետմարի «Լուրեքի քրոնիկում» օգտագործված Հեթումի «Թաթարաց պատմության» բնօրինակը»: Գևորգ Արգարյանն օգտագործել է մեծ թվով ոռուսերեն, գերմաներեն, Փրանսերեն, Հայերեն

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Հեթում պատմիչ, Թաթարաց..., էջ 3:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>28</sup> Հ.Անասյան, Հայկական մատենագիտություն, Հ. Ի. Երևան, 1959, էջ LII-LIII.

<sup>29</sup> Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 113:

աղբյուրներ: Նա հայտնում է, որ Եվրոպայի տարրեր քաղաքներում պահպանվում են մոտավորապես վախտուն ձեռագրեր, գրված XIV-XV դարերում, որոնցում կա Հեթումի պատմությունը<sup>30</sup>:

Ենելով իր քննությունից՝ Գևորգ Արգարյանը եղրակացնում է, որ գերմանացի ժամանակագիր Դետմարը XIV դարում օգտվել է Հեթումի «Թաթարաց պատմություն» աշխատության ոչ թե օտարալեզու հայտնի թարգմանությունից, այլ մեկ այլ օրինակից, որը հին ֆրանսերենով գրի է առել հենց ինքը՝ Հեթումը, մինչև Նիկոլաս Ֆալկոնին հանդիպելը: Այս եղրակացությանը զուգահեռ Գ.Արգարյանը համաձայն է Ղ. Ալիշանի և Հ.Անասյանի այն կարծիքին, թե «միջնադարում գոյություն է ունեցել Հեթումի երկի հայերեն բնագիրը, որը մեզ չի հասել»<sup>31</sup>:

Հեթումի պատմությունը այսօր էլ հետաքրքրում է հայագիտությանը: Նրան հաճախ են դիմում մասնագետները Կիլիկիայի, Խաչակրաց արշավանքների, հայ-մոնղոլական հարաբերությունների և միջնադարյան Արևելքի մի շարք պատմական հարցեր քննելիս: Այդ պատմությունն օգտագործել է Կող Մութաֆյանը իր «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում» խիստ արժեքավոր հետազոտության մեջ. «Նրա զարմիկ Հեթում Կոռիկոսցին՝ Հայտոն կեղծանվան տակ, իր կյանքի վերջում միջին ֆրանսերենով մի ժամանակագրություն է թե - լազրել, ուր նա պնդում է [(A 20a) III 2, է 149], որ ինքը մասնակցել է մողոնների երկու «Խորությաններին»: Արքայի ճանապարհորդության կապակցությամբ նա բերում է [(A 20b, էջ 45 (V 11a), հտ. 2, գլ. 23, (V 10b), էջ 323] մոնղոլ գերակային ներկայացված պահանջների տպավորիչ մի ցուցակ. Խանի և բոլոր մոնղոլների կողմից քրիստոնեության ընդունում, արտոնություններ եկեղեցականներին, ուազմական դաշինք Բաղդադի խալիֆի դեմ, մահմեդականներից Սրբազն երկրի ետ նվաճում, մահմեդականների կողմից հայերից խլված տարածների վերադարձ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, կարծես երազ ես տեսնում. արդյոք նման պահանջագիր կարո՞ղ էր ներկայացնել ստորական:

Մենք, իհարկե, կարող ենք կասկածի տակ առնել հեղինակի այն պնդումը, որ Մոնկան մկրտվել էր: Ամեն դեպքում այդ բանը կատար - ված լիներ, թե ոչ, այնուամենայնիվ, Հեթումի խնդրանքից հետո [(C

<sup>30</sup> Г. В. Абгарян, Архетип "Татарской хроники" Гетума, использованный в "Любекской хронике" Детмара (տե՛ս «Պատմա-րանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 1978, էջ 159-160):

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 32:

451, էջ 218] մոնղոլ միապետը իր եղբայր Հովհավուին հանձնարարում է Հարձակվել Ասորիքի վրա. «Նա կպաշարի Երուսաղեմ քաղաքը և այնտեղից կրչի բոլոր հեթանոսներին [(V 11a), հտ. 2, գլ. 23]»<sup>32</sup>: Հեթում պատմիչից մեծքերում կա նաև գրքի այլ հատվածում, ուր պատմվում է Արաղայի մամլուկների դեմ տարած հաղթանակի մասին<sup>33</sup>:

Հեթում պատմիչի մասին առանձին փոքրիկ հողված կա Անդրանիկ Զալարյանի «*Armenia after the coming of Islam*» գրքում, որում հեղինակը իր նյութը քաղել է «Հայկական Սովետական Հանրապետարանից»<sup>34</sup>:

## բ) ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՑԻԻՆ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՎԵՊԻ ԳՆԱՀԱՏՈՂ

1956 թվականի ապրիլի 25-ին Փարիզում Դեբյուսիի անվան դաշինքում Ֆրեդերիկ Ֆեյդին հանդես է եկել իր հերթական մեծարժեք զեկուցմամբ, որը կոչվում է «Հայ ժողովրդական էպոսը» («*L'épopée romaine arménienne*»): Այս զեկուցման մեջ նա անդրադառնում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ զետեղված առասպեկավիպասանական հատվածներին, որոնք արդեն լուրջ քննության էին ենթարկվել Մկրտիչ Էմինի, Գր. Խալաթյանցի, Մանուկ Աբեղյանի և ուրիշների կողմից<sup>1</sup>: Ուստիմնասիրության մեջ Ֆեյդին հակադրվում է այն բոլոր բանասերներին, ովքեր հայ պատմահոր ապրած ժամանակը տեղափոխում են հինգերորդ դարից մինչև ութերորդը և խատիվ մերժում են նրա պատմության արժանահավատությունը: Նա ոչ միայն այս, այլև իր նախորդ ու հետագա ուսումնասիրություններում Մովսես Խորենացուն համարում է «ոսկեղարի» պատմիչ, որի երկը նրա կարծիքով աչքի է ընկնում քննական խոր վերլուծությամբ:

Նա հայտարարում է, որ զեկուցումն ամբողջովին շեղում է ժամանակակից որոշ հայագետների կարծիքներից, և ինքն իր եղբակացու-

<sup>32</sup> Կլոր Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 423:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 444:

<sup>34</sup> Antranig Chalabian, Armenia after the coming of Islam (This book is about Arabic, Persian, Byzantine, Greek, Seljuk Turkish, Turkoman, Mongol-Tatar, and Ottoman Turkish history, all in Conjunction with ARMENIAN HISTORY), 2nd Printing, Southfield, Michigan, 2002, p. 289-290:

<sup>1</sup> Ֆեյդին չեղանդարձել իր նախորդների աշխատություններին: Այդ աշխատություններն են՝ Մ.Էմին, Վ.Էմիր Հնոյն Հայաստանի, Մուկվա, 1850, Մովսես Խորենացին և հայոց հնի վեպերը, Թիֆլիս, 1886, Դր. Խալաթյան, Արմենական էպոս և Իտորիա Արմենիա Մուշեղ Խօրենսկու, Մոսկվա, 1896, Մ.Աբեղյան, Հայ ժողովրդական առասպեկները Մ.Խորենացու Հայոց պատմության մեջ (տե՛ս Մ.Աբեղյան, Երևան, 1985, էջ 66-272) և ուրիշներ:

թյունները բխեցնում է եղնելով Մովսես Խորենացու հաղորդած փաստերից: Նախ, Խորենացին իր փաստերը հաղորդում է բազմաթիվ պատմական աղբյուրներ համեմատելուց հետո: Նա բարեխսղճորեն քննում է Հովսն, ասորի, պարսիկ մատենագիրների երկերը, օգտագործում հեթանոսական ժամանակները պատկերող մեջենական գրականությունը, նա չի անտեսում որևէ փաստաթուղթ («*il ne néglige aucun* ասությունը՝ *documentatioն*»), եթե անգամ դրանք ժողովրդական են և լուսթյան մատնված ժամանակակիցների կողմից: Եվ ամենակարևորը, Մովսես Խորենացին հիանալի է իմացել հին դիցարանությունը, ոչինչ հնագույն առասպելներից ու ավանդություններից նրան անծանոթ չէ: Ճիշտ է, նա իրեն ծանոթ ժողովրդական նյութի մասին ամբողջովին չի խոսում, յինի դա աղքային, թե օտարի, սակայն կարենորն այն է, որ խոսում է ինչ-որ չափով, որ ապացուցի ժողովրդականի անհեթեթությունը կամ ներկայացնի պատմական երևույթի ձևափոխված արձագանքը: Նա որոնում է այն փաստերը, որոնք պետք է հաստատեն պատմական ճշմարտությունը:

Ֆեղին Խորենացու պատմության մեջ տեսնում է այն աղբյուրը, որը հաստատում է հայ ժողովրդի հնագույն հարուստ բանահյուսական գրականության գոյությունը. «Ահա երկու փոքրիկ հատված, որոնք ձեզ գաղափար կտան մեզ հետաքրքրող բնագավառում Մովսես Խորենացու արժեքը, այսինքն՝ նրա ակնարկներով հայտնարերելու բանահյուսական մի գրականության գոյությունը»<sup>2</sup>: Որպես ապացույց իր եղրակացության՝ նա ներկայացնում է Բյուրասապ Աժդահակի առասպելի հետեւյալ հատվածը. «Բայց ի՞նչ ցանկություն է արդյոք, որ ունես Բյուրասապի Աժդահակի անպիտան և անճոռնի առասպելների նկատմամբ, կամ ինչո՞ւ մեզ նեղություն ես տալիս պարսից անհարմար ու անճաշակ զրուցների, մանավանդ թե անբանության պատճառով, (ինչպես են) նրա առաջին և անբարի բարերարությունը, դեերի նրան սպասավորելը, վրիփածին ու ստին վրիփեցնել չկարողանալը, ուսերը համբուրելը, այնտեղից վիշապներ ծնվելը, այնուհետև չարության աճումը, փորի համար մարդիկ սպառելը: Հետո մի ոմն Հրուդենի նրան կապելը պղնձե լարերով և Դմբավնդ կոչված լեռը տանելը, հետո Հրուդենի քնելը ճանապարհին, և Բյուրասապի նրան քաշելով բլուր տանելը, Հրուդենի զարթնելը և նրան լեռան ինչ-որ այր տանելն ու կապելը և ինքն իրեն նրա առաջ իրեն արձան հաստատելը, որից սարսափահար եղած՝ հնագանդ է մնում շղթաներին և չէ իշխում դուրս

<sup>2</sup> **F. Feydit**, *L'épopée populaire arménienne* (տե՛ս «Բաղմավէպ», 1957, հունվար-փետրվար, էջ 27):

գալ և աշխարհն ապականել»<sup>3</sup>:

Այս քաղվածքից հետո Ֆեյթին բերում է երկրորդ համառոտ քաղվածքը, որից հետո տեսանելի նյութի հիման վրա կառուցում է իր համոզիչ եղրահանգումները. «...Եվ սովորած չար ոգին, որ նյութում էր չարությունը, զլումը Բյուրասպիի ուսերի վրա դնելով անկասկած սովորեցնում էր նրան անբարի արվեստը տանը և հրապարակներում, ականջին խոսելով: Սրա մասին առասպելում ասում են, թե սատանայի ճուտը նրան սպասավորելով կատարում էր նրա կամքը, որի համար հետո, պարզե խնդրելով, ուսը համբուրում էր:

Իսկ վիշապներ բուսնելը կամ Բյուրասպիի կատարելապես վիշապանալը, որ ասում են, այս է: Որովհետև նա անթիվ մարդիկ սկսեց զուել զեերին՝ ուստի բազմությունը նրանից տաղտկացավ և բոլորը միաբանեցին ու նրան հալածեցին. նա փախավ վերոհիշալ լեռան կողմերը, երբ հալածանքը նրա զեմ սաստկացավ, նրա հետ եղած ամբոխը քայլայվեց ու ցրվեց, հալածողներն այս բանին վստահանալով՝ մի քանի օր այդ տեղում հանգիստ առան: Սակայն Բյուրասպին ցրվածներին նորից հավաքելով՝ հանկարծորեն նրանց վրա է հասնում, մեծ վնասներ պատճառելով, բայց բազմությունը հաղթում է, և Բյուրասպին փախուստ է տալիս: Հասնում, նրան սպանում են լեռան մոտ և գցում են մի մեծ ծծմբահոտ վիհի մեջ»<sup>4</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, Էջ 27-28: Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբարթարգմ. և մելինարանումները Ստ. Մալխասանի, Երևան, 1981, Էջ 107: Այսուհետև կնշենք Մ.Խ., Հ.պ., Էջը:

<sup>4</sup> **F.Feydit**, *L'épopée de populaire arménienne*, p. 28: Տեղին ենք համարում մեջբերել Ստ. Մալխասանի հետևալ ծանոթագրությունը. «Բյուրասպի Աժդահակ-Պարսից առասպելական հերոս Զոհակի մակդիրն է: Ֆիրդուսին էլ նրան Աժդահակ է կոչում: Բյուրասպի գեներեն աշարժաթագավոր քյուր ձի (ունեցող): Հայերենի մեջ վերջի «ի» ածանցական մասնիկ է, ինչպես քաջազգի, տմարդի և այլն:

Բանասերները (Գուշչմիտ, Ստա, էմին և այլն) միարեան վկայում են, որ Բյուրասպի Աժդահակի մասին Խորենացու պատմածը բոլորովին ննան է Ֆիրդուսիի պատմածին: Ֆիրդուսին Շահնամեն զրեց ԺԱ զարում, Հիմնվելով առաջուց զրի առնվազավանությունների վրա, որոնցից ամենահինը Զ զարից էր: Ուրեմն Խորենացին նրանից էլ իդ գար առաջ գիտեր այս պարսկական առասպելները, և ոչ միայն նա գիտեր, այլև Սահակ Բագրատունին, որ ծերունի Պատմահորը թախանածում էր այս առասպելները զրել ու մեկնել: Այս երևույթն էլ բազմաթիվ այլ երևույթների մեջ ցուց էր տալիս, ո՞ր աստիճան պարսկական, հատկապես պահապահական կոլտուրան տարածված էր Հայաստանում, գոնե նրա թագավորական և իշխանական տներում:

Որչափ էլ Պատմահայրը ատելություն և արհամարհանք է արտահայտում պարսից առասպելների նկատմամբ, բայց և այնպես նա պակաս հմուտ չէ նրանց, քան իր սիրած հոնաց «ավեճ և ողորկ» առասպելներին: Բայց այս տեղից, որտեղ կարմառուտ բրում է Բյուրասպի Աժդահակի մասին առասպելները, նա հչուում է նշանագործ փաշկան Ռոստովին, գիտե նրա որտեղացի լինելը և հարցուր քսան փողի ուժ ունենալը (Բ, ը), - մանրամասնություններ, որոնք Հայտնի չեն Ֆիրդուսիին, թվում է կարճառոտ առասպելներն Արտաշիր Սասանյանի մասին (Բ, Ը), մի ամրող զույթ նվիրում է պահապահների ծագման վերաբերյալ առասպելներին (տե՛ս Մ.Խ., Հ.պ., Էջ 476-477):

Ֆեյդին մեկնում է Խորենացու ներկայացրած Աժղահակի «անպիտան և անճոռնի», «պարսից անհարմար ու անճաշակ զրուցները», որոնք պատմահորը հայտնի էին դեռևս հինգերորդ դարում և ֆիրդուսուց շատ առաջ: Նա բացատրում է բրեված հատվածների մոլթ մտքերը և այդ կցկտուր հաղորդման հիման վրա ներկայացնում այն աղերսները, որոնք կան բերվածների և ֆիրդուսու «Շահ-Նամեի» միջև: Նրա կարծիքով Խորենացին իր մատոյանի այս հատվածում պարզապես զրել է «Շահ-Նամեի» Զոհակին վերաբերող հատվածների բովանդակային ցանկը՝ «C'est tout simplement une «table des matières» du livre Zohak du Shah-nâmeh»: Նրա կարծիքով Զոհակը նույն ինքը Բյուրասսպ Աժղահակն է, որն օրը երկու մարդ է զոհում, որպեսզի նրանց ուղեղը իրու կեր տա վիշապներին: Ժողովուրդը նրան դուրս է շպրտում, և Ֆերիդունը, որը Խորենացու Հրուդենն է, անակնկալ ջախջախում է Զոհակի սաղավարտը: Ֆերիդունն ուզում է վերջին հարվածը տալ, երբ երանելի Սերոշը նրան պատվիրում է չսպանել Զոհակին, այլ շղթայել Դմբավլնդ լեռան վրա:

Ֆեյդին հատուկ շեշտում է, թե որքան էլ Խորենացու քննադատները պատմիչի ծնունդը ետ տանեն երկու կամ երեք դարով, միևնույն է՝ ինքը համոզված պնդում է, որ վերջինս չէր կարող ծանոթ լինել ֆիրդուսու գործին: Նա նաև հավանական չի համարում Խորենացու ծանոթությունը պարսից վիպական զրուցների առաջին ժողովածուին՝ «Kodaï nāme»-ին: Նրա կարծիքով պարսից բանահյուսության այդ զրուցները, հատկապես Զոհակի գործերի մասին պատմողները, Խորենացին լսել է տարբեր ժողովրդական սասցողներից: Դրանք եղել են Զոհակին վերաբերող այլազան պատումներ: Մեկում Ֆերիդունը գործում է մենակ, մյուսում նրա գեմ գործում է անանուն ամբոխը, մեկում Ֆերիդունը նիբռհում է, և Զոհակը հափշտակում է նրան, մեկ ուրիշում ժողովուրդը տեսնելով Զոհակի բանակը՝ ցրվում է, և Զոհակը հավաքում է իր զինվորներին հակահարված տալու, կա նաև տարբերակ ըստ որի Ֆերիդունը Զոհակին հավերժ շղթայում է, չնայած մեկ այլում ժողովուրդը սպանում է Զոհակին և դիմակը նետում վիհի մեջ:

Ժողովուրդը բանահյուսական գործերում չէր կարող ներկայացնել իր հերոսին այնպես, ինչպես այդ արել է ֆիրդուսին իր գրական և դյուցագնական էպոսում, որը գրված է իշխանագունների համար<sup>5</sup>: Ֆեյդին

<sup>5</sup> «...Արաբերեն բառեր ֆիրդուսու պոեմում շատ քիչ են, նա կամ ենում էր կենդանացնել հին Իրանը և զա անում է իրաներենով՝ հավատարիմ մասլով իր օգտագործած աղյուրներին...: Նրա աղյուցությունը պարսից գրականության և ժողովրդի հոգու վրա այնքան խորն է ու տեսական, որ պահանջում է շատ լորջ ուսւմնասիրություն: ...Նրա գործը գրական և բանահյուսական առումով խիստ հետաքրքիր է և դեռևս քիչ մնկարանապահ» (տե՛ս Encyclopédie de l'Islam, nouvelle édition, t. II, C-G, Leyde, Paris, 1916, p. 941-942): Այս նկատում զային է հաստատելու, թե որքան կարեղոր է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» պարսից առասպելներին նվիրված հավելվածը:

բացատրում է իր՝ Հայոց առասպելներից շեղվելու և պարսից առաս - պելներին անդրադառնալու անհրաժեշտությունը: Սա այն ճանա - պարհն է, որը գծում է Հայ ժողովրդական բանահյուսության հնագույն հետքերը, և ինքը ջանում է ապացուցել Հայկական ժողովրդական վիպերգերի վաղեմիտությունը:

Մովսես Խորենացին հիշատակում է Մար Արաւ Կատինային և պաշտոնապես հենվում է նրա Հաղորդած փաստերի վրա: Ֆեյդին խո - սում է Հայկի և Բելի կովի մասին, որը հետևանք էր Բարելոնում լեզու - ների խառնակության: Հսկա Հայկը ազգային հերոս է, պատմահայրը նկարագրում է նրա ընդդիմանալը Բելին ու վերջինիս սպանելը: Հայա - գետը հատուկ ուշադրություն է Հրավիրում Հայկի սերունդներից Արա - մի վրա, որը խիզախորեն կովում է Մարաստանի տիրակալ նյուքար Մաղեսի և Ասորեստանի իշխող Բարչամի դեմ: Նա չի մոռանում հիշա - տակել Արամի առասպելի հետևյալ հատվածը. «Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել Հաղթական պատե - րագմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմե - րից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»<sup>6</sup>: Հայա - գետը Արայի և Շամիրամի առասպելը համարում է չափազանց գողտ - րիկ պատում: Այն ներկայացնում է Արամի որդու՝ Արա Գեղեցիկի հավատարմությունը իր գեղեցիկ կնոջը՝ արքայադուստր Նվարդին: Ֆեյդին վերապատմում է, թե ինչպես է Արան մերժել ցանկասեր Շա - միրամի խոստումները, որի պատճառով էլ գոհվել է Շամիրամի զին - վորներից: Նա պատմում է Շամիրամի՝ Արային վերակենդանացնելու փորձերի մասին և առանձնացնում է Հատկապես մի դրվագ, որը պատմում է Նվարդից ծնված Արայի Կարդոս որդու մասին, որին ի սեր Արա Գեղեցիկի Շամիրամը վերանվանում է Արա. «Իսկ Շամիրամը զեռ իր կենդանության ժամանակ Արայի որդուն, որ ծնված էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մնացել Արայի մահվան ժամանակ, դեպի Արա Գեղեցիկը տածած գորովի պատճա - ռով՝ նրա անունով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհին վե - րակացու, մտերմաբար նրան վստահացած լինելով, և ասում են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ»<sup>7</sup>:

Ֆեյդին մանրամասն ներկայացնում է Շամիրամի շինարարական աշխատանքները Հայաստանում, Հատկապես ամառանոցային պալա - տի կառուցումը, որին պատմահայրը հատկացրել է մի ամբողջ զլուխ:

<sup>6</sup> F. Feydit, *L'épopée ..., p. 29; U.H., Հ. պ., էջ 53:*

<sup>7</sup> F. Feydit, *L'épopée..., p. 30, U.H., Հ. պ., էջ 75-77:*

Նա համոզված է, որ Խորենացին իր պատումն առաջ է տանում ժողովրդական ոգով. «Իրար Հաջորդող քնարական ու Էպիկական շունչը, որ Հանդիպում ենք որոշ գլուխների տարրեր Հատվածներում, մտածել է տալիս, թե արդյոք Մովսես Խորենացին դրանք գտե՞ղ է Մար Արա Կատինայի մոտ, որը քաղղեական դիվանի անտարրեր թարգմանիչ էր ընդամենը»<sup>8</sup>:

Քերելով այս Հատվածները Ֆեյդին համոզված է, որ այդ ամենը առեղծվածորեն հուշում է Հեթանոս Հայերի մի հին վեպ ունենալը, որը բանավոր է եղել և հիշեցնում է «Շահ-Նամեն»: Նա համոզված է նաև, որ ջրհեղեղից հետո ստեղծվել է առասպելական զրուցների մի շարք, որն աստվածաշնչային չէ, այլ արևելյան է և այն ձգվել է մինչև Շամիրամի ժամանակները: Այս ցիկլը սկսվում է Հայկի և Արամի սիրագործությունից և հասնում է մինչև Արա Գեղեցիկի հերոսական ու գժիախտ վախճանը: Շամիրամի կերպարին Ֆեյդին տալիս է բոլորովին նոր բացատրություն: Շամիրամը սովորական նվաճող չէ. նա ցանկասեր այլաղավան է, որն իր կյանքի ճանապարհին գտել է Հայ հերոսին, և նրանց հանդիպումը դարձել է ճակատագրական:

Ֆեյդին խոսում է նաև Տորքի մասին, որին համարում է Հայկական առասպելներում կիլլուպյան դեմք թե իր ֆիզիկական ուժով և թե իր քաջագործություններով: Այս անձնավորությունը արքա չէ, բայց կտրիճ է՝ ինչպես Փրանսիացիների Ռոյանդը<sup>9</sup>: Նա Հայկի սերունդներից է: Եվ Ֆեյդին ամբողջությամբ մեջբերում է Տորքի առասպելը. «Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռ Պասքամից, մի տգեղ, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայցքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ ու ուժ ուներ՝ արևմուտքի կուսակալ նշանակեց և ցեղի անունը կոչում է Անգեղ տուն՝ երեսի տգեղության պատճառով: Բայց եթե ուզում ես, ես էլ նրա մասին անհամ ու անտեղի ստեր կպատմեմ, ինչպես պարաիկները, որ Ռոստոմ Սագճիկի մասին պատմում են, թե Հարյուր քսան փղի ուժ է ունեցել: Որովհետև նրա ուժեղության և սրտուտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են Հար-մարում, ոչ Հերակլեսին և ոչ էլ Սագճիկին: Որովհետև երգում էին նրա

<sup>8</sup> F.Feydit, L'épopéé..., p. 30:

<sup>9</sup> Փրանսիական էպոսի «Ռոյանդի երգի» հերոսը, նաև Շառլմանժին (Կառլոս Մեծին) ներկայացնող շարքի հերոսներից է: Սա Փրանսիական զրականության հագույն հերոսական կերպարներից է: Ռոյանդը պայքարում ու մեռնում է հանուն Հավատի: «Ռոյանդի երգն» առաջին անգամ հրատարակվել է 1837-ին Փրանցիակ Միջերի կողմից:

մասին, իբր թե ձեռք էր զարնում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղքվածք չկա, ուղածին պես ճեղքում էր մեծ ու փոքր, եղունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում և նույնպես եղունգներով նրանց վրա գծում էր արծիվներ և նման բաներ:

Պոնտոս ծովի ափին պատահել է թշնամիների նավերի և վրա է Հարձակվել. նրանք հեռացել են խոր ծովը մոտ ուժ ասպարեզ: Զկարողանալով նրանց հասնել, ասում են, վերցնում է բլրաձև ժայռեր և շպրտում է նրանց հետևից: Ջրերի ալեկոծվերուց ոչ սակավ նավեր ընկղմվում են, և ջրերի պատառումից առաջացած ալիքները մնացած նավերը շատ մղոններ առաջ են քշում: Մուհ, չափազանց առասպել է այս, առասպելների առասպել»<sup>10</sup>:

Ֆեյդին չի կամենում վիպական պատումի այս առաջին շարքը փակել առանց հիշատակելու լուսանցքային մի կերպարի՝ Հայկի սերունդներից Շարային, որը խիստ բեղմնավոր էր զավակներ ունենալու հարցում և շատակեր: Հայրը նրան իր երեխաների հետ ուղարկում է բնակվելու Շիրակում, որը չափազանց բարերեր գավառ էր: Մովսես Խորենացին հիշում է գեղղուկների մեջ տարածված առածք. «Դու, ասում են, Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չու - նենք»<sup>11</sup>: Ֆեյդին հիշեցնում է Ֆրանսուա Ռարլի հերոս Գարգանյուայի համար ասված ֆրանսիական համանման առածք. «Si tu as le gosier de Gargantua, nous, nous n'avons pas les greniers du Chinonais»<sup>12</sup>: («Եթե դու Գարգանյուայի որկորն ունես, մենք Շինոնի ցորենի շտեմարանները չունենք»): Հայագետը համոզված է, թե Խորենացու ներկայացրած հայոց հին վեպի մեջ այս կերպարը գոյություն չէր ունենա, եթե նա հայկական միջավայրում նույնքան նշանավոր չիներ, որքան Ռարլի հերոսը: Զաքետք է զարմանալ, եթե Ռարլի հերոսը քշվում է զեպի հին դարեր, երեսով ավելի շուտ բացատրվում է հայոց վեպի հմայքով, որում հրաշալի ձեռվ պահպանված է մարդկային բնավորությունը:

\* \* \*

Ֆեյդին անցնում է հայոց հին վեպի երկրորդ շարքին, որն առաջինի շարունակությունն է: Վիպասարի երկրորդ շարքը սկսող կերպարը նույնպես ներկայացվում է որպես Հայկի սերունդներից: Սա Տիգրանն է, ոչ Միհրդատի նշանավոր փեսան, այլ մեկ ուրիշ Տիգրան, ավելի հին ժամանակների, որը դաշնակցեց Կյուրոսին՝ ընդում

<sup>10</sup> **F. Feydit**, *L'épopée...*, p. 31, Մ.Խ., Հ. պ., էջ 129, 131;

<sup>11</sup> **F. Feydit**, *L'épopée...*, p. 32, Մ.Խ., Հ. պ., էջ 49;

<sup>12</sup> **F. Feydit**, *L'épopée...*, p. 32;

**Աժդահակի:** Այս Տիգրանը բոլոր հայ թագավորներից հզոր էր և առավել իմաստուն, նա խիզախ էր և քաջ պատերազմող: Մովսես Խորենացին ներկայացնում է, թե ինչպես Տիգրանը Հայաստանը հար-կատու երկրից դարձնում է գերիշխող, ուր կային դիզված ամեն տեսակի հարստություններ՝ սկսած ոսկուց մինչև շքեղ հանդերձները, որոնց մեջ անզամ տղեղները գեղեցկանում էին: Ֆեյդին հիացած է Տիգրան Երվանդյանին նվիրված ներբողներով, որոնցում պատկերված է վերջինիս բանաստեղծական կերպարը. «...այս խարսյաշ և մազերի ծայրը գանգուր երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր»: Հետո պատմիչը սքանչացած շարունակում է. «որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմասատ և պերճախոս և լի ըոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն»<sup>13</sup>: Հայագետը նշում է, որ այս ներբողը ներշնչված է բամբիռների նվազի տակ հնչած չափածո երգերից:

Առասպեկում Տիգրանն այնքան հզոր պատմական դեմք է, որ Աժդահակը ձգտում է նրա հետ մտերմանալ և ամուսնանում է քրոջ հետ՝ նրան դարձնելով օրինական թագուհի: Հետագայում Աժդահակի հաշվարկները պարզվում են. այս բարեկամության նպատակն էր Տիգրանին հեշտությամբ սպանելը: Սակայն Տիգրանը զգուշացված էր քրոջից, նա պատերազմ է հայտարարում Աժդահակին և սպանում է նրան կովի ժամանակ: Այս Աժդահակը խիստ համապատասխան է «Ծահ-Նամեի» Աժդահակին, այսինքն՝ վիշապին: Ոչինչ պակաս չէ այս պատումի մեջ, անզամ Աժդահակի երազը, ուր հայտնի է զառնում նրա վախճանը և աստղագուշակների դավադիր գուշակումները:

Ֆեյդին խոսում է Տիգրանի երեք որդիների մասին, որոնցից նշանավորագույնը Վահագն էր և որի ծննդյան բանահյուսական հատվածը կա Խորենացու երկում<sup>14</sup>.

Երկնէր երկին,  
Երկնէր երկիր,  
Երկնէր և ծովն ծիրանի.

<sup>13</sup> **R. Feydit**, *L'épopée...*, p. 32, Մ.Խ., Հ. պ., էջ 85, 87:

<sup>14</sup> Չափածո հատվածները բերվում են գրաբարով, բնագրի հմայքը պահպանելու նպատակով-Ա.Դ.:

Երկն ի ծովուն ունէր զկարմրիկն եղեգնիկ.  
 Ընդ եղեգան փող ծուլս ելանէր,  
 Ընդ եղեգան փող բոց ելանէր,  
 Եվ ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,  
 Ապա թէ  
 Բոց ունէր մօրուս,  
 Եվ աչկոմքն էին արեգակունք<sup>15</sup>:

Նա նկատում է, որ պատմահայրը մի պարզ ակնարկ չի անում, այլ քերում է բանահյուսական հատվածը՝ բավականին աղատ ոտանավորով, որում սակայն ներքին ոիթմը խիստ զգալի է: Հայագետի կարծիքով այս հատվածը վերլուծական առումով դժվարին է:

Սա պետք է կարծել փոքրիկ առասպելական պոեմ է աստծու ծննդյան մասին: Իրականում սա սկիզբն է վիշտական մի երգի, որը նվիրված է Վահագնի քաջագործություններին: Սակայն չպետք է մոռանալ, որ նա մահկանացու հերոս է, որովհետև ծնվել է Տիգրան թագավորից: Վահագնը վիշտապ Աժդահակին սպանողի արժանավոր որդին է: Նա հայտնի է որպես վիշտապաքաղ, հաղթում է վիշտապներին: Ֆեյդին նկատում է, որ այս առումով Վահագնը նման է «Շահ-Նամեհ» հերոսին, սակայն համեմատվում է Հերակլեսի հետ: Վահագնի ձուլումը հունական աստծու հետ թվում է, թե ունի երկու պատճառ: Նախ հակագիռ է նոր արքա Վաղարշակի իրանական ազդեցությունը և երկրորդ՝ կա արտակարզ առիթ: Երբ Արտաշեալ հաղթում է Կրեսոսին, նա յուղացիների կուրքերը բերում է Հայաստան, դրանց թվում նաև Հերակլեսի արձանը, «որ Սկյուղեսի և կրետացի Դիպինոսի գործն էր», որոնք այդ ժամանակաշրջանին նշանավոր քանդակագործներն էին<sup>16</sup>:

Ֆեյդիի կարծիքով աստվածանալուց հետո Վահագնը այլև չէր կարող ունենալ մարդկային ծագում՝ թեկուղ թագավորական: Նա պետք է սերեր բնությունից այստեղ կրակն է՝ ջրի հետ: Ճիշտ նույն ձևով «Սասունցի Դավիթ» էպոսի Սանասարն ու Բաղդասարը սերում են ջրից և դառնում են «Հրեղեն»:

Մովսես Խորենացին իր մեկենասին հայտնում է. «Այստեղից սկսած մինչև Վաղարշակի թագավորելը Հայաստանում՝ ստույգ բան չունեմ քեզ պատմելու»<sup>17</sup>: Ահա այսպես ավարտվում է պատմահուր-

<sup>15</sup> **F. Feydit**, *L'épopée...* p. 33, Մ.Խ., Հ. պ., էջ 102:

<sup>16</sup> **F. Feydit**, *L'épopée...*, p. 33:

<sup>17</sup> Մ.Խ., Հ. պ., էջ 103, 105:

երկի առաջին գիրքը: Ֆեյդին նկատում է, որ այս ժամանակահատվածից ընդհատվում է Հայկից սերող թագավորական գերդաստանը՝ փոխարինվելով օտար Արշակունիներով, որոնք, սակայն, չուտով համարվում են ազգային:

Խորենացին պատմում է Վաղարշակ Առաջինի, Արշակ Առաջինի, նշանավոր Արտաշես Առաջինի, վերջապես Միհրդատի հետ դաշնակցած Տիգրան Մեծի մասին, այս հատվածներում փոքր-ինչ չակնարկելով բանահյուսական նյութերը: Նա մանրամասն խոսում է Սանատրուկի մասին, որը Եղեսիայի Արգար թագավորի դարմիկն էր, ինչպես նաև ազգականն էր Տիգրան Մեծի: Սանատրուկը ծծկեր ժամանակ ձյան շեղի տակ է մնում իր դայակի հետ և հրաշքով փրկվում: Այս հատվածում պատմահայրը վերտին անդրադառնում է հին վիպասքի զրուցներին. «Մրա մասին առասպելաբանում են, թե մի ինչոր նորահրաշ սպիտակ կենդանի աստվածներից ուղարկվեց, և նա պահում էր երեխսային»<sup>18</sup>: Սանատրուկից հետո թագավորում է երվանդը, որի մասին եղած ժողովրդական զրուցները Ֆեյդին վերապատմում է: Երվանդի մայրը Արշակունյաց ցեղից էր, պառաված, տգեղ ու վավաշոտ, որին ոչ ոք կին չի վերցնում, և նա ապօրինի ձեռով ծնում է Երվանդին: Երվանդին հայագետն անվանում է ուղուրապատոր (իշխանությունը բռնազավթող), որը կոտորել է տալիս Սանատրուկի բոլոր երեխաներին, ու փրկվում է միայն մանուկ Արտաշեսը: Երվանդը բացում չար գործեր է կատարում, միայն կառուցում է Երվանդակերտ դաստակերտը, որի նկարագիրը քերթողահոր մոտ խիստ բանաստեղծական է: Այն համեմատվում է երիտասարդ չքնաղ կույսի աչքերի, արտեանունքների, գեղեցիկ բերանի հետ: Սակայն փրկված Արտաշեսը մեծանում է և իր փրկչի՝ Սմբատ Բագրատունու հետ, որը նույնպես լեզենդար հերոս է, գալիս սպանում են Երվանդին ու Արտաշեսին թագավորեցնում: Սմբատի գործերի մասին պատմելիս Մովսես Խորենացին վկայակոչում է պարսից մատյանները և հայ ժողովրդական բանահյուսությունը. «...որին վկայում են նաև պարսից մատյանները և հայոց վիշպասանների երգերը»<sup>19</sup>:

Ֆեյդին հատուկ ուշադրության է արժանացը և «Հայոց պատմության» հետևյալ հատվածը. «Արտաշես վերջինի գործերից շատ բան հայտնի են քեզ այն վիշպասանքներից, որ պատմվում են Գողթնում, ինչպես քաղաք շինելը, խնամությունն ալանների հետ և Սաթենիկի իրը թե սիրահարությունը առասպելական վիշպասաններին, այսինքն՝

<sup>18</sup> F. Feydit, L'épopée... p. 34, Մ.Խ., Հ. պ., էջ 189:

<sup>19</sup> F. Feydit, L'épopée... p. 35, Մ.Խ., Հ. պ., էջ 209:

Աժդահակի սերունդներին, որ գրաված ունեն Մասիսի ամբողջ ստորոտը. կոփը նրանց հետ, նրանց իշխանության քայլքայումը, նրանց սպանությունը և չինվածքների հրկիզումը և Արտաշեսի որդիների նախանձը և իրար դեմ գրգռվելը կանանց միջոցով: Այս բոլորը, ինչպես ասացինք, քեզ հայտնի են վիպասանների երգերից, բայց մննք ես կարծառությունը կհշատակենք և այլարանությունը կճշմարտենք»<sup>20</sup>:

Ֆեղին նշում է, որ Մ.Խորենացին հաղորդում է պատմական դեպքեր, նկարագրում է Արտաշեսի և ալանների կոփը, վերջիններիս հայոց արքան կանգնեցնում է Քուր գետի ափին՝ չժողովնելով մտնել Հայաստան, հետո փախցնում է ալանների թագավորի դատերը՝ Սամենիկին, որին տեսնում է Քուրի հակառակ ափին: Եվ որպես հաստատումն իր ասածի բերում է հին վիպասքից մի քանի բանաստեղծական կտորներ.

Հեծաւ արի արքայն Արտաշես ի սեաւն գեղեցիկ,  
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթե ընդ գետն,  
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝  
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,  
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
Արագ հասուցաննելով ի բանակն իւր<sup>21</sup>:

Արտաշեսի և Սամենիկի հարսանիքը կատարվել է մեծ շքեղությամբ՝ ինչպես վկայում է Խորենացու բերած վիպասանական հատվածը.

Տեղ ոսկի տեղայր  
Ի փեսայութեանն Արտաշիս,  
Տեղայր մարգարիտ  
Ի հարսնութեան Սամինկանն<sup>22</sup>:

Հայագետը նշում է, որ Սամենիկի ու Արտաշեսի ամուսնական միությունը անամպ չէր, ինչպես այդ վկայում են երկու չափածո այլ հատվածներ, որոնք Փրանսերեն թարգմանված են ենթադրաբար.

Տենչայ, ասեն, Սամենիկ տիկին  
Տենչանս՝ զարտախուր խաւարտ  
Եւ զտից խաւարծի  
Ի բարձիցն Արգաւանայ<sup>23</sup>:

<sup>20</sup> *F. Feydit, L'épopée..., p. 35, U.Խ., Հ. պ., էջ 209, 211;*

<sup>21</sup> *F. Feydit, L'épopée..., p. 35, U.Խ., Հ. պ., էջ 212;*

<sup>22</sup> *F. Feydit, L'épopée..., p. 35, U.Խ., Հ. պ., էջ 214;*

<sup>23</sup> *F. Feydit, L'épopée..., p. 35, U.Խ., Հ. պ., էջ 100;*

Ֆեյդին ներկայացնում է նաև վիպասքի մեկ այլ բեկորը, որը պատմում է Պարսկաստանում տեղի ունեցած Արտաշեսի մահվան մասին; Նա բերում է Գրիգոր Մագրիստրոսի 33-րդ թղթում զետեղված Արտաշես արքայի սրտաշարժ հեծեծանքը մահվանից առաջ, որը լի է կյանքի ու Հայրենիքի նկատմամբ ունեցած անսահման կարոտով.

Ու տայր ինձ զծուխ ծխանի  
Եւ զառաւօտն նաւասարդի,  
Զվագելն եղանց և զվարդն եղջերուաց,  
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,  
Որպէս օրէն էր թագաւորաց<sup>24</sup>:

Հայագետն ըստ Խորենացու ներկայացնում է Արտաշես արքայի չքեղ թաղման և կամավոր մահերի նկարագիրը, բերում Արտավագդի թշնամական բողոքը մեռած հոր դեմ և Արտաշեսի հետմահու անեծքը որդուն՝ մնալու շղթայված քաջքերից.

Եթէ դու յորս հեծցիս  
յԱզատն ի վեր ի Մասիս,  
Զքեղ կացին քաջք,  
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.  
Անդ կայցես և զլոյս մի՛ տեսցես<sup>25</sup>:

Ֆեյդին նկատում է, որ Արտավագդի՝ շղթայված Արարատի վրա, նման է Կովկասյան լեռներին գամված Պրոմեթեսին և Դմբավլնդում բռնված Աժդահակ-Զոհակին: Այս հատվածի համար նա վերստին կա - րևորում է բանահյուսական նյութը. «Պառավները սրա մասին զրու - ցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարրինների կունահատության ձայնից կապանքներն ամրանում են: Ուստի դեռ մինչև այժմ էլ դարրիններից շատերը, առասպելին հե - տելելով, կիրակի օրերը երեք կամ չորս անգամ (կուանով) խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավագդի շղթաներն ամրանան»<sup>26</sup>:

Որպես փակագծային տեղեկություն Ֆեյդին բերում է *Migne-ի Հոդ - վածը* «*Dictionnaire des Sciences Occultes*»-ից («Գաղտնի գիտությունների

<sup>24</sup> Գրիգոր Մագրիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87: Այս հատվածին Գրիգոր Մագրիստրոսը կցում է հետևյալ բացատրությունը. «Եւ զայս ասեն ի վախճանելն իւրում, զոր ի գուշիկս ասանդեալ գտաք», *F.Feydit, L'épopée..., p. 36*:

<sup>25</sup> *F. Feydit, L'épopée..., p. 36, Մ.Խ., Հ. պ., էջ 230, 232;*

<sup>26</sup> *F. Feydit, L'épopée..., p. 36, Մ.Խ., Հ. պ., էջ 233;*

բառարան»), որը հետևյալն է. «Սա Շվեյցարիայի պառավների մոտ տարածված առասպել է, ըստ որի Սուրբ Բերնարդը բռնվել է ղեկերից և շղթայվել Քլեովո գանքի շրջակա լեռներից մեկում: Ըստ այս առասպելի կա մի սովորություն. Երկրի դարբինները ամեն երկուշարթի աշխատանքն սկսելուց առաջ մուրճով երեք անգամ հարվածում են սալին, որ դեմք շղթաներն ամրանան, և նա չկարողանա ազատվել»<sup>27</sup>: Ֆեյդի կարծիքով սա Արտավազդի մասին պատմվող առասպելի համապատասխան հատվածի պատճենահանումն է:

Առաջ տանելով բանահյուսական նյութերին վերաբերող իր քննությունը՝ ֆեյդին հասնում է նաև «Պարսից պատերազմ» հայ բանահյուսական վեպին, որը լայն չափերով օգտագործված է Ազաթանգեղոսի և այնուհետև Փավստոս Բուզանդի կողմից: Նա չի տալիս «Պարսից պատերազմ» վեպի անունը, պարզապես ըստ Մովսես Խորենացու օգտագործած վիպական նյութերի խոսում է Արտաշիր Պապականի կողմից Պարսկաստանում Սասանյան գերդաստանի հաստատման, ինչպես նաև Տրդատ Մեծի վիպական կերպարի մասին<sup>28</sup>:

Ֆեյդին ներկայացնում է Սասանյանների պետական հեղաշրջման ժամանակ Հայաստանի քաջ արքա Խոսրովի մատնությամբ սպանվելը: Նրա որդին՝ Տրդատ Մեծը, մի իսկական վիպական կերպար է նաև ըստ «Խորենացու «Հայոց պատմության»: Նա տիտանական ուժի տեր է, ճարտար է զինաշարժության մեջ. «...կրկեսի մրցության մեջ գերազանցեց... նաև արգիշտի Կերասոսից, որովհետև սա եղան կճղակը պոկեց, իսկ (Տրդատը) երկու վայրենի ցուլերի եղջուրը մի ձեռքով բռնելով պոկեց և վիզը ոլորելով ջախջախեց»<sup>29</sup>: Ֆեյդին նաև պատմում է, թե ինչպես երբ Պրոբոսը պատերազմում էր գոթերի հետ, սաստիկ

<sup>27</sup> **F. Feydit**, *L'épopéé...*, p. 36-37:

<sup>28</sup> «Պարսից պատերազմ» - Հին հայ ժողովրդական վեպ անվան տակ սովորաբար հայտնի է Մ.Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած Վիպասանությունը հնագույն ժամանակի հերոսների մասին: Այդ, ինչպես տեսանք, մասմամբ առասպելներ և առավելախառն վեպ, որի մեջ պատմական հիշողությունները հասնում են մինչև մեր թ. 2-րդ դարը:

Հայ ժողովուրդն ունեցել է իր ավանդական վեպը և հետագա դարերի մասին ևս: Դա «Պարսից պատերազմ» է: Այսպես կոչում ենք մեր երկրորդ հին վեպը, որովհետև դրա մեջ բանաստեղծորեն պատմված է եղել այն մեծ ու երկարատև պատերազմը, որ դարեր շարունակ մղել են Հայերը պարսիկների դեմ իրենց անկախության համար: Այդ վեպի հատվածները մնում են Ազգաթանգեղոսի, Փ.Բուզանդի, Խորենացու և Սերեսու պատմությունների մեջ: Ազգաթանգեղոսի և Բուզանդի մեջ գտնում ենք այդ վեպի ամ - բողջությունը, իշարկե ուրախածով միայն և ոչ անպատճառ այն կարգով, որով պատմվել է ժողովրդի մեջ: Խորենացին ու Սերեսու լրացուցիչ հատվածներ կամ պատմվածներ միայն ունեն (տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Գ. Երևան, 1968, էջ 197):

<sup>29</sup> **F. Feydit**, *L'épopéé...*, p. 37, Մ.Խ., Հ. պ., էջ 265:

սով է լինում, ու զորքը նրան սպանում է, իսկ Տրդատը մեն-մենակ հաղթում է զորքին: Նաև կրկեսում ձիարշավի ժամանակ, կամենալով կառքը քշել, Հակառակորդի ճարպկությունից ցած է ընկնում, սակայն բռնում ու կանգնեցնում է կառքը: Սրանք Տրդատի Հեթանոս եղած ժամանակի երիտասարդական սիմրագործություններն են: Տրդատը դառնում է քրիստոնյա, քրիստոնյա է դարձնում նաև իր ժողովրդին, և ահա զրանից Հետո նրա կերպարն այլևս վիպական չէ, այլ ստանում է վկայաբանական գրականությանը հատուկ գծեր:

Ֆեյդին հինգերորդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ Պապի կերպարում տեսնում է քրիստոնեական հավատի նկատմամբ ցուցաբերած ուրացության դեպքեր և ասում է, թե նա ծառայում էր ղեերին, որոնք օձերի կերպարանքով դուրս էին զալիս նրա ծոցից և փաթաթվում ուսերին<sup>30</sup>: Հայագետի կարծիքով սա հիշեցնում է նույնը, ինչ իրանական էպոսում պատմվում է Զոհակի մասին:

\* \* \*

Ֆեյդին իր հետազոտության առաջին հատվածում եղրակացնում է, որ Մովսես Խորենացին երրեմն հստակ ակնարկներով, երրեմն ընազրյան մեջբերումներով ապացուցում է, որ հինգերորդ դարում, նոյյ-նիսկ հենց չորրորդում, Հայերն ունեցել են իրենց հին վեպը՝ ստեղծված վաղնջական ժամանակներում, որը եղել է ծավալուն ու ոչնչով չի զիջել հնագույն այլ ժողովուրդների էպոսներին: Ֆեյդին հատկապես հայ հին վեպը հաճախ զուգահեռում է պարթևական ժամանակները պատկե-րող, ավեստական կերպարները փառաբանող Ֆիրդուսու «Շահ-Նա-մերի» հետ՝ հավաստելով, թե հանճարեղ պատմահայրն էլ Ֆիրդուսու նման իր ժամանակակիցներին օրինակ է բերել Հեթանոսական շրջանի հերոսական կերպարները<sup>31</sup>:

<sup>30</sup> R. Feydit, L'épopée..., p. 37: «Որովհետեւ երբ մարդիկ ամեն օր զալիս էին թագավորին բարի լուս ողջունելու՝ տեսնում էին որ (դևերը) օձերի կերպարանքով դուրս էին զալիս Պապ թագավորի ծոցից և փաթաթվում էին նրա ուսերին» (տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 329):

<sup>31</sup> Պարսից բանաստեղծ Ֆիրդուսին իր զույսգործոցը՝ «Շահ-Նամեն» («Թագավորների զիրքը»), գրել է սուլթան Մահմուդի պատվերով: Ըստ ավանդության Մահմուդը Ֆիրդուսուն պոեմի յուրաքանչյուր տողի համար խոստացել էր մի դինար, սակայն պոեմը ավարտելուց հետո չի տվել նոյյնիսկ մի դինար: Ֆիրդուսին շիփթ էր, իսկ Մահմուդը պյունիթ: Բացի այդ, Ֆիրդուսին իր պոեմում փառաբանում է հնագույն շրջանի իրանի հերոսներին և ոչ թե ժամանակի: Նրա պոեմն աչքի է ընկնում բուռն հայրենասիրությամբ: Հիրավի, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վիպական մասերը նոյյնպես զրված են խորունկ հայրենասիրությամբ, որը վարակիչ է և ներգործուն:

Ֆրեղերիկ Ֆեյդին իր հետազոտության այս հատվածով միջազգային հանրությանը տեղեկացնում է աշխարհի հնագույն գրական հուշարձաններից մեկի գոյության մասին, որով ինքը հիացած է ոչ պակասքան Ֆիրդուսու «Շահ-Նամե» պոեմով:

Ահա այս առումով ուշագրավ է Ստեփանոս Նազարյանի «Շահ-Նամեին» նվիրված հետազոտության մեջ եղած հետևյալ միտքը. «Хотя существует уже довольно много филологий и столько их, сколько различных народных литератур, но доселе остается еще филология, которая бы признала себя как единство, образованное из отдельных филологий, и восстановила взаимные соотношения между литературами - посредственно или непосредственно, вспять и вперед по времени - равно как соотношения между основанием их — языками; доселе остается только в возможности, в идее, филология, которая, рассматривая языки как почву литературе и самой филологии, стремилась бы сливлением их между собою сближать один с другим, отделять один от другого, устраивать и объяснять один другим, скажу более: нет еще филологии как науки, свободной от классической односторонности, от этого обоготовления некоторых народов как идолов, с уничтожением других, потому что они не известны тому или другому или будто недостойные знакомства варвары, дикари»<sup>32</sup>:

Ֆրեղերիկ Ֆեյդին իր հայագիտական հետազոտություններով կատարել է այն պահանջը, որ նրանից մեկ դար առաջ հեռատեսորեն անհանգստացնում էր Ստեփանոս Նազարյանին:

¶) ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆԻ ԲԱՆԱՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԴԱՑՎԱԾ 1965-ԻՆ  
ԲՐՅՈՒՆԵԼՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1965 թվականի նոյեմբերի 7-ին Բրյուսելի Թագավորական Ակադեմիայում կազմակերպվել և անց է կացվել հայոց ցեղասպանության 50-ամյա տարեղարձին նվիրված հիշատակի արարողություն: Հանդես են եկել տարբեր մտավորականներ՝ բնութագրելով հայ ժողովրդի հոգևոր արժեքները տարրեր տեսանկյուններից: Մորիս Լեոոյը խոսել է հայերի, հայոց լեզվի և հայ գրականության («Les Arméniens, leurs langues et leurs littératures»), Արքակ Մկրտչյանը Հայաստանի համաշխարհային

<sup>32</sup> Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 107:

արվեստի մեջ ունեցած տեղի («*La place de l'Arménie dans l'histoire général de l'art*»), Ֆրեղերիկ Ֆեյդին Հայերի ավանդույթների գլխավոր նկարագրի մասին («*Sur les caractères dominants de la tradition arménienne*»)՝<sup>33</sup>:

Ֆրեղերիկ Ֆեյդիի վերոհիշյալ բանախոսությունը սեղմ է, սակայն խիստ տարողունակ: Հայագետը ի պաշտպանություն հայ ժողովրդի շահերի հանդես է գալիս իր հիմնավոր խոր գիտելիքներով, հայ ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի, ժողովրդական բանահյուսության, կրոնական ու աշխարհիկ ավանդույթների քաջիմացությամբ: Որպես մեծ մարդասեր՝ նա կամենում է բացատրել քաղաքակրթ երկրներին, թե ժուրքերի կազմակերպած այդ հրեշտավոր եղենը ինչպիսի կորուստ է եղել ոչ միայն մարդկային ահռելի քանակ կազմող կյանքերի դաժան ոչնչացմամբ, այլև մի լուսավոր քաղաքակրթության կործանմամբ: Հայագետը մտածում է, որ գուցե Հայոց ստեղծած քաղաքակրթության ճանաչումը, արգելք կլիներ ցեղասպանությանը: Նա խոսում է միայն փաստերով: Նրա կարծիքով թեպետ հայերի պատմությունը շատ հաճախ աչքի է ընկնում ողբերգական իրադարձություններով, սակայն Հայաստանը շարունակել է անեղծ պահել իր սերը ղեպի ազգային ավանդույթները: Որքան էլ պատմական պահի մթնոլորտը դժնղակ է եղել, հայերը իրենց մեջ պահել են անաղարտ մի լույս, որը զժրախտարար գաղտնի թաքնված է եղել: Հայերենը երբեք չի եղել միջազգային լեզու, սակայն այն իր հարազատությունն ու պայծառությունն է ունեցել՝ թեպետ չի եղել կայսրության լեզու, Հայաստանը չի ունեցել ծովեր ու նավահանգիստներ, որպեսզի ազատորեն զարգացներ առևտուրը, որա հետ միասին արտահաներ իր զաղաքարները: Ֆեյդին ցավով նշում է, որ Հայկական քաղաքակրթությունը երբեք դուրս չի բերվել երկրի սահմաններից: Միշտ եղել է մի արգելք, որը թույլ չի տվել, որ հայ մտքի լուսավոր ճառագայթը փայլատակի և նշանակալի լինի արտաքին աշխարհի համար: Եվ թվում է, թե այդ արգելքի պատճառով Հայոց քաղաքակրթության վրա նետվել է մի սև քող:

Ֆրեղերիկ Ֆեյդիի կարծիքով աշխարհի այդ հատվածը ցավալիութեան չափազանց քիչ ծանոթ է Արևմուտքին: 17-րդ դարի դասական պատկերացումները ավելացան եղիպտագիտության, ասորագիտության և ավելի նորագույտ հիմքիթագիտության չնորհիկ: Սակայն բարեգության մեջ առաջատար է աշխարհի աշխարհի պատճառով Հայոց քաղաքակրթության մասին պատճառով:

<sup>33</sup> Տե՛ս «Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves» - Tom XVII (1963-1965), Bruxelles, 1966, p. 5-29.

վականին հաճախ, երբ խոսում են «Վանի արձանագրությունների», ինչպես նաև «ուրարտական թագավորության» մասին, կարելի է ասել, որ Հնագետներն ու արևելագետները, որոնք ճշգրիտ ծանոթություն ունեն այդ երկրի քաղաքակրթությանը, դեռևս շատ փոքր թիվ են կազմում: Հայաստանը կցված է Իրան-Միջագետք արևելյան շրջանին: Եթե քաղաքականապես Հայկական լեռնաշխարհի բնակիչները չեն ձեսվորել մեծ կայսրություն, սակայն քաղաքակրթության առումով նրանք խաղացել են բավականին կարելոր դեր, որպես տարանցիկ ճանապարհ դառնալով Արևմուտքի և Արևելքի համար, իր ազգային հանճարի հայտնագործումները հաղորդելով երկու կողմերին էլ: Ֆրեդերիկ Ֆեյդին անդրադառնում է Հայ ժողովրդի զարգացման բոլոր ժամանակահատվածներին՝ սկսած քարե դարից մինչև 20-րդ դար: Քարե դարում երկիրը հարուստ էր օրսիդիանի (կայծքարի) առատությամբ: Բրոնզե դարում երկրի օգտակար հանաձոնները նպաստում են ինքնուրույն ձեռվագացնելու արդյունաբերությունը: Մյուս կողմից քարերով հարուստ երկիրը, որն ուներ թեթև տուֆը, ամուր բազալտը և մարմարը, զարկ է տալիս ճարտարապետության զարգացմանը:

Ֆրեդերիկ Ֆեյդին նշում է, որ լայնածավալ Հայաստան երկրից մնացել է մի փոքրիկ նեղուց, Խորհրդային Հայաստանը, որտեղ գիտությունը ծաղկում է իր բոլոր ճյուղերով: Հայաստանի ճշմարիտ պատմությունը, ըստ պահպանված արձանագրությունների և հուշարձանների, սկսում է ստեղծվել միայն երկրորդ հազարամյակի կեսերից: Հայագետը նկատում է, որ ոչ մեկի մտքով չէր անցնի այդ լեռնոտ ու քարքարոտ երկրում զեռևս մեր թվարկությունից XIX դար առաջ չորս ակներ ունեցող կառքերի գոյության մասին: Ուրարտական պետությունը հասել էր քաղաքակրթության բարձր աստիճանին և՝ նյութական, և՝ սոցիալական, և՝ հոգեսոր առումով: Սոցիալական կազմակերպվածությունը հաստատում են այդ շրջանից մնացած ամրոցների ավերակները, կարասները, որոնք իրենց վրա ունեն չափ ու կշռ նշումներ, ջրմուղների առկայությունը, որոնցից մի մասը դեռևս օգտագործվում են: Այդ շրջանի արվեստից պահպանվել են հոյակապ արձանիկներ, բրոնզե սաղավարտներ, ափսեներ, ականջօղեր, մեծաշուրջ որմանանկարներ, որոնք մնացել են հողի տակ և երևան եկան 1950 և 1959 թվականներին Արին Բերդում: Այդ ամենը փաստերով հաստատում են, որ Հին Հայաստանում արվեստը նույնքան զարգացած էր, որքան Միջերկրականի ավագանի թագավորություններում:

Ֆրեդերիկ Ֆեյդին հարում է այն գիտնականներին, ովքեր հայերին

Համարում են եկվորներ շատ հնագույն ժամանակներից<sup>34</sup>: Նա նշում է, թե ինչպես բալկանյան և փոռողիական մշակույթի կրողները ստեղծեցին արևմտյանի իրենց տեսակը: Պատմության որոշակի ժամանակահատվածում հայերը կրել են հելլենիզմի ազդեցությունը, որի վկայությունները պահպանվում են Հանձինս Գառնիի տաճարի և նույն վայրում գտնվող բաղնիքի հատակի խանկարների:

Այնուհետև եկել է քրիստոնեակությունը, որը չորրորդ դարի սկզբում ընդունվել է պետականորեն: Սա երկիրը լիովին կտրել է հեթանոսությունից՝ այլևս անդարձ ձևով: Հինգերորդ դարի առաջին տարիներին Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է իր այբուբենը՝ ազգային լեզվով գրելու համար: Դա անմիջապես սկիզբ է դնում մի ծաղկուն մատենագրության, որում գրականությունը, աստվածաբանությունը, պատմագրությունը միակ տեսակները չեն: Նրանում շուտով տեղ են բռնում գիտության տարրեր ճյուղերը՝ ճշգրիտ գիտություններն՝ ինչպես տիեզերագիտությունն ու մաթեմատիկան, հասարակական գիտությունները՝ ինչպես քերականությունն<sup>35</sup> ու արդարադատությունն ու իրավունքը: Քրիստոնեության շնորհիվ զարգացավ ազգային ձեփի ճարտարապետությունը, որն իր կամարների ձևով կանխեց գոթական ոճը: Հանդես եկավ հայկական մանրանկարչությունը, որն իր երփներանդ

<sup>34</sup> Հայ ժողովրդի ծագման, Հայասա երկրի էթնիկական կազմի և լեզվի խնդիրների վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության I հատորում կարդում ենք. «Մեզ Հասած տվյալները Հայասա երկրի էթնիկական կազմի և լեզվի մասին այնքան կցկոտուր են, որ առայժմ դժվար է որոշակի կարծիք կազմել այդ մասին: Գերիշված կարծիքն այն է, որ Հայասա-Ազգի երկրի բնակչությունը պատկանում էին խորհիական ցեղերին: Սակայն բացահայտվում են այնպիսի փաստեր, որոնք կարող են մեկնարամմել Հօգուս Հայասացիների լեզվի հնդկերոպական ծագման: Իր ժամանակին իրենց վարկած հայտնաված այս տեսակները հետազոտում զարգացվեց Գ. Զահու կյանի կողմից: Հայասայի լեզվից մեզ Հասած սակավաթիվ տվյալների (Հայասական անձնանունների ու տեղանունների) վերլուծությունը բերեց նրան այն եղրակապության, որ Հայասական լեզուն պատկանում է Հնդկերոպական հին անատոլիական լեզուների խեթական-նեսիական (ավելի ճշտ՝ խեթական-լուսիական) լամբին, կամ որ այն թերևս ինքնուրույն հին անատոլիական լեզու է: Այս տվյալների լույսի տակ փորձ է արգում պարզելու Հայասական բաղադրատարրի բնույթը Հայոց լեզվի մեջ: Նա նույնիսկ ենթադրում է «Հայասա-իշուվական բարբառների մնացորդների» առկայությունը ուրարտերենում և հայերենում:

Այնուհետեւ անհրաժեշտ է նշել, որ եթե Hayasa անունը հիմք է դարձել հայ ժողովրդի ինքնանվան և նրա կողմից գրաղեցրած երկրի անվան, ապա այդ նույնը չի կարելի ասել հայերն լեզվի մասին: Այդ լեզուն կարող է դիտվել թերևս որպես ձևավորվող հայերն լեզվի հնագույն շերտերից մեկը, բայց ոչ նրա հիմքը, որովհետև, ինչպես կտեսնենք առաջիկայում, Հայոց լեզվի հիմքը զարձագ մ.թ.ա. XII դարից Հայկական լեռնաշխարհ թափանցած թրակա-փոյտական լեզվամբին պատկանող արիմ-արմենների լեզուն» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հ. Ի. Երեւան, 1971, էջ 194):

<sup>35</sup> Հին ժամանակներում փիլիսոփայությունը մտնում էր քերականության մեջ - Ա. Դ.:

մագաղաթներով նմանը չունի ուրիշ երկրներում: 20-րդ դարակեսի երևանը, ըստ Հայագետի, իր ճարտարապետական ձևերով կրկնում է Հայ միջնադարյան տաճարների՝ էջմիածնի, սուրբ Հոփիսիմեի, Զվարթնոցի, Հաղպատի ու Սանահինի, Աղթամարի և վերջապես մայրաքաղաք Անիի շենքերի ոճերը: Ասում են, թե Անիի ճարտարապետն է վերակառուցել Կոստանդնուպոլսի նշանավորագույն կառուցյի՝ Սուրբ Սովիայի գմբեթը: Նա գուգահեռներ է անցկացնում 20-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր ու աշխարհահռչակ գիտնական, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի և յոթերորդ դարի Հայ գիտնական, մաթեմատիկոս ու աստղագետ Անանիա Շիրակացու միջեւ: Ի դեպ, չի մոռանում Հիշեցնել Վիկտոր Համբարձումյանի երազանքը՝ տեսնել Անանիա Շիրակացու գրվածքների ամբողջական թարգմանությունը որևէ եվրոպական լեզվով<sup>36</sup>: Նա նշում է նաև Հայաստանում ոսկերչության, խեցեգործության և գորգագործության շատ զարգացած լինելու մասին:

Երկար ժամանակ, երբ Հայաստանը պարբերաբար չի կողոպտվել ու ավերվել Հարեւան ժողովուրդների կողմից, կամ տարածքով հեռու տերերի գինվորական լծի տակ չի դրվել, կարողացել է առաջադիմել իր մշակութային կանքում: Սա շատ հետաքրքիր երևույթ է, որովհետև նրա ազգային տարածքը գրավված էր մի ժողովրդից, որն իր անխառն մշակույթն ու գիտությունը չուներ:

Ֆեյդին նշում է, որ 14-րդ դարավերջին, երբ վերջ տրվեց վերջին Հայկական պետական միավորին, Հայկական մշակույթն ավերվեց ու ոչնչացվեց Հայրենիքում, և Հայերի մտավոր արտադրանքն արդեն սփովեց աշխարհի տարրեր ծայրերում ապաստանած Հայերի չնորհիվ, ճիշտ նման այն ծառերին, որոնք ճեղքում են պատը և, հակառակ ամեն արգելքի, աճում են:

Ստեղծագործելու և կառուցելու, մշակույթ արարելու ծարավը երեք չի լրել Հայերին: Սրա վառ ապացույցն է այն փաստը, որ Հայերն աշխարհի այն առաջին ժողովուրդներից էին, որ ունեցան իրենց տպագրությունը: Առաջին տպագիր գիրքը լույս է տեսնել Վենետիկում 1512 թվականին<sup>37</sup>: Ֆեյդին նշում է, որ այդ գրքում եղել են

<sup>36</sup> Անգլիացի նշանավոր Հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը Անանիա Շիրակացուց թարգմանել է «Խնքնակենսագրությունը», «Զատիկի» և «Յատնութեան» ճաները:

<sup>37</sup> Հայ առաջին տպագիր գիրքը եղել է «Ուրբաթագիրք»: Այդ գրքի անվանաթերթի վրա գրված է եղել: «Ասուն գրոց է սուրբ Ուրբաթագիրք»: Տպագրել է Հակոբ Մելապարտը: Այս գրքի և նրանց հետո լույս տեսած Հնատիկ գրքերի մանրամասն նկարագրը տես' Ն.Ա.Ռականյան, Ք.Ա.Կորկուշյան, Ա.Մ.Մավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ Հնատիկ գրքի մատենագիտություն, Առաջարանը՝ Ն.Ա.Ռականյանի, Խմբագրությամբ՝ Ռ.Ա.Իշխանյանի, Երևան, 1988:

մի շարք միջնադարյան բնագրեր<sup>38</sup>:

Ֆեյդին Հատուկ ուշադրություն է հրավիրում 1907 թվականին Մխիթարյան Հայրերից Աթանաս Տիրոյանի գրքի վրա «Écriture universelle», որով նա առաջարկում է ստեղծել էլեկտրոնիկ մի մեքենա՝ տարրեր լեզուներից ավտոմատ թարգմանություն կատարելու համար<sup>39</sup>:

Մտավոր եռանդի Համար Հայրենի Հողի վրա ստեղծված էին անտանելի պայմաններ, և գրի ու գրականության օրրան դարձավ Վենետիկը, որ 18-րդ դարակզբին հիմնվեց Մխիթարյան միաբանությունը: Այդտեղից գիտական ու մտավոր գարգացումը ուղղվեց դեպի Կոստանդնուպոլիս, որը խեղդվեց 1915 թվականի արյան մեջ: Մեծ եղեռնի զոհերի թվում Ֆեյդին առանձնացնում է իր դարաշրջանի աշխարհի նշանավորագույն բանաստեղծներից մեկին՝ Դանիել Վարուժանին, որը փայլուն շրջանավարտն է Գանտի Համալսարանի, և նրա պատկերը զետեղված է այդ ուսումնական հաստատության կենտրոնական գրադարանի ընթերցարահում:

Հայագետը նշում է, որ Հայերի մտավոր գարգացման մեկ ուրիշ կենտրոն ձևավորվեց 19-րդ դարի կեսերին՝ Ռուսահայաստանում: Ահա այնտեղ է, որ 1965-ին արդեն գործում են Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ: Ֆեյդին նշում է, որ Երևանի ազգային գրադարանում պահպանվում են տասը Հազար ձեռագրեր՝ մեր օրերը հասած քսանհինգ հազար ձեռագիր մատյաններից: Զարմանալի է, որ դարերի ընթացքում քաղաքական անկայուն

<sup>38</sup> «Ուրբաթեպքի» նյութերից են՝ «Երդումն և բժշկութիւն յոգոյ և մարմնոյ», «Աւետարան ըստ Մաթէոսի», «Ալաւթք սրբոյն Կիպրիանոսի, զոր ասացեալ է վասն դիւաց և կախարդաց, և աղանդաց», «Պատմութիւն Յուստիանէ կուսի», «Մադիանք առ ամենասուրբն Աստուծոյ», «Ազօթք Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն», «Ալաւթք պահպանութեան», «Աւետարան ըստ Մատթէոսի», «Աւետարան ըստ Մարկոսի», «Աւետարան ըստ Ղուկասու», «Աւետարան ըստ Յօհանոսու» և այլն, և այլն:

<sup>39</sup> Տարրեր ազգերի գրերի մասին ծավալուն աշխատություն է գրել գոլսոր Արմենակ Եղիայանը (տե՛ս Տորթ. Արմենակ Եղիայան, Մեսրոպիան տառերու ակունքները, Անդիքիա, 2005, 267 էջ): Օտար Երկրներում հիմնված հայկական հին տպարանների մասին Ստեփանոս Նազարյանը նկատել է. «Мы встречаем некогда процветавшие типографии армянские в Голландии, Саксонии, Англии, Польше, Константинополе, Смирне, в разных русских городах, Мадрасе, Новой Джульте и Марселе; а в новейшие времена, на волнах Адриатического моря, близ Венеции, и на острове Мальте. Это, можно сказать, единственный пример в летописях истории, что народ, испытавший на себе столь печальную судьбу, без средоточия для своих сил, среди многообразной борьбы, обладает языком ученым и утонченным во всех возможных направлениях» (տե՛ս Ստ. Նազարյան, Երկերի ժողովածու, էջ 10):

վիճակում Հայտնված Հայաստանում պահպանվել են քսանչինգ Հազար ձեռագրեր և հասել նոր օրերը<sup>40</sup>:

Ֆեղին նշում է, որ ձեռագրերի այդ թվաքանակով կարելի է դա - տել Հայ ժողովրդի՝ դեպի իր մշակույթն ունեցած մեծ նվիրման մասին. «Զգարմանանք այսքան, թվական կարևորության համեմատ Հայ ժողովուրդը մեր օրերում քայլում է նրանց հետ, ովքեր ունեն աշխարհի հոչակավորներին»<sup>41</sup>:

Ֆեղին կարծիքով յուրաքանչյուր մարդու գնահատում են ոչ միայն նրա մտավոր արթեքով: Բարոյական արժեքը ևս մեծ Հարգանքի է արժանի: Հայագետի համոզմամբ Հայերին չպետք է գնահատել մեկ առանձին անհատի խառնվածքով. մանավանդ երր գաղափար չունես այդ ժողովրդի ազգային բնավորության մասին: Ֆեղին նկատում է, թե ոմանք անվանարկում են Հայերին 1915 թվականի ջարդերի առանձին դրվագներում, ասելով, թե նրանք նահատակվեցին ու մահ գտան, որովհետև չուրացան ո՛չ իրենց Հայրենասիրական գաղափարները և ո՛չ էլ կրոնը: Մի՞թե նրանք՝ այդպես ասողները, չեղրակացրին, որ այդ ժողովուրդը գերազույն նվիրվածություն ունի իր ազգային գաղափարներին ու բնավորությանը:

Այս երկու գծերն են, որ մարդուն դարձնում են մարդ, և ժողովրդին՝ ազգ: Ֆեղին կարծիքով Հայ մարդկանց ճանաչելու համար կարիք չկա հանդիպել ու խոսել նրանց հետ, ավելի լավ է լսել նրանց անկաշկանդ զրոյցը միմյանց հետ, և հենց զրանից կերևա, թե ինչի մասին են նախընտրում խոսել, ինչպես են իրենց մտքերը Հայտնում.

<sup>40</sup> «Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-«Մատենադարանը» աշխարհի հնագոյն և ամենահարուստ մատենադարաններից մեկն է: Նրա միայն Հայերեն ձեռա - գրերի հավաքածուն այսօր բովանդակում է 10171 ամրողական ձեռագրեր և 1683 ձեռագիր պատառիկներ: ...Ինչպես Հայտնի է, մեր Մատենադարանի Հայերեն ձեռագրերի հավաքածուի հիմքում ընկած է էջմիածնի նախկին գրասան հավաքածուն, որի պատմությունը գրեթե սկսվում է դարաշրջան կազմող այն օրվանից, երբ Հայ ժողովրդի բազմերախտ զավակ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց Հայկական գիրը և հիմք դրեց ազգային մատենագրության:

Լիներով Հայ պետականության ու հոգևոր կյանքի կենտրոն՝ քաղաքամայր Վաղարշապատը հինգերորդ դարի վաղ արշալույսին հանդիսացավ այն մտավոր կենտրոնը, որի զարոցներից զուրս եկած սաները մեսրոպյան անմարելի լուսով ողողեցին ողջ Հայաստանը՝ հետեւորդ սերունդներին ավանդելով դասական այնպիսի մի մատենագրություն, որը Հայ ժողովրդի եկեղեցերով Հարուստ պատմության ամբողջ ժամանակաշրջանում միշտ հույսի ու ոգեհորության անսպառ աղբյուր հանդիսացավ» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Ա, Կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զելյթունյան, Փ. Անթարյան, Ներածությունը՝ Օ. Եղանյանի, Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մասացականյանի, Երևան, 1965, էջ 14):

<sup>41</sup> F. Feydit, Les caractères dominants de la tradition arménienne, p. 19.

«Ես վերջապես կարողացա այդ ձևով լսել ոչ թե հայերի, այլ հայ ժողովրդի խոսակցությունը»<sup>42</sup>: Նրա կարծիքով հայ ժողովրդի բարոյական կերպարը արտացղված է «Սաստնցի Դավիթ» էպոսում, որը նա հյուսել է դարերի ընթացքում՝ նրանում դնելով իր մտածելակերպն ու զգացմունքները:

«Սաստնցի Դավիթ» էպոսն առավել կատարյալ ձևով հասկանալու համար Ֆեյդին կարդացել է նաև այլ ժողովուրդների էպոսները: Նա չի տալիս մի էպոսի վերնագիրը, որն իրեն ցնցել է: Այն ստեղծված է կենդանի և աշխույժ ոճով, սակայն իր բովանդակությամբ իսկական հակապատկերն է «Սաստնցի Դավիթ» էպոսի, որովհետեւ այդ ստեղծագործության մեջ գործողությունների շարժիչ ուժը վայրենությունն ու խորամանկությունն է՝ ի սպաս դրված կողոպուտին<sup>43</sup>: Ֆեյդին տեսնում է չափազանց մեծ տարրերություն այդ էպոսի հերոսների և Սաստնա դյուցազունների վարքագիր միջն: Հայագետն ասում է, որ ինքը ծանոթ է ոչ միայն «Սաստնցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրին, այլև տարրեր պատումներին: Ուշադիր քննելով ողջ էպոսը՝ ինքն եկել է այն համոզման, որ երրորդ հյուզը ստեղծվել է միջնադարում, սակայն նրա հիմքում ընկած են առավել հին ժամանակների դեպքեր: Դավիթն իսկական ասպետ է, որը կատարում է գեղեցիկ ու նշանավոր գործեր. նա իր հակառակորդի նենգության դիմաց, որն իրեն նետել էր խոր փոսի մեջ, վրան քաշել յոթ ջաղացքար և յոթ գոմշի կաշի, զիջում է երեք զարկերից երկուսը: Մեն-մենակ կովելով թշնամու բանակի դեմ՝ նախապես նրան զգուշացնում է իր հարձակման մասին, որ թշնամին անակնակալի չգա, և անմիջապես դադարեցնում է կոտորածը, երբ իմանում է, որ Մելիքը կովունների մեջ չի:

Ինչպես Դավիթը, այնպես էլ մյուս ճյուղերի հերոսները քիչ նման են ասպետական վեպերի իդեալ-հերոսներին. Նրանք իրենց էությամբ վիթխարի դեմքեր են, և նրանց մեծագործությունները ընական են: Ֆեյդին նկատում է, որ հայկական էպոսի հերոսները երբեք կոփի ու պատերազմ չեն սանձազերծում: Նրանք նախընտրում են վտանգի մեջ նետվել մեծ տագնապի դեպքում, նույնիսկ զգալով վախը, նրանց եղակի նպատակն է պաշտպանել իրենց ժողովրդի կյանքն ու ազատությունը: Նրանք բոնականների լժից ազատում են նաև ուրիշ ժողովուրդների: Երբ օտար ժողովուրդը, ենելով երախտագիտությունից, նրանց թագավորություն է առաջարկում, Սամնա դյուցազունները

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Նույն տեղում:

մերժում են, որովհետև ոչ մի ժողովուրդ չպետք է ունենա իրենից շծնված թագավոր: Նրանց բարությունը տարածվում է ոչ միայն մարդկանց, այլև կենդանիների վրա: Որսի զնալով՝ Դավիթը քանդում է որսատեղի պարիսպները, քաջ գիտակցելով, որ բռնվածին չի կարելի խփել: Ֆեյդին Դավիթից բացի բերում է Մեծ Մհերի օրինակը, երբ վերջինս գնում է կրվելու Սասուն բերվող հացի ճանապարհը փակող առյուծի հետ: Երբ քաղաքի բնակիչները զինված գնում են նրա հետ, նա ապուծի դեմ կովում է մեն-մենակ և առանց գենքի:

Սասնա դյուցազունները սոցիալական տարբերություն չեն դնում իրենց և ժողովրդի միջե, նրանք չունեն ոչ թագավորական, ոչ իշխանական տիտղոսներ, տիրապետում են պարզ արհեստների, հովիվ ու հոտաղ են, չեն զյանում օգնության ձեռք մեկնել շինականներին՝ նրանց փոխարեն վարելով արորը:

Ֆեյդին հատուկ հիացմունքով է խոսում հայ կանանց մասին: Նրանց մեջ բացառություն է վավաշուր Սարիկեն, որն ինչպես ինքն է ասում, այլազգի է և չի էլ ուզում նմանվել հայուհու:

Էպոսի բոլոր հայ կանայք և նրանք, ովքեր հայ են դառնում ամուսնության հետևանքով, առաքինության տիպար են: Նրանցից մեկն իր ամուսնու մահից հետո, որպես սպոն նշան, փակվում է առանձին սենյակում և դուրս չի գալիս մինչև այն պահը, երբ իմանում է, որ իր թոռը պատրաստ է ծառայելու հայրենիքին, մեկ ուրիշը հանուն պետական շահի ուխտազանց է լինում և մեռնում, մի երրորդը չի կամենում ապրել ամուսնու մահից հետո և ինքնասպան է լինում:

Ֆրեղերիկ Ֆեյդին մեծապես գնահատում է «Սասունցի Դավիթ» էպոսի բարոյական դասերը և բոլոր հոգեշահ իրաւուները: Նա ասում է, որ այդ էպոսը չի ստեղծվել ընտրյալ խավի համար և նման չէ միջնադարյան խորհրդավոր գաղտնիություն ունեցող գրականությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսը բխում է հայ ժողովրդի ոգուց, դա այն բարոյական բարձր հատկանիշներ ունեցող ժողովուրդն է, որը մարտիրոսացավ 1915-ին:

Մեծ հայասեր ու մարդասեր գիտնականի այս բանախոսությունը չի կորցրել և չի կորցնելու իր նշանակությունը. այն հիմնավոր ձեռվ դատապարտում է մարդու և որևէ ժողովրդի դեմ ուղղված ամեն մի ոճագործություն:

Պ ՏՐԵԴԻԵՐԻԿ ՖԵԹԴԻԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

1960 թվականի օգոստոսի 21-25-ը Լուվենում, ապա օգոստոսի 26, 27-ին Բրյուսելում տեղի է ունեցել բարբառագիտությանը նվիրված առաջին միջազգային գիտաժողովը, որի ընթացքում (23 օգոստոսի) ֆրեղերիկ Ֆեյդին Հանդես է եկել հետաքրքիր զեկուցմամբ: Այն կոչվում է «Հայ բարբառագիտության խնդիրներն ու օգտակարությունը» («Problèmes et utilité de la dialectologie arménienne»):

Ֆեյդին ասում է, որ ինքը ծանոթ է Հայ բարբառներին: Նախ, ֆրանսիայում և Արևմտյան Եվրոպայում ապաստանել են շատ Հայեր՝ եկած Հայաստանի բոլոր գավառներից, որոնք բերել են իրեց բարբառները, և կարելի էր նրանց դիմել գիտական հետաքրքրությունը բավարարելու համար, բացի այդ, երկար տարիներ ինքը ուսումնասիրել է երգանդ Լալայանի «Աղգագրական Հանդէսը», որում եղել են բարբառներին նվիրված Հոգվածներ: Ֆեյդին հիշեցնում է իր թարգմանական աշխատանքը՝ կապված «Սասունցի Դավիթ» էպոսի հետ: Համահավաք բնագիրը, որ թարգմանում է ինքը, կազմված է հիտուն պատումներից, որոնք գրառվել են Արևմտահայտանի տարբեր գավառների բարբառներով պատմող ասացողներից: Համահավաքի կազմողները ձգտել են էպոսի լեզուն հասցնել առավել քան ոյուրդմրների լինելուն: Ինքը, այդ բնագրին շարունակ առնչվելով, յուրացրել է նաև այդ բարբառները:

Ֆեյդին բացատրում է, որ բարբառագիտությունը լեզվաբանության կարենոր բնագավառներից է, և ամեն լեզու այդ բնագավառում ունի իր խնդիրները: Եվ քանի որ ինքը մշտապես զրադվել է Հայերներով, ապա կխոսի Հայ բարբառագիտության մասին:

Հայերներ, որպես զրական լեզու, հաստատվել է Հինգերորդ դարում: Այս փաստը հաստատվում է երկու ձևով: Նախ երևան են գալիս թարգմանիչներ, որոնք Հայոց գրերի գյուտից հետո անմիջապես թարգմանում են Սուրբ գրքերը և նրանց մեկնությունները, այնուհետև ստեղծվում է ազգային զրականությունը՝ Հատկապես պատմագրությունը, վարքագրությունը, վկայաբանությունը և այլ զրական տեսակները: Անշուշտ այդ ժամանակ էլ Հայաստանում եղել են բարբառներ, սակայն դրանց վերաբերյալ որևէ զրավոր փաստ պահպանված չէ: Ավելի ուշ՝ միջնադարում, արդեն կան զրավոր վկա-

յություններ բարբառների գոյության մասին<sup>1</sup>:

Ֆեղին ասում է, որ միջնադարյան հայ մատենագրության մեջ կան բժշկագիտական նաև զուտ գիտական գրքեր, որոնք գրված են ոչ գրաբարով, այլ խոսակցական լեզվով: Բարբառներով են գրված նաև աշխարհիկ ժողովրդական քնարական քերթվածները, որոնք մուտք են գործել գրչագիր մատյաններ: Որոշ հետազա շրջանի միջնադարյան հայ պատմիչներ շարունակում են գրել սիսակներ ունեցող գրաբարով, սակայն ավանդույթին հավատարիմ մնալը նրանց համար կարենոր է: Իսկ XIII-XIV դարերի տաղասացների լեզուն դառնում է արդեն միջին հայերենը:

Հայ ժողովրդական աշուղներից հետո 19-րդ դարում ոչ գրաբարով, այլ խոսակցական լեզվով սկսում են գրել որոշ վիպասաններ, որովհետև գիտակցում են, որ գրաբարն անհասկանալի է ժողովրդին: Արևելահայերի համար մշակութային կենտրոններ են դառնում Մովկան, Թիֆլիսը, Երևանը:

Տարբեր բարբառներով խոսող հայերը բնակվում են Կովկասից մինչև Հյուսիսային Իրան ու Կոստանդնուպոլիս քաղաքում, գաղթօջախներով տարածվում են Լեհաստան, Ռուսաստան, Պարսկաստան, նույնիսկ Հնդկաստան: Իսկ բուն Հայաստանում էլ հարևան գավառների, նույնիսկ զյուղերի միջև կապը կտրվում էր տարվա մեջ ութ ամսով, որը և նպաստում էր հայ բարբառների միմյանցից հեռանալուն: Որոշ բարբառներ իսպառ վերացան 1896-ին կազմակերպված Հայերի ջարդերի, մասնավանդ 1915 թվականի եղեռնի պատճառով: Իսկ որոշ բարբառների մասին գաղափար կարելի է կազմել եղեռնից վերապրածների չնորհիվ:

Ֆեղին ասում է, որ հայերենի շատ բարբառներ հեռու են իրարից

<sup>1</sup> Հայ մատենագրության մեջ տասներորդ դարից հետո կան բազում փաստեր, որոնք վկայում են բարբառների գյուղթյունը: Քերենք գրանցից երկուար'ա՝ «Այստեղ մի փոքր ցույց կտամ լեռան բնակիչների որպահությունը, թե ինչպիսիք են և կամ ովքեր են...»: Ապրում են առանձին, աղքատոհմերով և այնչափ հեռու են միմյանցից...: Նրանց կերպ խոտորել է հայրենի բնական լեզվից՝ հեռարնակ լինելու պատճառով: Միմյանց հետ շփում չունեն, խոսում են իրար հետ կցկտուր և օտարութի լեզվով: Եվ այնքան խրթնախոս են և միմյանց անծանոթ, որ մինչեւսկ կարիք ունեն թարգմանիչների» (Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածությունը, թարգմանությունը, ծանոթագրությունները Վրեմ Վարդանյանի, Երևան, 1978, էջ 137), բ) «Այս ողբոց բանս Երևանաղէմի վաղուց հետէ շինեալ էր, բայց գեղջուկ բառի էր. ապա, Աստուած լուսաւորէ զներես վարդապետի ծնողաց Հոգին, որ մեր աղաշանացն լաց և նոր շարադրեաց, համեղացոյց զրանս և յինքենէ այլ ասաց ի վերայց» (Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2079, թերթ 210 ա, Ներսես Մովկացի, Բանա - ստեղծություններ, աշխատասիրությամբ Ա.Գ.Դոլուխանյանի, Երևան, 1975, էջ 168):

և անհասկանալի, կան նաև այնպիսիները, որոնք արխայիկ լինելով, նույնքան անհասկանալի են, որքան գրաբարը:

Հայագետը քաջատեղակ է Հայ բարբառագիտության զարգացմանը: Առաջին Հայագետը, որ գրադիվել է Հայերենի բարբառներով, եղել է Հոյանդացի Շրյոդերը, որը 1711-ին Ամստերդամում հրատարակում է «*Thesaurus linguae armenicae antiquae et hodiernae*» աշխատությունը: Նրանից հետո Հայ բարբառներին անդրադարձել է Շահան Ջրպետը (Եղոնկացի) իր «*Քերականության մեջ* (Grammaire de la langue arménienne, Paris, 1823), այնուհետև լույս է տեսնում Գևորգ Ակսվերյանի մեծարմեք գործը՝ նվիրված թիֆլիսահայ բարբառին՝ Սայաթ-Նովայի քնարերգության առիթով (Մոսկվա, 1852): Հայերենի բարբառներով զրադիվել է Վիեննայի Միսիթարյաններից նշանավոր քերական Արսեն Այտնյանը՝ իր «*Grammaire critique de l'arménien moderne*» աշխատության մեջ անդրադառնալով մի շարք բարբառների:

Հայագետն ասում է, որ առաջին հաստուկ բարբառագիտական հետազոտությունը գրել է Քերովը Պատկանյանը գերմաներեն՝ նվիրված Ագուլիսի բարբառին՝ «*Ueber den armenischen Dialekt von Akalis*»: Հետո նա մեծացնում է իր ուսումնասիրության դաշտը և անդրադառնում է նաև այլ բարբառների<sup>2</sup>: Հայ բարբառներով զրադիվել են Սարգիս Սարգիսյանը և լեհ Հայագետ Հանուչը, որը զրադիվել է լեհահայ բարբառով (1886): Այստեղ Ֆեյդին դադարեցնում է Հայերենի բարբառներով զրադիված Հայագետների թվարկումը և անցնում Հրաչյա Աճառյանի կատարածին: Նա շատ բարձր է գնահատում Անտուան Մեյեի նշանավոր աշակերտին, որը երկար տարիներ զրադիվել է Հայ բարբառների ու -սումնասիրությամբ. դրա արդյունքները հրապարակել է 1898, 1900 թվականներին: Իսկ 1919-ին լույս է տեսել Հրաչյա Աճառյանի՝ Հայերենի բարբառներին նվիրված գլխավոր գործը՝ «*Classification des dialectes arméniens*»-ը, որի մեջ առկա է Հայ բարբառների աշխարհագրական պատկանելությունը, և բարբառները բաժանված են երեք խմբի՝ 1) ում, 2) կը, 3) ել: Ֆեյդին նշում է նաև այդ ուսումնասիրության Հայերեն ավելի ընդարձակ տարրերակը, որը լույս է տեսել «Էմինեան ազգագրական ժողովածուի» մեջ 1911-ին<sup>3</sup>: Նա իր հիացմունքն է արտա-

<sup>2</sup> Խորեն այստեղ 1869-ին Քերովը Պատկանյանի հրատարակած «*Исследование о диалектах армянского языка*» հետազոտության մասին է, որը նա, ըստ ձեռքի տակ եղած գրավոր աղյուսների, խոսում է Հայերենի ութ բարբառների մասին (տե՛ս էմինեան ազգագրական ժողովածու, Հատոր Ը, Մոսկվա, 1911, էջ 2):

<sup>3</sup> Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտության» հիմնարար աշխատության մեջ, որից օգտվել է Ֆ. Ֆեյդին, թվարկելով իրենից առաջ Հայ բարբառներով զրադիված Հայագետներին, Հատուկ ձեռով նշում է. «Առանձին գլխով պետք է հիշել Հոս «Էմինեան

Հայտում Հրաչյա Աճառյանի գործի և անձի վերաբերյալ<sup>4</sup>: Տեղին ենք համարում վկայակոչել 20-րդ դարասկզբի եկրոպացի նշանավոր լեզվաբաններ Մեյեի և Կառատի կարծիքներից Հատվածներ՝ Հրաչյա Աճառյանի «Classification des dialectes arméniens par Adjarian» գրքի մասին.

## ՊՐՈՖԵՍՈՐ ԿԱՐԱՏ

Հեղինակը, որ Հայ բարբառների մասին իր բազմաթիվ մենագրություններով գիտական աշխատանքի մեջ պատվավոր անուն է կաստակել արդեն, իր այս նոր գործի մեջ, առաջին անգամ լինելով, ճիշտ գծերով տալիս է բոլոր նոր բարբառների պարզ ու ամփոփ պատկերը, թեև ուրվագծային, սակայն Հնչունաբանության ու ձևաբանության առումով առանձին բարբառներ բավականաչափ բնութագրված են, այնպես որ յուրաքանչյուրը բարբառների ամբողջության մեջ տալիս է իր Համայնապատկերը: Մասնավոր չնորհակալության են արժանի նաև բարբառագիտական մատենագիտությունը և գրքին կցված լեզվաբանական քարտեզը: Գիրքը, հակառակ իր Համեստ ծավալին, կոչված է կարծես Հիմնագիր լինել Հայ նոր բարբառների գիտության: Եվ երբ, ինչպես հույս ունենք, չուտով Հայ բարբառագիտության ընդարձակ զաշտը կփայի իր կատարյալ ծաղկման մեջ, բնավ փոքր չի լինի Աճառյանի՝ ձևով Համեստ, գովազդից զուրկ, բայց ճանապարհ Հարթող այս աշխատության արժեքը<sup>5</sup>:

## ՊՐՈՖԵՍՈՐ ՄԵՅԵ

Այս աշխատությունը, որ Փրանսերենով ներկայացնում է գիտական աշխարհին, մեկ մասնավոր բարբառի չի վերաբերում. դա Հայ բարբառների բաժանման մասին մի փորձ է: Պարոն Աճառյանը միակ անձն է աշխարհում, որ կարող էր զրել մի այսպիսի գիրք. նա անշուշտ միակն է, որ ծանոթ է եղակի ձևով մատենագիտության մեջ ցրված նյութի հետ, իսկապես նա միակն է, որն ունի անձնական դիտողությունների այն պաշարը, որի հետքն ամեն պահ երևում է այս դասա-

Ազգագրական ժողովածուի» խմբագրությունը, որ Հիմնեցավ Մուկվայի Լազարյան ձևաբանի մեջ, Հանգույցալ բազմարդյուն Հայագետն Մ.Էմինի կտակով: Ժողովածուն, որ մինչև այժմ Հրատարակված բոլոր բարբառագիտական գործերուն մեջ ամենն պատկառելի Հատորները ընծայած է, Հրատարակած է մինչև այժմ 7 գիրք, որոցմեջ Հինգը նվիրված են Հայ բարբառներուն» (Տե՛ս Էմինեան աղղագրական ժողովածու, Հ. Բ., էջ 3):

<sup>4</sup> F.Feydit, Problèmes et utilité de la dialectologie arménienne (Տե՛ս Communications et rapports du Premier Congrès International de Dialectologie générale, organisé par Sever Pop, Louvain, 1964, p. 149):

<sup>5</sup> Էմինեան աղղագրական ժողովածու, Հ. Բ., էջ X:

վորության մեջ, և առանց որի նա չէր կարող մտածել գրել այս գիրքը:

...Պարոն Աճառյանն այն մեծ արժանիքն ունի, որ ամեն կերպ աշխատում է այս վիթխարի գործի համար: Նրա գիտական արժանիքը երկում է նրա հրապարակումների մեջ: Ես որ գիտեմ, թե ինչպիսի կամք, պետք է ասեմ, ինչպիսի հերոսություն ունեցավ նա իր գիտական կրթությունը ձեռք բերելու համար և ինչպիսի նյութական ու բարոյական պայմանների մեջ առաջ տարավ երկար տարիներ երբեք չոգնող հարատևություն ունեցող իր քննությունները, որոնք քիչ քաջակեցին, պարտք եմ համարում ասել այստեղ, թե ինչպիսի հիաց - մունք ունեմ ես ոչ միայն իր գիտության, իր աշխատանք կատարելու հազվագյուտ կարողության, այլև իր նկարագրի վրա»<sup>6</sup>:

Նրա կարծիքով հայ բարբառագիտությունը հենց Աճառյանին է պարտական բազմաթիվ բարբառների բազմահմտւութեակ բնութագրման համար, որը կատարվել է երևելի մեթոդով:

Այսուհետեւ նա խոսում է 1960-ական թվականների Երևանի բարբառագիտական դպրոցի մասին, որը բարձր մակարդակ ունի, և այն առաջ են մղում Գրիգորյանը, Աղայանը, Ղարիբյանը, Վերջինս այդ ճյուղի ղեկավարն է: Նա այս լեզվաբաններին կոչում է մեծ լեզվաբաններ:

Ֆեղին հարց է տալիս, թե ո՞ւր է տանում լեզվաբանին հայ բարբառագիտությունը: Հարցին պատասխանում է Արարատ Ղարիբյանի հիմնավորմամբ, թե որեւէ լեզու անհնար է ուսումնասիրել, առանց հետազոտելու նրա բարբառները:

Հայագետն օրինակներով բացատրում է, թե որքան կարենը է բարբառների օրինաչափություններն իմանալ հայերենի հնդեվրոպական լեզու լինելու հիմքերը ստուգաբանելու խնդրում: Կան հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն բառեր, որոնք առավել հարազատ են մայր լեզվին բարբառներում քան դասական գրաբարում: Օրինակ, նապաստակ - «լենու» բառը բարբառներում կա *lapstrak* ձեռվ: Իսկ լատիներենում այն *Ierous*, *Ieporitis* ձևերն ունի: Բարբառներում մայր (*maman*) բառի համար օգտագործվում է *nana*, *nane*, *nani* ձևերը:

Նա բազմաթիվ օրինակներ է բերում «Սասունցի Դավիթ» էպոսից և Մոլիի բարբառից՝ ապացուցելով, թե բարբառները կապ ունեն ոչ միայն հնդեվրոպական արմատների, այլև այլ լեզվաբնակչություններին պատկանող թուրքերեն և արաբերեն լեզուների հետ:

Նրա կարծիքով բարբառների ուսումնասիրությունը հայերենի համար առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, որոնցից մեկը գրաբարի մեջ նրանց տարրերը չգտնելն է:

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ XII:

## Ե) Ֆ. Ֆեթին ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՈՒ ԵՐՎԱՆԴ ՕՏՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ֆ. Ֆեյդին իր ուշաղրության կենտրոնում է պահել նաև հայ նոր գրականության դրսերումները՝ հատկապես արևմտահայերենով ստեղծագործող հեղինակներին: 1960 և 1961 թվականներին «Բազմավիճում» հանդես է եկել մի հետազոտությամբ, որն անվանել է «*La Comédie et la Satire en Arménie*» («Կատակերգությունը և երգիծանքը Հայաստանում»): Այս ուսումնասիրությունը նվիրել է հայ երգիծական գրականության երկու գագաթներին՝ Հակոբ Պարոնյանին ու Երվանդ Օտյանին: Ֆրանսերենով շարադրված հետազոտությունը վերստին նպատակ ունի եվրոպացի ընթերցողին ծանոթացնել հայ նոր գրականության մեջ երգիծանքի գարգացմանը և խիստ հպանցիկ տեղեկություն տալ հայ թատրոնի պատմության վերաբերյալ: Հոդվածն ունի ենթավերնագիր՝ «*Baronian et Odian*» («Պարոնյան և Օտյան»):

Նախքան հայ երկու երգիծաբաններին անդրադառնալը՝ նա յուրօրինակ ձեռով ընթերցողին ներկայացնում է հայ թատրոնի անցած ուղին: Սկսում է Պլուտարքոսից, որը պատմում է, թե իր ժամանակ թատրոնը շատ հարգի էր հայոց արքունիքում և նույնիսկ Տիգրանի որդի Արտավազդ երկրորդը Հունարենով թատրոնի համար պիտիներ է գրել<sup>1</sup>: Հայագետը նկատում է, որ այդ շրջանի հայաստանի մշակույթը կրում էր հելլենիզմի կնիքը, իսկ բանավոր գրականությունը զարգանում էր ժողովրդական բանահյուսների և հազներգուների կողմից: Գուցե այդ ժամանակ եղել է նաև ժողովրդական թատրոն ևս, որն իր ներկայացումները հայերենով էր վարում: Հաստատ է մի իրողություն, որ այդօրինակ թատրոնը գոյություն է ունեցել Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո: Եվ Հովհան Մանդակունին՝ հայոց կաթողիկոսը, անարգել է այդ խաղերը<sup>2</sup>: Հայագետը նշում է, թե այդ

<sup>1</sup> F. Feydit, *La Comédie et la Satire en Arménie, Baronian et Odian*, (տե՛ս «Բազմավիճում», 1960, թիվ 7-8, էջ 167):

<sup>2</sup> Հ. Մանդակունին գրում է. «Այլ և զայլ ևս ազգի կերպարանս չարեաց ասել չեմ բաւական, զոր թատերն ուսուցանեն, զամբարտաւանութիւն, գհայշոյութիւն, զնենդութիւն, զմեխմեխութիւն, զամբակնութիւն, զնախանձ, զրամբասանս, վասն որոյ զեղուն պատուհասքն Աստուծոյ ի վերայ երկրի, որ սաստիկ սրտմտութեամբն ի տանջանս դաստապարտէ: ԱՀա զայս ամենայն անօրենութիւնս ստանան, որք մտանեն ի թատերս խաղուցն և ամեցուցանենն ի մարմինս իրենաց զշար պտուղ սկրմացն սաստանայի: ...Զի ուր կատակը և զուսանք են և խաղ և ծաղր լիսիք, անդ և զեք ընդ նոսա ի պարու անցանեն և սերմանեն բազում աղտեղութիւնս ի միտս զեխսցելոյն...: Զորս պարտ էր իսկ բազում քարամքը քարկոծել և յաշխարհէ հալածել, զնոսա առեալ զեխելոցն ի խաղարանս գրուանին, յորս մտանեն ողջանեամբ և եղանեն վիրաւորեալք» (Տե՛ս «Հովհանդակունի», ձառք, Վենետիկ, 1860, էջ 133-134):

Հնագույն հայկական թատրոնից մեզ չի հասել որևէ բնագիր՝ կատակերգական կամ ողբերգական: Հայոց եկեղեցին այնքան թշնամական էր այդ թատրոնի նկատմամբ, որ այն ընթացել է մի գաղտնի կյանքով և երկար էլ չի տեսել, որովհետև վեցերորդ դարից հետո նրա մասին այլևս չի խոսվում:

Ֆեյդին հայ թատրոնի գարգացման մի նոր հատված է տեսնում 17-րդ դարում, երբ 1868-ին Լեմբերգում բեմադրվեց մի եղակի վկայաբանական ողբերգություն «Հոփիսիմէ» խորագրով: Բեմադրության մեջ հանդես էին գալիք Լեմբերգի հայկական կրոնական վարժարանի տղա աշակերտները: Այս պիեսի հեղինակը կաթոլիկ միախոներ վարդապետ Ալեքսիանոսն էր: «Հոփիսիմէն» ստեղծվել է Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ եղած Հոփիսիմյան կույսերի վկայաբանության հիման վրա: Գրվել է դասական գրաբարով: Ընթերցվում է բա - վականին հեշտությամբ: Նրանում նույնիսկ հանդես է բերված սիրո եռանկունի: Հիսուսին նվիրված Հոփիսիմեին սիրում է ոչ միայն հայոց արքան՝ Տրդատը, այլև հայ իշխան Կարենը<sup>3</sup>: «Հոփիսիմէ» պիեսի գործող անձիք և գործողություններն էին՝

Ս.Գրիգոր - (Լուսավորիչ),

Հոփիսիմե - (կույս),

Գայանե - (մայրապետ),

Տրդատ - (թագավոր Հայոց),

Խոսրովիդուխտ - (Տրդատի քույրը),

Կարեն - (իշխան - սիրող Հոփիսիմեի),

Ամիլիոս - (պատգամաբեր - Դիոկետիանոս կայսեր),

Ուսա - (նախարար)

Քրմապետ և քուրմք, կախարդ, դև և զինվորք:

Տեսարան է ի Վաղարշապատ մայրաքաղաք Հայաստանեայց:

Հինգ ներգործութիւն,

Նաև վերջին տեսարան:

«Հոփիսիմէ» պիեսի մասին խոսելիս Ֆեյդին նկատում է, որ կղեւ - րականությունը թատրոնի նկատմամբ իր վերաբերմունքը փոխել էր: Թատրոնը դիտվեց որպես դարերի ընթացքում կորույալ մի ժանր, որի ուսուցողական բնույթը եկեղեցին պետք է օգտագործեր: Թատրոնի այս հատկանիշը որդեգրեցին Միսիթարյան հայրերը, որոնք գրեցին

<sup>3</sup> Բազմավեց, 1889, № 85, 86: Տե՛ս նաև Գ. Լևոնյան, Թատրոնը Հին Հայաստանում, Երևան, 1941, էջ 114-119, Saint-Martin, Sur une tragédie arménienne, «Journal asiatique», Paris, 1823, № 12, Վ. Թերդիրաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն (1668-1868), Երևան, 1959, էջ 60-65, A. Doluchanian, Literatura w ormiańskich koloniach w Polsce (ան՛ ս Studia z dziejów kontaktów polsko-ormiańskich, Lublin, 1883, էջ 65-61, լե՛սերեն):

Հոգեստը պիեսներ. Նրանցում հանդես էին գալիս նորընծա ուխտյալ հոգեստականներ, իրենց խաղով ուսուցանելով հավատացյալ ժողովրդին: Այդ թատերական պատմությունները քաղված էին հայ ժողովրդի պատմությունից ու եկեղեցու սրբերի կյանքից: Պիեսները գրվում էին դասական գրաբարով, որը պատշաճում էր նրանց բովանդակությանը: Սակայն այս պիեսները չդարձան բարձրարժեք ստեղծագործություններ. գործող անձինք խոսում էին վերամբարձ լեզվով, երբեմն ոչինչ չասող գործողություններն ընթանում էին շինծու ձևով:

Ստեղծվում էին նաև խոսակցական լեզվով կատակերգություններ, որոնք ծաղրում էին Կոստանդնուպոլսի հայ կյանքի հոռի կողմերը: Հենց Կոստանդնուպոլսում էլ հիմնվում է հայոց նոր թատրոնը՝ իր կատակերգություններով և ողբերգություններով: Սա հավանաբար առաջ եկավ XIX դարի սկզբներին՝ Միխթարյանների չնորհիվ: Բայց միայն 1850-ից հետո Կոստանդնուպոլսում հանդես եկավ խակական հայ թատրոնը: Այն իր բարձրակետին հասավ Սրապիոն Հեքիմյանի, Մկրտիչ Պեշիկթաշյանի չնորհիվ: Այս երկուսն էլ ճշմարիտ գրողներ ու արվեստագետներ էին: Հետո հայոց թատրոնին նոր կյանք հաղորդեց Հակոբ Վարդովյանը, որն այդ գործի հմուտ կազմակերպիչն էր: Հանդես եկան տաղանդավոր դերասաններ, մեծ դերասանուհիներ, որոնք հայ թատրոնին հաղորդեցին արևմուտքի շունչը: Կինը հանդես եկավ ըեմի վրա, այն էլ Կոստանդնուպոլսում: Սա արդեն խակական հայթանակ էր: Հանդես եկավ կատակերգակ Գարեգին Ռշտունին (1840-1879), որին համարեցին հայկական Մոլիեր: Ֆեյդիի կարծիքով այս համեմատությունը չափազանց էր, որովհետև Ռշտունին, հարկավ, բավականին լավ երգիծաբան էր, սակայն նրա կատակերգությունները չբարձրացան զավեշտի մակարդակից: Նրա լավագույն երկը դարձավ «Վեց ու կէս պորտի ժառանգ սնտուկը»:

Ֆեյդին նկարագրում է խակական Մոլիերի հանդես գալը հայ թատերական կյանքում: Դա Հակոբ Պարոնյանն էր:

Նա համառոտ ներկայացնում է մեծ երգիծաբանի կենսագրությունը: Հակոբ Պարոնյանը ծնվել է Աղբիանապոլսում 1843-ին, համեստ ընտանիքում: Նա շատ ուշ է սկսել սովորել՝ մոտ 15 տարեկանում, բայց նրա ուսումը եղել է կարճատես: Երեք տարի սովորել է հայկական և մեկ տարի հունական դպրոցում: Սակայն շատ արագ կատարելագործվել է հայերենի, դասական հունարենի և ֆրանսերենի մեջ: Սա հնարավորություն է ընձեռել բնագրով կարդալ Թեոփրաստեսին, Արիստոփանեսին, Լա Բյուեսին, Մոլիերին, և անշուշտ ֆրանսերենի միջոցով ծանոթացել է լատինացի երգիծաբանների հետ: Թվում է, թե նա ծանոթ է եղել Գոլդոնիի գործերին: Երեք քառորդով ինքնուս Պա-

րոնյանը իրեն նախապատրաստել է գրական գործունեության համար, որը դարձավ նրա կոչումը: Նա եռանդուն գրող էր, սակայն վախճանվեց շատ շուտ՝ 1891-ին: Նա շատ է գրել, բայց ստիպված է եղել շարունակ Հոգալ ընտանիքի նյութականը: Իր կյանքի ընթացքում երբեմն կարճ ժամանակներ նյութականը հոգացել է գրելով՝ հրատարակել է երգիծական ամսագրեր: Այնուհետև փորձել է դրամ վաստակել բազում բնագավառներում: Եղել է ուսուցիչ, քարտուղար առաջնորդարանում, գրավաճառ և այլն: Ասում են, թե կյանքի վերջին տարիներին նույնիսկ գրադարձ չեղանական դաշտում նրան երբեք չի լրել<sup>4</sup>:

Հստ Ֆեյդիի՝ Պարոնյանից առաջ հայոց թատրոնը ճիշտ նույն վիճակում էր, ինչ վիճակում էր ֆրանսիականը՝ Մոլիերից առաջ: Եվ ահա երիտասարդական առաջին պիեսը՝ «Ատամնաբույժն արևելյան», նրան բերում է առաջին հաջողությունը: Ներկայացվում է, թե ինչպես արևելյան ատամնաբույժը սովորական բժիշկ չէ, նա ատամ հանելիս ծառայի ձեռքով հիվանդի վրա պահում է աստրանակը: Նա ոչ թե բժիշկ է, այլ իսկական շառադատան (խարերա): Ֆեյդին հողվածում վերաշրադրում է երգիծական այդ երկի ողջ բովանդակությունը: Հայագետը վերջում նշում է, թե ինչպես ատամնաբույժի աղջիկը հրաժարվում է իր փեսացուից» Մարգարից, փոխում է իր մտադրությունը և սիրահարվում ավելի ժամանակակից երիտասարդի՝ Լևոնին, և վերջում նախակին փեսացուն հաճոյանում է նրա այդ որոշման համար<sup>5</sup>:

<sup>4</sup> Հակոբ Պարոնյանի նյութական ծանր վիճակի մասին վկայում են ժամանակակիցները. «Զը գտնվեցավ հայ եկեղեցական մը որ Հոգեհանգառյան պատարագ մընէ և Պարոնյանի Հոգիին համար աղոթե: Բայց հանցավորն ո՞վ է. նոյն ինքը Պարոնյանը չէ, որ մեռած ատեն իր Հուղարկավորության ծախքերն հոգալու չափ անզամ դրամ չը թողոց»: (Հայոն Ասատոր, «Մի դրվագ. Պարոնյանի կյանքից», տե՛ս Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Աշխատասիրությամբ Ալ. Մարգարյան, Երևան, 2004, էջ 63): «Ուրիշն քանի որ միջոցը ուներ դրամ շահելու, այդ ալ չէր Պարոնյանի գրական հրապարակը նետվելուն նպատակը. փառասիրությունը բնավ գեր չուներ, ըստի է թե պարզապես կ'զգար, թե ինք հանձար մ'էր և հետեւարար պետք էր օգնել մեր աղքատ գրականության և օգնեց լիուլի:

Հետևարար կրնանք եղրակացնել թե Պարոնյան հացի մը պատառին համար չէր որ կը գրեր, քանի որ Հետզհետու պիտի տեսնենք, որ իր զավակներով միասին անոթի մաս - ցած գիշերները ունեցած էր, առանց 5 փարախի ունենալու, և որպեսզի շոգենավի և օխա մը հացի դրամ ճարե՛ օխայով ծախած էր իր այն գործերը, որոնք այսօր սպառած և լմնցած են բոլորովին ուկիններ արժելով. այսօր շատ ու շատ փնտրողներ կան» (Հովհաննես Գայսերյան, «Հակոբ Պանոնյան», տե՛ս նույն տեղում, էջ 161-192):

##### <sup>5</sup> Երանյակ

Հապա ես', որ Լևոնը կը սիրեմ:

##### Մարթա

Պապանձե:

##### Մարգար

Ֆեյդին նշում է, որ «Ատամանաբույժն արևելյան» կատակերգությունը գրվել է 1868-ին, երբ Պարոնյանն ընդամենը 25 տարեկան էր:

Նա իր այդ գործը չի համարում հաջողված և շատ չուտով գրավաճառից հետ է վերցնում կատակերգության բոլոր օրինակները:

1886-1887 թվականների ժամանակահատվածում Պարոնյանն իր երգիծական «Խիկար» ամսագրում տպագրում է իր մեծ պիեսը, որն անմահություն պիտի բերեր հեղինակի անվանը: Այդ պիեսը «Պաղտասար աղբարն» էր: Քսան տարուց մի փոքր պակաս ժամանակահատված է բաժանում հեղինակին իր առաջին պիեսից, և Պարոնյանը դառնում է արվեստի խկական վարպետ: Նրա այս նոր գործը, ըստ Ֆեյդիի, լիովին համեմատելի է Մոլիերի գրվածքներին: Սա արդեն ընավորությունների կատակերգություն է: Նրանում կան տիպեր: Այս - տեղ պարզ ընտանեկան դավաճանություն է, որի բովանդակությունը ներկայացվում է տրամարանորեն, և դիտողը կարող է դրա մասին դատել ինքը: Ֆեյդին պատմում է կատակերգության բովանդակությունը: Բաղդասարը ամուսնանում է գեղեցիկ ու պչորոց մի կնոջ հետ և մի օր իր կնոջը տեսնում է անծանոթ տղամարդու հետ հանդիպումների տնից թևանցուկ գուրս գալիս: Իր գժրախստության մասին պատմում է մտերիմ բարեկամին՝ Կիպարին, առանց իմանալու, թե հենց նա էլ իր կնոջ սիրեկանն է: Ֆեյդին հետաքրիր ձևով բնութագրում է կատակերգության երեք կերպարներին: Խարված ամուսին Բաղդասարը, որը դատարանի միջոցով գուր ջանքեր է թափում անհավատարիմ կնոջը պատժելու, պարտվում է և որոշում է փախչել Ամերիկա:

Անուշը՝ Բաղդասարի կինը, ըստ Ֆեյդիի, մի ծերծեքող, խորամանկ, ամութը կորցրած անձ է, որը ոչ միայն խարում է ամուսնուն, այլև անամոթ ձևով գրպարտում է նրան: Կիպարը մինչև իր մերկացումը ձևանում է բարեկիրթ ու ազնիվ, իսկ երբ ամեն ինչ բացահայտվում է, և նրա դիմակը պատովում է, դառնում է մի խսկական ցինիկ՝ Բաղդասարին դիմելով հետևյալ մեղադրանքով. «Մեծ սխալ գործեցիք, Պաղտասար աղբար, զրպարտելով ձեր կինն ու անոր հետ ձեր մտերիմն, որ

---

Ահա ես ալ հրապարակավ կը հայտնեմ միտքս, իմ փափաքս ալ ան է, որ Երանյակը Լսոնի հետ ամուսնա, և մեծապես շնորհակալ եմ, որ առաջուց իմաց տվագ:

#### Երանյակ

Պարոն Մարգարի ցուցուցած մարդասիրութենեն գոհ եմ, և ահա կը խոստանամ մինչև վերջին շունչ Լսոնի հետ ապրի:

(տե՛ս՝ Հակոբ Պարոնյան, Երկեր, Երևան, 1979, էջ 547):

“«Ալ համոզվեցա, թե այս անպատճի կնիկն բաժնիլ կարելի չէ, բայց որովհետև անպատճի ապրիլն ալ անհնար է ինձ, քիչ մը ժամանակ ալ ակռաներս կը միմնեմ, գործերս ուղածիս պես կը կարգադրեմ և օր մը կենևմ Ամերիկա կը փախչիմ...Ուրիշ ճարչկա» (Հ.Պարոնյան, Երկեր, էջ 650-651):

այնքան սեր, վստահություն ու համակրություն կը տածեր ձեզի համար»: Եվ դեռ ավելին, Կիպարը շփոթության մեջ գցելով Բաղդասարի ողջ շրջապատին, վերջինիս վճարել է տալիս այն ծախսերը, որոնք նախօրոք ինքը խստացել էր իբրև պարզե:

Ֆեյդին անդրադարձել է նաև Հակոբ Պարոնյանի «Ազգային ջողեր» գործին, որի «Հառաջարանում» հեղինակը գրում է. «Մենք այս հրատարակությամբ աշխատած ենք մեր ազգին մեջ գտնված երևելի անձերուն կենսագրություններն ընելով՝ անոնց թերություններն ցուց տալ այն անաչառությամբ, որ կենսագրե մը կը պահանջվի՛ առանց, սակայն, դուրս ենելու հեգնարանության սահմաննեն»: Հայագետը նկատում է, որ «Ազգային ջոջերում» պատկերված են Հակոբ Պարոնյանին ժամանակակից պղսահայ նշանավոր անձերի ծաղրանկարները: Նա ցավում է, որ Պարոնյանի շատ գործեր լույս են տեսել պարբերականների էջերում, և դրանք դժվար է գտնել: «Այստարանութիւնը բարոյական» գործում նրա նկարագրած դիմանկարները հիշեցնում են Բյուեռի բնավորությունները: Պարոնյանն աղդվել է Բյուեռից, սակայն պահպանել է իր ինքնուրուցնությունը:

Մի առանձին ոգևորությամբ է Ֆեյդին գրում «Քաղաքավարութեան վնասները» գործի մասին: Նրանում պատկերված դեմքերը վերստին հիշեցնում են Մոլիերի և Բյուեռի հերոսներին: Նա բերում է այս երկի առանձին պատումներ, որոնցում պատկերված են քաղաքավարի մարդուն անհարմար վիճակի մեջ դնելու ծայրաշեղ երգիծելի դեպքեր: Մարդն, օրինակ, փորձում է նոր կոչիկ պատվիրել, բայց երբ գնում է կոչիկները վերցնելու, պարզվում է, որ դրանք չափազանց փոքր են: Սակայն կոչկակարը իր աշակերտներով ուժով աշխատում է Սեղրակ աղայի՛ պատվիրատուի ոտքը մտցնել նեղ կոչիկի մեջ՝

Մեկ ուրիշ պատում նկարագրում է Մելքոն աղայի քաղաքավարության զոհ դառնալու գրոտեսկային միջաղեալը: Փոխանակ վերլու-

---

7 - Կոխեն ոտքդ... .

- Ինչպես կոխեմ, ճանըմ, չեք հասկնար կոր, որ ոտքերս կէրին կոր, կարծես թե կրակի մեջ կոխած եմ...թող տվիք, ասսվածնիդ սիրեք, սա ի՞նչ խոսք չհասկցող մարդոց հանդիպեցանք...

- Բարկանալու իրավունք չունիք, Սեղրաք աղա... .

- Զունիմ, աղբար, չունիմ, դուք իրավունք ունիք բարկանալու, թող տվիք, սա ոտքս քաշեմ:

Կոչկակարն ուժով բռնած է Սեղրաք աղային ոտքեն, որուն ինը տասներորդ մասը մտած է կոչիկի մեջ:

- Ծատ թափանդիր եք, Սեղրաք աղա:

Սեղրաք աղան կզաք, թե գերի բռնված է, ուստի անձնատուր կըլլա կոչկակարին, որ յուր խումբովը կը հաջողի կոչիկներն անցնել յուր հաճախորդին ոտքերուն:

ծելու երգիծապատումը՝ ֆեյդին թարգմանաբար մեջբերում է մի մեծ դրվագ: Մելքոն աղան Հոգնած իր ցերեկային աշխատանքից՝ որոշում է տրամվայ նստել և երբ նստում է, տեսնում է, որ տրամվայում միայն մեկ մարդու տեղ կա ու շտապով նստում է: Շուտով տրամվայ է մտնում մի գիրուկ մարդ և տեսնելով Մելքոն աղային՝ ասում.

- Շատ ուրախ եմ, ձեզի հոս տեսնելու համար:

- Ես ալ նույնպես, - կպատասխանե Մելքոն աղա:

- Ձեզի խոսելիք ունիմ, բայց նախ և առաջ կրնա՞ք արդյոք ինձի ալ ձեր քովն առնել, սանկ քիչ մը իլիշմի ըլլամ, սանկ պղտիկ տեղ մը բանաբ նե, բավական է ինձի համար, ես կրնամ սղմվիլ, արդեն պղտիկ մարդ մ'եմ:

Մելքոն աղան յուր բարեկամին տեղ շինելու համար ասդին կը դառնա, անդին կը դառնա, աջ ծունկը ձախին վրա կը դնե, պղտիկնալու կը ջանա...:

- Ահ, ինքինքու ինձի համար անհանգիստ մի՛ ըներ, ես կրնամ հոս սղմիլ, կըսե ու, որպես թե տեղ գտած է, Մելքոն աղային ծունկին վրա կը նստի:

- Անհանգիստ չըլլապ...

- Ամենակին, ամենակին, դուք ձեր հանգիստը նայեցեք, կարծեմ թե ձեզի քիչ մը անհանգիստ ըրի:

- Ո՛չ:

- Զմեռ է հիմա, սըխ նստինք նե, կը տաքնանք:

- Այո՛:

- Եթե պեոյուղյուր եղաք, կաղաչեմ, ըսե՛ք:

- Ո՛չ, - կը պատասխանե Մելքոն աղան, որ հազիվ կրնա չունչ առնել:

- Ի՞նչ կա, ի՞նչ չկա, նայինք, Մելքոն աղա:

- Ոչինչ:

- Տունը ինչպե՞ս են, չոճուխները աղե՞կ են:

Մելքոն աղային ծունկերը կսկսին թմրիլ, քրտինքը ճակտեն կը վազե, ի՞նչ ընե, քաղաքավարությունը կը պահանջե, որ մեր բարեկամները չվշտացնենք ոչինչ բաներու համար»<sup>8</sup>:

Ֆեյդին նշում է, թե հնարավոր չէ հողվածում զետեղել երգիծական այդ պատումների երկար երկխոսությունները, սակայն փաստ է, որ հենց նրանցում է Պարոնյանի գրածի հմայքը:

Հակոբ Պարոնյանի առավել նշանակալի գործերը համառոտ ներ-

<sup>8</sup> Բաղմակեա, 1960, էջ 174, Հ. Պարոնյան, Երկեր, էջ 311–312:

կայացնելուց հետո ֆեյդին նշում է գրողի ամենանշանավոր երկը «Մեծապատիվ մուրացկաններ» վեպը: Թեպետ երկը ներկայացված է որպես երգիծական վեպ, իրականում այն մի կատակերգություն է՝ բաղկացած ծիծաղաշարժ երկսոսություններից: Վեպի գործող անձիք դրվագային են, կենտրոնականը գլխավոր հերոսն է և նրան հյուրընկալը:

Ֆեյդին պատմում է, թե մի ազարակատեր Տրավիդոնի շրջակայթից գալիս է Կոստանդնուպոլիս ամուսնանալու նպատակով: Նրան կոչում են Արիսողոմ աղա: Ահա թե ինչպես է նրան պատկերում Պարոնյանը. «...օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթով... չէ՛, չէ՛, մեկ քիթով, թեպետև բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել, անոր մեծությունը սխալեցուց զիս»<sup>9</sup>:

Հայագետի զիտողականությամբ Հեղինակը մեկ առ մեկ ներկայացնում է կենսամիջոցներ չունեցող այդ մտավորականներին, որոնք մակարույժներ են և հարձակվում են իրենց զոհի՝ Արիսողոմ աղայի վրա: Պարոնյանը Արիսողոմ աղայի կերպարով ծաղրում է հայ նոր հարուստներին («les nouveaux riches arméniens»), որոնք պատրաստ են տալ ամեն ինչ, միայն թե իրենց անունը տպվի թերթերում կամ արտասանվի եկեղեցում:

Հազիվ էր Արիսողոմ աղան ոտք դրել Ղալաթիո նավամատուցիչ վրա, երբ նրան մոտենում է բարձրահասակ, թխաղեմ, փոքր աչքերով, ուսերը վեր տնկած, կեղծ ժպիտով մի մարդ և նրան հարցնում է.

«- Դո՞ւք եք Արիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր չոգենավով եկաք, ի՞նչպես եք, ձեր եղբայրն ի՞նչպես է, ազգային գործերն ի՞նչպես են Տրավիդոն, Հացին գինը քանի՛ է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը»<sup>10</sup>: Թերթի խմբագիրն է սա, ով մի քանի ոսկի կորզելու և Արիսողոմ աղային իր բաժանորդը դարձնելու համար խոստանում է նրա մասին մի պատվական հողված գրել: Նա նույնիսկ նկարագրում է իր ապագա հողվածի բովանդակությունը: Պիտի գրի, թե Տրավիդոնից մայրաքաղաք եկավ մեծապատիվ Արիսողոմ աղա երևելի վաճառականը, որն իր լեզվագիտությամբ վաճառական հմտությամբ ծանոթ է ազգին: Խմբագիրը համենայնդեպս սկսում է հարցնել, թե արդյոք աղան գիտի՛ տաճկերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն: Պարզվում է՝ ոչ: Սակայն սա արգելք չի, որ թերթում գրվի աղայի լեզվագետ լինելու մասին: Երբ Արիսողոմ աղան իմանում է, որ թերթում միայն

<sup>9</sup> Նույն տեղում, «Բաղմավէպ», 1960, էջ 176, Հ. Պարոնյան, Երկեր, էջ 214:

<sup>10</sup> «Բաղմավէպ», 1960, էջ 176: Հ. Պարոնյան, Երկեր, էջ 215-216:

պատվավոր ազգայինների անուններն են գրվում, իսկույն համաձայնում է և սկսում է թվարկել իր առավելությունները: Նա ունի արտեր, եղներ, կովեր, ազարակներ, երկու-երեք սպասավորներ, ուսկուց ժամացուց և շղթա էլ ունի: Ըստ որում իննդրում է այդ բոլորը գրել խոչոր տառերով: Զի մոռանում զգուշացնել՝ եթե այդ թերթում գրում են աղքատների մասին, ապա իր անունը պետք չէ գրել: Այդ հարցին խմբագիրը պատասխանում է. «- Բնավ երեք, ստակ չունեցողներուն անունները բնավ չենք գրեր, նույնիսկ եթե հազար ուկի ալ տված ըլլան դպրոցի մը շինության համար»<sup>11</sup>:

Հետո Մանուկ աղայի տանը Արիսողոմ աղային այցելում է քահանան: Նա շողոքորթությամբ ննջեցյալների պատարագի համար կորդում է երկու ոսկի: Քիչ ժամանակ շանցած Արիսողոմ Աղային են ներկայանում բանաստեղծն, այնուհետև լուսանկարիչը և մյուսները՝ բոլորն էլ դրամ շորթելու նպատակով: Վերջապես գալիս է ամուսնության միջնորդ կինը՝ տիկին Շուշանը, որից հետո վեպի գլխավոր հերոսն այլևս չի կամենում մնալ Պոլսում, հավաքում է իրերը և հեռանում:

Ըստ Ֆելդիի՝ վեպի երկրորդ տիպական կերպարը Արիսողոմ աղայից հետո Մանուկ աղան է, որն իր կյանքն անցկացնում է սրճարաններում՝ զբաղվելով դատարկ շատախոսությամբ: Հայագետի կարծիքով Հակոբ Պարոնյանի երկերին հատուկ է կենդանի կյանքի դիպուկ ու երգիծական նկարագիրը, որի համար նա գտնում է անհրաժեշտ բառեր, իսկ նրա պատկերած կերպարներն աչքի են ընկնում կատարյալ իրատեսական բնափորությամբ: Սրանք կերպարներ են, որոնք կրում են տեղի ու ժամանակի կնիքը, սակայն նրանք նույնքան վերժամանակյա են և համամարդկային: Բաղդասար աղբարը 19-րդ դարի վերջի հայ միջավայրի կերպար է, որը մեծ խելքի ու մեծ պահանջների տեր չէ և ինչ-որ առումով միշտ ուշացած է իր ժամանակից: Նա Կիպարին և Արիսողոմ աղային համեմատում է Տարտուֆի և պարոն Ժուրդենի հետ, որոնք Փրանսիական միջավայրի ծնունդ են:

Ավարտելով Հակոբ Պարոնյանի կյանքի և ստեղծագործության վերլուծության համառոտ նկարագիրը՝ նա անցնում է Երվանդ Օտյանին: Վերատին սկսում է գրողի կենսագրությամբ: Երվանդ Օտյանը ծնվել է 1869-ին Կ.Պոլսի արվարձան Ենիզեյուղում: Նա Գրիգոր Օտյանի դարմիկն էր: Տասը տարեկանից սկսել է ճամփորդել իր հորեղբոր հետ. այցելել է Ֆրանսիա, Իտալիա: Ընդհանրապես իր կյանքի մի մեծ հատ-

<sup>11</sup> «Բաղմակէպ», 1960, էջ 177, Հ.Պարոնյան, Երկեր, էջ 218:

վածն անցկացրել է արտասահմանում՝ Եղիպտոսում և Եվրոպայում<sup>12</sup>: Տարրեր պատճառներով, ինչպես Հակոբ Պարոնյանը, շատ քիչ է դպրոց հաճախել, սակայն ի տարրերություն Պարոնյանի առավելություն է ունեցել շատ ճամփորդելու և Արևմուտքը լավ ճանաչելու: Նա էլ իրեն փորձել է տարրեր բնագավառներում և հրատարակել է երգիծական ամսագրեր: Օտյանը երբեք չի անդամակցել որևէ կուսակցության, սակայն շատ մոտիկից հետեւ է քաղաքականությանը: Իր էության մեջ Օտյանը ճշմարտության պաշտպանն էր և Արևմուտքի արժեքների կրողը: Հավատարիմ մնալով հայոց լեզվին՝ իր երկերում ցոլացրել է ֆրանսիական մտածողությունը:

Ֆեյդին Օտյանին որակում է որպես մեծ վիպասան և նորավեպի վարպետ, որի գրական մեթոդը ուսալիղմն էր: Նրա վեպերի գեպերը քաղված են Կ.Պոլսի միջավայրի կյանքից: Նա երգիծական բնույթի վիպասան է: Օտյանը կարողացել է ստեղծել երգիծական կենդանի գեմքեր, որոնց քաղել է իրական կյանքից: Որպես կատակերգության հեղինակ Օտյանի հայտնի է միայն մի պիեսով՝ «Ֆրանքո-թուրքական պատերազմ կամ Զարշըլը Արթին աղա», որը գրել է Միքայել Կուրճյանի հեղինակակցությամբ: Այս կատակերգությունը միշտ ունեցել է մեծ հաջողություն, սակայն ենթարկվել է չափազանց խիստ քննադատության, որի մեջ անտեսվել է երկի ողջ գրական արժեքը:

Ֆեյդին երկու խոսքով կամենում է բնորոշել հայերի դարավոր մղումը գեպի արևմտյան քաղաքակրթությունը: Հնագույն ժամանակներում հայերը իրենց համար ուղեցուց ընտրեցին հելլենիզմը, իսկ քրիստոնեության ընդունումից հետո դարձան ընդհանուր քրիստոնեական մշակույթի ու գրականության կերտողներից: Խաչակիրների արշավանքների ժամանակ Կիլիկյան հայկական թագավորությունը կողմնորոշվեց գեպի եվրոպա: Այդ կապը թուրքացավ 1375-ին՝ այդ թագավորության անկումից հետո, որին հաջորդեց նոր հարված՝ Կոստանդնուպոլսի գրավումը թուրքերից ու թուրքական լծի հաստատումը:

Նա 19-րդ դարը, հատկապես նրա երկրորդ կեսը, համարում է հայ Հոգեսոր կյանքի և գրականության Վերածնունդ, այսինքն՝ վերադարձ գեպի արևմտյան քաղաքակրթություն: Այս շարժումը որոշ չափազան-

<sup>12</sup> Երվանդ Օտյանը 1915 թվականի աղքակործան եղեռնի ականատեսն է: Նա հրաշքով փրկվել է երիտթուրքերի կազմակերպած արևմտյան այնից այդ գողգոթայից և իր տեսածն ու տառապանքը թողել սերունդներին հիշատակարանի ձևով, որն առաջին անգամ առանձին գրքով հրատարակվել է «Նախրի» հրատարակչությունը (Տե՛ս երուանդ Օտյան, Անձեռական տարիներ, 1914-1919 (անձնական լիշտառակներ), աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Երևան, «Նախրի», 2004, 581 էջ):

ցություն առաջացրեց փոքր մտքի և ոչ զարգացած մարդկանց մոտ, որոնք ուղղում էին ապրել, կենցաղավարել ու խոսել *alla francā*, այսինքն՝ արևմտյան ձևով:

Ֆեյդին ներկայացնում է *alla francā* վարքագծով ապրող հայ ընտանիքը՝ ըստ Օտյանի մի երկի: Ամուսինն իրեն կոչում է Արթին աղա, իսկ կինը նրան անվանում է մըսյո Պատքալ, իսկ իրեն էլ էվֆիմե, իսկ Արթինը կնոջը կոչում է էվֆիմկ հանրմ: Ինչ վերաբերում է աղջկա անվանը՝ մայրը նրան կոչում է Ռոզ՝ Փրանսիական ձևով, հայրը խոսակցական հայերենով՝ Վարդուկ: Մայրը խոսում է քերականորեն մաքուր հայերենով՝ զարդարուն ֆրանսերեն բառերով, հայրը՝ հայերեն խոսակցական լեզվով՝ համեմված թուրքերեն բառերով, այսինքն՝ մի լեզվով, որով խոսում են շուկայի վաճառականները: Հայրը աղջկա համար, որպես ապագա փեսա ընտրում է շուկայի վաճառականներից մեկին, իսկ մայրը միայն խոսում է զոկտոր Շավարշի մասին, որը բժշկական դիալոց է ստացել Փարիզում: Իսկ Ռոզին դուր չեն գալիս ո՞չ հոր և ո՞չ էլ մոր ընտրածները: Նա գաղտնի սիրում է մի կիրթ ու առաքինի երիտասարդի: Մայրը իր տանը գրական սալոն է ստեղծում, ուր այցելում են դոկտոր Շավարշը, լրագրողը և բանաստեղծը: Մի երեկո նրանք ձեռնարկում են լրագրողի գրած պիեսի բնմադրությունը: Արթին աղան հանկարծ արթնանում է երկարաշունչ ճառերից ու ծափերից՝ մտածելով թե հրդեհ է, գիշերազգեստով և թասակով ներս է խուժում: Բոլորը կարծում են, թե դա պիեսի հատված է, և ողջունում են նրա մուտքը, որն ավելի է մեծացնում Արթին աղայի զայրութը: Պիեսի վերջում Արթինի աղջիկն ամուսնանում է նրա հետ, ում սիրում է:

Ֆեյդիի կարծիքով Օտյանին ամենից ավելի փառք բերողը եղել են նրա երկու հիմնական ստեղծագործությունները:

1. «Ընկ. Բ.Փանջունի ի Ծավալվար»

2. «Ընկ. Բ.Փանջունի ի Վասպուրական»<sup>13</sup>:

Հայագետն ասում է, որ այս երգիծական գրքերն ուղղված են հայ Հեղափոխականների, երկրորդ Խնտերնացիոնալի Հեղափոխականներին դեմ: Այդ երկերից մեկը յուսի շարունակությունն է: Գիրքը գրված է նամակների ձևով: Օտյանը գտել է գեղարվեստական հնարանք. ընկեր Փանջունին նամակներ է գրում կենտրոնական կոմիտեին, և այդ նամակներն իրը դիմումով ընկնում են Օտյանի ձեռքը:

Առաջին ստեղծագործության մեջ Օտյանը ներկայացնում է իր

<sup>13</sup> Վերնագրերը բերվում են ըստ երեանյան հրատարակության (տե՛ս Ե. Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, ծաղրանկարեց Ալ. Սարովխան, Երևան, 1989):

զիսավոր հերոսի համառոտ կենսագրությունը: Փանջունին սկզբում մի ուշացած երեխա էր, որը խոսել սկսեց շատ ուշ, բայց խոսելուց հետո այևս հնարավոր չէր կանգնեցնել: Հայրը ստիպված դժմում է թժկին, որն ասում է, թե այդ հիվանդությունը բուժում չունի: Նա տանն ամեն ինչ ջարդում էր, և ամեն անգամ երր նրան հարցնում էին, թե ինչու է ջարդում պատասխանում էր՝ շինեցի<sup>14</sup>: Այդպես էլ հայրը չի կարողանում որդուն բացատրել շինել բայի իմաստը՝ չնայած բացատրում է շատ հանգամանալիք: Դպրոցում, երբ ընկերը չի համոզվում, որ ինչպես Փանջունին է ասում, թե հինգ անգամ հինգ հիսուն է, վերջինս բարով զարկում է անմեղ դասրնկերոջ գլխին և շարունակում պնդել, թե հիսուն է: Որպեսզի կուսակցությունը բացառապես իր ձեռքը վերցնի, նա մեկնում է եվրոպա՝ սոցիալ գիտություններ ուսումնասիրելու և այնտեղ էլ վարում է մակարույժի կյանք: Քանի զեռ թուրքիայում վտանգավոր էր հեղափոխության մասին խոսել, նա այդ գործով զրադիվում էր արտասահմանում, բայց հենց որ հրապարակվեց նոր սահմանադրությունը, տրվեց խոսքի և մտքի ազատության, նա վերադարձավ Կոստանդնուպոլիս և հանդես եկավ հասարակության առաջ բոցաշունչ ճառերով և որոշեց շրջել իր պրոպագանդիստական (գաղափարածավալող) ճառերով Անատոլիայի զյուղերում: Ստյանը շատ սրամիտ ճառերով է ներկայացնում ընկեր Փանջունու նամակները, որոնցում նա ջանում է ներկայանալ որպես Դոն Կիխոտ կամ Մարֆիավելիք: Այդ ճառերում, սակայն, երեսում է նրա բթամտությունն ու քաղաքական ցինիզմը:

Ֆեյդին փոքր-ինչ կրճատելով թարգմանաբար մեջբերում է ընկեր

<sup>14</sup> Օր մը սեղանի մը վրա դրված արժեքավոր անոթ մը կ'առնե ու գետին նետելով ջարդ ու փշուր կ'ընե:

Հայրը, իրիկունը գործեն վերադարձին, կը տեսնե եղածը և տղան կանչելով ու անոթին կտորտանքները ցույց տալով կը գոչե.

- Ծո՛, ի՞նչ ես ըրեր անոթիք:

- Շինեցի, հայրի՛կ,- կը պատասխանե փոքրիկ Փանջունի միամիտ համոզումով մը:

- Ծո ի՞նչ շինել, կոտրեր ես, չա՞ն զավակ:

- Զէ՛, հայրի՛կ, շինեցի,- կը պնդե տղան:

Իդուր Հայրը երկար-բարակ կը բացատրե, թե երբ առարկա մը գետին նետելով կտոր-կտոր կ'ընենք, այդ գործողությունը շինել բայով չի բացատրվիր, այլ կոտրել: Անկարելի եղավ բառագիտական այդ նրբությունը հասկցնել Փանջունիի, որ շարունակեց տան մեջ գտնված զավաթները, պնակները, շիշերը կոտրել և ամեն անգամ որ «ի՞նչ կ'ընես կոր» ըսկով զինքը կը հանդիմանեին, անդրդպելի ու անխոռվ կը պատասխաներ.

- Կը շինեմ կոր: (Ե.Օտյան, Ընկ. Բ.Փանջունի, էջ 20-21):

Փանջունու երկու նամակները՝ խիստ կարեռելով դրանք: Ահա դրանցից առաջինը՝

ԾԱՊԼՎԱՐ, 15 սեպտեմբերի, 1908

Սիրելի՛ ընկեր,

Զեր հրահանգներն ստանալուս պես փութացի Արարկիրեն ճամբա ելլել և չորս օր ճամբորդելե ու Շեփիկ, Վաղչեն, Կրանի և Մաշկերտ գլուղերը մեյ մեկ գիշեր մնալե ետքը հասա Ծապլվար գյուղը, որ ըստ իս մեր պրոփականտին համար հարմարագույն վայրն է:

Ծապլվար՝ քսան տունե բաղկացած՝ զուտ հայկական գյուղ մըն է, գեղեցիկ ու բարերեր հովիտի մը մեջ, ուրկե կ'անցնի Ջրբերիկ գետակը:

Գյուղացիները ընդհանրապես բարեկեցիկ, ժիր ու աշխատող են, չին ոեժիմեն դժբախտաբար շատ չեն տառապած և այս պատճառով նոր ոեժիմը իրենց վրա մեծ ներգործություն չէ ըրած: Ատեն-ատեն հալածանքներ կրած են միայն մոտակա Քոմրաշ գյուղի քրուերուն կողմե, որոնք ավագակարարո մարդիկ են:

Պետք չկա ըսելու, որ Ծապլվար գյուղը խոր տգիտության մեջ թաղված է, մանավանդ ընկերավարական հարցերու մասին: Տասն-հինգ օր է, որ այստեղ հասած եմ և հասած օրիս հետևյալ օրն իսկ սկսած եմ պրոփականտի և տակավին կարող չեմ եղած այդ գյուղացիներու մտքին մեջ մտցնել քապիթալիզմի գործած ոճիրները, բանվորական սենտիֆանտներու հրամայական անհրաժեշտությունը, պրոլետարիատի պահանջները ևն...: Բայց ես չեմ հուսահատած, ընդհակառակը, իրենց այդ անհասկացողությունը ավելի եռանդ կու տա ինձի պրոփականտը առաջ տանելու:

... Ծապլվարի մեջ բանվոր դասակարգը կը բաղկանա պայտար Մկոյե, որ միանգամայն երկաթագործ է: Երկու օր առաջ Ռես Սերգոյի էշուն պայտն ինկած էր, և կեղտու պուրժուան ստիպվեցավ զիմել Մկոյին: Շատ ջանացի, որ Մկոյն համոզեմ ընդհանուր գործադուլ հրատարակելու և Ռես Սերգոյի էշն առանց պայտի ձգելու: Այդ շատ ցնցող տպագործություն պիտի գործեր առհասարակ առանձնաշնորհյալ դա - սակարգերուն վրա»<sup>15</sup>:

Ֆեղին նկատում է, որ ըստ Փանջունու կապիտալիզմը մարմնավորում են Ռես Սերգոն և Տեր Սահակը, որոնք նույնիսկ գյուղի կողմից հարգված են: Փանջունու կարծիքով գյուղացիները չեն գիտակցում, որ վերջին երկուսն իրենց բնական թշնամիներն են: Նա պիտի այցելի

<sup>15</sup> «Բաղմավէպ», 1961, թիվ 1-2, էջ 27, Ե.Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, էջ 32-33, 35:

Հարևան Քոմրաշ գյուղի քրդերին, որպես իրենց բնական նեցուկ, քարողելու համար:

Ֆեյդին գրեթե նույնությամբ մեջբերում է նաև Մաշկերտից 1909-ի փետրվարի 27-ին գրված նամակը, որով ավարտվում է «Ընկ. Բ. Փանջունի ի Ծաղլվար» երկը: Հայագետը ներկայացնում է գրեթե ողջ նամակը, որն ավարտվում է հետևյալ հատվածով. «Առայժմ մտադիր եմ մնալ Մաշկերտ: Գյուղը ավելի բազմամարդ է քան Ծաղլվար: Գործունեության մի նոր դաշտ կա հու, նո՞ր պրոֆիլանտ, նո՞ր կազմակերպություն, նո՞ր պայքար, նո՞ր արդյունք:

Երևոյթները միմիթարական ու քաջալերիչ են: Պետք չէ վհատիլ և պետք չ պատրաստել կովի նոր ասպարեզ:

### Փող ուղարկեցե՞ք իմ նոր հասցեին»<sup>16</sup>:

Ֆեյդին ասում է, որ այս առաջին գրքից հետո Փանջունին մեկնում է Վան, ուր կազմակերպում է մի քանի ամոթաբեր կոփներ և հետո էլ հայտարարում է, թե մեկնելու է Կոստանդնուպոլիս՝ նոր հրահանգներ ստանալու: Վերլուծելով այս վեպը՝ Հայագետը չի անտեսում նաև ընկեր Սարսափունու կերպարը, որը բեմից փորձում է տպագորիչ ճառ արտասանել երեխաների համար, որպես պատրաստի նրանց ազատության, պայքարի ու կովի: Երեխաները լսում են այդ ճառը մեծ ուշադրությամբ և ի նշան հավանության երգում են՝

Ծափիկ, ծափիկ ծիրանի,  
Կարմիր խնձոր կը նմանի!<sup>17</sup>

Ֆեյդին նշում է, որ նույն անձը հանդես է գալիս նաև «Ընկեր Փանջունի տարագրության մեջ» գործում: Նրանում պատմվում է, թե ինչ հանգամանքներում է Օտյանը Հանդիպել ընկեր Փանջունուն՝ նշանավոր Հեղափոխական-պրոպագանդիստին, 1915 թվականի թուրքերի կազմակերպած բոնի արտագաղթի ժամանակ: Անգամ կոտորածի ու սարսափի պայմաններում Փանջունին նոյն խղճից զուրկ մարդն է, անկուշտ դեպի փողը, իր տեսությունները փոփոխում է պահի պահանջի համեմատ:

Ֆեյդին համառոտ բնութագրում է նաև Ե. Օտյանի «Հեղափոխության մակարույծները» երկը:

Հայագետի կարծիքով Օտյանը հասուկ ձեռվ է ընտրում իր երկերի գործող անձանց անունները: Նա դրանց մեջ դնում է որոշակի խոր-

<sup>16</sup> «Բաղմավէպ», 1961, թիվ 1-2, էջ 29, Ե. Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, էջ 108-110:

<sup>17</sup> «Բաղմավէպ», 1961, թիվ 1-2, էջ 30:

Հուրդ և իմաստ: Այդ իմաստը հատկապես երևում է հեղափոխական-ներին տված նրա անուններից:

«Արթին աղա» երգիծապատումի մեջ հեղինակը ճշմարտացի պատկերել է Կ.Պոլսի հայ կյանքի տեսարանները 19-րդ դարում, բայց նրա կերտած կերպարները համամարդկային են. դրանք միշտ կան, կենդանի են և հանդես են գալիս, երբ հանգամանքները նպաստավոր են նրանց հանդես գալու համար: Նրանք շարունակ ծնվում են նոր ժամանակահատվածում, նոր միջավայրում, միշտ մնալով նույնը: Իսկ ինչ վերաբերում է ընկեր Փանջունիներին, ավաղ, ըստ Ֆեյդիի, նրանք կան միշտ և ամբողջ աշխարհում, ինչպես կան նաև «Հեղափոխության մակարույծները», որոնք կան նաև ֆրանսիայում և Արևմտյան Եվրոպայում Դիմադրության շարժման կեղծ հերոսների կերպարների ձևով:

Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի ստեղծագործությանը տված իր գնահատականները Ֆեյդին եղրափակում է մի ամփոփիչ մտքով, որը կարեոր է հայ գրականագիտության, ինչպես նաև համաշխարհային գրականության պատմության տեսաբանների համար. «Իմ եղրակացությունը կլինի շատ սեղմ: Պարոնյանի և Օտյանի չնորհիվ կատակերգությունը և երգիծանքը հայերի մոտ հասավ կատարելության, և այս երկու վիթխարի գրողների գործերն արժանի են դրվելու մարդկության ընդհանուր գրական ժառանգության մեջ՝ Արևմուտքի գրական գլուխգործոցների հետ կողք կողքի»<sup>18</sup>:

<sup>18</sup> Նույն տեղում:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ֆրեղերիկ Ֆեյդին շարունակողն է ֆրանսիայի հայագիտական մեծ դպրոցի, որի հիմնադիրն էր Սեն-Մարտենը; Այս հայագետի հետաքրքրությունների շրջանակը լայն է: Նա առաջնակարգ գրաբարագետ է, բանագետ, գրականագետ, արևմտահայերենի հմուտ մասնագետ, մանկավարժ և թարգմանիչ: Ֆեյդին շատ վաղ հասակից է զրադիվել հայագիտությամբ. սերտ կապերի մեջ է եղել Միխթարյանների Վենետիկի և Վիեննայի միաբանների հետ: Երեք տարի Վենետիկում ապրել է Միխթարյանների շրջապատում, օգտվել նրանց հարուստ մատենադարանից, ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունն ու լեզուն: Հետագայում սերտ կապերի մեջ է մտնում Խորհրդային Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, երևանի պետական համարարանի և հատկապես Մշշտոցի անվան Մատենադարանի հայագետների հետ: Խորհրդային Հայաստանում իրագործվող հայագիտական հետազոտություններն ուղղակի հրձվանք են պատճառել զիտնականին և փարատել են նրա տագնապը Եվրոպայում արդեն թուլացող հայագիտական հետազոտությունների առիթով: Տարբեր ուսումնասիրություններում Ֆեյդին անհանգստացած է միջազգային առումով Հայաստանի հոգևոր արժեքների անտեսմամբ. չէ որ Հայաստանը չունի նավթի պաշարներ, նյութական մեծ ուսուրաներ: Նա նկատում է, որ ֆրանսիայում էլ կամաց-կամաց հայագիտությանը ավելի քիչ տեղ է հատկացվում, և անչափ ուրախ է, որ այդ պակասը լրացվում է բուն Հայաստանում:

Ֆրեղերիկ Ֆեյդին իր աշխատությունների գերակշիռ մասը գրել է ֆրանսերենով, անգամ «Բազմավէպի» նրա հոդվածաշարերը ֆրանսերեն են: Նպատակը հստակորեն պարզ է. նա հայագիտական արժեքները ֆրանսերենով միջազգայնացնում էր:

Մեծ հայագետը ծանոթ էր ու մտերիմ հայ ժողովրդի արժանավոր զավակ Արշակ Չոպանյանի հետ, գիտեր, թե ինչ ջանքեր է թափում Չոպանյանը հայ գրականության, արվեստի արժեքները աշխարհի տարրեր ժողովուրդներին ծանոթացնելու պատասխանատու գործում: Ահա նրա առաջին հայագիտական ուսումնասիրություններից մեկը, որը 1938-ին լույս տեսավ արևմտահայերենով, նվիրված էր Հեթում

պատմիչի «Թաթարաց պատմությանը»: Ֆեղիին ծանոթ էին այդ պատմության ֆրանսերեն գրչագրերը, և նա հիմնավորված ապացուցում է, թե այդ երկը Եվրոպայում նոյնքան հայտնի էր, որքան Վենետիկի ճանապարհորդ Մարկո Պոլոյի ուղեգրությունը: Նա Հեթումի երկը համարում է ոչ միայն հայկական միջնադարի, այլև ֆրանսիական գրականության հուշարձան, որի հեղինակն ունեցել է համաեվրոպական ծրագրեր՝ կապված նոր խաչակրաց արշավանքի հետ:

Ինչպես պարզ երևում է Ֆեղիի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունից, նա իր գործերի գործը համարում էր «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանությունը, մեկնարանումն ու ծանոթագրումը: Ֆեղին առաջնակարգ էպոսագետ է, ծանոթ է աշխարհի նշանավոր էպոսներին և հայկականը գնահատում է՝ ենելով ընդհանուր չափանիշներից: Նա ծանոթագրում է էպոսն այնքան մանրամասն, որ հին և ժողովրդական մտածողությամբ ստեղծված այդ երկը ընթերցողի համար դառնում է լիովին հասկանալի: Ֆեղին հիացած է «Սասունցի Դավիթ» էպոսի մարդասիրական ու խաղաղասիրական գաղափարներով, շատ է երազում, որ իր թարգմանության միջոցով այդ գաղափարները հասնեն աշխարհի ժողովուրդներին, ափսոսում է, որ այդ էպոսը քիչ հայտնի է, մինչդեռ նրանում եղած հոգևոր արժեքները վերժամանակյա են և կարևոր են ողջ աշխարհի մարդկանց համար: Օգտագործելով էպոսի ընձեռած փաստերը՝ Ֆեղին փառարանում է հայ կնոջը, շեշտում նրա հայրենասիրությունը, անսահման նվիրումն ամուսնուն և ընտանիքին:

Դեռ հայագիտական գործունեության առաջին քայլերից սկսած՝ հայագիտը զգաց, որ անհրաժեշտ է ստեղծել հայերենի մի մատչելի դասագիրք, որով ֆրանսիացին, ֆրանսերենին տիրապետող Եվրոպացին կամ հայերենը մոռացած տարագիր հայր կովորեն արևմտահայերեն: Նրա դասագիրքը գրված է մանկավարժական մեթոդովի առաջավոր փորձի հիման վրա: Դասերն ունեն ոչ միայն լեզվական ունակություններ զարգացնելու նպատակ, այլև ծանոթացնում են հայ ժողովրդի պատմության, մշակույթի, հայ գրականության հետ: Թեպետ Ֆեղին գիտեր, որ ոչ Արարատ լեռը, ոչ Վանա, ոչ Ուրմիո լճերն այլևս հայաստանում չեն, սակայն դրանք նրա դասագրքում ներկայացված են որպես հայկական աշխարհագրական տարածքներ: Խորհրդային հայաստանի կողքին նա որպես հայաստան է ճանաչում պատմական Մեծ Հայքը: Թե հայոց լեզվի դասագրքում և թե այլ առիթներով Ֆեղին իր զարմանքն է հայտնում Մովսես Խորենացուն ավելի ուշ դարեր տեղափոխող գիտնականների կապակցությամբ, նա չի տալիս անուն –

ներ, չի բանավիճում, այլ անվերապահորեն հավատում է հայ այն մատենագիրներին, ովքեր Մ.Խորենացուն համարում են հինգերորդ դարի պատմիչ: Նա վստահում է Հենց իրեն՝ հայոց պատմահորը:

Ֆեղին քննել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած առասպելավիպասանական հատվածները և համոզված պնդում է, թե այն հավասարարժեք է Ֆիրդուսու «Շահ-Նամեին»: Խորենացու վեպը նրան հիացնում է իր կերպարներով, որոնց գուգահեռները հայագետը մատնացուց է անում «Սասունցի Դավիթ» էպոսում:

Հայագետի կարևորագույն հետազոտություններից մեկն էլ նվիրված է մաշտոցյան այրուբենին: Նա բնդունում է այն տեսակետը, թե մինչև 405 թվականը չեն եղել հայկական տառեր, և հայերն օգտվել են այլ ժողովուրդների այրուբեններից, այս առիթով բերում է իր կովանները, կիրթ ձևով բանավիճում, երբեք չվիրավորելով այն մասնագետներին, ովքեր հակառակ կարծիքի են:

Ֆեղին բանավիճելու իր կարողությամբ ևս ապացուցում է, որ իսկական գիտնականները ուրիշին վարկաբեկելու ու խայլելու կարիքը չունեն, նրանք առանց դրա էլ հայտնի են ու մեծ: Նա մաշտոցյան այրուբենը համարում է կատարյալ: Ֆեղին բանափրական հետազոտությունների մեջ ակնառու է «Հայաստանի քրիստոնեական հմայինները» կոթողային աշխատությունը, որի վրա հեղինակն աշխատել է շուրջ հիսուն տարի: Նա կազմել է Վենետիկի, Վիեննայի Մխիթարյանների, ինչպես նաև Փարիզի ազգային գրադարանի այն ձեռագրերի ցուցակը, որոնք պարունակում են Հմայիլների բնագրեր: Ֆեղին բացատրում է, թե ինչու Հմայիլները, որոնք գեռևս հինգերորդ դարում խատորեն մերժված էին հայոց եկեղեցու պաշտոնական այրերի կողմից, ոչ մեայն շարունակեցին մնալ հայ մարդկանց կենցաղում որպես հեթանոսական հավատքի մնացորդներ, այլև ստանալով քրիստոնեական բովանդակություն, ներմուծվեցին վանքերի ու եկեղեցիների ձեռագիր մատյաններ: Նա հերթով բնութագրում է իր տապագրած Հմայիլները, մանրամասն ծանոթագրում և տալիս դրանց ֆրանսերեն թարգմանությունը:

«Բազմավիշտում» տպագրված նրա հոդվածներից երկուար վերաբերվում են Հակոբ Պարոնյանին ու Երվանդ Օտայանին: Բնութագրելով երկու հակա հայ երգիծաբաններին՝ Ֆեղին նրանց հավասարի իրավունքով զնում է եվլուպացի նշանավոր երգիծաբանների կողքին: Ֆրանսերենով Ֆեղին հրատարակել է հայերենի քերականությանը վերաբերող տետրակների շարք՝ «*Cahiers de grammaire arménienne*» խորագրով («Հայոց քերականության տետրակներ»): Դրանցից մեկը

Նվիրված է գրաբարի բայական համակարգին («*Le système du verbe arménien classique*»): Այն հիսուներեք էջ է: Այդ տետրակը Ֆեյդին նվիրել է Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրին Լևոն Խաչիկյանին Հետևյալ մակագրությամբ. «Առ փրոփ., Ակադ. Լևոն Խաչիկյան, խորին յարգանքով և բարեկամական սիրով: Փարիզ, Ապրիլ 14/1976, Ֆրեղերիկ Ֆեյդի»: Ֆեյդին նամակագրական կապերի մեջ էր Հայաստանի առաջատար Հայագետների հետ, որոնց մասին միշտ գրում է մեծ գովասանքով՝ նրանց համարելով առաջնակարգ մասնագետներ: Լեզվաբանական հետաքրքիր աշխատանքներ նվիրելով գրաբարին ու արևմտահայերենին, որպես հմուտ լեզվաբան Ֆեյդին խոսել է Հայկական բարբառների մասին՝ դրանք համարելով հնդեվրոպական մայր լեզվի գաղտնիքները բացահայտող բանալիներ:

Իր կյանքի ողջ ընթացքում Ֆրեղերիկ Ֆեյդին մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների, եղել է Հայաստանի պատմության, մատենագրության, Հայ ժողովրդի իրավական շահերի անմնացորդ պաշտպանը: Ամեն քաղաքակիրթ մարդու հիացմունք է պատճառում այն զեկուցումը, որը նա կարդացել է Բրյուսելի թագավորական ակադեմիայում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 50-ամյակի հիշատակի արարողությանը, ուր նա մարդկությանը հիշեցրեց, թե ահոելի թվով Հայ գոհերի կողքին երիտթուրքերը ոչնչացրեցին նաև Հայ ժողովրդի հոգեոր արժեքները, այնպիսի մեծությունների, որոնցից մեկն է Արևմտաթքի գրական չափանիշներով վիթիսարի բանաստեղծ Դանիել Վարուժանը:

Ֆրեղերիկ Ֆեյդին Հայ ժողովրդի մեծ բարեկամն է, ծշմարտության ու գիտական արժեքների իսկական պաշտպանը: Նա իր ուսումնասիրություններով ապացուցում է, որ Հայ ժողովուրդն իր նշանակալի ավանդն ունի քաղաքակիրթ մարդկության մշակույթի, գիտության ու գրականության պատճենագիր մեջ, և այդ իրողությունը համայն աշխարհը պետք է ընդունի:



# ՀԱՎԵԼՎԱԾ



**ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵԹԻ  
«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»  
(Չափածո էպոս)**

**ՆԱԽԱԲԱՆ**

Երբ որ Յունեսկօ-ն և ԽՍՀՄ-ի ազգային հանձնախումբը մտան քանակցությունների մեջ՝ Արևմուտքի ընթերցողներին հայ գրականության որևէ զլուխգործոց ներկայացնելու համար, կարողունակ հեղինակությունները մատնացուց արեցին ընտրելու «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը: Առիթ ունենալով ուսումնասիրել այդ էպոսը՝ մեզ մնում էր ուրախանալ նման որոշման համար:

Սակայն, այս ընտրությունը իր մեջ ուներ մի վտանգ, որը պետք էր անմիջապես շտկել. արևմուտքի ընթերցողը չպետք է եղրակացնի, որ ներկայացվում է բանահյուսական գործ, որովհետև հայերի քաղաքակրթությունը ուրիշ բան չունի առաջարկելու: Ճիշտ հակառակը, հայ պաշտոնական գրականությունը տասնհինգ դարերի վաղեմություն ունի:

Հայաստանում երրորդ դարի վերջից քրիստոնեությունն արդեն պետական կրոն էր, սակայն գրավոր գրությունները ունեին ազգային լեզվով չլինելու խոչընդոտ, որովհետև գեռնա չէր ստեղծվել այբուբենը: Այս աննպաստ իրավիճակը շտկելու համար սուրբ Մեսրոպը V դարի առաջին տարիներին ստեղծեց անհրաժեշտ այբուբենը: Առաջին թարգ - մանական գործը եղավ Աստվածաշնչի թարգմանությունը, սակայն հայ գրականության զարգացումը միայն դրանով չարտահայտվեց, V դարի կեսերին հայ գրականությունը հասնում է իր Ոսկեղարին: Աստվածաբանություն, հոգեսոր քնարերգություն, վկայաբանություն, պատմագրություն, միջնադարի գրականության բոլոր այն տեսակները, որոնք ծանոթ էին Միջերկրականի ավազանի գրիստոնեական գրականությանը, երևան եկան հայ գրականության մեջ մեծարժեք գործերով: Հայերը կողք կողքի կանգնեցին հույների, լատինացիների և ասորիների հետ:

Ու երբ քրիստոնյա քաղաքակրթությունը ուշ միջնադարում բա-

բեշրջվեց՝ հաստատելով նոր-լատինական մտքի սկիզբը, հայերը ևս դժունվում էին այդ շարժման մեջ և վերջիններից չէին: Կարելի է սոտուգապես ասել, որ Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին ծնված Ֆրանսուա Ասիդից (*François d'Assise*) երեք քառորդ դար առաջ, դարձավ առաջնայիշը այնպիսի բարեշրջնան, որի նմանը մեղ հայտնի է գաղիքանություն անունով: Նա ջանում էր քրիստոնեությունը մոտեցնել Հավատացյալ զանգվածներին և դրա համար իրեն վերապահում էր աստվածաբանական վեճեր վարել ընտրելագունների հետ՝ ժողովրդի գիտակցության մեջ կրոնի վարդապետությունը քարողելով ավելի հրապուրիչ ձևերով՝ ներկայացնելով Աստծու անսահման սերը իր արարածների նկատմամբ: Նա դիմում էր ժողովրդին՝ չխորշելով գրել նրանց համար խոսակցական լեզվով: Այս նորարարության հետևանքը եղավ ժողովրդական լեզվով ստեղծված մի քնարերգություն, որն իր մեջ շրջադարձ ունեցավ զեպի պարսկական զգացական ձևերը՝ իր խորքում միշտ կրելով քրիստոնեական խորհրդապաշտությունը: Լատինացիների ընդդիմություններն Արևելքում և Հայոց պետականության վերացումը Կիլիկիայում, Հենց XIV դարից պատճառ դարձան Հայ պաշտոնական գրականության անկմանը: Կոստանդնուպոլիսի գրավումը թուրքերի կողմից ավարտեց Հայերի մեկուսացումն Արևմուտքից:

Սակայն 1715-ին արբա Միսիթարի կողմից Վենետիկում հիմնադրված միաբանությունը Հնարավորություն տվեց Հայ մտքի լավագույններին բարենորոգվել, և այդ շարժումը Հաջորդ դարում հասավ Կոստանդնուպոլիսի: Հայ գրականությունը, իր ուժմանտիկ բանաստեղծներով, դարձավ բաղդադրամասը արևմտյան գրականության, ցավոք շատ քիչ ճանաչված: Մի երկրորդ վերածննդի լուսավորության աղբյուր ստեղծվեց Ռուսահայաստանում՝ սկսած 1850-ից: Այսուհետեւ Հայ գրականությունը բաժանվեց երկու ճյուղի, որից յուրաքանչյուրն ունի իր գրական լեզուն: Արևմտահայ գրականությունը ամբողջապես մասն է Արևմտաեվրոպական գրականության, իսկ արևելահայը, որն ունի մի փոքր առավել շեշտված ազգային բնույթ, երբեմն փոքր-ինչ կրում է ուստի գրականության ազգեցությունը:

Հինգերորդ դարի Հայ պատմիչների մեջ կա մեկը, որը գերազանց է. զա Մովսես Խորենացին է: Նա չբավարարվեց մի ժամանակագրություն գրելով. նա կամեցավ ստեղծել իր ազգի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից սկսած: Այս նպատակով դիմեց Հույն, պարսիկ, ասորի, քաղղեացի այն պատմիչներին, որոնց գործերը կարողացավ գտնել, բաղդատեց նրանց Հաղորդած տեղեկությունները

Աստվածաշնչի հիմնակետերին, նա պեղեց ազգային դիվանները, դիմեց անգամ բանավոր ավանդություններին՝ նրանցում փնտրելով պատմական դեպքերի արձագանքները: Սա նրա համար առիթ դարձավ ոգեկոչելու ստույգ լեզենդներ, հիշատակելու տարրեր կրկնություններ վիպական քնարերգության, որոնցից կարճ հատվածներ զետեղեց իր զրություն: Աչքի անցկացնելով հեթանոսական ժամանակներին վերաբերող նրա գրքերը՝ այդ կտորներից կարելի է հաստատել հերոս Հայկից սերող<sup>1</sup> թվարկվող և հիշատակվող արքաների կյանքի ընթացքը և նրանց գեղեցիկ ու նշանավոր գործերը: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ այս վեպերը բացառապես հերոսական սիրազործությունների պատմություններ չեն:

Այդ երգերի հիման վրա է, որ Մովսեսը մեզ ներկայացնում է Տիգրան Առաջինի շատ կենդանի դիմանկարը, այն Տիգրանի, որը հաղթեց մարերի թագավոր վիշապ Ամդահակին. «...այս խարտյաշ և մաղերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը գունեղ երևոսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ ու թիկնավետ, կերակուրների ու ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր Հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի է մարդուն»<sup>2</sup>:

Ինչ վերաբերվում է այս Տիգրան թագավորի որդի Վահագնին, «որի մասին մեր աշխարհի առասպելներն ասում են.

Երկնում էր երկինք, երկնում էր երկեր,

Երկնում էր և ծովը ծիրանի.

Երկոնքը բռնել էր ծովում

Նաև կարմրիկ եղեգնիկին:

Եղեգնի փողով ծուխ էր ելնում

Եղեգնի փողով բռց էր ելնում

Եվ բռցից դուրս էր վազում

Մի պատանեկիկ.

Վազում էր խարտյաշ մի պատանեկիկ,

Նա հուր մազեր ուներ, (ապա թե)՝

Բոց մորուք ուներ,

Եվ աչքերն էին արեգակներ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մենք փորձել ենք ընդարձակ ձևով նորովի անդրադառնալ այդ վիպասքին մեր մենագրության մեջ (տե՛ս «Հայ ժողովրդական վիպը», Վենետիկ, Սուրբ Ղազար, 1957):

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, 24:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, 31:

Վահագնի գերբնական ծնունդը իր արտասովորությամբ եղակի չէ վիպական այս գրականության մեջ. «Սասունցի Դավիթ» էպոսում մոր միջամտության չնորհիվ նման ծնունդը կիսով չափ մարդայնացված է, բայց այն պակաս ճշմարիտ չէ, քան ծագումը բնության մի տարրի բեղմնավորման՝ սրբազն աղբյուրի ջրի: Այստեղ մայրը հենց ինքը՝ կույս Ծովինարն է, որի անունը նշանակում է «Լճի լուս»: Հնայած որ նա հայոց արքայի դուստրն է, բայց սովորական մահկանացու չէ: Ոչ միայն նրա անունը նշանակում է լուս և ջուր, այլև իրականում նա լույ - սապայծառ է այն առումով, որ նրա պայծառությունը գիշերը լուսավորում է քաղաքը:

Մովսես Խորենացին իր երկում դնում է վիպասքի մի հատված՝ նշանավորելու Տիգրանին հաջորդողներից Արտաշես արքայի քաջագործությունները.

Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,  
Եվ հանելով ոսկեող շիկափոկ պարանը,  
Եվ անցնելով գետոն իբրև սրաթև արծիվ,  
Եվ նետելով ոսկեող շիկափոկ պարանը,  
Զգեց մեջքը Ալանաց օրիորդի,  
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,  
Արագարար իր բանակը հասցնելով<sup>4</sup>:

Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունը նշվում է մեծ շքեղությամբ.

Ոսկի տեղ էր տեղում  
Արտաշեսի փեսայության ժամանակ.  
Մարգարիտ էր տեղում  
Սաթենիկի հարսնության ժամանակ<sup>5</sup>:

Երբ այս թագավորը, որն իր քաջությամբ և ղեկավարելու ձիրքով կատարելատիպ էր, մեռնում է, նրա թաղումը ծայրահեղ շրբեղ է եղել՝ նախարարական գնդերը առջևից պղնձեա փողեր էին հնչեցնում, հետեւից ձայնարկու կանայք, վերջում ուամիկների բազմությունը: Արտաշեսի դագաղը ոսկուց էր, զահը և անկողինը բեհեղից, մարմինը պատող պատմուճանը ոսկուց, զլխին թագ դրած, ոսկյա զենքն առջեր, վերջապես շատ թվով մարդիկ կամավոր մեռնում էին, որ ուղեկցեն արքային անդրաշխարհում: Դրանք այնքան շատ էին, որ նրա որդին՝ Արտա-

<sup>4</sup> Նոյն տեղում, II, 50:

<sup>5</sup> Նոյն տեղում:

վագղը, նախանձով բռնված, բացականչում է.

Երբ դու գնացիր,  
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,  
Ես այս ավերակների վրա  
Խնչպե՞ս թագավորեմ<sup>6</sup>:

Այդ պատճառով Արտաշեր, զայրացած նման ընդվզումից, անիծում է իր որդուն հետեւյալ խոսքերով.

Թե դու հեծնես որսի գնաս.  
Ազատն ի վեր, դեպի Մասիս,  
Քաջերը քեզ բռնեն տանեն  
Ազատն ի վեր, դեպի Մասիս.  
Այնտեղ մնաս, լուս չտեսնես<sup>7</sup>:

Մովսես Խորենացին մեղ տեղեկացնում է նաև, որ «Պառակները սրա մասին զրուցում են, թե արգելված մնում է մի քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանք է անում դուրս գալ և աշխարհին վերջ տալ, բայց, ասում են, դարբինների կուանահարության ձայնից կապանքներն ամրանում են»<sup>8</sup>:

Թվում է, թե այս սերնդից զրկված և անիծված որդու առասպելը հիմք ունի, որովհետև նա իր կենդանության ժամանակ իր եղբորը համարում էին նրան հաջորդողը, դրա համար դատապարտում է Արտավազղին ապրել քարայրում՝ բանտարկված՝ մինչև աշխարհի վերջը, որով և ավարտվում է էպոսը: Դա ծառայել է Մովսես Խորենացուն որպես առասպելական վկայություն՝ պատճական փաստերը հաստատող: Իրականում Արտավազղի հաջորդը, նրա որդին չէր, այլ եղբայրը, «որի մասին չեն պատմում ոչ մի քաջազործություն», – մեղ ասում է Մովսես Խորենացին, – բացի այն, որ «Նա երկու ձի է ունեցել Պիգասոս-սից ավելի թեթևաշարժ և անչափ արագագնաց, այնպես որ համարում էին, թե նրանք ոչ թե գետնի վրայով են գնում, այլ օղագնաց են»<sup>9</sup>: Հետաքրքիր զուգաղիպությամբ Սասունի Էպոսում վերջին հերոսի կյանքի ավարտը նման է այս Արտավազղին: Ինչ վերաբերում է Քուոկիկ ջալալուն՝ կրակե ձիուն, նա ոչ միայն թոչում է օղում, այլ կարող է

<sup>6</sup> Նոյն տեղում, II, 61:

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Նոյն տեղում, II, 62:

ոչնչացնել մի ողջ բանակ իր շնչով, իր սմբակների կամ պոչի հարվածներով և վերջապես օժտված է մարդկային լեզվով:

Կարելի է տեսնել, որ Հայ Հնության շրջանի այս վիպասանական պոեմները կազմված չեն միայն փառահեղ գործերից: Վահագնի գերբնական ծնունդը, անիծված որդու անմահությունը՝ ցեղի վերջին սերնդի, որը պետք է ապրի մինչև աշխարհի կործանումը, կործանում, որի գլխավոր հերոս լինելու է նա, այս ամենը լայնորեն անցնում են գեղեցիկ նշանափոր գործեր պատմող մի ճյուղի սահմաններից, և մեզ թույլ են տալիս խոսելու երկու էպոսների հարազատության մասին:

Սերը և հրաշքները այնտեղ բոլորովին չեն պակասում, ցանկասեր Շամիրամը, ըստ Հին Հայկական ավանդության, սիրահարվում է Հայաստանի երիտասարդ ու հրապուրիչ արքա Արա Գեղեցիկին, որը հավատարիմ մնալով իր կնոջը, մերժում է Ասորեստանի թագուհու պատգամավորներին և մեռնում է կովում, որը թագուհին վարում էր արքային ուժով նվաճելու համար: Մովսես Խորենացին մեզ նաև պատմում է, որ այս անհավատ թագուհին, որը Վանս լճի ափին կառուցել է տալիս Հոյակապ մի պալատ, լցված է եղել մեծ կախարդանքով<sup>10</sup>: Մեծահամբավ կախարդ արքայադուստր Քառասուն ձյուղ Դեղձուն-Ծամը՝ Պղնձեն քաղաքից, ներկա էպոսում ամուսնանում է երիտասարդ Սանսարի հետ, որը դեռևս ազատ էր, և դառնում է մի իսկական Հայ քրիստոնյա:

Միաժամանակ կարելի է նկատել, որ Սասունի վեպի հերոսները պակաս կայուն են օտար արքայադարերի հմայքի առաջ, քան Արա Գեղեցիկը:

Այս արքայական ընտանիքների անդամներն ու արքայազները բոլորը չեն, որ ունեն անթերի գծեր: Մովսես Խորենացու կողմից ներկայացված վիպասարի հատվածներում մենք տեսնում ենք երկու երկրորդական կերպարներ՝ երկուսն էլ Հայկի շառավիղներից, որոնք ունենալով ծայրահեղ եղակի գծեր, բոլորովին հեռու են, հատկապես երկրորդը, Հիացմունքի արժանի հերոսներ լինելուց. մեկը Տորքն է՝ չափազանց մեծ ուժի տեր անձնափորություն, սակայն նա ժանտատեսիլ է<sup>11</sup>, մյուսը ծարան է, որը ոչնչով գերազանց չէ, բացի իր մեծ ախորժակից և իր բեղունության կարևորությունից<sup>12</sup>. Նա Հայկական Գարգանտյունան է: Սասունի էպոսը մեզ ներկայացնում է դարձյալ անձեր, որոնք գերենականորեն անկատար են կամ բոլորովին զվարձալի.

<sup>10</sup> Նույն տեղում, II, 16–18;

<sup>11</sup> Նույն տեղում, II, 8;

<sup>12</sup> Նույն տեղում, I, 12;

Հորեղբայր Հովհանը, չունի ոչինչ, բացի իր հումկու ձայնից, Փորքշուկ Վերգո Հորեղբայրը, որն ապրում է Հավերժական սրտղողության մեջ:

Ուրեմն կա Հեթանոսական ժամանակներից եկող մի վեպ և ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոսը, որը բանավոր ձևով փոխանցվել է մինչև 19-րդ դարի վերջը և իր մեջ ունի հին վեպի հետ ընդհանուր գծեր:

Մովսես Խորենացին մեզ հաղորդում է նաև մեկ ուրիշ տեղեկություն, մեկ ուրիշ հրահանգ, որովհետև նա չի խոսում մի վեպի, այլ ընտանեկան ավանդության մասին, որը հավասարապես հետաքրքիր է Սասունի էպոսը հետազոտերու առումով: Նա դնում է Աստվածաշնչի Գիրք թագավորացից<sup>13</sup> հատված, ուր վկայություն կա Սենեքերիի (Հայերենում՝ Սենեքերիմ) սպանության մասին իր երկու որդիներից՝ Աղրամելեքից և Սարասարից և երկուսի փախուստը դեպի Արարատի երկիրը և հետո ավելացնում է, թե այնտեղ նրանց հյուրընկալել է լեզենդար Հայոց արքա Սկայորդին («Հակայի որդիի»), որը նրանց տվեց Հարավարեմոյան նահանգը, ուր նրանք դարձան նահապետ՝ զնելով սկիզբը Արծրունիների գերդաստանի<sup>14</sup>: Կամ մեր «Սասունցի Դավիթ» էպոսի բավական պատումներում կան Սանասար (=Սարասար) և Բաղրամար (Աղրամելեքը փոխվել է այս անվանը), որոնք Սենեքերիմի (=Սենեքերիի) որդիներն են Համարվում: Այս պատումներում կա արձագանքը Մովսես Խորենացու պատմած ավանդության, ավանդություն, որը պատիվ է բերում Արծրունիների գերդաստանին, և այդ հիշատակը այնքան կենդանի է եղել, որ X դարում Վասպուրականի Արծրունիների Հայկական թագավորներից մեկը ունեցել է Սենեքերիմ անունը: Բայցևայնակես, որքան որ գիտենք, չնայած Հայ միջնադարում այս գերդաստանի նշանավոր լինելուն և Վասպուրականի ու Սասունի Հարեանությանը, Արծրունի անվանումը չկա այս էպոսի որևէ պատումի մեջ:

Այսպիսով, այն պատումները, որոնցում առաջին ճյուղում Սենեքերիմը Համարվում է Սանասարի և Բաղրամարի Հայրը, ունեն «պատմական» ծագում, և էպոսը տանում են զեպի ասորական ժամանակահատվածը: Ըստ ուրիշ պատումների այն սկզբնավորվում է միջին դարերի միջին Հատվածներում և Համընկնում է Բաղրամի խալիֆաթի տարիներին:

Այնտեղ կարող են տեսնել Հայ ժողովրդի զինված պայքարը Բաղդատի խալիֆների և հետո Եգիպտոսի մելիքների ու գաղափարական

<sup>13</sup> IV Թագավորաց, XIX, 37:

<sup>14</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, 23:

առումով «Պապ Ֆրենկի» գործադրած ճնշումների դեմ՝ նախ խաչա - կրաց արշավանքների ժամանակ, այնուհետև Բարթելեմեյ Բոլոնիացու պաշտոնավարության միջոցին: Այստեղ կարելի է նաև հիշատակել Հայ-բյուզանդական Հակամարտությունը՝ Զմշկիկ Սուլթանի հետ կապված դրվագում, որը հաջողեցրել էր հրապուրել Դավթին, որից նա ունեցավ աղջիկ, և վերջինս սպանեց Դավթին: Զմշկիկն իրականում բյուզանդական Հայազգի կայսր Զմշկիկի անունն է:

Այս էպոսի «գրական» ծագման հիմնահարցը նույնպես անլուծելի է: Ամենահավանական վարկածն այն է, որ այս էպոսը այն տեսքով, որ մեզ հասել է, միջնադարյան վերակազմումն է մի առավել հին ավանդության, որովհետև մի քանի թեմաներ կարելի է զուգահեռել Մովսես Խորենացու երկում եղած ակնարկների հետ:

Էպոսը բաղկացած է չորս ճյուղերից: Ճյուղերից յուրաքանչյուրը նվիրված է մի սերնդի հերոսի, այս հերոսները հաջորդում են իրար՝ հորից որդիի: Պետք է նկատել, եթե Հայաստանի թշնամիները պատմականորեն ճանաչելի են՝ նույնիսկ անուններով, և դրանով մեկտեղ իրենց Հատկանիշներով՝ Բաղդատի խալիֆ, Եղիպտոսի մելիքներ, Փրանկների պապ, ապա ոչ մեկն ազգային հերոսներից չի կարող նույնացվել ոչ իրենց անունով և ոչ էլ քաջազործություններով, բացի մի քանի պատումներում, ուր Սանասարը և Բաղդասարը ներկայանում են իրու Սենեքերիմի որդիներ: Ասորական սերունդներն այլ առումով ընդունելի ձև է, որովհետև ազնվական որոշ գերդաստաններ Հայերի պատմության առաջին տարիներին եղել են օտարածին: Ըստ Մովսես Խորենացու տեղեկությունների, որը թվում է ինքնահաճ ազգաբան, Արծրունիները և Գնունիները սերում են ասորեստանցի Սենեքերիմից, Բագրատունիները և Շամբատ Բագրատատը՝ Հրեաներից<sup>15</sup>, Գնթունիները՝ Զեռես Քանանացուց<sup>16</sup>, Մուրացանները՝ Մարացի Աժդահակից<sup>17</sup>, Ամատունիները՝ Հրեա Մանուից<sup>18</sup>, Մամիկոնյանները՝ Մամգուն:

Մեծ Հաջողությամբ թվում է, թե որոնում են էպոսի երկու հերոսների Մհեր անունը մոտեցնել Միհրին՝ Միմրա աստծուն, և իրոք, այս հերոսների բնավորությունը, ինչպես նաև քաջազործությունները հիշեցնում են Միթրայի նկարագիրն ու սիրագործությունները:

<sup>15</sup> Նույն տեղում, II, 3:

<sup>16</sup> Նույն տեղում, II, 7:

<sup>17</sup> Նույն տեղում, II, 8:

<sup>18</sup> Նույն տեղում, II, 57:

<sup>19</sup> Նույն տեղում, II, 81:

**Սասունի էպոսը մեղ է հասել բանավոր ձևով:** 1870 թվականի մոտերքում էր, որ մի հոգևորական՝ հայր Սրբանձայացը երջանիկ նախաձեռնությամբ հրատարակեց այդ էպոսի մի հատվածը, որ լսել էր մի զյուղացի ասացողից: Ասացողը ավելին չէր իմացել: Ուրիշ բանասերներ չուտով նպատակառողվեցին որոնելու բեկորներ, որոնք երբեմն շատ համառոտ էին, երբեմն ծավալուն չափածո մասեր էին, և այդպես հավաքեցին շուրջ հիսուն պատում: Վերջին պատերազմից քիչ առաջ երեսնի Ակաղեմիան ձեռնարկեց այդ տարբերակների ամբողջական ժողովածուի հրատարակումը, այդ պատումներից մի հանձնախումբ՝ կազմված պրոֆեսոր Մանուկ Աբեղյանից, Գևորգ Աբովից և Արամ Ղանձանյանից, ակաղեմիկոս Օրբելու ղեկավարությամբ սկսեց ծաղկաքաղ անել կազմելու համար հետևյալ բնագիրը՝ տրամարանորեն կարգավորելով և հանելով ոչ պիտանի կրկնությունները, այնտեղ չափեցնելով ոչ մի տող և հնարավոր զգուշությամբ պահելով ամեն հատվածի բարբառային հայտնի ձևը, ջանալով խուսափել տարբեր հատվածների լեզվի և ոճի ակնառու տարբերություններից: Ահա այս աշխատասիրությունից է, որ ստացվել է այն հրատարակությունը, որ մենք այստեղ ներկայացնում ենք թարգմանաբար:

Չորս ճյուղերից, որից բաղկացած է էպոսը, երրորդը, որ Դավթինն է, ունեցել է մեծ տարածում, և բազմաթիվ ասացողներ իմացել են միայն այդ: Ահա այդտեղից էլ տրվել է էպոսի վերնագիրը՝ «Սասունցի Դավթ»: Որոշ ասացողներ, որոնք գիտեին ողջ գործն ամբողջապես, այն կոչել են կամ «Սասնա տուն», կամ «Սասնա Ծոեր». Ճոեր ժողովրդական լեզվով նշանակում է «մի փոքր խենթ» և «Հանդգնորեն խիզախ»: Այս հերոսներն, իրոք, երբեմն ունեն վարմունք, որ կարող է թվական արտառոց և երբեմն նրանց տանում է ղեպի սխալը:

Չորս ճյուղերը տարբեր են մեկը մյուսից, չնայած երկրորդ և երրորդ ճյուղերը ներկայացնում են որոշ նմանություն, նրանք դրվագ են էպոսի մեջտեղում, դա բավական է բացատրելու համար:

Առաջինը ծնունդն է և երեսի է հատկապես իր առաջին հատվածում, այն նրբությամբ, որ նա ներկայացնում է արքայադուստր Ծովինարի գեղեցկությունն ու չորհագեղությունը, նրա գերբնական նրբությունն ու հնարագիտությունը: Ծովինարն իր անձը զոհում է Բաղդատի խալիֆի հետ ամուսնանալու համար, չնայած նրանց կրոն - ների հակամարտությունը, որպեսզի ապատի իր ժողովրդին ոչնչացումից, բայց մերժում է իր ամուսնուն մերձենալը: Միշտ կույս մնալով՝ նա հղիանում է իր երկու երկվորյակներով՝ խմելով Կաթնաղբյուրի ջուրը: Ծովինարն առաջին անգամ լցնում է լիքը բուռ ջուրը և խմում, հետո

նորից է մեկնում ձեռքը, բայց աղբյուրը ցամաքում է՝ այս անգամ և Ծովինարի բուոր մնում է կիսատլ լցված: Դրանից է, որ երկվորյակներից ավազը մի անթերի հերոս է, իսկ նրա եղբայրը զիջում է նրան: Ավելի ուշ առաջինը՝ Սանասարը, խիզախություն է ունենում իրեն նետել մի լճի մեջ, երկրորդը, ճակատագրից սահմանված լինելով նվազության, չի հանդնում անել նույնը: Լճի ջուրը գերբնական ուժ ուներ, շփելով նրա հետ, ինչպես Անթեյը հողի հետ, Սանասարը լճից դուրս է գալիս հսկայի հասակով, տիրանում է կրակե ձիուն, իր հասակին հարմար զենքերին և գերբնական մի թալիսման դրոշմված իր թևին. այս բոլորը դուրս էր բերել լճի խորքից: Խալիֆին սպանելուց հետո, որը նրանց հայրը չէր, եղբայրները թափառում են՝ մինչև գտնում են մի նշան, որը ցույց է տալիս մի սաստիկ հորձանքի միախառնումը գետին. այդ վայրը նպաստավոր էր նրանց անառիկ ամրոցը կառուցելու համար: Ճյուղի շարունակությունը ներկայացնում է նրանց արկածները, նրանց քաջագործությունները և նրանց ամուսնությունը:

Երկրորդ և երրորդ ճյուղերը պատմում են յուրաքանչյուրի մանկությունը, քաջագործությունները, սերերը և ամուսնությունը՝ սկզբում երկու հերոսներից ՄՇերի, ապա Դավթի, այն, որ չէինք կամենա ասել, թե այս ճյուղերը նման են: Բավական է որպես օրինակ վերցնել այն խորքային տարրերությունը, որ կա մի ընդհանուր թեմայի պատկերման մեջ. այն ոչ օրինական սերերն են: ՄՇերը և նրա թշնամի Մելիքը խաղաղության և «եղբայրության» դաշնքը են կնքում, ըստ որի հենց մեկն իրենցից մեռնի, մյուսն իր վրա պետք է վերցնի վախճանվածի ընտանիքի հույսը: Մելիքը մեռնում է առանց դաշնակի, նրա այրին կանչում է ՄՇերին, որ իրեն ժառանգ պարզեի: Հարգելով իր տված խոսքը՝ ՄՇերը մեկնում է կատարելու այն, ինչը իր պարտքն էր՝ չնայած իր կնոջ ընդդիմանալուն, որը երդվում է, որ քառասուն տարի այլևս նրա հետ հարաբերություն չի ունենա, եթե նա հեռանում է Մելիքի այրու հետ միանալու համար:

ՄՇերը չնայած դրան՝ մեկնում է, բայց Փոքր Մելիքի ծնվելուց հետո հասկանում է, որ սխալվել է, և ինքը խաղալիք է եղել թշնամու ձեռքին, որովհետև Սասունը ժառանգ չուներ: Նա վերադառնում է հետ՝ ապահովելու Սասունի գերդաստանի շարունակությունը: Ավագների խնդրանքներով և հոգեորականների հորդորներով ՄՇերի կինն ընդունում է իր անհավատարիմ ամուսնուն՝ երդմսագանց լինելով: Բայց երդմսագանցությունը, այն էակների համար, ովքեր ունեին Աստծու հովանագորությունը, արժեր կյանքի զինը: Եվ ծնողները մեռան հենց նույն օրը, երբ նրանց որդին ծնվեց:

Դավիթի համար ոչ օրինական սերերը ներկայանում են բոլորովին այլ ձեռքից: Նրա հորեղապարները որոշում են նրան ամուսնացնել և որպես հարսնացու ցույց են տալիս Զմշկիկ Սուլթանին: Շուտով՝ քիչ անց, մեկ ուրիշ արքայադրուստը, լսած լինելով նրա քաջագործությունները, ուղարկում է նրա մոտ գուսաններին՝ իր գովքը անելու: Դավիթը ճանապարհ է ընկնում այդ գեղեցիկ արքայադրուստերը նվաճելու, բայց ճանապարհին անցնում է Խլաթով՝ Զմշկիկ Սուլթանի քաղաքով: Սուլթանը կանգնեցնում է նրան, հիշեցնում ամուսնության խոստումը, և նա որոշում է զիշերն անցկացնել նրա պալատում: Հաջորդ առավոտյան Դավիթը, որ տեղի էր տվել Սուլթանի հյուրընկալությանը, շարունակում է իր ճամփորդությունը: Նա ամուսնանում է արքայադրուստեր հետ և վերանդառնում է Սասուն: Խլաթով անցնելիս նրան վերատին կանգնեցնում է Զմշկիկ Սուլթանը, որն այս անգամ իրեն խարելու համար պահանջում է, որ մենամարտեն: Դավիթը խնդրում է յոթ օր պայմանաժամ հարսանիքը Սասունում տոնելու համար, որից հետո կվերադառնա կռվելու: Բայց երջանիկ ամուսնական կյանքով, նա մոռանում է երդումը: Որպես պատիժ այս երդմնազանցության՝ Խաչ պատերազմին, որ Աստծու շնորհիվ դրոշմված էր նրա թեկին, դառնում է բոլորովին սև և դադարում է նրան հովանավորել: Սա ունենում է երկրորդ հետեանքը. նախ մի երկար ճամփորդության վերադարձին Դավիթը հանդիպում է իր որդուն, որը նրան չէր ճանաչում, կոիվ է զրգութում նրանց մեջ և գոտեմարտ, սա առիթ է դառնում, որ Դավիթը վերջապես նրան ճանաչի, բայց նա անիծել էր որդուն իրեն խայտառակելու համար: Ի վերջո, երբ Դավիթը Զմշկիկ Սուլթանին տված իր խոստումը կատարելու համար գնում է Խլաթ, խարեորեն սպանվում է Զմշկիկի դստեր կողմից, որը նաև իր աղջիկն էր:

Չորրորդ ճյուղը մի դրամա է և մի Գողգոթա: Փոքր Մհերը իր ծննդյան օրից ուներ նշան, որը ճակատագրով հաստատվում է հոր անեծքով: Անեծք, որով նա զրկվում էր մահ և զավակ ունենալուց: Նա էլ կատարում է փայլուն գործեր, բայց էականը այս ճյուղում, նրա գնալն է զեպի անմահություն: Մհերն այցելում է իր ծնողների զերեղ - մանին՝ խնդրելով ազատել այդ անեծքից, բայց ծնողները հայտնում են իրենց անկարողությունը: Նա նույնիսկ խնդրում է Աստծուն կովել իր հետ. Աստված ուղարկում է Հրեշտակներին պատերազմելու, սակայն Մհերը չի սպանվում: Վերջապես նա մտնում է մի քարայր, որը փակ - վում է նրա վրա մինչեւ աշխարհի ցավերի ու անարդարության վերջը և լավագույն աշխարհի հայտնվելը:

\* \* \*

Սասունի հերոսները մեզ են երևում մի շարք գերբնական գծերով. Նրանց բնավորությունը մարդկայնության առումով պակաս հետաքրքիր չէ: Նրանք հաճախ բնորոշվում են «ծուռ» մակդիրով: Իրականում բացի մի քանի գլուխ կտրելուց, որը բնորոշ է երիտասարդներին, այն էլ իրենց շատ վաղ հասակում, նրանք բոլորովին չեն սխալվում անմիտ գործեր անելու: Եվ եթե ուշադիր դիտեն այն դրվագները, ուր նրանք ներկայանում են որպես «ծուռ», ապա հաճելի անակնկալ կլինի հայտնաբերել էպոսը հնարողների նուրբ դիտողականությունը այդ դրվագները հօրինելիս: Հենց իրենց գերբնական ծննդյան օրից այս հերոսները մեծանում են մեկ օրում այնքան, որքան բոլոր երեխաները մեկ տարում: Երեք կամ չորս տարեկանում, նրանք այնքան ուժ են ստանում, որ նրանց մի սովորական ապտակը թոցնում է չափահասի գլուխը՝ մարմնի մնացած մասը թողնելով տեղում: Իր առաջին տարիներին Դավիթը իջեցնում է մի կաղամախի, որպես ճոլորիկ, իր փոքրիկ ընկերների համար. նման Փիդիկական ուժի դրսեւորման առաջ նրանք մոռանում են մանկան տարիքը և զարմանում են տեսնելով իջեցված ծառը, որը միանգամից վեր է բարձրանում և օդ չպրտում չարաճնի տղաների ողջ խումբը՝ ցած զցելով ու սպանելով նրանց: Սա իրականում ակնարկ է այն երեխաների դժվարին կացության համար, որոնք Փիդիկապես աճում են շատ արագ՝ մնալով խելքով իրենց իրական տարիքում: Այս անհեթեթությունները արգելք չեն նրանց՝ լինելու ընտրյալ մարդիկ, որոնք անձնավորում են մարդկության բարոյականության կատարելատիպը. նրանք իրենց թեին կրում են Խաչ պատերազմի դրոշմը՝ կրոնակախարդական թալիսմանը, որը ըստ հավատի և բարի կախարդանքի պահանջում է, որ նրանց կհովանավորի բարոյական ճշտության ու շիտակության դեպքում՝ այլապես կպատուհասի խատորեն:

Նրանք խիզախ են. մերժում են որևէ օգնություն, երբ գնում են կովելու՝ լինի դա ընդդեմ առյուծի, վիշապների, գեերի կամ անհամար բանակի: Նրանց խիզախությունը միաժամանակ մի կույր հանդինություն չի: Դավիթը մի անգամ միայն վախ է զգում կովի մեկնելուց առաջ:

Նրանք ունեն ասպետականություն. Հարձակվելուց առաջ Դավիթը զգուշացնում է թշնամու բանակին՝ պատրաստ լինելու կովի: Որսի գնալիս նա խղճում և արձակում է նախապես բոլոր կենդանիներին, որ արգելափակված էին իր հոր թագավորական որսասարում, որովհետև նա ասում է՝ «չի կարելի սպանել բոնվածներին»: Նա երբեք չի

դավաճանում իր ուղղամտությանը՝ նույնիսկ խորամանկ ու նենգ թշնամու առաջ. Մելիքը Դավիթին գցում է ծուղակ, ուր վերջինս ընկնում է պարզամտորեն: Դավիթը վեհորեն է պատասխանում այս նենգությանը՝ Մելիքի մոր և քրոջ նկատմամբ ունեցած երախտագիտությամբ հրաժարվելով իր երեք զարկերից երկուսից՝ նույնիսկ իմանալով մեկ ուրիշ խորամանկ նենգություն. Մելիքը ժաքնվել էր մի փոսում՝ վրան քաշելով քառասուն ջաղացքար և քառասուն գոմչի կաշի:

Նույնիսկ ամենաթեթ պայքարի ժամանակ նրանք պատրաստ են կանխել նախաճիրը: Այն պահին, երբ Դավիթը կոտորում է Մելիքի զորքին, մի ծերունի դուրս է գալիս թշնամու բանակից և նրան հարցնում է, թե նա ինչու է սպանում այս մարդկանց, որոնք չեն ուզում կովել, և նրանց բերել են ստիպողաբար, փոխանակ պատասխանատվության կանչելու հենց իրեն՝ Մելիքին: Դավիթն անմիջապես զաղարեցնում է կոտորածը: Նրա խոհականությունը երեք չի փոխվում. հենց որ սպանում է զլխավորին, բանակին արձակում է գնալու հայրենիք:

Այս հերոսների իդեալը ազատությունն է՝ իրենց ու իրենց ժողովրդի, բոլոր մարդկանց համար, և նրանց պայքարը նպատակ ունի նրանց հարստահարիչների լծից ազատելու: Նրանք երբեմն կատարում են օտար երկրներում միջամտելու և օտարներին անիրավություններից պաշտպանելու դերը:

Նրանց ընավորության ժողովրդական բնույթը սրանով չի ապարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունն այնքան մեծ է, որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջարարականությունը՝ առաջարարականությունը առաջարարականությունը: «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»:

Եթե պատահել է, որ նրանք հաղթվել են կնոջ հմայքից, ապա ամուսնությունից առաջ. Մհերի մեկնման դեպքը բացատրվում է մի անհիմն երդման խոսքը պահելու մղումով: Սակայն նրանց թուլությունը սահմաններ է ճանաչում. նույնիսկ լինելով գինովցած, Դավիթը ցայրացած մերժում է իր հորեղբոր օտարերկրացի կնոջ առաջարկը:

Վերջապես նրանք աստվածապաշտ են, վանքեր ու եկեղեցիներ կառուցող: Այս հերոսները գերմարդիկ են ոչ միայն Փիդիկական ուժի տեսակետից, բայց նաև իրենց բարոյական հատկանիշներով: Դժբախ-

տուժյունն այն է, որ վերցնելով այդ տանը տրված բոլոր լավագույն գծերը, նրանք ոչինչ չեն թողել մյուսներին, բայց հորեղբայր Հովհանի Հովհանի ձայնից: Ընտանիքի մնացածները Փորբշուկ Վերգոն է և մի շարք ևս անհաջող ուրիշ անձեր, որոնց ճանաչում են միայն նրանց ծաղրական անուններով<sup>20</sup>:

Եթե այս բոլոր հերօսները ներկայացնում են համարյա նույն բնավորությամբ, որը նորմալ է նրանց ծննդակարգի պատճառով, կանայք շատ տարբեր են. կախարդներ, պատերազմողներ և այլն, բայց նրանք, ովքեր ամուսնության հետևանքով դառնում են հայեր, կրում են իր արժեքը իմացող հայ կանանց հատուկ բոլոր իդեալական հատկությունները. Քառոսոն ձյուղ-Ծամը, ստանձնելով խնամակալություն, թագավորեցնում է իր որդի ՄՇերին: Բայց վերջինս մահից հետո փակվում է սասափիկ սպի մեջ մինչև այն օրը, երբ տեսնում է իր թոռ Դավթին զենքը ձեռքին իր ժողովրդին պաշտպանելիս, Արմաղանը նախընտրում է պետական շահի համար մի երդմսագանցություն, որ արժենում է երկրային կյանքը և վտանգի է ենթարկում նրա հավերժական կյանքը: Խանդութը հրաժարվում է ապրել Դավթից հետո, Փոքր ՄՇերի կինը, որը մեռնում է իր երկրում ՄՇերին սպասելով, որպես կտակ թողնում է մի նամակ՝ խնդրելով իրեն թաղել հայկական Հողում<sup>21</sup>:

\* \* \*

Էպոսը ներկայանում է որպես ոտանավոր պատում, չափաբերումը ստանում է զուգակշռություն ոտանավորի տարրեր հատվածներում և ընդհատվում է երգվող հատվածներով, բավական հաղվարեպ նոյյնահանք:

Զնայած գերբնականության կարևոր դերին, հատկապես առաջին հերոսների ծնունդի ժամանակի և նրանց հանդերձավորման հետ կապ - ված, չնայած Պղնձե քաղաքի կախարդանքներին, հրաշքները էպոսում մնում են դրվագային և չեն խախտում բարձրածակության սահմանները:

Ասենք, որպես ավարտ, մի ոչ ընդհանրական վարպետ խոսքի մասին, որը մեղ տանում է զեպի էպոսի գործողությունները:

<sup>20</sup> Քենի թորոսը իր քրոջ՝ Ծովինարի ամուսնության ժամանակ տասնյոթ տարեկան էր: Նա, ուրեմն, հերոսներ Սանասարի և Բաղդասարի սերունդներից չէր:

<sup>21</sup> Էպոսի մի շարք կարևոր քաղաքներ, որոնք թվում են օտարերկրյա, իրականում հայկական տարածքի մասեր են, բայց նրանք արարական նվաճման պատճառով եղել են արար ամիրաների նստավայր:

Ինչպես կարող են դիտել այն երևութը, որ էպոսի գործող անձիք, հերոսներ, որոնց մասին պատմվում է, հիշվում են պատարագի մեջ:

Ճշմարիտ կիններ գեռ երկար խոսել էպոսի հնարքների մասին, դիտողականության նրբության, զգացմունքի այնքան սրտաշարժ արտահայտության (Դավթի հրաժեշտը), գործող անձերի երգիծանքի (Փորքշուկ Վերգո, Քեռի Թորոս՝ իր փոփոխական բնավորությամբ), Մըրի կանանց սպանիչ ծաղրի՝ ուղղված Կողբաղնին և այլն, բոլոր երեսվածքները, որոնք հացացմունք են պատճառում, այս էպոսում՝ ներկայացված են մի հստակությամբ և լիովին ժողովրդական բարեսրտությամբ: Եթե մենք մեզ թույլ տվեցինք դրա մասին խոսել այդքան երկար, իհարկե շատ անկատար ձեռվ, ապա այդ նրա համար է, որ թարգմանիչը վստահ է ընթերցողի առավելության մեջ. այն է՝ ստիպել քննել բնագիրը բառ առ բառ՝ ջանալու համար թարգմանել առանց վրիպելու, և այս աշխատանքը, ինքնին դժվարին, մեզ հաղորդել է մենամարտելու ուժ, որպեսզի ոչինչ չկորչի նրա գեղեցկությունից, որի պատճառով կարող է սովորական ընթերցողի ուշադրությունը շեղվել:

\* \* \*

Կարդալով այս ծավալուն և հոյակապորեն ստեղծված էպոսը՝ կարելի է մտածել, թե այն գերազանց գիտնականների վերաձուլած մի ծաղկաբաղ է: Նման բան չկա: Հանձնախմբի անդամները վերաշնել են բնագիրը բանասիրական մանրակրկիտությամբ և գիտական ընդունված խատությամբ: Նրանք չեն ավելացրել անգամ մի տող՝ ծայրը ծայրին բերելու համար: Ողջ բնագիրը ժողովրդական մայր երակից է: Ինքնին հասկանալի է, բազմադարյան բանավոր փոխանցման ընթացքում ասացողները նրանում կարող էին ավելացնել իրենց մտքերը, երբեմն պակաս ընդունելի, վատ հասկանալով բնագիրը այն ավերել՝ տալով նրան հասարակ ձեւ, մյուսներն, ընդհակառակը, կարող էին նրացնել եղածը՝ նրան ավելացնելով աղ՝ ճաշակի առումով: Հանձնախմբի անդամները հեռու ավելացումից, կտրել են հնարովի ծաղկաբաղ մասերը, անհաջող կրկնակները, այն դրվագները, որոնք պատկանում են հերիաթի ժամանքին՝ ձախողակ ձեռվ մտցված որոշ ասացողներից, մի կողմ են թողել հետևակ մտքերը՝ մտցված առանձին ասացողներից, և որոնք հակաբնական էին այս երկի ճշգրիտ բնույթին և այլն:

Բոլոր զլսավոր դրվագները, ինչպես նաև էպոսի զլսավոր պլանը, համեմատվել են մեծաքանակ տարրեր օտարամուտ պատումներին, և եթե զլսավոր տարրերակում որևէ հատված դուրս է թոել ասացողի

կողմից, և այն գտնվել է ավելի հեռու հատվածում, այս համահավաքում, որևէ ակնարկ մոռացված դրվագի մասին չկա, որը և հաստափում է հատվածի իր տեղում գտնվելու իրողությամբ: Երբ որևէ պատումի մեջ մի դրվագ, սխալի պատճառով, վերագրված է էպոսի մեկ այլ անձի, բազում տարրերակներ ճշգրտորեն հաստատում են, որ տեղի է ունեցել շփոթ: Միայն չորրորդ ճյուղի սկզբում պատումներն խևապես բաժանվում են: Դրանց մեծ մասը վերաբերում են ՄՀերի հորեղբոր կնոջ Սարիեին մերժելուն, երբ վերջինս բոլորովին մերկ կանգնում է իր զարմիկի առաջ, որ նա լվանա իր գլուխը, և ծնողների գերեզմանի մոտ ողբացող ՄՀերի խոսքում ասվում է. «Ես օտար եմ դարձել Սասնա տանը», թվում է, թե ակնարկ է ՄՀերին հորեղբոր կողմից ուրիշ երկիր ուղարկելու և իր պատրող կնոջ ամբաստանությունից ազատելու: Դավմի գայթակղության միակ փորձը, որ արվում է հորեղբոր կնոջ կողմից, մնում են վերջինիս գիշերային այցելությունները:

Մյուս պատումները ներկայացնում են ՄՀերի անիծվելն իր հորից՝ հորեղբայրներին մի կովի ժամանակ ակամա սպանելու պատճառով:

Քանի որ որոշ տարրերակներ, առանձնացված հանձնախմբի կողմից, իրենցից քիչ թե շատ հետաքրքրություն են ներկայացնում, մենք մեզ թույլ ենք տվել նրանց մասին նշել ծանոթագրություններում՝ դրանք քաղելով կամ 1939-ին երևանում հրատարակված պատումների ժողովածուից կամ Լալայանի «Ազգագրական հանդեսից» (1897-1914):

\* \* \*

Մենք ջանացել ենք տալ հաստատված բնագրի հնարավոր հարազարդացմանությունը՝ նրանում պահպանելով ժողովրդական վարպետությունը, պատկերներն ու փոխարերությունները, որոնք առկա են ֆրանսերեն տարրերակում, ճշտորեն պատճենել ենք բնագրի ժողովրդական դարձվածքները, երբ հնարավոր չի եղել ճշտորեն փոփոխություն կատարել, հայերեն փոխարերությունը նշվել է ծանոթագրության մեջ:

Բնագրի և ֆրանսերեն տարրերակի կարևոր տարրերությունները վերաբերում են միայն երկու խնդրի.

Մենք պետք է զգուշանայինք անհաճող կրկնություններից, որն անհանդուրժելի է գրավոր բնագրում, և հնարավորինս նվազեցրել ենք նույն բառի կրկնությունը:

Հայերեն բնագրիրը գրված է տարրեր բարբառներով և խիստ սեղմ

ոճով, երբեմն լակոնիկ, մեղ անհրաժեշտ էր մեր «Հատորի» մտային դարձվածները հարմարեցնել մեր սովորական լեզվական իրողություններին:

\* \* \*

Հուսով ենք, չնայած թերություններին, էպոսի Փրանսերեն տարբերակը հնարավորություն կտա Արևմուտքի ընթերցողին վայելելու այս հոյակապ ժողովրդական էպոսի համն ու քաղցրությունը:

**Ֆրեներիկ Ֆեյդի**

## ՆՄՈՒՇՆԵՐ Ֆ. ՖԵԹԴԻԻ ՏՊԱԳՐԱԾ ՀՄԱՑԻԼՆԵՐԻՑ

### Ա ԱՂՋԹՔ ԳՐԻԳՈՐԻ

Սուրբ Գրիգորի Լուսաւորչին, Խղճաւիոսի, Պողիկարպոսի, Երինոսի, Յեռաթէոսի, Երկոտասասն առաքեալք, սուրբ Պետրոս և սուրբ Պօղոս, Յովհաննէս և Յակոբոս, Անդրէաս և Փիլիպպոս, Թովմաս և Բարթուղիմէոս և Շմաւոնի, Յուղան Յակոբեան և Սիմէոն, Մատաթիայ, բարեխօսեցէք և օգնական լեռուք ծառայիս Աստուծոյ...., որոյ վերայ գիրս է ի դէմ չարախօսաց. ամէն:

### Բ ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ՃԳՆԱՀՈՐՄՆ

Զիւնափայլ երամք ընտրեալք,  
Ճգնաւորաց դասք երաննեալք,  
Թըռչնոց երկնից էք նրմաննեալք,  
Յայրըս և ի ծերպըս բնակեալք:

Ղօղեալ Հոգւոյ մեր ի մարմին  
Լերո՛ք պարիսպ ընդդէմ չարին,  
Զի յաղթեսցուք անառակին  
Խորտակելով ըզզէնս նորին:

### Գ ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԱՆՍ

Ճրագունք վառեալ Խսրակէլի,  
Սուրբ Կուսանաց դասք երամի,  
Արժան եղաք առազաստի  
Եւ անթառամ սուրբ պըսակի.

Մեզ բարեխօս լեռուք սիրով,  
Առ Տէր Աստուած աղերսելով,  
Ի փորձութեանց զմեզ փըրկելով,  
Անշէջ հըրոյն աղատելով:

Դ  
ԱՂԵՐՄ ԱՌ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱՆՈՐԻՉ

Խընդրեմք ի քէն, հայր պատուական,  
Լուսաւորիչ ազգի մարդկան,  
Տէր սուրբ, Գրիգոր, պետ Պարթևեան,  
Եւ'ր մեզ պարիսպ եւ օգնական:

Ծընող բարի, ի մեզ զըթա',  
Զցըրուեալ որդիս քո ժողովեա',  
Ի բանսարկուէն ըզմեզ փըրկեա',  
Եւ ի բարին առաջնորդեա':

Ե

ԱՂՅՈԹՔ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳԻՍԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ  
ԵՒ ՈՐԴԻԿՈՑ ՆՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ

1

Մվ երջանիկ մեծ զօրական  
Եւ Քրիստոսի յաղթող վըկայն,  
Գըլուխ զօրացըն Կոստանդեայն,  
Քաջ սպառագէն սուրբրդ Սարգիս:

2

Ի օձելոյ ամբարըշտին,  
Մոլորելոյն Յուլիանին,  
ԶՀանդուրժելով անօրինին,  
Եղեր պարիսպ, սուրբըդ Սարգիս:

3

Որ յարեւմուտս առաջ եկեալ  
Եւ յարեւելս եկեալ հասեալ  
Մեզ հասանել ի յօգնութիւն,  
Ատենահաս սուրբըդ Սարգիս:

4

Երկունք աղեաց քո եւ ծընունդ  
Եւ սիրամարգըն սիրասնունդ,  
Որդիդ սիրով հօրըդ գոլով,  
Սուրբ Մարտիրոս ամբողջ մարմնով:

5

Սիրով արքայն դձեզ ընկալեալ  
Եւ մեծագոյն փառօք պատուեալ,  
Մեծ զօրավիզ մեզ առաքեալ,  
Ի Տաճկաստան պահակ եղեալ:

## 6

Մեծապայծառ Հըրաշք ցուցան  
Յաւուր մեծի քո կատարման,  
Երկնից լրացն մեծի իջման  
Եւ ձայն հայցման քո կատարման:

## 7

Գեղեցկապէս տընօրինեալ,  
Զայս Արարչին նախ սահմանեալ,  
Մեծ զօրավիդ մեղ առաքեալ,  
Արիացեալ սուրբրդ Սարգիս:

## 8

Երգեմք ձայնիւ աղերսանօք  
Եւ աղաչեմք պաղատանօք  
Մեղ հասանել միշտ յօդնութիւն,  
Ատենահաս սուրբրդ Սարգիս:

## 9

Ծունը կըրկնեմք սուրբ նըշանի  
Եւ նըկարեալ քո պատկերի.  
Մեղ ժամանեա միշտ յատենի,  
Ատենահաս սուրբրդ Սարգիս:

## 10

Իսկ գերելոց այլասեռից  
Որք ի կապանս են երկաթից,  
Հան ըզնոսա ի չար կապից,  
Մեծ գերեհան, սուրբրդ Սարգիս:

## 11

Վտանգելոց յախտից ցաւոց  
Եւ ի վիրաց տաժանելոց,  
Դու լե՛ր նոցին գեղ սպեղանիս,  
Հերքող ցաւոց սուրբրդ Սարգիս:

## 12

Այլ եւ անձանց ուղեւորաց  
Ի ճանապարհ հեռագընաց,  
Լե՛ր ուղեկից նոցին շաւղաց,  
Երագ վարժիչ, սուրբրդ Սարգիս:

## 13

Իսկ ի յամպոց վնասակարաց  
Եւ ի տօթոյ խիստ խորշակաց,  
Դու լեր նոցին յետ դարձուցիչ,  
Ատենահաս սուրբրդ Սարգիս:

Սուրբըդ Սարգիս ի մեղ զթած,  
Մատո՛ ըզձայն մեր մաղթանաց  
Առ ողորմած Քրիստոս Աստուած  
Այն որ օրհնեալ է [զ]արարած:

Հօրին Լուսոյ միշտ մաղթեցէ՛ք,  
ԶՈՐԳԻՆ Աստուած աղաչեցէ՛ք,  
Ի բանսարկուէն զմեղ թափեցէ՛ք,  
ԼԵ՛Ր օգնական, սուրբըդ Սարգիս:

## ԱՂՋԹՔ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ ԵՒ ՈՐԴԻՐՈՅՆ ՄԱՐՏԻՐՈՍԻՆ Վանիչք դիւաց եւ կախարդաց. ամէն:

Մեծ եւ քաջ սիրողն Քրիստոսի, դօրական սուրբն Սարգիս խնդրեաց յԱս-  
տուծոյ ի կատարման թէ՛. Տո՛ւր չնորհս անուան իմոյ եւ ոսկերաց իմոց որպէս  
ի կենդանութեան իմում. զամենայն պատահարս եւ զցաւումն աշխարհի դա-  
դարեցուցես ի տան եւ արտաքոյ, մանաւանդ լյաւուր մարտի եւ պատերազմի  
լյերեւելի եւ աներեւոյթ թշնամույն: Ուր եւ յիշեսցի անունն իմ, մի՛ լիցի անդ  
երաշտ, մի՛ խորշակ, մի՛ կարկուտ, մի՛ կայձակ, եւ մի՛ կորուստ պտղոց. այլ  
հալածումն դիւաց, բժշկութիւն հիւանդաց, ազատութիւն գերելոց. եւ որք ի  
բանտի եւ որք ի կապանս են արձակումն առցեն. ի ճանապարհի զառաջնոր-  
դական պահպանութիւն, ի լյալեկոծութենէ ծովու հանդարտութիւն, ի յա-  
մենայն երաշտից, հոսումն անձրեւաց քաղցրութեամբ եւ առատապէս  
պտղաբերութիւն, եւ այլ ամենայն պատուհասից եւ պատահարաց ազատու-  
թիւն: Տէր Աստուած, նորին բարեխօսութեամբն պահեա եւ փրկեա' զծառայս  
քո... ի լյայսոց պղծոց:

## ՄԱՂԹԱՆՔ ՍՐԲՈՅՆ ԳԵԽՈՐԳԱՅ ԶՕՐԱՎԱՐԻՆ

Սուրբն Գեւորգիոս, յետ բազում մեծամեծ սքանչելեացն զոր արար ի  
մարմնի եւ ի կատարմանն, խնդրեաց ի Տեառնէ թէ՛. Տո՛ւր չնորհս անուան իմոյ  
եւ ոսկերաց որպէս ի կենդանութեան իմում եւ զամենայն պատահար եւ զցա-  
սումն աշխարհի դադարեցուցես ի տան եւ արտաքոյ, մանաւանդ յաւուր մար-  
տի եւ պատերազմի երեւելի եւ աներեւոյթ թշնամույն: Ուր եւ յիշեսցի անունն  
իմ մի՛ լիցի անդ երաշտ կամ խորշակ, մի՛ կարկուտ կամ կորուստ պտղոց, մի՛  
ուրուկ կամ բորոտ կամ գու, մի՛ խեղ, մի՛ խուլ եւ համր, մի՛ կոյր եւ կաղ, մի՛  
մահտարածամ, մի՛ նեղութիւն դիւաց եւ այլ ինչ պատահար: Տէր Աստուած,  
տո՛ւր ինձ եւ զայս չնորհս զի ամենայն [որք] որ յիշատակեսցէ պատարագաւ եւ  
յիշէ զչարչարանս իմ եւ խնդրէ ի Քէն ապրիլ ի հասեալ եւ ի հանդերձեալ

փորձանացն, լո՛ւր, Տէր, եւ կատարեա՛ զիսնդրուածն նորա. թո՛ղ զմեղս զհո-  
գեկանս եւ զմարմնականս յորժամ խնդրէ միջնորդիս իմով: եւ եկ ձայն ի բար-  
ձանց եւ հրեշտակ բարի [թէ՛] կատարեցաւ խնդրուածք քո առ Տէր: Նորին  
մաղթանօքն պահեա՛, Տէր Աստուած, զծառայս քո... ի լըայսոց չարեաց:

## Ը ԱՂՈԹՔ ԱՉԱՑԱԿԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ [Եղիցի] ճառայիս Աստուծոյ:

Երլանելի սուրբ կոյսն Փոտինեա զայս խնդրեաց լըԱստուծոյ եւ ասէ.  
Տո՛ւր չնորհս անուան [եւ] ոսկերաց իմոց. զի որք ցաւազնեալ են աչաց եւ այլ  
ամենայն իրաց չարեաց, զի որք լիշեն զանունն իմ թշկեսցէ զամենայն ցաւսն  
նոցա: Երեւեցաւ հրեշտակն Աստուծոյ եւ ասէ. կատարեալ են խնդրուածք քո  
առաջի Աստուծոյ: Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ Փոտինեայ  
կուսին, լուսաւորեա՛ զաշս եւ փարլատեա՛] զցաւս ճառայիս Աստուծոյ. ամէն:

## Թ ԱՂՈԹՔ ԼԵԶՈՒԱԿԱՊԻ

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն թէ՝  
անու[անլը] հրեշտակացն զի՞նչ են որ ունին [իշխանութիւն] ի վերայ չար լե-  
զուի: Ասէ Տէր, Արիայ, Սարիայոս, սուրբ Սիախանոս. Ուր այս անուանքս լիշին  
եւ վերան պահէ, չար աչքն խափանի, չար լեզուն կապի եւ ամենայն չարն խա-  
փանի ի դիմաց ճառայիս Աստուծոյ...:

## Ժ ԱՂՈԹՔ ԴԱՏԱԿԻՈՐԱՅ ԵՒ ԹԱԳԱԿԻՈՐԱՅ ԼԵԶՈՒԱԿԱՊԻ

Յանուն Մեսիային որ անուանեցաւ Քրիստոս, որ վասն մեր եկաց ի դա -  
տաստան առաջի Պիղատոսի զատաւորին, օգնեա՛ ինձ ի զատաստանի իմում  
եւ իրաւ արա ինձ յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ  
փրկեա՛ զիս: Դատաւ արա ինձ, Տէր, եւ իրաւ արա ինձ ի զատաստանի իմում:  
Ապրեցո՛ զիս, Տէր, ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս: Եղիա, Աքայա,  
Աքագիա, որ ունիր իշխանութիւն ի վերայ զատաւորաց, ով սուրբ Կիպրիանոս  
եւ սուրբ Անաստասիոս եւ Հնդկաց սուրբ Տիկին եւ լեռնակեաց սուրբ ման-  
կունք, որ ունիր իշխանութիւն կապելոյ, կապեցէ՛ք զսիրտ եւ զլեզու զատաւո-  
րաց և թագաւորաց, ով սուրբ Սարիանէ եւ սուրբ Գայանէ եւ սուրբ Հոփիսիմէ  
եւ սուրբ Հոռմայեցիք որք կայք ի Կոստանդնուպոլիս ընդ աջմէ կայցէ՛ք ծառա-  
յիս Աստուծոյ... եւ կապեցէ՛ք զսիրտ եւ զլեզու զատաւորաց եւ թագաւորաց,  
պապանձեցուցէ՛ք զլեզու չարեաց եւ չարախօսաց բարի խօսելոյ: Մեծամեծաց  
եւ փոքունց, Հայի եւ Տաճկի, Ջւտի եւ Հոռոմի, եւ ՀԲ միլլէթի սիրտն քաղցրա-  
նայ ի դիմաց ճառայիս Աստուծոյ...:

## ԺԱ

# ԱՂՅԹՔ ԶԱՐ ՆԱԶԱՐԻ ԵՒ ԶԱՐ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԱԶՔԻ Կուրացեալ եղիցի ի դիմաց ծառայիս Աստուծոյ. ամէն:

Յիշենք զջովիէլ, հրեշտակապետն սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ, Սաղաթիէլ, Ռափայէլ, Աննայէլ, Տաճիէլ, Սուրբայէլ, Անանիէլ, Աղարիէլ, Միսայէլ եւ ամենայն հրեշտակը եւ հրեշտակապետք: Որ էք սպասաւորք Աստուծոյ, դուք կապեցէք զամենայն չար ակն եւ չար խորհուրդ եւ չար նիաթ. եւ սուրբ Գաբրիէլ ընդ աջմէ եւ սուրբ Միքայէլ ընդ աչեկէ:

Բարեխօսութեամբ եւ առ սուրբ կոյս Մարիամ Աստուծածին եւ սուրբ Յովհաննէս Կարապետն եւ սուրբ Լուսաւորիչ Հայրն մեր Գրիգոր եւ սուրբ նախավկայն Ստեփաննոս եւ սրբոց զօրավարացն Գէորգայ եւ Սարգսի եւ որդույ նորա Մարտիրոսին եւ Մեռկերիոսի զինաւորին Մինասայ եւ սրբոց կուսանացն Հայրապետացն եւ սրբոց զիխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, Հովհանի եւ պահապան եղիցին՝ ծառայիս Աստուծոյ... ի նստիլ ի տանն, ի գալ ի ճանապահ, ի ննջել եւ [ի] յառնել: Ամէն:

## ԺԲ

# ԱՂՅԹՔ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՅ

Կենդանամայէլ, Կենամայէլ, Մաթէ, որ էք սպասաւորք Աստուծոյ, դուք ճանապարհորդակից լերուք ծառայիս Աստուծոյ... եւ խաղաղութեամբ տարէք զսա ի տեղի իւր եւ ի բարի վաճառ եւ չահաւոր արարէք սմա անուամբ Հօր եւ Որդույ եւ Հոգույն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԺԳ

# ԳԻՐ ՑՈՐԺԱՄ ՏՂԱՅ ԴԺՈՒԱՐ ԾՆԱՆԻ Ի ՄՅՈՐԷՆ Գըէ՛ եւ կաջ բազուկն կապէ. ծնանի Աստուծով:

Աքիայ որ էք մանկաբարձ էիր եւ սպասաւորեցար Կուսին Մարիամու ի թեթղէեմ այրին, դուք տուք բարի ծնունդ աղախնոյս Աստուծոյ, ի պատուիրանն Աստուծոյ զի բացցին զրունք եւ երեւեցի պատկերն Աստուծոյ: Նայեցաւ նա ի բարձանցս ի սրբութենէ լսել զհեծութիւն կապելոց եւ արձակել դորդիս մահապարտաց: Օգնական լեր ծառայիս Աստուծոյ...: Ամէն:

## ԺԴ

# ՏԼՍՄ ԱՅՍ ՔԱՂՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԵՍԲԱՆՏՈՒԹԵԱՆ

Աւագաց եւ պարոնաց եւ ՀԲ ազգի սիրտն քաղցրանայ եւ դատաւորաց լեզուն կապի եւ չարախօսաց լեզուն պապանձի: Գիրս դատաստանի է յորժամ որ դատաստան մտանես, կարգալ տուր [ի] վերայ ջրին եւ ջրովն երեսդ լուայ եւ դատաստանդ յաջողի:

## ԺԵ ԱՂՋԹՔ ՍՈՒՐԲ ԵՐԻՊՈՐԴՈՒԹԵԱՆ

Ի Քէն Հայցեմք մեղ օգնութիւն  
Ամենասուրբ Երրորդութիւն,  
Տուր աշխարհիս խաղաղութիւն  
Եւ Հիւանդաց առողջութիւն:  
Եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ... Ամէն:

## ԺԶ ԱՂՋԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՑԱՄԵՆԱՑՆ ՈՐՈԳԱՅԹԻՑ

Եռանձեայ Տէրութիւն միով բնութեամք եւ էութեամք, անքնին եւ անճառ Աստուած, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ, ստեղծող եւ արարչագործ ամենայն գոյից, որ ոչ ծածկի յամենահայեաց տեսութենէդ քումմէ վիշտ վտանգելոց անմեղաց. բա՛ց զակն քո ամենատես որ ոչ ննջէ եւ կարկառեա՛ զամենամերձ աջ քո ամենայալթ զօրութեամբդ եւ փրկեա՛ զծառայս քո ի բռնութենէ բանապրկուին, կորգեա՛ զտկարս ի ժանեաց խորամանկին, մանրեա՛ զմագիլքն չար ըմբռնողին, խցեալ կուրացո՛ զչար ակն չար օձին, յապաւեալ կորեա՛ զգործիք պլացման պղծին, կաշկանդեա՛, կարպնդեա՛, շղթայեա՛, կրկին սեւեռեա՛ ի տարտարոսն ներքին գործակցաւք իւր անզերծ զնդանաւն, ի հուր գեւենին եւ ողորմածութեամք քով փրկեա՛ զծառայս քո, ողջացո՛ զուշաբարձեալ վտանգեալ զերիս, զգաստացո՛ զանկեալ խորտակեալ, մեռեալս կենդանացո՛, զաստանդութեամք սասանեալս ամրացո՛, զաղարեցո՛ ի զորմանէ, կանգնեա՛ ի զայթակութենէ, արգե՛լ ի Հառաչմանէ, միսիթարեա՛ ի լալոյ, արիացո՛ յերկիւղէ, աղատեա՛ ի կարծեաց:

Բարեխօսութեամք սուրբ Աստուածանին եւ ամենայն ընտրելոց եւ նշանաւ ամենայալթ սուրբ Խաչին, ամրացո՛ զՀոգիս յերկիւղէ դիւացն, զմիսու ի զանազան վրդովմանց, զզգայարանքս ի դիւական երևմանց, զգործարանքս յայլայլական շարժմանց, ամրացո՛ քո աջովդ, պատսպարեա՛ քո խնամօքդ, զբանակս անզրանկացդ կարգեա՛ վտանգելոյս պահապան եւ պահեա՛ այժմ եւ յապա ի փառս եւ Քեզ փառք յաւիտեանս. ամէն:

## ԺԷ ԳԻՐ ՎԱՍՆ ԱՄԵՆԱՑՆ ՑԱԼԻԾ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ, ԶԵՐՄԻ ԵՒ ՍԱՐՍՈՒՐԻ, ՑԱՆԿԱՐԾԱՄԱՀԻ ԵՒ ՄԱՀՏԱՐԱԺԱՄԻ որ ոչ մերձենայ ծառայիս Աստուծոյ...

Տէր Աստուած զթած ես եւ ողորմած, Հայր Տեսառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, արարիչ ամենայն արարածոց, որ ոչ երկինք բաւեն Քեզ եւ ոչ երկիր զորախութիւն քո. քանզի ի վեր ես քան զերկինս եւ անդր քան զծառս. եւ ամենայն երեւելիք եւ աներեւոյթք քեւ են Հաստատեալ. եւ քոյին Հրամանաւու կառավարին ամենայն արարածք. Դու աղքատացուցանես եւ Դու մե -  
194

ճացուցանես, Դու հարկանես եւ Դու բժշկես, Դու ես աղբիւր բժշկութեան եւ սկիզբն անմահութեան եւ առողջութեան. Դու առաքեցեր զՈրդիդ քո գմիածինդ յաշխարհս, որ ձայնի գմեռնալսն յարոյց եւ բանի զրորուտն սրբեաց. եւ ի ձայնէ Նորա փախեաւ ջերմն եւ սարսուռն եւ ի պատմուճանէ Նորա բղիսեաց բժշկութիւն բազում:

Տէր Աստուած, առաքեա' առ ծառայս քո զառողջութիւն եւ խափանեա' զցաւս եւ գչիւանդութիւնս, զի Դու միայն ես ճշմարիտ Աստուած եւ Քեզ փառք յախտեանս. Ամէն:

## ԺԷ

### ԳԻՐ ՎԱՍՆ ԹՊՂԱՅԻ, ՔԱԶԱՆՑ ԵՒ ԱԼՔԻ

որ ոչ մերձենայ ծառայիս Աստուծոյ որոյ վերայ կենայ գիրս  
եւ այս անուն ծառայիս Աստուծոյ...

Յանկացայ բարութեան քում, Տէր, եւ կարօտացայ ամենակարող ողորմութեանդ քում. քանզի գեւն գիշերամարտ եւ սատանայ ցորեկակոփի հանա - պազ մարտնչի [ընդ ծառայից քոյց] լազգի աղգի պատերազմաւ եւ ոչ տայ վաստակիլ զբարի ժառանգն տղայ զաւակ, զվաստակն գողանայ օտարն այն. երեւելի պատրէ եւ աներեւոյթ խոցոտէ]:

[Արդ, Դու, Տէր քաղցր եւ ողորմած, անմենակարող], յիշեա' զծառայս քո... եւ մի՛ մատներ զտկարս ի ձեռն ի սկզբանէ մարդասպանին; Առ զզէն եւ զասպար քո եւ արի՛ օգնել ինձ [կտանգելոյս] հան զսուր քո ընդդէմ Հայլածաց իմոց եւ արզել զնոսա յինէն, Տէր Աստուած, տո՛ւր զօրութիւն [որդեծնութեան] ծառայիս Աստուծոյ... զի մի՛ ասասցէ թշնամին թէ՛, յաղթեցի նմա. արա առ իս նշան բարութեան եւ նշանաւ խաշին քո խոցոտեա' զսոսա. [սուրբ բեւեռոք բեւեռեա զնոսա] [փշեղէն պսակաւն նետաձիգ արա' զնոսա. Հարուածովք եղեգանն զգեստնեա' զնոսա], լեղեաւն եւ քացախովն զոր արքեր կսկծեցո՛ զնոսա. բրդիսմամբ քո սուրբ արեանդ հերքեա' զհոյս նոցա. [նոսկայի չարչարանաւքդ չարչարեա' զնոսա]. ձայնիւդ էլի էլի հրդեւեա' զնոսա. [տիգաւ որով խոցեցար տարամերթեա'] եւ այլ ամենայն տնօրինական կրիւք տարամերթեա' զնոսա. զթելիար եւ զամենայն զօրութիւնք նորա կործանեա' եւ զծառայս քո... անդրդուելի եւ անդրդալի պաշեա' յերկիւդէ նոցա եւ յամենայն պատրանաց նոցա. ամրացո՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. ամէն:]

## Ի

### ԱՂՕԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Տէր, Հայր եւ Աստուած կենցաղոյս [նայեա'ց] ի տառապանս ծառայիս քո եւ խնայեա' ի մեղօք մոլորեալ անձն իմ. բժշկեա' զգերեալս, զիր սպեղանի խոցեալ եւ թարախեալ Հոգուոյս եւ պատեա' զվէրս. վիրաւորեալս վերականգնեա' քանզի կորայ կործանեցայ բազում անօրինական կրիւք տարամերթեա' զնոսա. քան զգուիս իմ: Տոռունք մեղաց պատեցան զինեւ եօթնպատիկ. սիսալանք իմ պաշարեցին զիս եւ ոչ զոյ թիւ անզգամութեան իմում. Քեզ մեղաց փրկու-

թեանդ յաւիտենից. ոչ ունիմ վստահութիւն կոչել զանուն քո ահաւորիդ ի վերայ երեսիս; Ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս եւ Հարան յիս փուշը մեղաց իմոց. եւ արդ Տէր իմ, Տէր, առ յո՞ ապաւիննեցայց եւ կամ զո՞ արարից ինձ յոյս եւ ապաւէն եւ փրկութիւն; Բայց թէպէտ եւ բազում անզամ բարկացուցի զբարձրեալն, սակայն առ Քեզ կարդացից. մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայս քո, Տէր իմ,... [մի՛ սրտ] մտութեամբ սպառնալեօք սաստեր զիս, Տէր իմ, եւ մի՛ բարկութեամբ ահաբեկեացես զեղկելիս, Աստուած իմ, եւ մի՛ առներ զմեղուցեալս ի մորմորումն յաւիտենից կայծականց, Տէր իմ, Տէր. եւ մի՛ ուղարկեր զողորմելիս յանողորմ տանջանս, Աստուած իմ. մի՛ տար զպարութեալս ի տագնապ տարտարոսին, Տէր իմ. եւ մի՛ տիրեսցեն ի վերայ վստահելոյս վիշտք անսպառ, Աստուած իմ. եւ մի՛ բարձրացի ի վերայ իմ բոցն Հրաբորոք, Տէր իմ. եւ մի՛ ած[եր] ի վերայ բազմամեղիս զնոցն թափին, Աստուած իմ. եւ մի՛ կաքաւեացեն ի վերայ տառապելոյս Հոյք անվախճան որդանց, Տէր իմ. եւ մի՛ ածեր ի վերայ բազմամեղիս զալրագործ զչար ժանեաց զթիւնսն ելին նոցա, Աստուած իմ. մի՛ ծածկեացեն զծանակեալ ծառայս ծովուն Հրեղէն, Տէր իմ. եւ մի՛ վազեացէ ի վերայ վըրդովկելոյս վտակ Հրախառն յորձանաց, Աստուած իմ. մի՛ առաքեացես զիս ի խաւարն արտաքին. եւ մի՛ անկայց աշխարհին ի գուրն ապականութեան, Աստուած իմ. մի՛ որոշեացես յերամէն երանելեացն, Տէր իմ. եւ մի՛ զրկեացես զյանցաւորս ի Հաղորդութենէն ընտրելոցն, Աստուած իմ. մի՛ զահագին զծայն ձայնսեացես եթէ ծառայչ չար եւ վատթար եմ եւ մի՛ անտես առներ զտարակուսեալս յաւիտենից օրհնութեանց, Աստուած իմ. այլ ողորմութեամբ քով յաւիտենից ողորմեա՞ ինձ եւ անհատ մարդաբիրութեամբդ քով զթա՞ յիս: Աղաչեմք զՔեզ, Տէր, սրբարար զօրութեամբ քով սրբեա' զիս զաղտեղեալս մերօք եւ ազատ արա' արարիչ իշխանութեամբ քով. ազատեա' զիս ի դառն վշտաց գեհնոյն. տո՛ւր ինձ լուսափայլ առազաստն եւ դասեա' ի դաս իմաստականացն: Տո՛ւր, Տէր, աղաչեմ զՔեզ, խոստացեալ բարին ընդ ամենայն ընտրեալսն. զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ զերրորդութիւն, զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԻԱ ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐՁԻՆ

Տէր Աստուած զօրութեանց եւ Փրկիչ ամենայն արարածոց, աղաչեմք զՔեզ, ամենագութ Տէր եւ ողորմած Աստուած, նայեա'ց յաղաչանս իմ վասն մեծին անուանդ քո ահաւորին. զի թէպէտ եւ իցեն անօրէնութիւնք յաշխարհիս Հայոց, այլ Դու, Տէր, ծածկագէտ ես եւ քննիչ խորհրդոց, կարող ես խրատել զամենայն մարդ զնալ ըստ Հաճութեան կամաց քոց. արդ խնայեա'ց ի ժողովուրդս քո որ ի Քեզ յուսով ապաւիննեալ են. դարձի՛ր, Տէր, ի բարկութենէ քումմէ. փրկեա' զմեզ յարժանահաս նեղչաց մերոց: Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ սրբոյն Թաղէսոփ առաքելոյն եւ նախնոյն իմոց, մի՛ անտես առներ զմեզ եւ մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ. այլ Դու անո - խակալ ես, ողորմած եւ բարիչ եւ ներող ի վերայ անցանաց մերոց. ոչ թողուս եւ ոչ ընդ վայր Հարկանես զամեննեսեան որ խնդրեն զՔեզ, Տէր: Այլ մի՛ տար

անօրինաց զսրբութիւն քո. զի ահա զսրբութիւն քո կործանեցին եւ զհաւատացեալսն անարդեցին; Ահա մեծարանեալ են Հեթանոսք թէ՛ ո՞ւր է Աստուածնոցա; Այլ Դու ամենակարող Տէր եւ նախանձող Տէր, եւ խնայեա յարարածք քոց եւ ի գործ ձեռաց քոց եւ զաշխարհս ձեռաց քոց անտես մի՛ առներ, Որ միայնդ ես մարդասէր, եւ կեցո՛ զդողովուրդս քո որպէս առ Մովսիսին, որ ընկղմեցել զփարաւոն եւ զփարայէլացիսն պահեցեր անարատ եւ անփորձ աջովզ քո՛: Նոյնպէս եւ այժմ Համբ' մեզ յօգնութիւն ի պատերազմիս յայս, ով Տէր, որ զամասուածասաստ բարկութիւն քո ա'ծ ի վերայ բանակին բանարկու Պարսից եւ զարձո՛ զսուրբ[ս] նոցա յինքեանս եւ զաղեղուն նոցա խորտակեա՛, յետո ընկեա՛ գէշ զի յափեցին զաղանք անսապատի եւ թոչունք երկնից. դարձո՛ զօգնութիւն ի սրոյ նոցա եւ արրո՛ նոցա բաժակ կորստեան: Լե՛ր բազուկ եւ օգնութիւն ընտրեալ ազգին քրիստոնէից լզիոր լյանուն քո անուանեցէր. երեւցո՛ զգօրութիւն քո այս որպէս Յեսուայ զօրավարին քո. տկարացո՛ զաղեղունս նոցա եւ զզէնս նոցա, փշրեա՛ զնոսա եւ մանրեա՛ որպէս զբազմութիւն մարախու ի գուր կորստեան եւ անցո՛ զմարդ ի վերայ գլխոց նոցա. Հան զհրեցէն սուրբն աներեւոյթ ընդդէմ նոցա եւ սաստեա՛ նոցա զի մի՛ կարասցեն կալ Հակառակ. առաքեա՛ ի մեզ զբարիս քո որպէս օրհնութիւնս Եղեկիայ. եւ դարձո՛ զնոսա ամօթով որպէս զՍենեքերիմ. եւ արա՞ զգօրս զայս Քեզ նշան յաւիտենական եւ անուն պարծանաց: Լե՛ր օգնական եւ զօրավիզն աշխարհիս Հայոց զի ծանիցեն անօրէնքն որ յարուցեալ են ի վերայ մեր եթէ զո'յ Աստուածն մեր Քրիստոնէից: Արդ յայտնեա՞, Տէր, զանուն քո, այսօր արա՞ լծակից ըստ բանի մարգարէին. այսօր ահա իրեւ զգառինս ի մէջ զայսոց եմք. եթէ մինն զհազարն Հալածիցէ կամ երկուքն զրիւր շարժեսցեն: Արդ Դու ես մեզ յոյս եւ ապաէն, զՔեզ կարդամք յօգնութիւն մեզ, մի՛ յիշեր զմեղս մեր. զի ոչ արդարանայ առաջի Քո ամենայն մարդ. զի մեր տկար եւ անսարժան եւ ոչ իշխանք Հանդերձի խնդրելի ի Քէն: Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտսն զանձինս մեր եւ մի՛ տար պղծոց անհաւատից կոխել զգաւիթ Եկեղեցւոյն եւ արհամարհել զանուն քո. զի, թէպէտ եւ մեզ բարկացեալ ես, սակայն Եկեղեցի խնայեա՛ յարարածք քո եւ մի՛ որոշեր զմեզ ի Հայրական խնամոց քոց. զի այլ որ ոչ ունիմք օգնական մեզ, Տէր: Արի՛, Տէր, օգնեա՞ մեզ եւ փրկեա՞ զմեզ վասն անուան քում սըրբոյ. զի վասն Քո մեռանիմք զօր Հանապազ: Համարեցաք որպէս զոչխար ի զենումն:

Եւ արդ Եր շարժեալ տեղին որ ունէր սուրբն Ներսէս եւ եղեւ ձայն յերկնից որ ասէր. մի՛ երկնչիք. ես ընդ ձեզ եմ առ ի զօրացուցանել զձեզ եւ լուայ աղա - չանաց քոց եւ առաքեցի զօգնութիւն ի վերայ ձեր առ ի սաստակել զնոսա եւ մազ ի գլխոց ձերմէ ոչ կորիցէ:

Այնպէս պահեա՞, Տէր Աստուած մեր, զծառայս քո...:

## ԻԲ

### ԱՂՈԹՔ ԱՄԵՆԱՑ ՑԵՂ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Արդ, [որպէս] բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց զօրացուցեր զսահ - մանս զօրավարին եւ որպէս զօրացուցեր զԴասիթ արքայն ընդդէմ Գողիաթու, նոյնպէս զօրացո՛ զսա ընդդէմ թշնամեաց իւրոց: Տո՛ւր Տէր սմա զշնորհս Սամ-

սոնի եւ իմաստութեան ուղիղ քաղաքավարութիւն, վայել յայսմ կենցաղոյս, եւ, զշետ բարի կենաց խրոց, կեալ անրիծ յարքայութեան քում: Աձեցո՛ զարդիւնս եւ զստացուած սորա որպէս զԱրրահամուն, զՍահակայն եւ զՖակուրայն: Պահեա՛ Տէր Աստուած զտուն սորա եւ օրհնեա՛ Տէր...: Թո՛ղ Տէր զմելոս սորա որպէս պոռնկին եւ աւազակին: Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ անարատ ծնողի քո եւ սուրբ Կարապետին եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ ամենայն սրբոց քոց զոր գրեցաք եւ ոչ կատարեցաք գրել եւ այլ որ են ի համատարած աշխարհին եւ որ երկնային դասքն են հրեշտակաց, նոցին բարեխօսութեամբ օգնեա՛, Տէր Աստուած, զառայս քո...:

#### ԻԳ

#### ԱՅՍ Է ԳԻՐ ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻ ԱՆՈՒԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Որ կարդայ կատարի ամենայն խնդրուածք իւր ի բարին Աստուծով:  
(Ա)

Անսկիդըն Աստուած, անեղ Աստուած...	<i>La lettre</i>	Ա	comprend	199	lines
Բարձր Աստուած, բարձրեալ Աստուած...	»	»	Բ	»	16 »
Գեղեցիկ Աստուած, Գերազոյն Աստուած...	»	»	Գ	»	6 »
Դատ Աստուած, դատաւոր Աստուած...	»	»	Դ	»	11 »
Եկեղեցի Աստուած, երեւակ Աստուած...	»	»	Ե	»	21 »
Զարմանք Աստուած...	»	»	Զ	»	17 »
Էրուսալէմ Աստուած, էրէց Աստուած...	»	»	Է	»	16 »
Ընդչմարդիտ Աստուած, ընտրեալ Աստուած...	»	»	Ը	»	7 »
Թագաւոր Աստուած, թագաւորաց Աստուած...	»	»	Թ	»	4 »
Ժառանգ Աստուած, ժողով Աստուած...	»	»	Ժ	»	2 »
Իշխան Աստուած, իշխանաց Աստուած...	»	»	Ի	»	6 »
Լոյս Աստուած, լոյզ Աստուած...	»	»	Լ	»	4 »
Խորհուրդ Աստուած, խորհրդապետ ...	»	»	Խ	»	5 »
Ծով Աստուած, ծովասաստ Աստուած...	»	»	Ծ	»	2 »
Կենդանի Աստուած, կենդանարար...	»	»	Կ	»	3 »
Հայր Աստուած, հօտ Աստուած...	»	»	Հ	»	3 »
Զայն Աստուած, ձիր Աստուած...	»	»	Զ	»	2 »
Ղեկավար Աստուած, Ղամպար Աստուած..	»	»	Ղ	»	2 »
Ճառ Աստուած, ճառարան Աստուած...	»	»	Ճ	»	5 »
Մարդասէր Աստուած, մարդաստեղծ...	»	»	Մ	»	3 »
Յոյս Աստուած, յարութիւն Աստուած...	»	»	Յ	»	3 »
Նորոգող Աստուած, նորոգիչ Աստուած...	»	»	Ն	»	3 »
Շնորհ Աստուած, շնորհող Աստուած...	»	»	Շ	»	3 »
Ողորմած Աստուած, ողորմարան Աստուած...	»	»	Ո	»	4 »
Զարարարձ Աստուած, չարատեաց Աստուած...	»	»	Չ	»	2 »

Պահող Աստուած, պահպանող Աստուած...	»	Պ	»	3 »
Զահ Աստուած, ջահալոյս Աստուած...	»	Զ	»	4 »
Ռատ Աստուած, ռատարաշխ Աստուած...	»	Ռ	»	7 »
Սուրբ Աստուած, սրբութիւն Աստուած...	»	Ս	»	3 »
Վեր Աստուած, վարժ Աստուած...	»	Վ	»	3 »
Տեսող Աստուած, տեսուչ Աստուած...	»	Տ	»	2 »
Բախման Աստուած, բախորոր Աստուած...	»	Բ	»	2 »
Ցնծութիւն Աստուած, ցաւոց բժիշկ ...	»	Ց	»	2 »
Իիսոս Աստուած...	»	Ի	»	1 »
Փառք Աստուած, փառաւորեալ Աստուած... »	»	Փ	»	3 »
Քահանայ Աստուած, քահանայապետ...	»	Ք	»	3 »

Բ) Աստուած, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, անբաժանելի սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, Քեզ փառք յախտեանս. ամէն:

Սուրբ եւ աչեղ Ռ եւ Ա անունն Աստուծոյ, պարիսպ ամրութեան, բժիշկ հիւանդաց, շինութիւն տանց եւ պահպանութիւն, տղայոց օգնութիւն եւ փրկութիւն, չարեաց աղատութիւն, մեղաց թողութիւն, վաճառաց յաջորութիւն, թշնամեաց յաղթութիւն եւ ամենայն բանի յաջմէ եկեալ եւ ամենայն ցեղ չարէ աղատեա' զծառայն Աստուծոյ... Օգնական եղիցի եւ պահպան. յամենայն չարէ փրկեացէ Տէր Աստուած. ամէն:

**ԻԳ  
ԱՆՈՒԱՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԲ ԼԵԶՈՒ  
X  
LES NOMS DE DIEU EN SOIXANTE-DOUZE LANGUES**

ԹԵՐՆԻՆ	ԹԱՍ	ԱԿԻԱՒ
Trini-	Tas	Agios
ՍԱԼԻԹԵՐ	ՄԷՍԻԱՍ	ԷՄՄԱՆՈՒԵԼ
SAUTHER	MESIAS	Emmanuel
Sôtêr	Messia	
ԱԴՈՆԻԱՅ	ԱԹԱՆԱՏ	AUTHEAUS
ADONIAY	ATHANATAT	
Adonaï	Athanatos	o Theos
ՊԱՆԱԿՀՐԱՄ ԱՏԱՍԻՏԵՍ	ԴԵՈՒ	ԱՂՐԱՄՏՈՆ
PANAKHRAM ATAUNTES	DEOUS	AGHRAMTON
Pentagrammaton	Deus	Akremto
ԻԶՈՒ	ԻՄԱՆԵԼԻԱՅ	ԿԱԲԱՒԱԻԻԺ
IZOUS	IMANELIAY	KABAUAUITH
Jesus (?)	Emmanuel (?)	Sabaoth
ՍԱԼՎԱՏՈՒ	ԱԼՓԱԼ-ՏԱՒ	ԱՊՐԻԵՄԵՆ ԷԹՈՒՍ
SALVATAUD	ALPHAETAU	

<i>Salvator</i>	<i>Alpha et ô</i>	<i>Primogenitus</i>
ՓՐԻՆՑԻՓԻՈՍ	ՑՏ	ՑԻՆԻՒ
<i>Principium</i>	<i>et</i>	<i>FINIS</i>
ՎԻԱՍ	ՎԵՐԻԹԱԾ	<i>finis</i>
<i>Via</i>	<i>Veritas</i>	ՎԹԱՅ
ԿԱԲԵՆՏԻԱՅ	ՎԵՐԻԹԱՒ	ՎԻԴԱՅ
<i>Sapientia</i>	ՎԵՐԹԱՀԱՍ	<i>FARIZITHOS</i>
ԷԿՈՍԱՄ	ՎԵՐԹԱՀԱՍ	(?)
<i>Ego sum</i>	ՎԻՐՏՈՒ	ՖԻԵՍ
ԱՆԴԻԱԹԱՒՐ	ՓԻՍՈՒ	ԱՈՒՊԻ
<i>SEDIATHAUR</i>	ՓԻՍՈՒ	<i>AUPIS</i>
<i>Mediator</i>	ԱԳՆՈՒ	ՕՎԻ
ՎԻԴԻԱԼՈՒՐ	ԱՐԻԿՈՒ	ԼԻԱՀ
<i>VITOULOUM</i>	ԱՐԻԿՈՒ	ԼԻԱՒ
<i>Vitulus (?)</i>	ԱՐԻՏ	ԼԵՕ(?)
ՎԵՐԱՐՈՒԻՐ	ՎԵՐԱՐՈՒԻՐ	ՍՊԼԵԼԱՒՐ
<i>VERMIOUM</i>	ՎԵՐԱՐՈՒ	<i>SPLELTAUR</i>
<i>Verum (?)</i>	ՎԵՐՈՐՈՒ	<i>Splendor</i>
ՅԻՍՈՒ	ՔԼԱՐԱԼՈՒՍԻԱԿԱՒ	ՓՈԹՀՐ
<i>YISOUS</i>	ՔԼԱՐԱԼՈՒՍԻԱԿԱՒ	<i>PHATER</i>
<i>Jésus</i>	ԿԼԱԽՈՆ	<i>Pater</i>
ՊԱՆԵՍ	ՓԼԱՈՆ	ՎԻՐԿԱՅ
<i>PANEIS</i>	ՓԼԱՈՆ	<i>Virga</i>
<i>Panis</i>	(?)	ՔՐՈՐԹԱՅ
ՄԱՆԻԱՅ	ԻԱՆՈՒԱՅ	<i>QRORTHAY</i>
<i>MAUNAY</i>	ԻԱՆՈՒԱՅ	<i>Porta (?)</i>
<i>Manna</i>	ՅԱՆՈՒԱՅ	ՍՊԱՀՆՍՈՒ
ԼԱՖԻԱՅ	ԱՆԿԱՀԱՐԻՒ	<i>SPAUNSOUS</i>
<i>LAFIAY</i>	ԱՆԿԱՀԱՐԻՍ	<i>Sponsus</i>
<i>Lapis</i>	ԱՆԿԱՀԱՐԻՍ	ՍՈՒԶԵՐՈՒ
ՊԱՐՍՈՐ	ԻՐԱՒԵԹԱՐ	<i>SATZEROS</i>
<i>PARSTOR</i>	ՊՐԵՏՈՐ	<i>Sacerdos</i>
<i>Pastor</i>	ՍԱՆԹՈՐՈՒ	ԻՄՈՒԹԱԼԻՒ
ՍԱՆԹՈՒՐ	ՍԱՆԹՈՐՈՒ	<i>IMOUTHALIS</i>
<i>SANTHOUS</i>	ՍԱՆԹՈՐՈՒ	<i>Immortalis</i>
<i>Sanctus</i>	ՍԱՆԿՏՈՐՈՒ	ԶԻՋՈՒ
ՅԻՆԵՒ	ՔՐԻՍՏՈՆ	<i>ZIZOU</i>
<i>YRES</i>	ՔՐԻՍՏՈՆ	<i>Jésus (?)</i>
<i>Rex</i>	ՔՐԻՍՏՈՆ	

ՓԻԼԻՈՒՄ	ԱՒՄՆԻՍ	ՓԱԹԷՐ
PHILIOUS	AUMNIS	PHATHER
Filius	Omnis (?)	Pater
ՖԼԻՈՒՄ	ԷՌԱՊԷՐԻԹՈՒՄ	ԱԱՆԹԱՒՐ
FLIOUS	ETSPERITHOU	SANTHAUR
Filius	et Spiritus	Sanctus
ԱՀԱՄԱՒ	ԱՀՆԻ	ՓԱԻԹԷՆՈՒ
AUMAU	AUNI	PHAUTENS
Homo	Omni-	Potens
ՄԻՔԻՔԱՀԻՐՈՒ	ԷՌԷԿՆԱՀԻՍ	ԿԱՐԻԹԱՒՐ
MIQIQAURS	ETHENAUS	KARITHAUS
Niketor (?)	Sthénos (?)	Charitos
ԿՐԵԱԹԱՒ	ՌԵԹԻՄԹԱԻՐ	PRIMOUS
KREATHAU	RETHIMTHAUR	Primus
Creator	Redemptor	BAUNOUN
ՆՈՎԻՍԻՄՈՒՈՒՄ	ՍԱՄՈՒՈՒ	BAUNOUN
NOVISIMOUS	SAMOUS	Boonum (?)
Novissimus	Summus	ԱԿԼԱՅ
ԷԼԻԷԼԻԱՒ	ԱԻՐԻԿԱՒ	AKLAY
ELIELIAU	AURIKAU	Agla
Eliéli au	Origo	ՈՎՍԱՆՆԱՅ
ՆԱԿԼԱՅ	ԿԼԱՒՐԻ ԱԻԶՈՒՄ	OVSANNAY
NAKLAY	KLAURI AUSOUS	Hosanna
Nagla	Gloriosus	ԻՍԿԻՐԻ
ԷԼԻ	ՂԱԻՆ	Ischyros
ELI	GHAUN	
Eleison		

## ԻԵ ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Ա) Հայր սուրբ սրբեա' զիս. Որդիդ սուրբ պահեա' զիս. Հոգիդ սուրբ մաք - ընեա' զիս. Հոգի Քրիստոսի սրբեա' զիս. մարմնն Քրիստոսի մաքրեա զիս. արին Քրիստոսի արրօ' զիս. Ծուր ի կողէն Քրիստոսի լուս' զիս. մատնումն Քրիստոսի ազատեա' զիս. սուրբ ըմբռնումն Քրիստոսի մաքրեա' զիս. չարչարանք Քրիստոսի զորացո' զիս. խաչելութիւն Քրիստոսի կարողացո' զիս. սուրբ սպանդումն Քրիստոսի կենդանագործեա' զիս. յարութիւն Քրիստոսի յարո' զիս. Համբարձումն Քրիստոսի բարձրացո' զիս:

Բ) Ով քաղցր բարի Քրիստոս, ողորմեա' ծառայիս Աստուծոյ...: Ամէն: Փրկեա' ի ջրոյ և ի ջրոյ, ի յանկարծակի մահուանէ, ի հիւանդութենէ, ի պատուհասէ, ի հարամեաց, ի յանօրինաց, ի մատնողաց, ի կախարդաց և յաղանդարաց, ի հայից, ի հնարագիտութենէ կանանց, ի յաւագաց, ի չարլորդոց և քաղցրացի սիրտ թագաւորաց և իշխանաց մեծամեծաց ընդդէմ

ծառայիս Աստուծոյ...: Ամէն: [Ի մարդադէմ գաղանաց, ի սուտ եղբարց, ի սուտ ընկերաց, ի յայլազգեաց, ի սողնոց եւ ի ճճաց եւ յամենայն չար թիւնաւորաց պահեա' զծառայս քո... Ամէն]:

Բ) Ով բարի Յիսուս լուր ինձ, մի' մերժեր ի Քէն եւ մի' թողուր զիս. ի նեն-գութենէ չարին պահեա' զիս, ի ժամ մաշուան կոչեա' զիս, մերձ առ Քեզ զի'ր զիս, զի ընդ հրեշտակս քո աւրէնսեցից զՔեզ: [Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո եւ արա' առ իս նշան բարութեան: Տեսցն ատելիք իմ եւ ամաչեսցեն. զի Դու, Տէր, օգնեցեր ինձ եւ միխթարեցեր զիս]:

## ԻԶ ԱՂՕԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Տէր Յիսուս, Դու ես օգնական իմ եւ ի ձեռու քո եմ յամենայն ժամ. Դու զի-տես զօգուտն իմ. օգնեա' ինձ եւ մի' թողուր զիս կորնչել ի մեղս իմ. այլ զթա՛ ստեղծուածոց քոց եւ մի' ընկենուր զիս յերեսաց քոց վասն իմոց զի առ Քեզ ապահնեցայ: Քժիշկ երկնաւոր, բժշկեա' զանձն իմ զի մեղայ Քեզ եւ առաջի Քո են ամենայն նեղիչը անձին իմոց զի ոչ գոյ ինձ ապահն բայց ի Քէն, Տէր: Տէր, կեցո՛ զիս ըստ ողորմութեան քում զի ամաչեսցեն ամեններեան յարուցեալք ի վերայ իմ. եւ որք խընդրեն զանձն իմ կորուսանել յետս զարձցին, զի Դու, Տէր, կարող ես ամենայնի եւ քո են փառք եւ զօրութիւն այժմ եւ անվախճան յաւի-տեանց ամէն:

## ԱՂՕԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԶԱՐԵԱՑ ԵՒ ԽԱՓԱՆՈՒՄՆ ԱՄԵՆԱՑՆ ՑԱԽՈՑ Ազատի

Ա.) Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս, որ արարեր զերկինս եւ զերկիր եւ որ է ի նոսա շունջ կենդանի, Դու ստեղծեր զմարդն ի պատկեր աստուածու-թեան քո, Հրամայեցեր սուրբ բերանով քով թէ՛, աճեցէ՛ք եւ բազմացարուր եւ լցէ՛ք զերկիր. եւ Դու ես թագաւոր անմահ ի վերայ մեր, Դու՝ մարդասէր Տէր, Դու՝ ողորմած Տէր, Դու՝ զթած Տէր, Դու՝ բարերար Տէր, Դու՝ պահապան Տէր, Դու պահեա' զծառայ քո... Ամէն: անփորձ ի չարեաց եւ անսայթաք ի յորոգայ-թից:

Բ) յերեւելի եւ յաներեւելոյթ թշնամոյն. պահեա' ի չար աչից եւ ի չար լեզու եւ ի չար նիստէ, ի սրոյ, եւ ի թրէ, ի նետէ, ի նիզակէ, ի խանջարէ լել ի դա-նակէ եւ յամենայն պատուհասէ, ի յարինահեղաց, ի մարդասպանաց, եւ ի յայլազգեաց, ի յանօրինաց, ի սողնոց եւ ի ճճաց եւ յամենայն թիւնաւորաց, ի Հրոյ, ի յօդոյ, ի Հողմոյ, ի ջրէ, ի հեղեղատէ, ի յընկղմանէ ծովու, ի յորդահոսան զետոց եւ յորոգայթահոս աղբերաց, ի բքահեղձ ձիւնէ, ի լեռնատարափ թնօմանէ, ի վիմազոր եւ թաւալազնաց քարէ, յորոտմանէ, յամպոց, ի շա-ռափնաթափ կարկտէ, յանկարծափայլ փայլատակէ եւ ի Հրաբորբոք կայծակ-մանէ, ի շարժմանէ, ի ցասմանէ, ի պատերազմէ, ի գաղանէ, ի ժամեաց, [ի] չար վիշապէ եւ յօձէ, ի յիմէ եւ քարբէ եւ յամենայն թիւնաւոր զեռոնց եւ յարջէ, ի

գալիք, ի յառիւծուց, ի յրնծոց եւ յամենայն ցեղ ցաւոց, ի գլխացաւէ, ի յաշացաւէ, ի ներքսացաւէ, ի վարդուաջէ<sup>(\*)</sup>, ի ջւուոտ<sup>(\*)</sup> ջերմէ, ի տարածամ մահուանէ եւ լյայլ ամենայն չարեաց որ կան, զորս յիշեցաք եւ ոչն կարացաք յիշել. ամենակարող զօրութեամբ հեռացեալ եղիցի ի ծառայէս Աստուծոյ...

## 19

Ա) Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, փրկեա' զծառայս քո[յ]ամենայն վնասէ եւ լյամենայն վատէ, ի չար ընկերէ, ի չար դրացեաց, ի թրէ եւ ի դանակէ, ի վտանգէ եւ չար պատահմանց, ի գողոց եւ ի հարամեաց, ի բռնաւորաց, ի յանաւրինաց, ի չար դատաւորաց, ի մատնողաց, ի զրաքարտողաց, ի բռնաւորաց, ի ցամանէ, եւ լյամենայն չարէ եւ լյամենայն փորձանաց երեւելեաց եւ աներեւոթից, ի գինւելոյ եւ ի բողոյ չարէ, ի կատղած շանէ, ի փրփրած ուղտոյ, ի թիւնաւոր աւձէ եւ ի մերկացեալ սրէ եւ լյամենայն վտանգէ որ դայ ի մեղաց եւ յանգիտութենէ, պահեա' անփորձ ի չարէ եւ անսայթաք ի յորոգայթէ երեւելի եւ աներեւոյթ թշնամոյն, պահեա' զծառայն քո....: Ամէն:

Բ) Հայր, ըերդ անձինս ամուր, Որդին, պարիսպ մտացս ամուր. Հոգին, պարիսպ հոգւոյս ամուր: Հայրն պահէ, Որդին փրկէ, Սուրբ Հոգին փրկէ եւ կեցուցանէ եւ ազատէ լյամենայն չարէ զծառայն իւր...: Արդ հալածեալ եւ խափանեալ եղիցի ամենայն չար եւ ամենայն սատանայական որոգայթ ի ծառայէս....:



## ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ

ՀԵՂԻՆԱԿ

# «ԾԱՂԻԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ»

ԳՐՔԻՆ

ԳՐԵՑ

ՖՐԵՏԵՐԻՔ ՖԷՅՏԻ

Յառաջաբան

ԱՐԴԱԿ ԶՈՊԱՆԵԱՆԻ



Պատկերազարդուած Փարիզի Ազգային Մատենադարանի  
երկու հին ձեռագիրներու մանրանկարներուն  
վերարտադրութիւններով:

Imp. Araxes – Paris

ՓԱՐԻԶ

1939

## ՑԱՌԱՋԱԲԱՆ

Պ. Ֆրետերիք Ֆէյտի Հեթում Պատմիչին նուիրուած այս բանախօսութիւնը արտասանեց ներկայ տարուան Մարտ ամսուն, հաւաքոյթի մը զոր Պոսիւէ փողոցի Տան մէջ կազմակերպած էր Փարիզի Հայ Երիտասարդաց Միութիւնը. եւ Քրանսացի երիտասարդ Հայագէտին Հայերէն լեզուով կատարելիք առաջին բանախօսութիւնը լսելու համար Հոն Խոնուած Հայ ընտիր Հասարակութիւնը Խոր ուշադրութեամբ եւ Հաճոյքով ունկնդրեց զայն:

Այդ ունկնդիրներէն շատերը նոր կ'իմանային անունը կիլիկեան Հայ թագաւորութեան շրջանի այդ մեծարժէք Հայուն, և անոնք ալ որ այդ անունն իմացած էին՝ մեծ մասամբ ապահովապէս կարդացած չէին անոր գործը եւ տարտամ տեղեկութիւն մը միայն ունէին այդ անձնաւորութեան վրայ; եւ սակայն այդ Հեթումը Հայկական Կիլիկիոյ արքայական երկրորդ գերդաստանին, Հեթումեանց տոհմին պատկանող Հմուտ ու ձեռներէց մտաւորական մը եղած է, Հեղինակ Արեւելքի մասին ուշագրաւ գրքի մը, որ Հայու մը կողմէ Քրանսերէն լեզուով շարադրուած Հնագոյն գործն է, եւ որ իր ժամանակին մեծ ընդունելութիւն գտած, Մարքօ-Փոլոյի գրքին չափ Հոչակ ստացած, լատիներէնի, Հոյանստերէնի, Խոալերէնի, անպիիերէնի թարգմանուած է; Ինչպէս Պ. Ֆէյտի իր բանախօսութեան մէջ շատ լաւ ի վեր կը Հանէ, զուտ պատմագիր մը կամ ուղեգիր մը չէ Հեթում, այլ նաեւ քաղաքական գործիչ մը, ազգային-կրօնական դատի մը առաքեալը, որ, Կիպրոսի Քրանսական կաթողիկ Միաբանութեան մը անդամ դառնալէ յետոյ, եկած էր Փուաթիէ Կղեմէս Ե. Պապին ներկայանալու, անոր մանրամասնօրէն պարզած էր մահմետական վտանգով պաշարուած Արեւելքի քրիստո-նեաներու կացութիւնը, ու ջանացած էր զայն մողել որ նոր Խաչակրութիւն մը կազմակերպէ, օպտագործելով նաեւ այն տրամադրութիւնները զոր գետ Հեթանոս մնացած ու մահմետականութեան թշնամի Թաթարները ցոյց կուտային Եւրոպայի ու Արեւելքի քրիստոնեաներուն միանալով մահմետական ժողովուրդները, մասնաւորապէս մահմետական Թուրքերը, Զախարիաներու եւ քրիստոնեայ տէրութեանց իրը դաշնակից նոյն իսկ քրիստոնէական կրօնքն ընդգրկելու:

Թաթարներու նորածագ բայց արդէն իսկ մեծածաւալ ու յարածուն զօրութիւնը Փոքր Ասիրյ եւ Եղիպտոսի մահմետական Թուրքերուն դէմ գործածելու քաղաքականութիւնը, զոր Կիլիկիոյ մեր Հեթումեան ար - քայական գերդաստանը - Հեթում Ա. Թագաւորէն իսկ սկսեալ - յղա - ցաւ ու իր միջոցներուն ներած չափով կիրարկեց, դժբախտաբար չորդեզրուեցաւ ո՛չ Խաչակիրներէն ո՛չ ալ Պապութենէն; Ռընէ Կոռուէ իր «Պատմութիւն Խաչակրութեանց» ստուար ու հոյակապ գործին եր - րորդ հատորին մէջ՝ Հայկական Կիլիկիոյ իշխաններուն ալդ իմաստուն քաղաքականութիւնը մանրամասնօրէն պարզելով ու ջերմօրէն ջատա - գովելով, կ'այպանէ Խաչակրութեանց ղեկավարները որ չեն գիտցած օգտուիլ Հայոց ցոյց տուած ուղեգիծն, որով Թաթարներն ալ վերջ ի վերջոյ մահմետականութեան յարած, Թուրքերուն պէս անոնք ալ քրիստոնեաններուն թշնամի դարձած, Խաչակրութեանց կատարած գործը քանդելու, Արևելքի մէջ քրիստոնեայ տարրը նուաճելու եւ մահ - մետականութիւնը տիրական դարձնելու նպաստած են; Կոռուէ իր գոր - ծին մէջ պատմիչ ու գործիչ Հեթումի անձն ու երկը մէկէ աւելի անգամ յարգանքով կը յիշատակէ եւ անկից մէջբերումներ կ'ընէ:

Հեթումի գրքին բնագիրը առաջին անգամ տպագրուած է բազ - մարդին Հայագէտ էտուար Տիլորիէի «Խաչակրութեանց Պատմագիր - ներ» մատենաշարի «Հայկական վաւերաթուղթեր» հատորին մէջ: Բայց այդ հատարարակութիւնը շատոնց սպառած է, եւ Հեթումի գործին բոլոր ձեռագիրներուն քննական համեմատութեամբ նոր հատարակութիւն մը չէ կատարուած տակաւին: Հ. Մկրտիչ Աւգերեան 1842ին Վենեսուի - կի մէջ հատարակեց գրաբար Հայերէնով թարգմանութիւն մը, կա - տարուած՝ Հեթումի գործին լատին թարգմանութեան վրայէն և որ պակասաւոր է: Այդ Հայերէն հատարարակութիւնն ալ երկար տարիներէ ի վեր սպառած է: Այժմեան Հայ մտաւորականներէն մատի վրայ կրնան համրուիլ անոնք որ կարդացած են այդ գրաբար թարգմանութիւնը կամ Տիլորիէի հատարակութիւնը: Տարիներ առաջ Մ. Ս. Դաւիթ Բէկին թելազրեցի որ Հեթումի գործին աշխարհաբար Հայերէն ամրող - ջական թարգմանութիւն մը պատրաստէ եւ հեղինակին վրայ ուսում - նասիրութեամբ մը հատարակէ Անահատի մէջ: Ողբացեալ բարեկամս խոստացաւ, սկսաւ աշխատիլ, բայց իր ունեցած ուրիշ գրադումները թոյլ չտուին ի գլուխ հանել այդ աշխատութիւնը: Լսած ըլլալով որ Հայ երիտասարդաց Միութիւնը Պ. Ֆէյտիէն խնդրած էր բանախօսութիւն մ'ընել իր Տան մէջ, խնդրեցի Համակրելի Հայագէտէն որ այդ բանա - խօսութեան նիւթ առնէ Հեթումը, որուն գործովը գիտէի որ ինքն ալ արդէն հետաքրքրուած էր: Եւ ահա ֆրանսացի Հայագէտ Պ. Ֆէյտին

ըրաւ ու դեռ պիտի ընէ Հեթումին համար ինչ որ հանգուցեալ Դաւիթ-Բէկը ուզեց բայց չկարողացաւ ընել: Բանախօսութիւնը զոր շարադրեց եւ արտասանեց Պ. Ֆէյտի, էական գիծերը կուտայ անձին ու զործին այս Հեթումին, որ արժանի է ճանչցուելու, սիրուելու եւ յարգուելու հայ արդի սերունդէն, ինչպէս եւ ապագայ բոլոր հայ սերունդներէն, իբր մեր հին մեծ ազգային գործիչներէն մին, իբր նախորդ մը Խորայէլ Օրիներուն, Աշտարակեցիներուն, Վարժապետեաններուն եւ Խրիմեաններուն, եւ իբր եւրոպական լեզուով մը արտայալառուող ու միջազգային գնահատման արժանացած առաջին հայ արժէքաւոր հեղինակը: Մասնաւոր հաճոյքով մըն է որ կը հրատարակեմ այս բանախօսութիւնը – եւ ընական է որ անհրաժեշտ պիտի նկատէի զայն պատկերազարդել վերարտադրութիւններովն այն զմայելի մանրանկարներուն զոր ԺԴ. եւ ԺԵ. դարերու ֆրանսացի մեծատաղանդ արուեստագէտներ յօրինած են այն երկու թանկագին ձեռագիրներուն համար որ կը գտնուին Փարիզի Ազգային Մատենադարանին մէջ եւ անոր գեղարուեստական ամենէն նուրբ գանձերէն են: Պ. Ֆէյտի՝ ներկայ հրատարակութեան համար՝ իր բանախօսութեան վրայ աւելցուց այդ մանրանկարներուն մասին բացատրութիւններ:

Պ. Ֆէյտի մտադիր է ամբողջութեամբ աշխարհաբար հայերէնի թարգմանել Հեթումի գիրքը՝ իր լիակատար բնագրէն, եւ այդ թարգմանութիւնը Անահիտի յառաջիկայ տարուան թիւերուն մէջ լոյս պիտի տեսնէ:

Իր ծրագիրներէն մէկն ալ է Փրանսերէն բնագրին քննական հրատարակութիւն մը կատարել օր մը:

Փարիզ, Օգոստ. 1938  
Ա. ԶՈՊԱՆԵԱՆ

**«ԾԱՂԻԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ» ԳՐՔԻՆ  
ՀԵՂԻՆԱԿԸ**

Ֆրանսերէն լեզուով գործեր արտադրող հայ գրագէտները բաւական բազմաթիւ եղան պատմութեան ընթացքին եւ այս հայ-ֆրանսական մշակութային աշխատակցութիւնը կը շարունակուի մինչեւ ցարդ: Աւելորդ է անշուշտ յիշեցնել իրեւ օրինակ՝ մեզի ժամանակակից ամենէն նշանաւոր հայ գրագէտը որ երկու լեզուներուն ալ այնչափ վարպետութեամբ եւ արուեստով կը տիրէ որ իր տաղանդին եւ գործունէութեան յիշնամեայ յորելեանը տօնելու համար մեծ հանդէս մը տեղի պիտի ունենայ Սորպոնի մէջ: Այսօր կը շատանանք ուսումնասիրելով առաջին ֆրանսերէն գիրքը որ Հայու մը մտքին արդինքն է եղած:

*«La Fleur des Histoires de la Terre d'Orient» composée par le Frère Hayton, de l'ordre de Prémontré:*

Այն ատեն, ԺԳ. դարուն վերջերը եւ ԺԴ.ին սկիզբները՝ Հետաքրքութիւն կը շարմէին Արեւելքի մասին գրուած գիրքերը: Ի մէջ այլոց կը յիշուի G. da Pian del Capoieի Historia Mongalorumը, զոր լատիներէն գրեց Թաթարներուն երկիրն ըրած ճամբորդութենէն ետքը (1245էն 1247): Կրնայ նաեւ յիշուիլ Rubruquaiishi «Նամակ»ը առ Լուղովիկոս Թ. Ֆրանսայի թագաւորը, Թաթարաց մօտ կատարած իր զես-պանութեանը մասին: Բայց անոնցմէ շատ աւելի համբաւ վայելած է Վենետիկցի Մարքոյ Փոլոյին գործը որուն վերնագիրը, «Le Million», տարօրինակ և առեղծուածական կրնայ թուիլ մեզի, թէեւ այն ժամանակը գրքերէն շատերը «Trésor» (գանձ) կը կոչուին: Թուքանայի մէջ, Տանթէ իտալերէն ամենաընտիր գաւառաբարբառը կը յդկէր եւ գրական լեզու կը դարձնէր «volgare illustre» անունով, մինչդեռ Մարքոյ Փոլոյ ֆրանսերէն լեզուով կը թելազրէր իր գործը, որովհետեւ ֆրանսերէնն արդէն հասուն լեզու մըն էր ամէն տեսակ գիտական գործի յարմար եւ ամբողջ ուսումնական աշխարհի համար հասկանալի: Ֆրանսա տիեզերքի մտաւորական մայ բաքաղաքն էր եւ քրիստոնէական վերջին գրաւուելիք կեղրոնական հաստատութիւնը իրեն քաշելու վրայ էր, Պապութիւնը, որ Ավինեոն քաղաքը մէկ դար պիտի կենար՝ Կղեմէս Ե. Պապէն սկսեալ:

Արդ՝ Մարքոյ Փոլոյի գրքէն հինգ տարի ետք՝ Արեւելքի մասին կ'երեւայ նոր գիրք մը թէ՝ աշխարհագրական եւ թէ՝ աւելի՝ պատմական

եւ դիւանագիտական. եւ այս գրքին հեղինակը ո՞վ է... Արեւելքի մէջ միայն քանի մը տարի կեցած ճամբո՞րդ մը. ո՞չ, բո՞ւն Արեւելքի մը, Հայ մը, որ թէ՛ իր արեւելեան ծագումով եւ թէ՛ իր դիւանագիտական ասպարէզով երաշխիք կուտար իր մասնագիտութեան: Այս հեղինակը որ կրօնաւոր դարձած էր, Կիլիկիոյ թագաւորներուն ազգական էր եւ կը ներկայացուէր իբրև թագաւորին հետ միասին ամէն տեղ պտը-տած: Արդէն Հայերը մեծ համակրանք գրաւած էին Ֆրանսայի մէջ:

Le Frère Hayton, այսինքն Հեթում պատմիչ, Օշին իշխանին որդին էր, որ միշտ կոչում զգացած էր կրօնաւոր ըլլալու, բայց – ինչպէս շատ անգամ կը պատահի խղճմիտ մարդոց, – կը վարանէր երկու պարտականութիւններու միջեւ, – Աստուծո՞յ ծառայութեան իր անձը պիտի նուիրէր թէ իր հայրենիքին հանդէպ ունեցած պարտականութիւնը պի-տի կատարէր, – որովհետեւ ան Կոռիկոսի իշխան էր եւ այն ժամանակը Կիլիկիա՝ Ծնամիներէն շրջապատուած եւ անդադար յարձակումներու ենթարկուած, իր բոլոր որդիներուն ուժին պէտք ունէր: Ինքը կը գրէ թէ. «Վասն զժուարին անցից թագաւորութեանն Հայոց՝ անմարթ եղեւ ինձ թողով զթագաւորութիւն»: Բայց Հազիւ Հայաստան սկսաւ խաղաղութիւն վայելել, ինքը կրօնաւոր ձեռնադրուեցաւ Կիպրոս, Պրէմոնտրացւոց միաբանութեան մէջ (ordre de Prémontré):

Հեթում դէպի Արեւելմուտք ճամբորդելով Կղեմէս քահանայապետին յարգանք մատուցանելու գնաց եւ Պապը իրեն պատուիրեց որ արեւել-լեան երկիրներու եւ իշխանութիւններու պատմութիւն մը գրէ: Ֆրան-սայի Փուաթիէ քաղաքին վանքը հաստատուելով, – կ'ըսուի նոյն իսկ որ վանքին արբահայր եղած է, – Հեթում իր պատմութիւնը ֆրանսերէն բերանացի կը պատմէ Nicolas Falconը անունով վանականի մը որ Հեթումի բերնէն լսելուն պէս հետզհետէ զրի կ'առնէ լատիներէն թարգմաներու նպատակով, որպէս զի քահանայապետին ներկայացնէ (1307 թուականին):

Հետեւեալ ձեւով է որ Nicolas Falconը իր յառաջաբանին մէջ մեզի կ'աւանդէ գրքին յօրինումը.

«Հոս կը սկսի Արեւելքի Պատմութեանց Ծաղիկ զիրքը զոր յօրինեց Հայթօն եղայրը, Կոռիկոսի իշխան, Հայաստանի թագաւորին ազգա-կան, առաքեալ Կղեմէս Ե. սրբազն քահանայապետին հրամանով, մեր Տիրոջ թուականի 1307 տարուան Օգոստոս ամսուն, Ֆրանսայի թագաւորութեան Փուաթիէ քաղաքին մէջ:

«Այս զիրքը՝ ես Nicolas Falcon, նախ ֆրանսերէն օրինակեցի ինչ-պէս Հեթում եղայրը բերնուց կ'ըսէր առանց նօթերու կամ օրինակի եւ ֆրանսերէնէ լատիներէնի թարգմանեցի: Եւ այս զիրքը իր ձեռքը ունե-

ցաւ Նորին Սրբութիւն քահանայապետը մեր Տիրոջ 1307 թուականի Օգոստոս ամսուն, փառք Աստուծոյ, Ամէն»:


\* \* \*

Այս գրքէն քանի մը օրինակ մեզի հասեր են, ամենքն ալ սակայն նոյնը չեն, ինչպէս որ ետքը պիտի տեսնենք: Nicolas Falcon կրօնաւորը՝ ըստ իր աւանդածին՝ անմիջապէս օրինակած է Փրանսերէն, քանի որ Հեթում Պատմիչին գործածած լեզուն այդ էր, և յետոյ լատիներէնի թարգմանած է: Սակայն կը տեսնուի թէ Փրանսերէն բնագիրը լատիներէն թարգմանութեան չափ և միենոյն ատեն տարածուեցաւ նոյնքան հոչակ վայելելով: Մէկ ու կէս կամ երկու դար ետքը՝ Սէն-թ-Օմէր քաղաքին Սէն Պէրթէն վանքը քաշուած վանական մը՝ Jehan le Long անունով, անտեղեակ անշուշտ Փրանսերէն բնագրին, նորէն լատիներէնէն Փրանսերէնի կը թարգմանէ Հեթումի գործը եւ կը սկսի տարածել, ներփակելով զայն շարքի մը մէջ Արեւելքի վերաբերեալ գրութիւններու, որ են – Պատմութիւն Հայր Ricuit ի ուխտագնացութեան զոր կատարեց 1351ին, Ուխտագնացութիւն Odoric Foro Julii ի (Կատարուած 1330 թուականին), Ուսումնասիրութիւն Ս. Երկրին եւ Եգիպտոսի զոր գրած է Mgr. Guillaume de Bouledeselle, Cathay ի՝ այսինքն Չինաստանի՝ աւագ Խանին գրած նամակները առ Բենեղիկոս ժք. Ս. քահանայապետն եւ այս վերջինին պատասխանները, Kathay ի աւագ Խանին իշխանութիւնը, եւ, Հարկաւ, Մարքոյ Փոլոյի գիրքը:

Այսպէս՝ նոր Համբաւ կը վայելէ Trésor des Histoires de la Terre d'Orient գիրքը, որ կը պտուի զանազան վերնագիրներով ինչպէս զոր օրինակ Հետեւեալը, L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie ուսումնական կամ լուսական կամ անգիրներէն, մինչեւ որ վերջապէս գտնուեցաւ Վենետիկի Միսիթարեան հմուտ վարդապետ մը, Զ. Մկրտիչ Աւգերեան, որ 1842 թուականին զայն գրաբար Հայերէնի վերածելով իր արժանաւոր տեղը դրաւ Հայ մատենագրութեան մէջ:

Փարիզի Ազգային Մատենադարանը եօթը Փրանսերէն ձեռագիր ունի եւ երկու հատ լատիներէն:

Փրանսերէն ձեռագիրներէն մէկ քանին շատ գեղեցիկ են: Մէկը – թիւ 1255 – կաշիէ կազմով եւ ճարմանդներով գոցուած – ժե. դարուն առաջին կէսին օրինակուած է: Որոշ տարին կարելի չէ ըսել, որովհետեւ Փրանսացի օրինակողները սովորութիւն չունէին՝ ինչպէս Հայերն ու Յոյները՝ յիշատակարան գրելու: Ոճէն եւ գիրէն միայն կրնայ գուշա –



**N**u comenc le lune & la flem de lystones  
de la terre Sorieut le quel s'ire l'yon seigneur  
du Corc l'ouys regnum du bor Le armene vire  
pila par le commandement du pape Elmet le quisje  
lan de mes. CCC. sept en lacite de potiers.

**E**lme est d'usse en quatre parties  
la premere partie parle de la terre  
Sante qui est la tierce partie du  
monde et de usse grans bonunes  
la entelle partie et comenc sur bonune mar  
chit a laune et quele gent y habite.

**A** la seconde partie parle des empereurs et  
des roys qui ont este en la terre d'usse

**Պատկեր թիւ 1.**  
**Հեթում իր գործը կը ներկայացնէ Կղեմէս Ե. Պապին:**  
**(Զեռագիր թիւ 1255)**

**կուիլ թուականը:** Այս ձեռագիրը կը բովանդակէ նախ Հեթումի Պատմութիւնը որ մօտաւորապէս 150 էջ կը բռնէ. անոր կը հետեւին «Աշխարհի երկիրներուն Գիրքը» և Նիկողոս Ե. Պապէն շրջաբերական մը թուրքերուն դէմ ուղղուած:

**Այս վերջին գործը Ժէ. դարուն աւելցւած է:**

**Շատ թանկագին ձեռագիր մըն է ասիկա, խնամքով զրուած եւ մեծ արուեստով զարդարուած:** Գործին չորս մասերէն իւրաքանչիւրին սկիզբը կը գտնուի մանրանկար մը որ այդ մասին նիւթը կը յայտնէ:

**Այս մանրանկարները – փոքրիկ կապոյտ եւ ոսկիէ քառակուսիներէ բաղկացած յատակով – շատ նուրը եւ փափուկ գոյներով եւ գծագրութեամբ՝ յաջող արուեստի մը վկայ են:**

**Առաջինը կը ներկայացնէ Հեթումը, Պրեմոնստրացի կրօնաւորի զգեստ հագած, որ՝ Կղեմէս Ե. Պապին առջեւ ծնրադրած՝ Նորին Սրութեան կը նուիրէ իր գործը (Պատկեր թիւ 1):**

**Երկրորդը կը պատկերացնէ Պարսից թագաւոր Խոսրովին խնջոյքը. երկու թագաւոր կերակուր կը բերեն կայսրին որ կայսրուհոյն եւ թագաժառանգին մէջտեղ՝ սեղանի առջեւ նստած՝ երկու երաժիշտներու նուազը մտիկ կ'ընէ (Պատկեր թիւ 2):**


**Երրորդը բարդ է. կը բովանդակէ Ճինկիղ Խանի տեսիլքը<sup>1</sup>, անոր պակումը եւ թաթար հովուական կեանքէն տեսարան մը (Պտկ. թիւ 3):**

**Զորբորդ մանրանկարը կորսուած է:**

**Իբրև նմուշ զարդագիր էջի մը՝ կը հրատարակենք թիւ 4 պատկերը, որ թէեւ ուրիշ գործի մը կը վերաբերի՝ սակայն նոյն ձեռագրէն հանուած է:**

**Թիւ 12201 ձեռագիրը – որ երեք գործ կը բովանդակէ, Հեթումի Պատմութիւնը, «Աշխարհի բոլոր երկիրներուն Գիրքը» (լատիներէն), «Էէնկ Թիմուրի պատմութիւնը», – 130 էջ կը նուիրէ Հեթումի Պատմութեան; Ձեռագիրը վերոյիշեալին հետ նոյն տիպարն ունի, բայց**

<sup>1</sup> Մինչդեռ Թաթարաց եօթն ազգերը տակաւին ցրուած էին և օտարներուն լուծին տակ, ծերունի մը, Ճինկիղ անունով, երազի մէջ տեսաւ ճերմակ ձիաւոր մը, սպիտակ ժիու վրայ հեծած, որ իրեն ըստ Ժէ. «Ճինկիղ», Ասուուծոյ կամքն է որ վերակացու ըլլաս Մոնղոլներու (Մօնկօլներու) բոլոր ազգերուն և ազատես զանոնք գերութենէ։ Եօթն ազգերուն պետերը որոնց Ճինկիղ այս տեսիլքը պատմեց, գինքը լիմար կարծեցին. բայց հետեւեալ գիշերը եօթն այ միասին երազի մէջ տեսան նոյն ճերմակ ձիաւորը որ իրենց պատուիրեց Ճինկիղ Խանի հազարնդիլ և գինքը իրերս իրենց Խան ճանչնալու; (Արեւելեան հին պատմութեան անթիւ աստուածառաք երաններէն մին է ասիկա. բայց այս ուսումնասիրութեան նիւթէն չեմ ուղեր հեռանայ):



De Cesar auguste et Cesarovich. ¶  
 pereire d'as la munt. le premier chapit-  
 elon de que sit fait le este pte  
 lue en leuuanie de l'empereur de  
 Rome. Cesar Augustus tenoit  
 toute la seignourie du monde  
 au temps de la nature n'estant  
 Apres aduint que d'as le pere qui ot nom  
 Cesarovich se reuela contre l'empereur de Rome  
 et le fist appelle empereur d'as. Cesar prist la  
 seignourie de perse et le grec. Le Armenia  
 et le calde. Et tout ceut son pouoir quil  
 chaca la gent de l'empereur de Rome et toutes

Պատկեր թիւ. 2.

Պարսից թագաւոր Խոսրովի խնջոյքը:  
 (Ձեռագիր թիւ 1255)



**Պատկեր թիւ. 3.**  
**Ճինկիղ Խանի երազը. (Զեռագիր թիւ 1255)**

աւելի եւս թանկագին է: Ասիկա ժԴ. դարուն վերջին քառորդին ատեն-ները ընդօրինակուած է: Գիտենք թէ 1401ին, Philippe le Hardi զայն զնած է Յակոբ Ragondelն: Այս ձեռագիրը գեղարուեստի ամենաբարձր աստիճանին կը հասնի. գիրը միւսէն ալ աւելի որոշ եւ մաքուր է. մանրանկարները շատ նուրբ են եւ յատակը, որ ոսկի եւ կապոյտ քառակուսիներէ բաղկացած է, պատկերին ամէն մէկ մանրամասնութիւնն ի վեր կը հանէ եւ գոյներուն փափկութիւնն ու ներդաշնակութիւնը կը շեշտէ:

Ինչպէս թիւ 1255 ձեռագրին մէջ – որ ասկէ ներչնչուած է – մանրանկարները ամէն մէկ գլուխին սկիզբը դրուած են:

Առաջինը կը ներկայացնէ Հեթում, որ կը նուիրէ իր գիրքը Ս. Քահանայապետին (Պատկեր թիւ 5): Երկրորդը կը պատկերացնէ Խոսրովի խնջոյքը. Հոռ երաժիշտները չորս հոգի են եւ զգեստները շատ տարրեր են (Պատկեր թիւ 6):

Երրորդը՝ Ճինկիդ Խանի տեսիլքն է (Պատկեր թիւ 7):

Չորրորդ մանրանկարը, որ վերոյիշեալ ձեռագրին մէջ կը պակսի, մեզի կը ցուցընէ Հեթումը որ Սրբազն Քահանայապետին աղաչանք կը մատուցանէ որպէս զի նոր խաչակրութիւն մը կազմակերպէ (Պատկեր թիւ 8):

Որպէս զի կարենաք երկու ձեռագիրները կատարելապէս բաղդատել, կը հրատարակենք (Պատկեր 9) զարդարուած էջ մը որ կը համապատասխանէ թիւ 4 պատկերին:

Նոյն ձեռագրէն հանեցինք նաև պարզ հետաքրքրութեան համար այն մանրանկարը, որով կը սկսի Լէնկ Թիմուրի պատմութիւնը եւ որ կը ցուցնէ թէ ինչպէս զարդանկարիչը կը պատկերացնէր քաղաքի մը պաշարումը (Պատկեր թիւ 10):

Այսիշատակ չեմ կրնար ձգել ուրիշ ձեռագիր մը, թիւ 2810, որ մանրանկարներով լի է: Այս մանրանկարները, որ գեղարուեստական նոյն կատարելութեան չեն հասնիր, շատ տարրեր «դպրոց»ի մը կը պատկանին:

Այս գիրքը, որ ինը տարրեր գործեր կը բովանդակէ (ի մէջ այլոց Մարքոյ Փոլոյինը), քիչ տեղ նուիրած է Հեթումի Պատմութեան, որ լիակատար չէ: Օրինակուած է մասնաւորապէս 1400ին ատենները Jean sans Peur Պուրկոնեի դուքսին համար: Որովհետեւ նկարներէն մէկը կը ներկայացնէ կրօնաւոր մը որ գիրքը կը նուիրէ դուքսին, կարծողներ եղած են թէ Հեթումն է այդ կրօնաւորը. ատիկա անկարելի է, վասնզի այս դուքսը ծնած է Հեթումին վախճանելէն շատ տարիներ ետքը:

**P**aramenue le laine de toutes les provinces  
de l'ummerel monde et de toutes les parties  
qui y sont et de noms et noms d'actes  
et fites et quantes il sera en chascune pro-  
vince solo le suor et pector de lais et ministrer

**P**La premiere partie de ce laine se  
comte et fait mention quantes  
eglises il a en la cite de Rome tant  
tant le patriarches come dantz  
Et coment les cardinaulz sont  
intitulz sur celles eglises.

**L**a seconde partie de ce laine deuse et fait  
mention quans pape il a au monde  
et les nomz par nom et lesqualez sont con-  
vommez ommez et sacrez et lesqualez non. Et  
lesquelles regnes des aristens sont tenues  
a parer le tenu a la court de Rome. Et lesquels  
pape font feste de la dictte eglise de Rome.

**L**a tierce partie fait mention come les  
princes du monde sont couronnes et es-  
teus festassauoir le empereur de Rome et le  
de constantinoble. Et plementement de ces de  
Rome coment il est estenu et par queulz pre-  
ses prindps au bagon silencie et les  
nomz et deusez vons. Et coment le dit empe-  
reure est couronne de trois couronnes et com-  
ment mes sunt pere le pape le couronne de la

Պատկեր թիւ 4.

Թիւ 1255 ձեռագրի մէկ ուրիշ մասին զարդարուած մէկ էջը:



Պատկեր թիւ 5.

Հեթում իր գործը կը ներկայացնէ Կղեմես Ե. Պապին:  
 (Զեռագիր թիւ 12201);



Elone et que dit saint luc en leuangelie  
 l'empereur de romme cesar augustus se  
 voulz toute la seignourie du monde au temps  
 de la nature nostre seigneur. Apres avoit  
 que un ior de pese qui ont nom cossevus  
 fait le reuelacion contre l'empereur de romme, et le fist appeler  
 empereur d'auce. Ce estoit prist la seignourie  
 de pese et de mede et de trameine et de calde, et tant aust  
 son pouoir que ilz chalza la gent de l'empereur de rom  
 me de toutes celles terres. Et d'auant la seignourie  
 de toutes les peuples en aise, nous eus aus, et apres  
 les saurans leur collurut la seignourie si commençer  
 d'auce en apres.

Des huseurs de maladie

### Պատկեր թիւ 6.

Խոսրովի խնջոյքը. (Զեռագիր 12201)

Թիւ 886 ձեռագիր մըն ալ կայ որուն ամէն մէկ էջը մանրանկար ունի, բայց այս պատկերները գեղարուեստական արժէքէ զուրկ են բոլորովին: Միւս ձեռագիրները պարզ են եւ աւելորդ է որ մէկիկ մէկիկ զանոնք նկարագրեմ\*):

\* \* \*

Այս գիրքը չորս մասի կը բաժնուի: Առաջին մասը մեզի կը ներկայացնէ Արեւելքի տասնեւչորս իշխանութիւններն ու ժողովուրդները:

Երկրորդ մասին մէջ կը խօսուի այն կայսրերուն եւ թագաւորներուն վրայ որոնք երեւցած են Ասիոյ երկրին մէջ՝ Յիսուս Քրիստոսի ծնունդէն ի վեր, եւ իրենց գործերուն վրայ՝ զանազան ազգերու պատմութեանց համեմատ:

Երրորդ մասը Թաթարաց Պատմութիւնն է եւ կը ցուցընէ թէ անոնք ինչպէս սկսած եւ ինչպէս իշխանութեան տիրացած են եւ թէ քանի պետութիւններէ բաղկացած է իրենց իշխանութիւնը:

Իսկ չորրորդ մասը նախագիծ մըն է դէպի Ս. Երկիրը կատարուելիք նոր Խաչակրութեան մը եւ կը սահմանէ թէ ինչպէս պէտք է գործեն եւ վարուին Խաչակրիները՝ սկիզբէն մինչեւ վերջը՝ ըստ Հեղինակին կարգադրութեան:

Առաջին մասին մէջ, բուն Հայաստանին նուիրուած կտորը շատ կարճ է եւ կրնանք զարմանալ նկատելով թէ Հեթում Պատմիչ, որ Հայ է, աւելի երկար չի խօսիր Հայաստանի մասին քան թէ զոր օրինակ Վրաստանի: Ասոր պատճառն այն է որ Հեթում իր գործին այս մասին մէջ կը ներկայացնէ Ասիոյ տասնեւչորս պետութիւնները եւ՝ գրական ոճին խիստ օրէնքին հետեւելով՝ ամենուն ալ կը նուիրէ նոյն ընդարձակութեամբ հատուած մը:

Ահաւասիկ Հայաստանի վերաբերեալ հատուածը, որուն հին Փրանսերէնով բնագիրը մէջ պիտի բերեմ (Հայերէն թարգմանութեան հետ) անոր ոճին մէջ նմուշը տալու համար. իսկ բոլոր միւս կտորներուն համար Հայերէն թարգմանութիւնս միայն պիտի գործածեմ:


«Au Royaume de Arménie sont quatre royaumes; un seul seigneur en tient la seigneur. Le long de la Terre d'Arménie commence du règne

\* Խորին չնորհակալութիւնս կը յայտնեմ բանաստեղծ Արշակ Զօպանեանին որ այնչափ բարեացակամ ընդունելութիւն չնորհած է զասախօսութեանս և անոր արժէքը շատ բարձրացուցած է մանրանկարներուն վերաբտաղրութեամբ:

de Perse et s'étend par Occident jusques au Royaume de Turquie. Le large d'Arménie devers Occident commence de la cité merveilleuse qui est appelée Porte de Fer, laquelle fist fermer le Roi Alexandre pour les diverses nations de gens qui habitent en Asie la Profonde lesquels il ne voulait que passassent en Asie la Mineure sans commandement et cette cité est fermée en un détroit de mer Caspiez (sic) et touche la grande montagne de Cucas (ou Coquas = Caucase). Le large du Royaume d'Arménie de la dite cité s'étend jusques au règne Médie. Au royaume d'Arménie sont plusieurs grandes cités riches et entre toutes Tauris est la plus renommée. En la terre d'Arménie sont grandes montagnes, larges planures et fleuves grands et lacs d'eaux douces et salées où il y a grande abondance de bons poissons. Les gens qui habitent la terre d'Arménie sont nommés à divers noms selon les contrées qu'ils habitent et sont à pied et à cheval bonnes d'armes. De cheval et de vesture suivent la manière des Tartares, car ils ont été longtemps sous leur sujetion (domination). Ils ont diverses lettres et les unes sont dites armenoises, les autres arien (aloen).

En Arménie est le plus haut mont qui soit au monde qui est nommé Ararat (Harath). Et en la summité de celui mont arriva l'arche de Noë après le déluge. Nul homme ne peut monter en celle montagne par la grande abondance de la noif (neige) qui est d'hiver et d'été, mais tout à-dis en la summité appert une grande chose noire que l'on dit être l'arche de Noë, et en ce croient tous.»

«Հայաստանի թագաւորութեան մէջ չորս թագաւորութիւն կայ, բայց միակ իշխան մը իշխանութիւն ունի: Հայաստան աշխարհին եր - կայնութիւնը կը սկսի Պարսկաստանի թագաւորութենէն եւ կը տարածուի դէպի Արեւմուտք մինչեւ Թուրքիոյ թագաւորութիւնը: Հայաստանի լայնութիւնը դէպի Արեւմուտք կը սկսի այն շրեղ քաղաքէն որ կ'անուանուի Երկաթէ Դրունք, զոր գոցել տուաւ Աղեքսանդր թագաւոր՝ Խորունկ Ասիա բնակող զանազան ազգերուն համար, որ չէր ուզեր Փոքր Ասիա մտնեն առանց իր հրամանին, եւ այս քաղաքը Կասպից Ծովուն մէկ նեղուցին մէջ զոցուած է եւ կից է Կով - կաս մեծ լեռնին: Հայաստանի թագաւորութեան լայնութիւնը վերոյիշեալ քաղաքէն կ'երկարի մինչեւ Մարաց թագաւորութիւնը: Հայաստանի թագաւորութեան մէջ կան բազմաթիւ մեծ եւ հարուստ քաղաքներ, ասոնցմէ ամենէն համբաւաւորը Դաւրէժն է: Հայաստանի թագաւորութեանը մէջ կան բարձր լեռներ, լայն հովիտներ եւ մեծ գետեր եւ անուշ կամ աղի ջուրով լիճներ, համով ձկներու մեծ առասու - թեամբ: Հայաստան աշխարհին մէջ բնակող մարդիկը զանազան



**Պատկեր թիւ 7.**  
**Ճինկիլ Խանի երազը. (Զեռագիր 12201):**



Պատկեր թիւ 8.

Հեթում նոր Խաչակրութեան մը աղերսանքը  
կը ներկայացնէ Պապին. (Զեռագիր թիւ 12201)

անուններ կը կրեն՝ իրենց բնակած գաւառներուն համեմատ, եւ՝ Հետիոտն կամ Հեծեալ՝ քաջ զինուոր են: Ձիու եւ Հազուստի Նկատմամբ, Թաթարներուն սովորութեան կը Հետեւին, որովհետեւ երկայն ժամանակ անոնց իշխանութեան տակ մնացած են: Զանազան տեսակ զիր ունին, մէկ քանիսն արամեան կ'ըսին, միւսները, արիական (կամ ալոյէն): Հայաստանի մէջ կը գտնուի աշխարհի ամենաբարձր լեռը որ կը կոչուի Այրարատ. եւ այս լերան գագաթին վրայ իջաւ Նոյի տապանը ջրհեղեղէն ետքը: Ոչ որ կրնայ այս լեռն ի վեր ելլեւ՝ ձինին պատճառով որ ամառ ձմեռ կը մնայ Հոն, բայց մինչեւ այսօր գագաթին վրայ կ'երեւայ մեծ եւ սեւ բան մը որ կ'ըսուի թէ Նոյի տապանն է, եւ ամենքն ալ ատոր կը Հաւատան»:

Տեսնենք Հիմայ ինչպէս Զինաստանը կը նկարագրէ: Հատուածը միշտ կարծ է, բայց քանի մը տողով միայն ո՞րչափ տեղեկութիւն կուտայ. եւ եթէ մեծ զիծերով կը գոհանայ, Հեղինակը պատկերին վրայ վարպետօրէն տեղական գոյն կը դնէ: Կարդալէ ետքը գիտենք թէ ի՞նչպէս է Զինաստան, ինչ է Զինացի մը, ո՞րչափ տարրեր է մնագմէ այս ազգը եւ ո՞րչափ յառաջացած է իր մշակոյթը որմէ կարեւոր գիտեր պիտի փոխ առնենք:

«Զինաստան երկիրը կը համարուի աշխարհիս ամենէն ազնիւ եւ Հարուստ թագաւորութիւնը: Այնքան կղզիներ կան ծովուն երեսը որ թիւը չենք կրնար ստուգիւ գիտնալ: Այդ երկրին մէջ բնակող մարդիկը Զինացի կը կոչուին եւ մէջերնին կը գտնուին բազմաթիւ էրիկ մարդիկը եւ կնիկ մարդիկի՝ շատ գեղեցիկ, բայց ամենքն ալ շատ փոքրիկ աչք ունին եւ քիչ մօրուք: Այս մարդիկը գիր ունին շատ գեղեցիկ ինչպէս լատինականը եւ լեզու մը կը խօսին որ շատ տարրեր է աշխարհիս բոլոր միւս լեզուներէն: Այս մարդոց Հաւատքը շատ բազմակերպ է, ոմանք արեւուն կը Հաւատան, ոմանք լուսնին, ոմանք աստղերուն, ոմանք բնութեանց, ոմանք կրակին, ոմանք ջուրին, ոմանք ծառերուն, ոմանք եղներուն՝ որովհետեւ ասոնք կը Հերկեն այն Հողը որով իրենք կ'ապրին, եւ ոմանք բնաւ օրէնք կամ Հաւատք չունին, այլ կենդանիներու պէս կ'ապրին:

«Այս մարդիկը, որ այնչափ պարզ են Հաւատքի եւ Հոգեւոր բաներուն նկատմամբ, բոլոր միւս ազգերէն աւելի ճարտար են նիւթական գործերու մէջ. Զինացիները կ'ըսեն թէ իրենք երկո՛ւ աչքով կը տեսնեն, իսկ լատինները մէ՛կ աչքով, մինչդեռ միւս ազգերը կոյր են. ինչ որ կը նշանակէ թէ միւս ազգերը իրենց կ'երեւան կոչտ Հասկացողութեամբ: Եւ իրաւ՝ այդ տեղէն ելլող շատ տարօրինակ եւ զարմանալի բաներ կը

տեսնենք, արդիւնք աշխատանքի մը որ աշխարհիս ամենէն վարպետ աշխատանքը կը թուի:

«Այս երկրին մարդիկը շատ կորովի գինուոր չեն, բայց շատ ճարտար եւ հարազէտ, ուստի շատ անգամ թշնամիներնին ջարդած են իրենց մեքենաներուն չնորհիւ: Տեսակ տեսակ զէնք եւ մեքենայ ունին զոր միւս ազգերը չունին<sup>1</sup>:

«Այդ երկրին մէջ կը գործածեն դրամ մը՝ քառակուսի թուղթէ շինուած՝ որ իշխանին կնիքով դրոշմուած է եւ որ կրած նշանին համեմատ աւելի կամ պակաս արժէք ունի: Այս դրամով կը ծախսեն եւ կը գնեն ամէն տեսակ բաներ, և երբ հնութենէ կամ ուրիշ դէպքէ մը աւրուի՝ զայն իր ձեռքը ունեցողը իշխանին արքունիքը կը տանի եւ նոր դրամ կը ստանայ<sup>2</sup>:

«Այդ երկրին մէջ ձէթը շատ թանկագին կը համարուի եւ երբ թագաւորները զայն կարող ըլլան սուղ գնով գտնել, իրենց համար պահել կուտան: Այդ երկրին ոչ մէկ իշխանութիւն չկայ դրացի, բաց ի Թարսիս թագաւորութենէն որ անոր մօտիկ է, որովհետեւ Զինաստանի բոլոր միւս գաւառները կամ անապատներով եւ կամ ծովով շրջապատուած են»:

\* \* \*


Հեթում իր գրքի առաջին մասով մեղի ներկայացուցած է – հիանալի վարպետութեամբ – Արեւելքի տասնեւչորս իշխանութիւնները թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ ազգարանական մշակութային տեսակետէն: Երկրորդ մասը Արեւելքի պատմութիւնն է, միշտ մեծ գծերով, բայց պատմական ոճով: Ահաւասիկ սկիզբը.

«Ս. Ղուկասու աւետարանին մէջ ըստածին համեմատ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան ժամանակը՝ Օգոստոս կայսրը ամբողջ աշխարհիս իշխանութիւնն ունէր: Յետոյ պատահեցաւ որ պարսիկ թագաւոր մը՝ Խոսրով անունով՝ ապստամբեցաւ Հոռմի կայսրին դէմ եւ ինքինքը անուանել տուաւ Ասիոյ կայսր:

«Ասիկա Պարսից, Մարաց, Հայոց եւ Քաղղէացւոց իշխանութիւնը գրաւեց եւ այնչափ զօրացուց իր իշխանութիւնը որ Հոռմի կայսեր մարդիկը վոնտեց այս բոլոր երկիրներէն: Պարսից իշխանութիւնը Ասիոյ մէջ երեք դար տեսեց, մինչեւ որ մահմետականները անոնց ձեռքէն խլեցին զայն:


<sup>1</sup> Վասովին եւ թնդանօթին կ'ակնարկէ յայտնապէս:

<sup>2</sup> Ահաւասիկ այն ժամանակին մեղի անծանօթ պետական թղթադրամը:



### Պատկեր թիւ 9.

Թիւ 12201 ձեռագրի պարունակած մէկ ուրիշ գրութեան  
 զարդարուած մէկ էջը



**Պատկեր թիւ 10.**  
**Քաղաքի մը պաշարումը (Պատմութիւն Լենկ թիմուրի)**

«Յ. Ք.ի 632 թուականին՝ Մահմէտի անիծեալ սերմը մտաւ Սուրբոյ թագաւորութեան մէջ, եւ նախ Յոյներուն ձեռքէն խեցին Դամասկոս շքեղ քաղաքը եւ ապա Սուրբոյ ամբողջ թագաւորութիւնը գրաւեցին: Ետքը եկան պաշարեցին Անտիոք քաղաքը...»

Ասանկ շարունակելով՝ մեղի կը պատմէ մահմետական պետութեանց անդադար կոփւներն ու յարձակումները քրիստոնեայ տէրութեանց դէմ, մասնաւորապէս Յոյներուն եւ Խաչակիրներուն դէմ:

Այս երկրորդ մասը՝ տարբեր տեսակէտով ուսումնասիրուած՝ մեր գիտութիւնը կ'ամբողջացնէ Արեւելքի մասին եւ ինչ որ առաջին մասին մէջ իրր ժամանակակից կացութիւն ցոյց կուտայ, երկրորդ մասին մէջ անցեալին պատմութեամբ կը լուսաբանէ: Հարկաւ ամբողջ Ասիոյ չի վերաբերիր այս մասը, այլ միայն հին ատենէ ի վեր զարգացում ունեցող աշխարհին:

Երկին մեծագոյն մասը – երրորդ մասը – թաթարաց պատմութիւնն է. եւ այս պատճառով է որ գործը շատ անգամ «Թաթարաց Պատմութիւն» կոչուած է: Հեթումին վերնագիրը, «Ծաղիկ Արեւելեան երկիրներու Պատմութեանց», գործին ամենէն յարմարն է, բայց եւրոպացիները, որ քիչ թէ շատ տեղեակ էին Արեւելքի հին պետութեանց եւ երկիրներուն, շատ աւելի հետաքրքրութիւն կը զգային Խորունկ Ասիայէն ելած անծանօթ վայրենի Թաթարաց ժողովուրդին հանդէպ, եւ հաւանական է որ հետազայ օրինակողները ընթերցողներուն մեծ մասին հետաքրքրութեան յարմարցուցած են վերնագիրը, շատ անգամ ալ լքելով գրքին չորրորդ մասը – Խաչակրութեան քարոզը – որ մէկ դար ետքը անտարբեր կը ձգէր կարդացողը: Սակայն, ինչպէս որ գորուած է՝ գործը շատ մեծ տեղ կուտայ թաթարաց պատմութեան: Բայց ինչո՞ւ այնչափ մեծ տեղ կը գրաւէ թաթարաց խնդիրը: Կիլիկիոյ պատմութիւնը մեղի պատճառները կը բացատրէ:

Հեթում Ա. թագաւորը Քոնիայի Սուլթանին իշխանութեան տակն էր եւ բնաւ օգնութիւն չէր կրնար սպասել քրիստոնեայ տէրութիւններէն որ այն աստիճան տկարացած էին որ իրենք անգամ հարկատուդարձած էին մահմետական տէրութիւններուն:

Արդ՝ հեռաւոր Ասիայէն կ'ելլեն թաթարները որ ամբողջ Փոքր Ասիան սրով եւ հրով կ'աւերեն կը քանդեն եւ... Փոքր Ասիոյ մէջ գտնուող Քոնիայի թուրք տէրութիւնն ալ: Հեթումին թշնամիին թշնամի ըլլալով՝ Թաթարը գրեթէ դաշնակից կը սեպուի եւ Հեթում Ա. թագաւորը Թաթարին պաշտպանողական եւ յարձակողական դաշինք կ'առաջարկէ. Թաթարը կ'ընդունի եւ Հայոց թագաւորը Քոնիայի Սուլթանէն վրէժ կ'առնէ: Թաթարներուն դաշնակցութիւնը կ'օգտագործեն նաև Հեթու-

մի յաջորդները Եգիպտոսի մամլուքներուն դէմ պաշտպանեռուելու համար, թէեւ շատ անզամ պատահած է որ Թաթարները, կամ ներքին կամ ուրիշ արտաքին պատերազմով բռնուած, չեն կրցած օգնութեան գալ Հայոց թագաւորներուն: Հեթում Բ. թագաւորը՝ 1299ին գերի բռնած ըլլալով Դամասկոսի Սուլթանը՝ զայն կը դրկէ իրրեւ նուէր Ղաղան Խանին:

Երկրորդ պատճառը այն կ'ըլլայ որ Հեթում Պատմիչ՝ Թաթարաց պատմութիւնը շարագրելով՝ մեզի կը պատմէ նոյն ժամանակ Հայ-թաթար յարաբերութիւնները:

Բազմաթիւ գլուխներ նուիրուած են այս նիւթին: Նախ ահաւասիկ Հեթում Ա.ին դեսպանութիւնը Մանկու Խանի մօտ. «Մանկու Խան՝ Հայոց թագաւորին խնդրանքները լսածին պէս՝ արքունիքը հաւաքեց եւ Հայոց թագաւորը իր առջեւը կանչեց եւ ամենուն առջեւ ասանկ խօսեցաւ. «Քեզի, Հայոց թագաւոր՝, կը պատասխաննենք թէ բոլոր խնդրուածքդ բարով կատարել կուտանք: Եւ ես՝ նախ՝ որ Աստուծոյ շնորհիւ իշխան եմ՝ պիտի մկրտուիմ եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատքին պիտի հաւատամ. եւ արքունիքս ամբո՞ղջ մկրտել պիտի տամ եւ միւսներուն անվեղծութեամբ խորհուրդ պիտի տամ որ մկրտուին եւ քրիստոնէական հաւատքն ընդունին: Բայց բռնաբար պիտի չընեմ, որովհետեւ հաւատքը բռնութիւն չ'ուզեր: Երկրորդ խնդրանքին կը պատասխաննեմ որ յաւիտենական խաղաղութիւն եւ բարեկամութիւն կ'ուզենք քրիստոնեաներուն հետ: Քրիստոնեաներուն եկեղեցիներուն եւ քահանաներուն պիտի չհանդուրժենք որ վնաս մը ըլլայ... Իսկ Ս. Երկրին մասին՝ կ'ըսեմ թէ ամենայն սիրով Ս. Երկիրը ետ պիտի գրաւենք»:

Կը տեսնենք թէ Հայոց թագաւորը այն աստիճան յաջողած է իր իր դեսպան կատարած դերին մէջ որ նոյն իսկ Խանը քրիստոնեայ դարձուցած է եւ այս վերջինս այնպիսի եռանդով բորբոքած է որ ետքը Հայոց թագաւորին կը գրէ թէ Ս. Քահանայապետին հետ ան սերտ յարաբերութիւններ պէտք է հաստատէ:

Այս Հայ-թաթար բարեկամութիւնը կը շեշտուի նորէն հետեւեալ կտորին մէջ ուր կը տեսնուի նաեւ Հայոց թագաւորին խոհեմութիւնը:

«Երբ Ապաղա գրաւեց բոլոր այն երկիրները որոնք իրեն դէմ ապստամբած էին եւ Թուրքիա երկրին հրամայեց ամէն ինչ որ իրեն հաձելի կը թուէր, իր առջեւը կանչել տւաւ Հայոց թագաւորը եւ անոր առաջարկեց Թուրքիոյ թագաւորութիւնը իր հաճոքին համար ունենալ, որովհետեւ Հայոց թագաւորը եւ իր նախահայրերը միշտ հաւատարիմ մնացած էին Թաթարներուն:

«Իմաստուն եւ խոհական Հայոց թագաւորը խորապէս չնորհակալութիւն յայտնեց Ապաղային այնչափ մեծ պարզելի մը համար, (Հրաժարելով սակայն), որովհետեւ չեր կրնար բաւել երկու թագաւորութեանց տնտեսութեանը, մանաւանդ որ Եղիպտոսի սուլթանը մեծ ջանք կը թափէր Հայոց թագաւորութիւնը տապալելու եւ խորհուրդ տուաւ Ապաղա Խանին որ իշխանութիւնը սարակինոսի մը, այսինքն մահմետականի մը, չտայ: Խորհուրդը հաճոյ թուեցաւ Ապաղա Խանին որ բնաւ չուզեց որ սարակինոս մը իշխանութիւն ունենայ Թուրքիոյ վրայ»:

Երբեմն այս պատմագրական լուրջ ոճէն կը հեռանայ Հեթում եւ մանրադէպներ կը պատմէ, հեքեաթներ, որ կարդացողը քիչ մը կը հանգչեցնեն ծանր ընթերցումն, եւ քաղաքականութիւնը կը մոռցնեն, ինչպէս Ճինկիդ Խանի մասին գրուած հետեւեալ կտորը (թէեւ պատերազմը կը յիշեցնէ).

«Երբ որ Ճինկիդ Խան իր մարտիկները լաւ և իմաստութեամբ կաղմակերպեց, մտաւ երկիրը անոնց որ Թաթարներուն յաղթած էին, պատերազմեցաւ եւ ամենքն ալ նուածեց եւ անոնց երկիրը գրաւեց: Ապա կը գրաւէր ամէն երկիր եւ ամէն բանի մէջ կը յաջողէր: Օր մը պատեհեցաւ որ Ճինկիդ Խան քիչ դինուորներով կ'երթար եւ թշնամիներու մեծ բանակի մը հանդիպեցաւ. անոնք իր վրայ սաստիկ յարձակեցան: Ճինկիդ Խան կորովի կերպով պաշտպանեց ինքզինքը. վերջի վերջոյ իր ձին իր ներքեւը սատակեցաւ: Երբ որ Ճինկիդ Խանին մարդիկը տեսան թէ իրենց պետը բոնուելու վրայ էր, քաջութիւննին կորսնցուցին եւ սկսան փախչչի: Թշնամիները իրենց ետեւէն վաղեցին առանց նշմարելու Ճինկիդ Խան կայսրը որ հետիւտն էր: Երբ որ Ճինկիդ Խան անդրադարձաւ՝ մացառի մը մէջ մտաւ թշնամիներուն մօտ: Ասոնք յաղթանակէն ետք՝ սկսան փախստականները փնտոել. բայց երբ ուզեցին փնտոել այն մացառին մէջ ուր Ճինկիդ Խան պահութած էր՝ ահա թոչուն մը կը թառի մացառին վրայ: Մտածեցին որ հոն մարդ չկար եւ հեռացան, իրենցմէ ոմանք ըսելով թէ «Այս թոչունը այնտեղ պիտի չկենար եթէ մարդ ըլլար մացառին մէջ», ուստի մեկնեցան առանց այնտեղ նայելու»:

Ապա Հեթում կը բացատրէ թէ այն ժամանակէն ի վեր Թաթարները իրենց գլխուն վրայ՝ յիշատակի համար՝ այն թոչունին փետուրները կը դնեն:

Հեթում Պատմիչ, ըսի, Թաթարաց պատմութեան այնչափ կարեւորութիւն տուած է որովհետեւ նախ՝ Թաթարները դաշնակից էին Հայաստանին եւ երկրորդ՝ այդ պատմութեան մէջ հայ-թաթարական յարաբերութեանց պատմութիւնը կայ. բայց երրորդ պատճառ մըն ալ գոյություն ունի: Առաջին մասին մէջ – կը կրկնեմ – Հեթում Ասիոյ այն ատենուան կացութիւնը եւ մարդկային տարրերը կը ներկայացնէ, երկրորդ մասը պատմական Արեւելքին պատմական դէպքերը կը նկարագրէ – ասոնք լատինական աշխարհին հանրածանօթ գիտութիւնը կը կազմեն: Բայց Ս. Երկրին մօտեցաւ նոր տարր մը զոր Եւրոպա չի ճանչնար. այն տարրը թաթար ժողովուրդն է. եւ քանի որ բացարձակապէս անծանօթ է Եւրոպացիներուն, չափազանց չէ ամբողջ գիրք մը նուիրել այս ժողովուրդին պատմութեանը, որպէս զի գոնէ մտաւորական եւ իշխող դասակարգերը կատարեալ տեղեկութիւն ունենան Արեւելքի վրայ:

Հիմայ կրնայիք հարցնել թէ ինչո՞ւ այնչափ կարեւոր է որ Եւրոպացիները կատարեալ տեղեկութիւն ունենան այդ մասին, ես ալ, իմ կարգիս, կրնամ պատասխանել թէ պատմագիր մը միշտ կատարեալ տեղեկութիւն կ'ուզէ հայթայթել ընթերցողին: Բայց Հեթում՝ պատմիչ չէ միայն, հիանալի փաստաբան մըն է որ գիտէ կացութիւնը ներկա - յացնել, հաւատարիմ եւ անկեղծ կրօնաւոր մըն է՝ որ չի կրնար հան - դուրժել որ Ս. Երկիրը եւ Ս. Գերեզմանը այլակրօններուն ձեռքն ըլլան, համոզիչ քարոզիչ մըն է՝ որ Պապին անգամ կը համարձակի աղաչանք մատուցանել եւ քարոզել, թունդ հայրենասէր մըն է՝ որ բոլոր քրիստոնեայ տէրութեանց հետ միասին կ'ուզէ իր հայրենիքը ազատել, խոհեմ զօրավար մըն է՝ որ նոյն խնամքով կը պատրաստէ Խաչակիր - ներուն պատերազմական արշաւանքը ինչպէս պատրաստեր է համոզումը:

Հեթում, հիմայ որ երեք մասով հիմը դրած է, անոր վրայ գագաթը, գմբէթը պիտի հաստատէ, կանգնէ նոր Խաչակրութեան մը քարոզ եւ ծրագիր: Այս մասը ծրագիրով կը սկսի. այս ծրագիրը յստակ է եւ գործին ամբողջութիւնը կ'ամփոփէ: Հ. Մկրտիչ Աւգերեանի թարգմանութենէն կը քաղեմ այս կտորը, որպէս զի ասոր վրայ ալ գաղափար կարենաք կաղմել.

«Բանն պահանջէ, զի որ կամիցի սկսանել զպատերազմ, ունիցի զչորս պայմանս զայնոսիկ. նախ՝ զիրաւացի պատճառու. Երկրորդ՝ զկարեւորս ՚ի պէտու սկսանելոյ եւ յանդ հանելոյ զպատերազմ. Երրորդ՝

պարտի հետազօտել զվիճակ եւ զկարողութիւն թշնամւոյն. չորրորդ՝ պարտի սկիզբն առնել մարտի ՚ի դէպ ժամու:

«Քրիստոնեայք վասն գրաւելոյ զՍուրբ Երկիր՝ ունին զարդարացի պատճառ, վասն զի է ժառանգութիւն Քրիստոսի, եւ առաջինք մեր բազում ինչ ստիպեցան կրել ՚ի Սարակինոսաց, եւ ունին բաւական զօրութիւն, միայն թէ միաբան մխեցին ՚ի կոխւ:»

Հսել է թէ պատերազմ սկսելէն առաջ պէտք է չորս պայման լրացնել.

Նախ՝ լուրջ պատճառ ունենալ, Երկրորդ՝ կարեւորն ունենալ պատերազմը սկսելու եւ կատարելու համար, Երրորդ՝ թշնամին վիճակը եւ կարողութիւնը գիտնալ, չորրորդ՝ յարմար ժամանակին սկսիլ:

Ինչպէս որ Երկու տողով արդէն կ'ըսէ եւ ապա աւելի ճոխութեամբ կը պնդէ, լուրջ պատճառ կայ. ամենքն ալ արդէն համոզուած են՝ քանի որ ուրիշ արշաւանք ըրած են. Քրիստոսի Ս. Գերեզմանը պէ՛տք է ազատել սարակինոսներուն ձեռքէն. Աստուծոյ պատուէր է. «Աստուած մեզի ապացոյց տուած է թէ Ս. Երկիրը թշնամիներուն իշխանութենէն պիտի ազատուի, որովհետեւ, Աստուծոյ շնորհի քրիստոնեայ բոլոր թագաւորները եւ իշխանները լաւ վիճակի մէջ են եւ խաղաղութիւն կը վայելեն, քանի որ իրենց մէջ չկայ կոխ կամ պատերազմ: Ուստի կը տեսնուի թէ Ամենակարողն Աստուած կ'ուզէ Ս. Երկիրն ազատել:»

Երկրորդ պայմանը՝ կարեւորն ունենալ պատերազմը վարելու համար, ոչ միայն նիւթական կարողութեան կ'ակնարկէ, այլ եւ լուրջ պատրաստութեան մը:

Ահա՛ւասիկ Հեթումին կարգադրութիւնները.

Նախ պէտք է առաջապահ գունդ մը ղրկել որ պիտի բաղկանայ հազար ձիաւորէ, Երեք հազար հետեւակէ, եւ աստոնք տասը նաւով պիտի հասնին կա՛մ Կիպրոս կղզի կա՛մ ուղղակի Կիլիկիա: Նոյն ատեն դեսպաններ պիտի ղրկին առ Ղարպաղանտ որպէս զի անոր Երկու խնդրանք մատուցանեն, նախ որ ո եւ է ապրանք ուղարկել թշնամի - ներուն արգիլէ, Երկրորդ՝ որ Մելիտինէի կողմերը մարդ դրկէ որպէս զի արշաւանք պատրաստեն դէպի Հալէպ: Անկէ ետքը՝ Խաչակիրները, Կիպրոսիներն ու Հայերը միաբանելով պատերազմ պիտի սկսին, նոյն ատեն Եղիպտոսն եւ Սուրիան ծովուն վրայէն պաշարելով: Այսպէս, սարակինոսները, ստիպուած պաշտպանելու թէ՛ իրենց Երկիրը, թէ՛ Հալէպը եւ թէ՛ Բարեկաստանը, պիտի շուարին և մարտիկ ու ժամանակ պիտի կորսնցնեն: Խաչակիրներուն եւ Հայերուն նաւերը, սպանալով Եղիպտոսի ծովեզերքին, Սուլթանը կը ստիպեն բոլոր զինուորները Եղիպտոս ետ կանչելու: Միւս կողմէն՝ Լիբանան կը գտնուին քառա-

սուն Հազար քրիստոնեայք որ կրնան նոյն միջոցին նաւահանգիստ պատրաստել Խաչակիրներուն գալիք մեծագոյն բանակին Համար:

Ուրիշ կողմանէ ալ՝ թափարները երկիրներ պիտի գրաւէին եւ քրիստոնեաներուն յանձնէին: Ասկէ զատ թող Նորին Սրբութիւնը չմոռ - նայ վրացիներուն ալ գրել որպէս զի օգնութեան գան: Եւ որպէս զի այս պատրաստութիւնը կատարեալ ըլլայ. Պապը պէտք է եթովպիացիներն ալ Համոզէ որ Սուլթանին դէմ ապստամբին, որովհետեւ անոնք ալ քրիստոնեայ են: Նոյն խակ Եղիպատոսի մէջ Խպտի անունով բազմաթիւ քրիստոնեաներ կան: Հիմայ երբոր արեւեան բոլոր քրիստոնէական աշխարհը ոտքի կ'ելլէ եւ սարակինոսները կը շրջապատէ, երբ Խաչակիրներուն առաջապահ գունդը տեղեկութիւն առած կ'ըլլայ այն երկիրներուն մասին, առաջին նպաստաւոր առիթին պէտք է սպասել որպէս զի Խաչակիրներուն գլխաւոր բանակը ճամբայ ելլէ եւ արշաւանքը սկսուի: Յետոյ կը տեսնենք թէ ինչ տեսակ են այս առիթները: Այս գլխաւոր բանակը երեք ճամբայ ունի իր տրամադրութեան տակ եւ կը մնայ յարմարը որոշել: Կարելի է Ափրիկէին անցնիլ. բայց այս մասին խորհուրդ տալը տեղեակներուն կը ձգէ, որովհետեւ այն ճամբուն թէ՛ լաւ թե՛ գեշը չի գիտեր: Հիմայ երկու ճամբայ միայն կը մնայ, կա՛մ Պոլսէն անցնիլ ինչպէս ըրած է Կոտֆրուա տր Պույեօն, – այնտեղէն սակայն վտանգ կայ, որովհետեւ Խաչակիրները զանազան տեղեր մահմետականներէն շրջապատուած կ'ըլլան, – կա՛մ ուղղակի մինչեւ Կիպրոս կղզին նաւով ճամբորդել եւ հոն հաւաքուիլ մինչեւ որ առաջապահ գունդը թշնամիին վիճակը հետազօտէ եւ ապա՛ ամենքն ալ միացած՝ միաժամանակ թշնամիին վրայ յարձակին: Բայց ինչ ճամբայ ալ որոշուի՛ մեծ խնդիրը այն է որ «միարան միսեացին ՚ի կոփի», կարգապահութիւն եւ համակարգում պէտք է անպատճառ: Պէտք է առաջուրնէ իմաց տալ Արեւելքի քրիստոնեաներուն, այսինքն Հայոց եւ, եթէ կարելի է, զիրենք շարժել, Վրացիներուն ալ, եւ՝ չմոռնանք՝ Թաթարներուն, դաշնակցութիւնն ուղել, որովհետեւ անոնք ալ Համակիր են եւ իրենցմէ շատերը մկրտուած են. արդէն առաջարկած են օգնութեան գալ:

Թշնամիին վիճակը պէտք է գիտնալ. ասոր Համար է որ այլակրօն-ներուն մասին ալ կը խօսի առաջին մասին մէջ, և այդ առաջին տեղեւ կութիւնները լրացնելու Համար նորէն թշնամի իշխանութիւններուն վիճակը կը ցուցընէ: Մէկ օրինակ միայն մէջ կը բերեմ.

«Եղիպատոսի եւ Սուրբիոյ Սուլթանը կը կոչուի Մելօմասուր. իր զօրքերը զանազան ազգերէ են, որովհետեւ այն կողմերը բնակողները զօրութիւն չունին պատերազմի Համար, հետեւակները սակաւաթիւ են

եւ հեծեալները պէտք եղածին չափ են, բայց վարձուած զինուորներ կամ գերիներ են: (Ըսել է թէ շատ մեծ արժէք չունին այդ զինուորները՝ հաւատքէն մղուած Խաչակիրներուն դիմացը. ֆ. ֆ.) Եգիպտոսի սուլթանը վախի և կասկածի մէջէ չարունակ. կը վախնայ որ իրարանցում ելլէ հպատակներուն մէջ եւ սպաննուի, որովհետեւ իշխանութիւնը գրաւել շատ կը ցանկան: Բանակը քսան հազար հեծելագօրքէ կը բաղկանայ, բայց մեծագոյն մասը զօրաւոր չեն»:

Կարճ խօսքով՝ բանակը կազմուած է քսան հազար անզօր եւ վարձուած կամ գերի զինուորներէ եւ կարգապահութիւնը երերուն է: Սուրիոյ զինուորները հինգ հազար գող ու աւազակներու խումբ մըն են, բայց աւելի արի են եւ քաղաքներ պաշարելու մեքենաները զիտեն գործածել:

Յարմար ժամանակին պէտք է սկսիլ եւ հիմայ հասած է այն ժամանակը, – Հեթում ասիկա քանի ու քանի անզամ կը կրկնէ:

«Արիաբար կ'ըսեմ թէ կրնամ արտասանել այս խօսքերը «Ահա՝ ւասիկ հիմայ յարմար ժամանակը, ահա՝ փրկութեան օրը», որովհետեւ իրաւ ընդունելի եւ յարմար ժամանակն է քրիստոնեայ հաւատքին թշնամիներուն դէմ պատերազմ վարելու: Արդ՝ յարմար ժամանակն է օգնութեան գալու Ս. Երկրին որ շատոնց գերի է այլակրօններուն: Արդ յարմար ժամանակն է որպէս զի Քրիստոսի հաւատքարիմ սպասաւորները քաջութեամբ միանան Ս. Երկրին համար, որպէս զի թշնամիներուն ձեռքէն ազատուի Ս. Գերեզմանը...»:

Իսկ զանազան գլուխներու մէջ կ'ըսէ.

«Հիմայ յարմար ժամանակն է, որովհետեւ քրիստոնէական հաւատքին թշնամիներուն զօրութիւնը նուազած է նաեւ Թաթարներէն վարուած կրիստոներուն չնորհիս, որոնցմով անոնք ջարդուեցան եւ բազմաթիւ զինուորներ կորանցուցին մարտին մէջ...»:

«Նորէն՝ յարմար ժամանակն է. Աստուած կը ցուցնէ թէ Թաթարները առաջարկեցին քրիստոնեաներուն օգնութեան գալ սարակինուներուն դէմ եւ այս նպատակով է որ Թաթարներուն Ղարրանդ թագաւորը պատգամաւորներ զրկած է առաջարկելով իր ամբողջ իշխանութեամբ ջանալ Քրիստոնէութեան թշնամիները զգեստնել»:

Ուրեմն բարոյական տեսակէտով՝ յարմար է ժամանակը, քրիստոնեաներուն կացութեան տեսակէտով ալ. Հիմայ, նշանը տալու համար կը բաւէ նպաստաւոր առիթ մը. եւ այս առիթները այնքան շատ են որ զիւրին է որ աստոնցմէ մէկը պատահի: Այս առիթներուն տեսակներն են, – Սուլթանին արքունիքին մէջ մատնութիւն եւ կամ արքայասպանութիւն մը. ինչ որ շատ յաճախ պատահած է այդ թագաւորութեան

մէջ – կամ Նուպիացիներու, Պէտուէններու, Թուրքմէններու ապստամբութիւն մը կամ Նեղոս գետի անբաւական բարձրացում մը որ ոռպ պատճառէ, այնպէս որ եզիպտացի գինուրները բաւական պաշարչկարենան տանիլ անսապատէն անցնելու համար՝ որպէս զի մինչեւ Սուրբիան երթան պաշարելու:

Անպատճառ սկսինք պատրաստուիլ, «յարմար ժամանակը հասած է»... եւ չըլլայ թէ ժամավաճառութիւն ընենք մինչեւ որ թաթարները մահմետական դառնան<sup>1</sup>:

Հեթում իրրեւ պատմիչ շատ վարպետութիւն ցոյց տուած է պատճառական զանազան ճիւղերուն մէջ. և նոյն իսկ եթէ կարելի է՝ մասնաւրապէս ուսումնասիրելով իր գործը պատճագրական խստ տեսակէտէն՝ երբեմն երբեմն սխալներ գտնել հոն, բայց հեղինակը լրջօրէն գրած է իր գործը, աղրիւրներուն ստուգութեան աստիճանն անգամ նշանակելով. Թաթարաց պատմութեան առաջին ժամանակները թաթարէն իմացած է, երկրորդ շրջանը Հեթում թագաւորէն լսած է, իսկ երրորդ շրջանին դէպքերուն ինքն իսկ ականատես եղած է:

Ասկէ զատ պէտք է նկատի առնենք որ այս գիրքը օտար լեզուով տուն տուած է եւ առանց ո եւ է համառոտ զրութիւն կամ նախազի ունենալու աչքին առջեւ, ինչ որ Nicolas Falcon կրօնակիցը մեղի որոշ կ'ըսէ.

«Comme le Frère Hayton me le dictoit de sa bouche sans note in exemplaire».

Հեթում Պատմիչին կը վերագրուի նաեւ հայերէն «Ժամանակագրութիւն» մը:

Հ. Զարբհանէլեան իր «Հայերէն դպրութեան պատմութեան» մէջ կ'ըսէ թէ Հեթում Պատմիչի վերագրուած հայերէն ձեռագրի մը ակնարկութիւն կայ Ս. Էջմիածնի Վանքի մատենադարանի գրացուցակին մէջ, ձեռագրի մը որ նիւթ ունի «Խրատք ոգեշահք»:

Հեթումը այստեղ ուսումնասիրեցի զիսաւորապէս իրրեւ La Fleur des Histoires de la Terre d'Orient գրքին հեղինակը:

Այս գործը, ինչպէս որ կը կարդացուի Փարիզի Ազգային Մատենադարանի ցուցակին մէջ, «Հեթումին բաւական կարեւոր դիրք մը կ'ապահովցնէ ժԳ. դարու ֆրանսացի պատմիչներուն շարքին մէջ»:

Բայց ուզեցի իր բարդ անձնաւորութիւնն ալ ցուցնել. պատմի՛չ է,

<sup>1</sup> Իրաւ՝ Հեթում իրաւունք ունէր, որովհետեւ եթէ քրիստոնեաները Խաչակրութիւն ընէին այն ժամանակ, Թաթարները մեր ուժը տեսնելով քրիստոնեայ կը դառնային. մենք առիթը կորսնցուցինք և Թաթարները մահմետական կրօնքին յարեցան:

բայց Խաչակրութեան քարողիչ եւ կազմակերպիչ է ամէն բանէ առաջ, ինչպէս նաեւ այն Հայրենասէր մարդն է որ զրած է «Փա՛ռք Աստուծոյ՝ զի թագաւորութիւն Հայոց իցէ ի բարի վիճակի, ըստ զօրացուցանելոյ Աստուծոյ ի ձեռն Լեւոնի՝ որդւոյ տեառն Թորոսի, ի նախկին վերածցի վիճակ. վասնղի փայլէ ամենայն առաքինութեամբք, եւ է հայելի ամենայն իշխանաց»:

## POSTFACE

Frédéric Feydit est le continuateur de la grande école française d'arménologie dont le fondateur est J.M. Saint-Martin. Le cercle des intérêts de cet arméniste est vaste. C'est un éminent connaisseur de la langue arménienne classique (*grabar*), folkloriste, critique littéraire, pédagogue et traducteur maîtrisant à la perfection l'arménien occidental. Feydit se consacre aux études arméniennes dès son jeune âge. Il entretient d'étroites relations avec les frères des Congrégations Mekhitaristes de Venise et de Vienne. Il passe trois ans à Venise, dans le milieu des Mekhitaristes, travaillant dans leur riche bibliothèque de manuscrits, étudiant l'histoire et la langue du peuple arménien. Par la suite, il établit des relations avec l'Académie des Sciences de la RSS d'Arménie, l'Université d'Etat d'Erevan et surtout avec les arménistes du Maténadararan Machtots. Les études arméniennes réalisées en Arménie Soviétique font la joie du savant français et le tranquillissent, car il remarque un affaiblissement d'intérêt chez les chercheurs européens à l'égard de l'arménologie. Dans certains ouvrages de Feydit, on sent son inquiétude quand il observe de l'indifférence, à l'échelle mondiale, pour les valeurs spirituelles arméniennes, puisque l'Arménie ne possède pas de réserves de pétrole ni d'autres ressources matérielles. Il remarque que la France aussi prête progressivement de moins en moins d'importance aux études arméniennes et il est content que ce manque soit compensé en Arménie.

La majorité des œuvres de Frédéric Feydit est écrite en français, même ses séries d'articles dans *Bazmavep*. Son but est parfaitement compréhensible : mondialiser les valeurs arménologiques par l'intermédiaire du français.

Ce grand arméniste français est ami intime d'Archak Tchobanian, savant de grande valeur, et il sait bien quels efforts il lui faut fournir pour faire connaître les œuvres d'art et de littérature arménienne dans divers pays. L'un de ses premiers ouvrages en arménologie, publié en 1938 en arménien occidental, est consacré à l'*Histoire des Tartares* de l'historien Hétoum. Feydit connaît les manuscrits français de cette oeuvre et il démontre qu'elle était connue en Europe à l'égal de la relation de voyage du Vénitien Marco Polo. Il considère l'histoire de Hétoum une œuvre littéraire française autant qu'un ouvrage du Moyen Age arménien, dont l'auteur a eu des projets européens en relation avec les Croisades.

L'étude de l'héritage arménologique de Feydit montre clairement qu'il consi-

dère la traduction française de l'épopée arménienne *David de Sassoun*, avec introduction et notes, comme la principale de ses œuvres. Feydit est grand connaisseur en matière d'épopées, dont il connaît les plus célèbres, et il apprécie l'épopée arménienne d'après les critères universels. Il la munit de commentaires si détaillés que la compréhension en devient très facile. Feydit admire les idéaux humains et pacifistes de l'épopée *David de Sassoun* et tâche de transmettre ces idéaux aux autres peuples du monde entier par l'intermédiaire de sa traduction française, il regrette que l'épopée soit si peu connue, alors que ses valeurs morales sont universelles et proches à tous les humains. Partant des faits contés dans l'épopée, Feydit loue la femme arménienne, son patriotisme et son dévouement sans bornes à son mari et sa famille.

Dès le début de sa carrière d'arméniste, Feydit constate qu'il est nécessaire d'écrire un manuel d'arménien dans lequel les Européens maîtrisant le français et les émigrants arméniens ayant perdu l'usage de leur langue maternelle puissent apprendre facilement l'arménien occidental. Son manuel est composé d'après les critères de la méthodologie pédagogique d'avant-garde. Les leçons ne poursuivent pas l'unique but d'enseigner la langue, mais font aussi connaître l'histoire du peuple arménien, sa culture et sa littérature. Bien que Feydit sache que ni le Mont Ararat, ni le lac de Van ni celui d'Ourmia n'appartiennent plus à l'Arménie, il les présente dans son manuel comme des aires géographiques arméniennes. A côté de l'Arménie Soviétique, il reconnaît aussi comme terre arménienne l'Arménie Majeure historique.

Au cours des cours de langue arménienne et en d'autres occasions également, Feydit s'étonne de voir certains spécialistes reculer l'époque de Movses Khorénatsi. Il ne cite pas leurs noms ni n'entre en polémique avec eux ; simplement, il ajoute foi à ceux des auteurs arméniens qui considèrent que M. Khorénatsi est un historien du V<sup>e</sup> siècle. Il fait confiance au Père de l'historiographie arménienne. Feydit examine les passages légendaires et mythologiques de l'*Histoire d'Arménie* de Movses Khorénatsi et il est convaincu qu'ils sont de même valeur que le *Chah-namé* de Ferdowsi. Les personnages de l'épopée de Khorénatsi font son admiration et il en trouve les parallèles dans l'épopée *David de Sassoun*.

L'une des plus importantes recherches de Feydit est consacrée à l'alphabet de Machtots. Il admet que jusqu'en 405 les Arméniens n'ont pas eu d'alphabet propre et se sont servis des alphabets des autres peuples. Il fournit ses arguments à ce sujet et discute sans jamais offenser ceux qui ont une opinion différente. Avec sa capacité de polémiste, Feydit démontre que les vrais scientifiques n'ont pas besoin de discrediter ou d'humilier les autres et qu'ils sont connus et respectés sans avoir recours à cela. Il trouve que l'alphabet de Machtots est parfait.

Parmi les études philologiques de Feydit, on distingue une œuvre monumentale, les *Amulettes chrétiennes d'Arménie*, qui a exigé un travail d'une cinquantaine d'années. Il rédige également les catalogues des manuscrits contenant des textes d'amulettes des bibliothèques des Congrégations Mekhitaristes de Venise et de Vienne, ainsi que de la Bibliothèque Nationale de Paris. Feydit explique pourquoi les amulettes, officiellement interdites par les hommes d'Eglise arméniens dès le V<sup>e</sup> siècle, continuent à faire partie de la vie quotidienne des Arméniens comme reliques de l'époque panthéiste, puis acquérant un contenu chrétien, sont introduites dans les manuscrits des églises et des monastères. Il caractérise les amulettes qu'il publie, les dote de commentaires détaillés et en donne la traduction française.

Parmi les articles publiés par Feydit dans *Bazmavep*, deux sont consacrés à Hacop Paronian et à Ervand Otian. Caractérisant ces deux grands satiristes arméniens, il les classe au rang des plus célèbres satiristes européens.

Feydit publie en français une série de *Cahiers de grammaire arménienne* dont l'un traite du Système du verbe arménien classique. Feydit a offert ce cahier de 53 pages à Lévon Khatchikian, alors directeur du Maténadar, avec la dédicace suivante : « A l'académicien Lévon Khatchikian, avec mon profond respect et mon affection amicale. Paris, le 14 avril 1976. Frédéric Feydit ». En outre, Feydit correspond avec les arménistes les plus remarquables d'Arménie dont il parle toujours avec admiration, les considérant comme d'éménents spécialistes.

Consacrant d'intéressants ouvrages linguistiques à l'arménien classique et à l'arménien occidental, Feydit, en linguiste versé, considère que les dialectes de la langue arménienne sont autant de clés pour résoudre les énigmes de la protolangue indoeuropéenne.

Au cours de toute sa vie, Frédéric Feydit participe à de nombreux congrès scientifiques, toujours en défenseur de l'histoire, de la littérature et des droits du peuple arménien. Tout homme civilisé ne peut qu'admirer l'exposé présenté par lui à l'Académie Royale de Bruxelles à l'occasion de la commémoration du cinquantenaire du génocide arménien, où il rappelle à l'humanité qu'à côté de la monstrueuse quantité de victimes arméniennes, les Jeunes Turcs ont détruit les valeurs spirituelles du peuple arménien et exterminé de grands hommes, tel le poète Daniel Varoujan, digne d'être placé à côté des plus grands poètes de l'Occident.

Frédéric Feydit était un grand ami du peuple arménien, authentique défenseur de la vérité et des valeurs scientifiques. Ses recherches montrent que le peuple arménien a apporté une considérable contribution à l'histoire de la culture, de la science et de la littérature de l'humanité civilisée, ce qui doit être reconnu par le monde entier.



## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ<sup>1</sup>

- Աբաղա – 121  
Աբաս Կարսի տեր – 39  
Աբգար արքա – 85, 130  
Աբգարյան Գևորգ – 119, 120  
Աբեղյան Մանուկ – 21, 25, 37, 48, 57,  
    121, 133, 179  
Աբիսողոմ աղա – 156, 157  
Աբովյան Խ. – 87  
Աբրահամ – 73  
Աբրահամյան Ա. Ա. – 63, 92  
Աբրահամյան Աշոտ Գ. – 92-94, 96, 97  
Ազթանգեղոս – 94, 95, 98, 133, 150  
Աղրամելեք – 20, 26  
Աժդահակ Մարաց թագավոր – 21, 36,  
    37, 84, 128, 129, 131  
Աժդահակ-Զոհակ – 123, 132, 134  
Աժի – 37  
Ալաններ – 131  
Ալեքսանդր Մակեղոնացի – 84  
Ալեքսիանոս վարդապետ – 150  
Ալի – 73  
Ալիշան Ղևոնդ – 37, 119, 120  
Ալմանաց Ֆրտիկ Լայսը – 118  
Ալմիրոյան Գևորգ – 146  
Աղայան Էղ. – 92, 148  
Աղքասանդր թագաւոր – 109  
Աճապյան Հրաչյա – 60, 92, 96, 113,  
    146-148  
Աճառունիներ – 21, 178  
Ամիլիոս (պատգամաբեր, Դիոկղե –  
    տիանոսի կայսեր) – 150
- Ամովս – 29  
Այտնյան Արսեն – 146  
Անահիտ դիցուհի – 85  
Անանիա Շիրակացի – 61, 96, 97, 139  
Անանյան Պողոս – 7  
Անասյան Հակոբ – 119, 120  
Անգեղյա – 126  
Անթարյան Փ. – 61, 141  
Անթեյ – 21, 180  
Անտոնիոս – 84  
Անուշ – 153  
Աշոտ Բագրատունի թագավոր – 39  
Աշոտ Երկաթ – 86  
Աշոտ Հայոց արքա – 40  
Աշոտ Ողորմած – 86  
Աշտարակեցիներ – 105, 208  
Ապաղա Խան – 112, 219, 220  
Աջմու Շապուհ արքա – 50  
Առվան – 99  
Աստղիկ (պարոն) – 51  
Ատոմ գրիչ – 61  
Ավելյան Մկրտիչ – 104-106, 114,  
    117, 119, 207, 211, 221  
Ավեր Հովհաննես – 7  
Արա Գեղեցիկ, Հայոց արքա – 19, 84,  
    125, 176  
Արամ Նահապետ – 83, 125, 126  
Արգավան – 131  
Արթին աղա – 158, 159  
Արիստոփանես – 151  
Արծրունի – 177

1 Ֆ. Ֆեյդիի տպագրած Հմայինների բնագրերում եղած անունները դուրս են թողնված ցանկից:

- Արծրունի Վարդան** – 7  
**Արծրունիներ** – 21, 26, 177, 178  
**Արմաղան** – 184  
**Արմեն** – 77, 125  
**Արմենիկ** – 125  
**Արշակ I, Հայոց թագավոր** – 96, 130  
**Արշակունի թագավորներ** – 99, 130  
**Արշակունիներ** – 85, 96  
**Արտաշես Առաջին** – 93, 129–132  
**Արտաշես արքա** – 18, 56, 84, 174, 175  
**Արտաշիր Սասանյան** – 123, 133  
**Արտավազդ** – 18, 34  
**Արտավազդ Առաջին** – 84  
**Արտավազդ արքա** – 34, 94, 132, 133, 149, 175  
**Արտավան, պարթևաց թագավոր** – 96  
**Արմշատյան Սեն** – 98  
**Աքար. որդի Քրմեայ** – 63
- Բագրատունիներ** – 21, 178  
**Բաղին** – 45  
**Բաթմանա Բուղա – 40**  
**Բաղդասար** – 20, 25, 28, 31, 33, 35, 36, 51, 129, 177, 178, 184  
**Բաղդասար աղբար** – 153, 154  
**Բաղդատի Խալիֆ** – 20, 21, 178, 179  
**Բագ Գրենկ** – 50, 51, 178  
**Բարդածան** – 94  
**Բարթելեմեյ Բոլոնիացի** – տե՛ս  
 Բարթողիմեոս Բոլոնացի  
**Բարթիկյան Հրաչ** – 40  
**Բարթողիմեոս Բոլոնացի** – 50, 178  
**Բարշամ** – 83, 125  
**Բել** – 82, 101, 125  
**Բենեդիկտոս ԺԲ** – 211  
**Բյուրասպ Աժդահակ** – 122–124, 128  
**Բղյուեռ** – 154  
**Բրոսե Մարի** – 118
- Գարրիկ Հրեշտակապետ** – 53, 69, 73, 95  
**Գագիկ Երկրորդ, Բագրատունի թագավոր** – 86, 117, 118  
**Գագիկ Հայոց թագավոր** – 26  
**Գայանե (մայրապետ)** – 150  
**Գայսերյան Հովհաննես** – 152  
**Գարգանոյուա** – 19, 127, 176  
**Գէորգ վարդապէտ** – 61  
**Գէորգ զօրավար** – 69, 73  
**Գիսանե** – 31  
**Գլակ Ասորի** – 31  
**Գյուլբենկյան Գալուստ** – 59  
**Գնթունիներ** – 21, 178  
**Գնունիներ** – 21, 178  
**Գողոնի** – 151  
**Գորգիկ** – 50  
**Գրանդսեյն դը Հոթեռիկ** – 5  
**Գրիգոր Լուսավորիչ** – 29, 31, 51, 73, 85, 86, 94, 150, 188  
**Գրիգոր Մագիստրոս** – 56, 132  
**Գրիգոր Նարեկացի** – 65–67, 73, 87, 140  
**Գրիգոր Տաթևացի** – 61  
**Գրիգորյան** – 148  
**Գուտչմիտ** – 123  
**Գուրգեն Աղվանից թագավոր** – 39  
**Գևորգ Արով** – 21, 179
- Դարադյան Մ.** – 57  
**Դանիել Վարուժան** – 140, 167  
**Դավիթ Անհաղթ** – 7, 87  
**Դարեհ Պարսից արքա** – 80  
**Դերյուսի** – 121  
**Դեղձուն Ծամ** – 19, 23, 34, 54, 184  
**Դեմետրե** – 31  
**Դեմիրճիրաշյան** – 5  
**Դևոմար** – 119, 120  
**Դէվալ** – 72  
**Դիոնիսոս** – 96

- Դիպինոս** – 129  
**Դյուլորիե Էդուարդ** – 104, 207  
**Դոլոխանյան Ա.** – 118, 145  
**Դոն Կիսոտ** – 160
- Եգանյան Օ.** – 61, 141  
**Եղեկիա թագավոր** – 29  
**Եղեկիա Հրեից առաջնորդ** – 20  
**Եղեկիել** – 72  
**Եղնիկ Կողբացի** – 62, 63, 87, 98  
**Եղիայան Արմենակ** – 140  
**Եղիշե** – 98  
**Եղիսաբեթ** – 64  
**Եսայի մարգարե** – 29  
**Եսայի Նչեցի** – 117  
**Երանյակ** – 152, 153  
**Երզնկացի Միւ.** – 61  
**Երվանդ** – 130  
**Եվսեր** – 61
- ԶարբՀանայան** – 118, 225  
**Զաքարիա Լաթողիկոս** – 61  
**Զեյթոնյան Ա.** – 61, 140  
**Զենորիա** – 85  
**Զեւս դիցն Արամաղդայ** – 94  
**Զոհալ** – 72  
**Զոհակ,** առասպելական հերոս – 123,  
 124
- Էմին Մ.** – 37, 121, 123, 147  
**Էպիփիմե** – 159  
**Էպիթիկ** – 159  
**Էփրիկան Հ. Ս.** – 31
- Թաղեսս առաքյալ** – 85  
**Թեղա** – 61  
**Թեղփրաստես** – 151  
**Թերգիրացան Վ.** – 150  
**Թովմա Արծրունի** – 20, 145  
**Թորոսյան Հարություն** – 5  
**Թումանյան Հովհաննես** – 57
- Ժակ Ֆեյդի** – 8  
**Ժան Լելոնդ** – 94  
**Ժան-Պիեռ Մահե** – 5, 10, 11, 13  
**Ժ. դը Մորգան** – 101  
**Ժորժ Դյումեզիլ** – 9  
**Ժուրդեն** – 157
- Իգնատիոս վարդապետ** – 188  
**Իկոնիայի սուլթան** – 218  
**Ինոկենտիոս Երրորդ պապ** – 16  
**Իշխանյան Ռ. Ա.** – 139  
**Իսմիլ Խաթուն** – 38, 90  
**Իսրայել Օրի** – 86, 105, 208
- Լա Բյուեռ** – 151  
**Լալայան Երվանդ** – 23, 95, 144, 186  
**Լենկ Թիմուր** – 86, 107, 108, 213  
**Լուի Մարիես** – 6  
**Լուսին** – 72  
**Լուսինյաններ** – 104  
**Լևոն** – 152, 153  
**Լևոն Իմաստուն** – 40  
**Լևոն, որդի Թորոսի** – 118, 226  
**Լևոնյան Գ.** – 150
- Խալաթյանց Գ.ր.** – 121  
**Խանդութ խանում** – 50–52, 54, 184  
**Խաչատրյան Պ. Մ.** – 66  
**Խաչերյան Լևոն** – 5, 11  
**Խաչիկ-Գագիկ (914–943 թթ.)** – 26  
**Խաչիկեան Լեւոն** – 61, 140, 167  
**Խոսրով Հայոց արքա** – 85, 99, 133  
**Խոսրով Պարսկաստանի արքա** – 107,  
 110, 111, 212, 213, 217  
**Խոսրովանուշ թագուհի** – 86  
**Խոսրովիդուխտ (Տրդատի քույր)** – 10,  
 150  
**Խրիմյաններ** – 105, 208
- Ծովինար** – 18, 21, 25, 26, 28, 38, 174,  
 179, 180, 184

- Կառստ – 147**
- Կարապետ Մելիք-Օհանջանյան – 25**
- Կարդոս – 125**
- Կարեն (իշխան – սիրող Հոփավիմելի) – 150**
- Կևամայէլ – 69**
- Կենդանամայէլ – 69**
- Կերասոս – 133**
- Կիկերոն – 79**
- Կիպար – 153, 157**
- Կիպրիանոս – 72, 73, 140**
- Կլեոպատրա Եգիպտոսի թագուհի – 84**
- Կղեմէս Ե Պապ – 104–106, 119, 206, 209, 210, 212**
- Կյուր Յան – 40**
- Կյուրցյան Միքայել – 158**
- Կյուրոս – 127**
- Կողբաղին – 23, 44, 45, 185**
- Կոստանդին IX Մընոմաքոս, բյուզանդական կայսր – 118**
- Կոտֆրուս տղ Պուեռ – 223**
- Կորկույան Ք. Ա. – 139**
- Կորյուն – 7, 97, 99**
- Կրեսոս – 129**
- Կույս Մարիամ – 68**
- Հակոբ Մեղապարտ – 139**
- Համբարձումյան Վիկտոր – 139**
- Համտոլ Հրեշտակ – 37**
- Համտուն ամիրա – 39, 40**
- Հայկ Նահապետ – 17, 82–84, 101, 125, 126, 127, 130, 176**
- Հայտոն – 120**
- Հայր Գարեգին Հովսեփյան – 57**
- Հայր Ներսես Տեր-Ներսիայան – 7**
- Հանուչ – 146**
- Հարությունյան Սարգիս – 74**
- Հացունի Վարդան – 61, 62, 72, 73**
- Հեթում Առաջին – 111, 112, 207, 218, 219**
- Հեթում Բ – 111, 219**
- Հեթում Կոռիկոսի, Հեթում պատմիչ – 8, 11, 80, 81, 94, 103–108, 110–121, 164, 205–208, 210–214, 217, 219–222, 224, 225**
- Հեթումյաններ – 206, 207**
- Հերակլես – 126, 129**
- Հերովդիատա – 31**
- Հիպոկրիտոս պատմիչ – 96**
- Հիսուս Քրիստոս – 30, 68, 69, 114**
- Հյուգո Վիկտոր – 87**
- Հովհան – 19, 41, 42, 44, 46, 47, 184**
- Հովհան Մանդակունի – 62, 63, 149**
- Հովհաննես Գառնեցի – 67**
- Հովհաննես Մլրտիչ – 29, 31, 73**
- Հովհաննես Կողեռն – 61**
- Հովհամիս, Հովհամիղդ – 24, 38, 85**
- Հովհսիմե (Կույս) – 150**
- Հրանտ Ասատոր – 152**
- Հրուդեն – 122, 124**
- Հուլավու – 121**
- Զեռես Քանանացի – 178**
- Ղազան Խան – 111, 113, 219**
- Ղաղինյան Ա. Ա. – 66**
- Ղամէր – 72**
- Ղանալանյան Արամ – 21, 179**
- Ղարբանդ թագավոր – 224**
- Ղարիբյան Արարատ – 92, 148**
- Ղարպաղանտ – 115, 222**
- Ղետոնդեանք – 86**
- Ղուկաս – 64, 140, 217**
- Մակարյան Ա. – 152**
- Մալխասյան Ստ. – 32, 52, 123, 134**
- Մահմետ – 218**
- Մամգուն Ճենաց – 21**
- Մամգուն Զինացի – 21, 178**
- Մամիկոնյան Վահան – 86**
- Մամիկոնյաններ – 21, 178**

- Մանգու իսան** – 111  
**Մանու** – 21, 178  
**Մանուկ աղա** – 157  
**Մանուկյան Կոմիտաս** – 7  
**Մառ Ն.** – 37, 41, 123  
**Մառեխս** – 72  
**Մատթեոս Ուռչայեցի** – 40  
**Մատթէոս** – 71, 140  
**Մար Աբաս Կատինա** – 125, 126  
**Մարգար** – 152, 153  
**Մարաց Աժդահակ** – 178  
**Մարթա** – 152  
**Մարիամ** – 64  
**Մարկո Պոլո** – 105, 108, 165, 206, 209,  
 211, 213  
**Մարկոս** – 140  
**Մարս** – 72  
**Մարտիրոս** – 72  
**Մարիամելի** – 160  
**Մելիք** – 180  
**Մելքիսեդեկ քահանա** – 28  
**Մելքոն աղա** – 154, 155  
**Մեծ Մէեր** – 21, 23, 48, 50, 143, 180  
**Մեյն Անոռուան** – 5, 146, 147  
**Մեսրոպ Մաշտոց** – 12, 16, 80, 81, 86,  
 90, 91-93, 98-101, 138, 140, 171  
**Մերկուրի** – 72  
**Մերուժան Արծրունի** – 97  
**Մըսրա Մելիք** – 23, 37, 38, 40, 41, 45,  
 47, 180, 183  
**Միթրա աստված** – 178  
**Միհր** – 178  
**Միհրատ Հայոց թագավոր** – 38, 85  
**Միհրատ Պոնտացի** – 84, 127, 130  
**Միհրիդատ Հայոց արքա** – 24  
**Մինաս Թոխարցի** – 42  
**Միշել Ժոնվալ** – 5  
**Միսակյան Շավարշ** – 8  
**Միքայէլ** – 69  
**Միկիթար Սեբաստացի** – 17, 87
- Միմիթարյան միաբանություն** – 7, 65,  
 68, 140  
**Մկո** – 161  
**Մկրտչյան Արքակ** – 135  
**Մէեր** – 52, 178  
**Մնացականյան Ա.** – 61, 140  
**Մոլիեր** – 151-154  
**Մոնկա** – 120  
**Մովսես Խորենացի** – 9, 10, 17-21, 32,  
 37, 56, 58, 82, 83, 93, 94, 97, 98, 101,  
 121-131, 133, 134, 165, 166, 172-178  
**Մովէս** – 69  
**Մորիս Լեռոյ** – 135  
**Մորա Մելիք** – 22  
**Մութաֆյան Կլոդ** – 120, 121  
**Մուհամեդ սուլթան** – 86, 134  
**Մուշեղ թագավոր** – 31  
**Մուշտարի** – 72  
**Մուսովինի** – 7  
**Մուրադ** – 48  
**Մուրատ** – 48  
**Մուրացաններ** – 21, 178
- Յակոբեան Գրիգոր** – 158  
**Յակ. Ղրիմեցի** – 61  
**Յուստիանէ կույս** – 140  
**Յօհան** – 140
- Նարուգողնոսոր** – 20  
**Նաղարյան Ստեփանոս** – 135, 140  
**Ներսաք – 20, 26, 61, 65-67, 73, 87, 172**  
**Ներսես Լամբրիոնացի** – 87  
**Ներսես Մեծ** – 93  
**Ներսես Մելքիսեդի** – 145  
**Ներսես Շնորհալի Հայոց կաթողիկոս** – 16  
**Նիկոլա Ֆալկոնի** – 81, 94, 119, 120  
**Նիկողոս Եպիսկոպոս** – 107, 212  
**Նինոս Ասորեսստանի թագավոր** – 83  
**Նյուսիա աստված** – 96

- Նյուքար Մաղես** – 83, 125  
**Նոյ** – 42, 109, 216  
**Նվարդ արքայադուստր** – 125
- Շահ Աբաս** – 86  
**Շահան Ջրպետ** (Եղողկացի) – 146  
**Շամբատ Բագարատ** – 178  
**Շամիրամ** – 19, 84, 125, 126, 176  
**Շամպողիոն** – 5  
**Շապուհ** – 32  
**Շառլ դը Կոստեր** – 24  
**Շառլմանժին** (Կառլոս Մեծ) – 126  
**Շավասպ Արծրունի** – 32  
**Շավարշ դոկտոր** – 159  
**Շարա – 19, 127, 176**  
**Շարաշան** – 32  
**Շարաւ – 72**  
**Շէմս – 72**  
**Շրյուդեր** – 146  
**Շուշան – 157**
- Ոսկանյան Ն. Ա.** – 139  
**Ոտա (Նախարար)** – 150  
**Որմիզդ** – 95
- Զալարյան Անդրանիկ** – 121  
**Զամչյան Մ.** – 87  
**Զարբահար Քամի** – 39  
**Զարիսաղին** – 45  
**Զիթունի Մ.** – 57  
**Զինգիլ Խան** – 107, 112, 113, 212, 213,  
220  
**Զիտեմյան Տիգրան** – 8  
**Զիտեմյան Ֆրեդ** – 7  
**Զմշկիկ Կայսր** – 21, 39, 40, 178  
**Զմշկիկ Սուլթան** – 20, 22, 39, 54, 178,  
181  
**Զոպանյան Արշակ** – 8, 80, 103–105,  
164, 205, 214
- Պալասանյան Ստեփանոս** – 82–84  
**Պապ Հայոց արքա** – 134  
**Պապալ** – 159  
**Պապամ** – 126  
**Պատկանյան Քերովքե** – 146  
**Պարոնյան Հակոբ** – 12, 149, 151–158,  
163, 166  
**Պեղաս Ճի** – 18  
**Պեղիկթաշյան Մկրտիչ** – 87, 151  
**Պետիկյան Ա. Ա.** – 91  
**Պետրոս Կաթողիկոս** – 118  
**Պետրոս Մեծ** – 86  
**Պիգասոս** – 175  
**Պլուտարքոս** – 149  
**Պողոս Նուրար Փաշա** – 90  
**Պողիկարպոս** – 188  
**Պոմպեոս** – 84  
**Պրոբոս** – 133  
**Պրոմեթես** – 132
- Զահկեցի Ղազար** – 119  
**Զահուկյան Գևորգ** – 92, 138  
**Զատլ թագաւոր Անգլիզաց** – 118  
**Զիոնտոս** – 16  
**Զբհոս** – 72
- Ռենե Գրուսե** – 104  
**Ռշտունի Գարեգին** – 151  
**Ռող՝ Հայերենով Վարդուկ** – 159  
**Ռողանդ** – 51, 126  
**Ռոմեն Ռողան** – 24  
**Ռոստոմ Սագճիկ** – 126  
**Ռոստոմ, փահկան** – 123  
**Ռուբինյան թագավորներ** – 86  
**Ռուբինյան իշխաններ** – 86
- Սաթենիկ Ալանաց գեղաջա արքա –**  
յաղուստր – 18, 131, 174  
**Սահակ Բագրատոնի** – 123  
**Սահակ Պարթև** – 80, 87, 93, 97

- Սահմակ վարդապետ** *Տեր-Մովսեսյան* – 90  
**Սահմական Հասմիկ** – 42  
**Սամուել քահանա** – 61  
**Սամսոն** – 126  
**Սայաթ-Նովա** – 146  
**Սանասար (=Արասար)** – 19-21, 25, 26, 28, 29, 31-36, 51, 129, 177, 178, 180, 184  
**Սանատրուկ** – 85, 130  
**Սանդուխտ Կույս** – 85  
**Սասանյան գերդաստան** – 133  
**Սասունցի Դավիթ** – 9, 12, 15, 19-23, 25, 33, 39-43, 45-55, 142, 143, 178-186  
**Սափայան Ա. Մ.** – 139  
**Սատուրն** – 72  
**Սարգիսյան Սարգիս** – 146  
**Սարգոն թագավոր** – 80  
**Սարգսի որդի** – 61  
**Սարգսյան Մարտիրոս, Դավիթ Բեկ** – 86, 104, 207, 208  
**Սարգիս զորավար** – 69, 72  
**Սարագմիկ** – 69  
**Սարակինոս** – 115  
**Սարիե – 47, 143, 186**  
**Սարկաւագ Յովհ. – 61**  
**Սարսափոնի – 162**  
**Սարսիկ** – 69  
**Սարուխան Ալ.** – 159  
**Սեբեոս** – 133  
**Սեղրակ աղա – 154**  
**Սելլյաններ** – 84  
**Սենեքերիմ թագավոր** – 20, 21, 26, 29, 57, 177, 178  
**Սենեքերիմ Վասպուրականի տեր** – 39  
**Սեն-Մարտին** – 164  
**Սերոշ – 124**  
**Տկայորդի, Հայոց արքա** – 20, 32, 84  
**Մլուղես – 129**
- Մճբատ Բագրատունի** – 130  
**Միոնով – 37**  
**Սողոմոն Իմաստուն** – 74  
**Սովոն – 72**  
**Սոտնիկյան Պ.** – 38  
**Ստատ Թոռնեցի, Խշան – 40**  
**Ստեփանոս – 73**  
**Մրգանձոյանց Գարեգին** – 20, 25, 56, 179  
**Սուդի – 45**  
**Սուրբ Աստուածածին** – 68  
**Սուրբ Բերնարդ** – 133  
**Սուրբ Գևորգ – 73**  
**Սուրբ Գրիգորի Լուսավորիչ** – 68, 70  
**Սուրբ Կիպրիանոս** – 69  
**Սուրբ Ղոկաս – 110**  
**Սուրբ Յովհաննէս Կարապետ** – 69  
**Սուրբ Յուստիանէ** – 69  
**Սուրբ նախավկայն Ստեփանոս** – 68  
**Սուրբ Պետրոս – 69**  
**Սուրբ Պողոս – 69**  
**Սուրբ Սարգիս – 73**
- Վահագն Տիգրան թագավորի որդի – 18, 19, 37, 128, 129, 173, 174, 176**  
**Վահան կաթողիկոս – 40**  
**Վաղարշակ Առաջին – 129, 130**  
**Վարդան Այգեկցի – 40**  
**Վարդան – 61**  
**Վարդանանը – 86**  
**Վարդանյան Վրեժ – 145**  
**Վարդովյան Հակոբ – 151**  
**Վարժապետյաններ** – 105, 208  
**Վեմիկ Մերո – 46**  
**Վեստ Սարգիս – 118**  
**Վոամշապուհ թագավոր – 80, 81**

- Տարտյուֆ** – 157  
**Տեր Սահմակ** – 161  
**Տեր-Ղազարյան Եփրեմ** – 7  
**Տեր-Մովսեսյան** – 76  
**Տեր-Ներսիսյան Ներսես** – 7  
**Տիգրան** – 18  
**Տիգրան Առաջին** – 17, 84, 127, 128, 173  
**Տիգրան Մեծն արքայից արքա** – 79, 84, 130, 149  
**Տիլ Ուլենշպիցել** – 24  
**Միկին Սակիդ-Տեր Մելքոնյան** – 57  
**Տիր աստված** – 95  
**Տիրան** – 18  
**Տիրոյան Աթանաս** – 140  
**Տորք** – 19, 26, 176  
**Տրդատ** – 10  
**Տրդատ (թագավոր Հայոց)** – 85  
**Տրդատ Մեծ արքա** – 51, 85, 133, 134, 150  
  
**Ռաֆֆի** – 87  
**Բաս Սերգո** – 161  
  
**Ցուլ** – 72  
  
**Փանջունի Բ.** – 159-162  
**Փանջունիներ** – 163  
**Փավստոս Բուղանդ** – 11, 93, 133, 134  
**Փարավեցի Ղազար** – 99  
**Փեճիկան Եղիս** – 7, 59  
**Փիլիպի Կապանի թագավոր** – 39  
**Փիլոսոփատոս** – 95-97  
**Փորքշուկ Վերգո** – 19, 23, 44, 46, 47, 177, 184, 185  
  
**Փոքր ՄՀեր** – 22, 23, 53, 55, 56, 181, 184, 186  
  
**Քեռի Թորոս** – 23, 25, 38, 46, 184, 185  
**Քոթոթ – մոթոթ** – 46  
**Քրիստոս** – 53, 56, 62, 64, 70, 85, 88, 106, 110, 112, 115, 117, 150, 217, 219, 222, 224  
**Քուռկիկ Ջալալի** – 18, 38, 39, 42, 48, 175  
  
**Օգոստոս Կայսր** – 110, 217  
**Օղան-Տողան** – 51  
**Օշին իշխան** – 105, 106, 210  
**Օտարիտ** – 72  
**Օտյան Գրիգոր** – 157  
**Օտյան Երվանդ** – 12, 149, 157-160, 162, 163, 166  
**Օրբելի Հովսեփ** – 15, 19, 21, 22, 179, 183  
  
**Ֆելիկենյան Հերմինե** – 8  
**Ֆերիդուն** – 124  
**Ֆիլիպ Ֆրանց** – 118  
**Ֆիրդուսի** – 57, 123, 124, 134, 135, 166  
**Ֆրանսուա դը Ասիգ** – 16, 172  
**Ֆրանսուա Ռարլե** – 127  
**Ֆրանցիսկ Միշել** – 126  
**Ֆրեդերիկ Արման դը Էյմե** – 8  
**Ֆրեդերիկ Կոնդրեր** – 139  
**Ֆրեդերիկ Մակեր, Ֆրեդերիկ Առաջն Մեծ** – 6, 8, 9, 61  
**Ֆրեդերիկ Ֆեյդի, Ֆրեդերիկ Երկրորդ** – 5-167, 171, 187, 205-208, 214

## ՏԵՂԱՆՈՒՆԵՐ<sup>1</sup>

- Ագուլիս – 146  
Աղրիանապոլիս – 151  
Ալազյաղ – 77  
Ալեքսանդրապոլ – 132  
Ալիս գետ – 89  
Աղթամար – 139  
Աղթամարի վանք – 61, 70  
Ամերիկա – 153  
Ամիղ, Ամիթքաղաք – 39, 40  
Ամստերդամ – 146  
Այծյաց բերդ – 40  
Ալրարատ – 109  
Անգեղ տուն – 126  
Անգեղա ձոր – 34  
Անգղիս – 78  
Անառողիս – 160  
Անդրկովկաս – 101  
Անթիլիսաս – 140  
Անի – 86, 94, 118, 139  
Անտիոք քաղաք – 111, 218  
Առաջավոր Ասիս – 84, 90  
Ասիս մայրաքամաք – 79, 108, 111, 214,  
217, 218, 221  
Ասիղ քաղաք – 16  
Ասորեստան – 19-21, 26, 32, 57, 80,  
83, 84, 125, 176  
Ասորիք – 121  
Ավարայր – 86  
Ավինեռն քաղաք – 105, 119, 209  
Արագած – 77  
Արարիս – 78, 161  
Արարկիր – 104  
Արածանի – 34  
Արարատ – 132, 215  
Արարատի երկիր – 20, 26, 80, 101  
Արարատ լեռ – 77, 165  
Արաքս գետ – 77  
Արին Բերդ – 137  
Արձն – 32  
Արմենիա – 77, 80  
Արտաշատ քաղաք – 84  
Արևելք – 16, 108, 111, 113, 120, 137,  
172, 206, 209, 217, 218  
Արևմուտք – 15, 17, 61, 109, 136, 137,  
158, 163, 167, 171, 187, 210, 215  
Արևմտյան Եփոսպա – 144, 163  
Արևմտյան Հայաստան – 30, 144  
Աֆրիկա – 115, 223  
Բարեկստան – 115, 222  
Բաթման գետ – 34  
Բաղդադ – 120, 177  
Բեհիսթունի ժայռ – 80  
Բեոլին – 91  
Բզնունյաց ծով, Վանա լիճ – 77  
Բըյուսել – 12, 135, 144, 167  
Գաղղիս – 78  
Գանստ – 140  
Գառնիի տաճար – 9, 10, 138  
Գեղամա ծով – 17  
Գերմանիա – 11, 78

<sup>1</sup> Տողատակերում եղած Երևանը, որպես գրքերի տպագրության վայր, չի ընդգրկվել ցանկում:

- Գլակա վանք** – 31  
**Գող ու Մագող** – 51  
**Գողզոթա** – 22, 181  
**Գողթան գավառ** – 98  
**Դամասկոս քաղաք** – 111, 218  
**Դավրեժ** – 109, 215  
**Դիարբեքիր** – 34  
**Դմբավլնդ լեռ** – 122, 124, 132  
**Եղիպտոս** – 16, 20, 33, 115, 116, 158,  
 177, 207, 211, 219, 222–224  
**Եղեսիա** – 85, 94, 130  
**Ենիզյուղ** – 157  
**Եվրոպա** – 7, 41, 76, 86, 90, 103, 105,  
 113, 120, 158, 160, 169, 206, 221  
**Երասխ գետ** – 77, 84  
**Երկաթե գրունք** – 109, 215  
**Երուսաղեմ քաղաք** – 20, 26, 29, 71,  
 117, 121, 145  
**Եփրատ (արևելյան)** – 34  
**Եփրատ գետ** – 77  
**Երևան** – 7, 10, 75, 145, 179, 183, 186  
**Զվարթնոց** – 139  
**Էջմիածին** – 91, 102, 118, 119, 139, 140,  
 225  
**Թարսիս թագավորություն** – 217  
**Թիֆլիս** – 82, 89, 121, 145  
**Թուկանիա** – 209  
**Թուրքիա** – 78, 109, 160, 215, 219  
**Իկոնիա** – 111  
**Իննակենյան վանք** – 30, 31  
**Իտալիա** – 7, 8, 78, 157  
**Իրան** – 97, 124, 145  
**Իրան ու Թուրքան** – 51  
**Իրան-Միջազգետք շրջան** – 137  
**Լազարյան ձեմարան** – 147  
**Լեհաստան** – 145  
**Լեմբերդ** – 150  
**Լիբանան** – 222  
**Լյուբեք** – 119  
**Լուվր** – 16  
**Լուվին** – 144  
**Լևանտի երկիր** – 76  
**Խաթարյան** – 56, 181  
**Խորունկ Ասիա** – 109  
**Խորհրդային Հայաստան** – 9, 10, 15,  
 136, 164  
**Խորհրդային Միություն** – 15, 87, 171  
**Ծաղլվար գյուղ** – 159, 161, 162  
**Ծովասար** – 34  
**Կաթնաղբյուր** – 27, 47, 179  
**Կապան** – 39  
**Կապաղովկիա** – 84  
**Կապուտան ծով, Ուրմիո լիճ** – 77  
**Կապուտկող** – 20  
**Կասպից ծով** – 84, 109, 215  
**Կարմիր Ծով** – 69  
**Կարս** – 31, 86  
**Կիլիկիա** – 50, 106, 115, 120, 121, 172,  
 206, 207, 210, 218, 220  
**Կիլիկյան թագավորություն** – 17, 79,  
 111  
**Կիպրոս կղզի** – 104–106, 115, 116, 210,  
 222, 223  
**Կիրսակտուկե** – 118  
**Կրանի** – 161  
**Կղեսուր** – 32  
**Կոռիկոս** – 106  
**Կոստանդնուպոլիս** – 17, 118, 145, 151,

- 156–158, 160, 162, 163, 172, 223  
**Կովկաս** – 109, 145, 215  
**Կովկասյան լեռներ** – 132  
**Կ.** Պոլիս – 39  
  
**Հալեպ** – 115, 222  
**Հաղպատ** – 139  
**Հաղպատ վանք** – 86  
**Հայաստան երկիր** – 138  
**Հայաստան թագավորություն** – 109, 158  
**Հայաստան երկիր** – 10, 20, 26, 39, 77–79, 84–87, 90, 96, 98, 102, 106, 108, 110, 118, 129, 131, 135, 136, 139, 144, 149, 165, 210, 214–216  
**Հայոց աշխարհ** – 82, 99  
**Հարք գավառ** – 39  
**Հացեկաց Տարոնի գյուղ** – 93  
**Հնդկաստան** – 41, 78, 145  
**Հոփիսիմեի տաճար** – 139  
**Հռոմ** – 7, 217  
**Հրէաստան** – 78  
  
**Ղալաթիա** – 156  
**Ղարաբաղ** – 86  
**Ղափան** – 71  
  
**Ճարոն** – 78  
**Ճապաղջուր** – 34  
  
**Մայր Հայաստան** – 91  
**Մաշկերտ գյուղ** – 161, 162  
**Մատենադարան** – 74, 75, 117, 141, 145, 167  
**Մատղավանք** – 55  
**Մարաշ** – 104  
**Մարաստան** – 36, 125  
**Մարաց թագավորութիւն** – 109, 215  
**Մարութեա ջուր** – 34  
  
**Մելիտինե** – 115, 222  
**Մեծ Հայք** – 77, 165  
**Մեծ Մասիս** – 77, 131, 132, 175  
**Մըսրա Էրկիր** – 38, 45  
**Մըսրա թագավորություն** – 50  
**Միլան** – 8  
**Միջերկրական ծով** – 16  
**Միջերկրականի ավագան** – 137  
**ՄՀերի դուռ** – 25  
**ՄՀերի տուն** – 40  
**Մուկվա** – 91, 121, 145–147  
**Մուշ – 30, 31, 34, 40**  
**Մուրադ-չայ, Մուրադ գետ** – 34  
  
**Յորդանան գետ** – 69  
**Յուպիտեր** – 72  
  
**Նեղոս գետ** – 225  
**Նինվի – 20, 26**  
**Նյու-Յորք** – 91  
  
**Շեփիկ գյուղ** – 160  
**Շինոն** – 127  
**Շիրակ** – 127  
**Շվեյցարիա** – 133  
  
**Զինաստան** – 78, 110, 211, 215, 217  
**Զինմաչինա քաղաք** – 35, 51  
  
**Պաղեստին** – 84  
**Պամիկուլիա** – 96  
**Պարսկաստան** – 41, 78, 99, 109, 132, 133, 145, 215  
**Պիկդավիթ** – 84  
**Պոնձե քաղաք** – 34, 184  
**Պոլիս – 115**  
**Պոնտոս ծով** – 127  
**Պուտին քաղաք** – 106

- Զբրերիկ գետակ** – 161
- Ռիզա** – 6
- Ռուսահայաստան** – 17, 140, 172
- Ռուսաստան** – 78, 145
- Փուաթիե** – 210
- Սանահին վանք** – 86, 139
- Սանասուն տարածք** – 32
- Սասնա տուն** – 21, 39, 45, 186
- Սասնո գավառ** – 20
- Սասուն** – 20, 30, 31, 34, 38–40, 44, 57, 175, 177, 180–182
- Սեմկիո գետ** – 118
- Սեղանսար լեռ** – 34
- Սենաար դաշտավայր** – 82
- Սեն Պերթե վանք** – 211
- Սեն-Թ-Օմեր քաղաք** – 211
- Միմ լեռ** – 32
- Միրիա** – 84, 111, 115, 116
- Մկնոայի վանք** – 61
- Մորբոն** – 209
- Մպանիա** – 78
- Ա. Պետերբուրգ** – 91
- Մուրը Երկիր** – 112, 120
- Մուրիո թագավորություն** – 218, 222
- Մուրը Ղազար կղզի** – 6, 59, 60, 68, 173
- Մուրը Նշան եկեղեցի** – 47
- Մուրը Սիոն** – 69
- Մուրը Սիս** – 69
- Սևանա լիճ** – 77
- Մկրի Սամուել-Մուրաղյան վարժա-**  
**րան** – 6, 9
- Վաղարշապատ** – 140, 150
- Վաղէն զյուղ** – 160
- Վան** – 19, 20, 137
- Վանա լիճ** – 27, 165
- Վանա քար** – 56
- Վասպուրական** – 86, 159, 177
- Վարագա սուրբ խաչ** – 60
- Վասիկան** – 7
- Վենետիկ** – 6, 7, 31, 62, 75, 91, 104, 139, 149, 164–166, 173, 207, 211
- Վենետիկի Միսիթարյան միաբանու-**  
**թյուն** – 60
- Վերսալ** – 5
- Վիեննա** – 61, 91, 146, 164
- Վրաստան** – 78, 108, 214
- Տաճկաստան** – 78
- Տավրոս լեռ** – 32
- Տարոն** – 30, 40, 93
- Տարոն գավառ** – 31, 34
- Տիգրիս գետ** – 32, 34, 77
- Տիգրիսի վտակ** – 34 (տե՛ս Բաթման)
- Տրապիզոն** – 156
- Տրոյա** – 44
- Տուրուբերան** – 31
- Ուրմիո լիճ** – 165
- Փարիզ** – 5, 8, 12, 59, 60, 68, 81, 91, 103–105, 121, 159, 166, 206, 208, 225
- Փոքր Ասիա** – 77, 109, 111, 215, 218
- Փոքր Մասիս** – 77
- Քենովո վանք** – 133
- Քոմրաշ զյուղ** – 161, 162
- Քուռ գետ** – 131
- Օղան-Տողան** – 51
- Ֆլորենցիա** – 113
- Ֆրանսիա** – 11, 12, 105, 106, 144, 157, 163, 164, 209, 210

\* \* \*

- Adjarian – 147  
Agni – 37  
Akulis – 146  
Allemagne – 78  
Ani – 118  
Anglettere – 78  
Arabic – 121  
Arabie – 78  
Ararat (Harath) – 109, 215  
Arménie – 65, 77, 78, 109, 136, 149, 214, 215  
Armenia – 121  
Arsanias – 34  
Asia Minor – 27, 109, 215  
Asie – 109  
Azrael – 30
- Bagratides – 118  
Baronian – 149  
Bedikian A. A. – 91  
Brosset M. – 118  
Bruxelles – 136  
Byzantin – 121
- Caspiez – 109, 215  
Caucase – 15  
Cathay – 211  
Chah-nameh – 124  
Chalabian Antranig – 121  
Charaf – 72  
Charles de Coster – 24  
Chem – 72  
Chine – 78  
Cocas (ou Coquas =Caucase) – 109, 215
- Constantinople – 82  
David de Sassoun – 15, 19, 81  
Deval – 72  
Doluchanian A. – 150  
Durandal – 51
- Espagne – 78  
Ezéchiel – 72
- Fauste de Byzance – 11  
France – 78  
François d'Assise – 16, 172  
Frédéric Armand d'Eymet – 6  
Frédéric Feydit – 9, 15, 91  
Frédéric I<sup>er</sup> le Grand – 8  
Frédéric II – 9
- Gargantua – 127  
Géorgie – 79  
Giovanni Villani – 113  
Grandsaignes d'Hauterive – 5  
Greco – 82  
Greek – 121  
Guillaume de Bouldeselle – 211
- Hayasa – 138  
Hayton – 105, 106, 117, 209, 210, 225
- Inde – 78  
Italie – 78
- Japon – 78  
J. de Morgan – 102

- Jean sans Peur Բոլըզնէ – 108, 123  
Jean-Pierre Mahé – 5  
Jehan le Long – 106, 211  
Joseph Orbéli – 106  
Jupiter – 72  
  
Kodaï nameh – 124  
  
Lamme Goedzak – 24  
Latins – 82  
Leyde – 124  
London – 27  
Louvain – 147  
Lublin – 150  
Lune – 72  
  
Marekh – 72  
Maria – 65  
Mars – 72  
Médie – 109, 215  
Mercure – 72  
Mesrop – 91, 94-96, 98-100  
Michigan – 121  
Migne – 132  
Moise de Khorène – 93  
Mongol-Tatar – 121  
Moscou – 24  
  
Nersetis Glajensis – 67  
New York – 91  
Nicolas Falcon – 106, 117, 210, 211, 225  
Noë – 109, 215  
  
Odian – 149  
Odoric Foro Julii – 211  
Ormuzd – 95  
Otarit – 72  
Ottoman Turkish 121  
  
Palestine – 79
- Paris – 51, 75, 76, 81, 124, 146, 150, 205  
Paris - Nancy – 102  
Perse – 78, 109, 215  
Philippe le Hardi – 107, 213  
Polsce 150  
Porte de Fer – 215  
  
Qamar – 72  
  
Ragond Րակոն – 213  
Riculf – 211  
Roi Alexandre – 109, 215  
Russie – 78  
  
Saint-Martin – 150  
Saturne – 72  
Seljuk Turkish – 121  
Sever Pop – 147  
Soleil – 72  
Southfield 121  
Sovren – 72  
SPb – 118  
Stentor 44  
  
Taureau – 72  
Tauris – 109  
Turkoman – 121  
Turquie – 78, 109, 215  
  
Varanda – 28  
Venetiis – 67  
Venise – 59  
Verseau – 72  
  
Wien – 91  
  
Zohak – 124  
Zohal – 72

\* \* \*

Абгарян Г. В. — 120  
Адриатического море — 140  
Англия — 140

Вахагн — 37  
Венеция — 140  
Гетум — 119, 120  
Голландия — 140  
Детмар — 119, 120

Ереван — 25

Индра — 37

Карапет Мелик-Оганджанян — 25  
Константинополь — 140

Мадрас — 140  
Марсель — 140

Мальта, остров — 140  
Моисей Хоренский — 121  
Москва — 121

Новая Джульфа — 140  
Патканов — 37  
Польша — 140  
Риг-Веда — 37  
Риг-Ведский Agni — 37

Саксония — 140  
Смирния — 140

Халатян Гр. — 121  
Эмин Н. — 37



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արեղյան Մանուկ, Երկեր, հ. Գ, Երևան, 1968

Արեղյան Մանուկ, Երկեր, հ. Ը, Երևան, 1985

Արքահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944

Ազարանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնյանի, Երևան, 1983

Ալիշան Դ., Հայապատում, Վենետիկ, 1901

Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946

Աճառյան Հր., Հայերենի արմատական բառարան, Ա հատոր, Ա-Դ, Երևան, 1971

Աճառյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. 1, Երևան, 1959

Աստվածաշումն, Հին և Նոր կտակարաններ

«Քազմակեր», Վենետիկ, 1957, հուլիս-օգոստոս, սեպտեմբեր-հոկտեմբեր

«Քազմակեր», Վենետիկ, 1960, հուլիս-օգոստոս, թիվ 7-8

«Քազմակեր», Վենետիկ, 1961, թիվ 1-2

«Քազմակեր», Վենետիկ, 1991, թիվ 3-4

Գրիգոր Մագիստրոսի բոքերը, Ալեքսանդրապոլ, 1910

Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Ս. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985

Դոլոխամյան Աելիտա, Մարի Ֆելիխիտ Բրոսսեն հայագետ, Երևան, 2002

Եղիշիկ Կոլորացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթանքությունները Ա. Ա. Արքահամյանի, Երևան, 1970

Եղիայան Արմենակ, Մերոպեան տառերու ակունքները, Անքիլիս, 2005

Էմին Մ., Վեպ հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850

Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկվա, 1911, հ. Ը

Էփրեմյան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. II, Թ-Յ, Վենետիկ, 1907

Թերզիքաջյան Վ., Հայ դրամատորգիայի պատմություն (1668-1868), Երևան, 1959

Թովմա Արծրութի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածություն, թարգմանությունը, ծանոթագրությունները Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I, Ա-Ե, Երևան, 1969

**Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005**

Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հմատիա գրքի նատենագիտություն, Առաջարանը Ն. Ա. Օսկանյանի, Խմբագրությամբ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988

Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971

Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1984

Հայ ժողովրդի պատմության բրեստոմատիա, Երևան, 1981

Հայ հմայական և ժողովրդական աղոքներ, Աշխատությամբ՝ Սարգիս Հարությունյանի, Երևան, 2006

Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986

**Հացումի Վարդան, Երդմունք հին հայոց մեջ, Վենետիկ, 1932**

Հերում պատմիչ, հելինակ «Ծաղկի պատմութեանց արեւելեան աշխարհի» գրքին, գրեց Ֆրետենիք Ֆեյտի, Յառաջարան Արշակ Զապանեանի, Պատկերազարդուած Փարիզի Ազգային Մատենադարանի երկու հին ձեռագիրներու մանրանկարներուն վերարտադրութիւններով, Փարիզ, 1939

Հերում պատմիչ, Թաքարաց յերեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ.

Մկրտիչ արռաջակալ Վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842

**Հովհան Մանդակումի, Շառը, Վենետիկ, 1860**

**Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար բարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուքարյանի, Երևան, 1982**

**Մակարյան Ալ., Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2004**

**Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, բարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարիկյանի, Երևան, 1973**

**Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար բարգմ. և մեկնարանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981**

**Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913**

**Մուրաֆյան Կըրտ, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001**

**Նազարյան Ստեփանոս, Երկերի ժողովածու, Երևան, 1996**

**Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Գ. Դոլուխանյանի, Երևան, 1975**

**Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. I, Երևան, 2005**

**Պալասանյան Ստ., Պատմութիւն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895**

«Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, Երևան, 1963

«Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 1978

**Պարոնյան Հակոբ, Երկեր, Երևան, 1979**

«Սամնա Ծոեր», հ. Ա, խմբագրեց պրոֆեսոր, դոկտոր Մանուկ Արենյան, Երևան, 1936

- Սրբանձտյանց Գարեգին, Երկեր, հ. 1, Երևան, 1978**
- Տակմուռ Ա., Զաղեց և լատիներենից թարգմանեց պլոֆ. պաշտ. Պ. Սուտնիկյան, Երևան, 1947**
- Ցուցակ ճեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյրումյան, Փ. Անքարյան, Ներածությունը՝ Օ. Եզանյանի, Խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965
- Ցուցակ ճեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյրումյան, Փ. Անքարյան, Ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եզանյանի, Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970
- Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), Երկու հատորով, հ. I, աշխատասիրությամբ Համիլ Սահակյանի, Երևան, 1986
- Փակսոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանությունը և ծանոքագրությունները Ստ. Սահմանացի, Երևան, 1987**
- Օսյան Երվանդ, Անիծնալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ), աշխատասիրությամբ Գրիգոր Յակոբեանի, Երևան, 2004**
- Օսյան Ե., Ընկ. Բ. Փանջունի, ծաղրանկարեց Ալ. Սարուխան, Երևան, 1989**
- Օքրեակ Հովհաննէսի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956**
- «Annuaire de l’Institut de Philologie et d’Histoire Orientales et Slaves» - Tom XVII (1963-1965), Bruxelles, 1966
- Bekidjian A. A., The golden age in the fifth century, New York, 1963**
- Brosset M., Les ruines d’Ani, capital de l’Arménie, sous les rois Bagratides, aux X<sup>e</sup> et XI<sup>e</sup> s., histoire et description, II<sup>e</sup> partie, SPb, 1861**
- Chalabian Antranig, Armenia after the coming of Islam (This book is about Arabic, Persian, Byzantine, Greek, Seljuk Turkish, Turkoman, Mongol-Tatar, and Ottoman)**
- Turkish history, all in Conjunction with Armenian History, 2nd Printing, Southfield, Michigan, 2002
- Charles de Coster, La légende et les aventures heroiques, joyeuses et glorieuses d’U-lenspiegel et de Lamme Goedzak au pays Flandres et ailleurs, Moscou, 1979
- David de Sassoun, Épopée en vers, traduit de l’arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Gallimard, 1964**
- Dolychanian Aelita, Literatura w ormianskich koloniach w Polsce (unču Studia z dziejów kontaktów polsko-armiańskich, Lublin, 1883)**
- Encyclopédie de l’Islam, nouvelle édition, t. II, C-G, Leyde, Paris, 1965
- Feydit F., Manuel de langue arménienne, Paris, 1969**
- Feydit F., Amulettes de l’Arménie chrétienne, Venise, st Lazare, 1986**
- Feydit F., Considérations sur l’alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l’armenien, Wien, 1982 (Deuxième édition)**

**Feydit F.**, L'épopée populaire arménienne (տե՛ս «Բազմավեպ», 1957, հունվար-փետրվար )

**Feydit F.**, Problemes et utilite de la dialectologie arménienne (տե՛ս Communications et rapports du Premier (Ongrés International de Dialectologie générale, organisé par Sever Pop, Louvain, 1964)

**Feydit F.**, La Comédie et la Satire en Arménie, Baronian et odian (տե՛ս «Բազմավեպ», 1960, թիվ 7-8, 1961 թիվ 1-2)

**J. de Morgan**, Essai sur les nationalités, Paris-Nancy, 1917

**Nersetis Glajensis**, Preces sanctiis, Վեհետիկ, 1862

**Petit Robert - 2**, Dictionnaire universel des noms propres, Paris, 1988

**Saint-Martin**, Sur une tragédie arménienne, (տե՛ս «Journal asiatique», Paris, N12)

Армянский народный эпос Сасунские удальцы, Избранные варианты, Перевод текстов, составление и словарь комментарии академика НАН РА Карапета Мелик-Оганджанияна, Ереван, 2004

**Давид Сасунский**, Армянский народный эпос, Четыре ветви, Ереван, 1939, Предисловие акад. И. А. Орбели

**Халатян Гр.**, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, Москва, 1896

**Эмин Н.**, Ответ на замечания г. Патканова, Москва, 1874

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵԼԻՔԻ կյանքը . . . . .</b>	<b>5</b>
<b>ԳԼՈՒԽ Ա</b>	
<b>Ա. Ֆրեդերիկ Ֆելիքին «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանիչ և մեկնարան . . . . .</b>	<b>15</b>
<b>Բ. Ֆրեդերիկ Ֆելիքին՝ «Սասունցի Դավիթ» էպոսին կցված ծանօթագրությունները . . . . .</b>	<b>25</b>
<b>ԳԼՈՒԽ Բ</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՄԱՅԻԼՆԵՐԸ . . . . .</b>	<b>59</b>
<b>ԳԼՈՒԽ Գ</b>	
<b>Ա. Ֆեթդին «ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ» . . . . .</b>	<b>75</b>
<b>Բ. Ֆեթդին ՄԱՇՏՈՅՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ . . . . .</b>	<b>91</b>
<b>ԳԼՈՒԽ Դ</b>	
<b>Ֆ.ՖԵՅԴԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . .</b>	<b>103</b>
ա) Ֆ.Ֆեյդին Հեթում պատմիչի մասին. . . . .	103
բ) Ֆ.Ֆեյդին Հայոց հին վեպի գնահատող . . . . .	121
գ) Ֆ.Ֆեյդին բանախոսությունը կարդացված 1965-ին ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ Հայոց ցեղասպանության 50-ամյակի առթիվ. . . . .	135
դ) Ֆ.Ֆեյդին զեկուցումը նվիրված Հայ բարբառագիտությանը . .	144
ե) Ֆ.Ֆեյդին Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի մասին . . . . .	149
<b>ՎԵՐՋԱԲԱՆ . . . . .</b>	<b>164</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ . . . . .</b>	<b>169</b>
<b>Ֆրեդերիկ Ֆելիքի, «Սասունցի Դավիթ» (Զափածո էպոս) . . . . .</b>	<b>171</b>
<b>Նմուշներ Ֆ.Ֆելիքիի տպագրած Հմայիլներից . . . . .</b>	<b>188</b>
<b>Հեթում պատմիչ Հեղինակ «Ծաղկի պատմութեանց արևելեան աշխարհի» գրքին . . . . .</b>	<b>205</b>
<b>POSTFACE . . . . .</b>	<b>237</b>
<b>ԱՆՎԱՆԱՑԱՆԿ . . . . .</b>	<b>241</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ . . . . .</b>	<b>257</b>

## **ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐ**

V

**ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ**

**ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ ՀԱՅԱԳԵՏ**

**Տելս. լսմբագիր՝ Վ. Բղոյան  
Կազմի ձևավորումը՝ Գ. Մարիկյանի**

**Համ. շարվածքը՝ Շ. Նիկոյանի  
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուղումցյանի**

**Ստորագրված է տպագրության՝ 13.03.2008 թ.:  
Զափսը՝ 60x84 1/16; Թուղթ՝ օֆսեթ; Տպագրություն՝ օֆսեթ:  
Հրատ. 14.5 մամուլ, տպագր. 16.75 մամուլ = պայմ. 15.6 մամուլի:  
Պատվեր՝ 8:**

**ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1**

---

**ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52**

**Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ  
Երևանի համալսարանի հրատարակչությունը  
լրաց է ընծայել հետևյալ գործերը**

1. **Թ. Դակորյան, Ստ. Մելիք-Բախչյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:**
2. **Թ. Դակորյան, Ստ. Մելիք-Բախչյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:**
3. **Թ. Դակորյան, Ստ. Մելիք-Բախչյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»):**
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասորիկ - Տիեզերական պատմություն (աշխարհաբարոի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:**
5. **Դրաչյա Գաբրիելյան - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:**
6. **Ալեքսանդր Մարգարյան - Հայերենի հոլովները, 2000 թ.:**
7. **Նահապետ Քոչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Դրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:**
8. **Շարական (Ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը, 2001 թ.:**
9. **Դրաչյա Միրզոյան - Հովհաննես Մրգուզ Զուղայեցի, 2001 թ.:**
10. **Ռուբեն Ղազարյան - Միջին գրական հայերենի բառապաշտը, 2001 թ.:**
11. **Բարկեն Դարությունյան - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:**
12. **Վարդան Արևելցի - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:**

13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարդեցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Արգարյան** - Նայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Անթապյան** - Հովհաննես սարկավագ Ինաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաթեոսյան** - Կուրբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բաղիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Դրայխ Գաբրիելյան** - Նայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Դայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Դրայխ Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Դակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Նայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին «Մարդկային զարգացման և հումանիտարական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Նայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Դայնրիխ Դյուրքման** - Դայերենի քերականություն, առաջին մաս, Դայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Դայնրիխ Դյուրքման** - Դայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Նայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգածե** - Դայերեն-վրացերեն գրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Դրայխ Աճառյան** - Նայոց պատմություն, հյուսված ընդիանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովիաննես Սարկաւագ Ինաստասեր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:

33. **Սամղող Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրուան, 2004 թ.:
34. **Կարէն Խեցբաշեան** - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Դարություն Դելլայան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Շովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Աճանյան** - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր-Ղևոնյան** - Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (Փրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփիանյան** - Եղզնկա (Ղնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Դրայչա Աճառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզունների. Ինաստարանություն, Բառաքննություն, Ծարակյուսություն, 2005 թ.:
41. **Օստար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ թ-ժ դարեր: Ներածությունը և բնագրերից բարգմանությունները Արամ Տեր-Ղևոնյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բաջյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. **Ռամազ Գորգածեն** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Ծարարիսանյան** - Ղանգարանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. **Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Աղոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ.:
48. **Ռ. Պողոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Դայկագ Ժամկոչյան** - Հայ ժողովորդի պատմություն, 2006 թ.:
50. **Հայ հմայական և ժողովորդական աղոթքներ: Աշխատությամբ Ս. Դարությունյանի**, 2006 թ.:
51. **Սաքենիկ Գեցյան** - Անի: Մատենագիտություն, 2006 թ.:

52. Հարություն Մ. Վենետիկյան, Զերալդ Ա. Ռոռֆիլդ - Համաշխարհային առևտորի ֆինանսավորում, 2006 թ.:
53. Ծահէ Արքեպիսկոպոս Ամենային, Հայերէն Աստուածաշումչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նախրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. Դակոր Սիմոնյան - Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. Նիկողայոս Աղոնց - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. Լիլիթ Զաքարյան - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. Ալբերտ Խառասոյան - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Զ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Դայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Դնագույն ժամանակներից մինչև թ. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. Ռուբեն Ղազարեան, Շենրիկ Ավետիսիսեան - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:
65. Ֆելիքս Դայրապետյան - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. Արմեն Մալխասեան (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, 2007 թ.:
67. Դեմի դը Ռուժմոն - Սերը և Արևմուտքը (թարգմ. Ալ. Թոփչյանի), 2007 թ.
68. Սերոր Ղազարյան - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. Լաւրենտի Յովհաննիսեան - Հայ թարգմանական գրականութեան բառապաշտը (Վ դար), Ազգային Մատենադարան, հ. ՄԽ, 2007 թ.:

70. **Դամաստեղ** - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.:
71. **Գրիգոր Միքայելյան** - Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.:
72. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, իինգ հատորով, հատոր Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, 2008 թ.:
73. **Աելիտա Շոլուխանյան** - Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, 2008 թ.:



















































































































